ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱԺԻՆ

X

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

372.21
Ո-20

ԼՈՒՍՀՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ 1940

70

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

0120-10

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱԺԻՆ

372.21
О-20

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Փոփոխություններով և լրացումներով թարգմանված է ռուսերեն 4-րդ վերամշակված հրատարակությունից

10271

ԼՈՒՍՀՐԱՏ

ԵՐԵՎԱՆ 1940

2 SEP 2013

Մշակված է ՌԽՖՍՀ Լուսժողկոմատի Նախադպրոցական բաժնի կողմից՝ ներգրավելով նախադպրոցական գիտական յեվ պրակտիկ աշխատողներին:

3453
40

ՆԱԽԱԲԱՆ

Այս ձեռնարկը կազմված է գյուղական մանկական հրապարակների (կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում, ՄՏ կայաններում) աշխատողներին օժանդակելու համար:

Այս գիրքը կոլտնտեսային մանկական հրապարակների դաստիարակներին պետք է օգնի պարզելու, թե ինչպես պետք է աշխատանք տանել յերեխաների դաստիարակության գծով, վորպեսզի նրանք լինեն առողջ, ուժեղ, կենսուրախ, արժանի մեր մեծ հայրենիքին:

Գրքում տրված են ցուցումներ, թե ինչպես կազմակերպել հրապարակը և ինչպես աշխատել յերեխաների հետ. զետեղված են խաղեր, յերգեր, պատմվածքներ, վոտանավորներ՝ դրանք դաստիարակչական աշխատանքներում օգտագործելու համար. տրված են մի ամբողջ շարք հավելվածներ, այն է՝ ինչպես պատրաստել ճաշը, ինչպես ցույց տալ առաջին օգնությունը հիվանդացած յերեխային և այլն:

Գիրքը վոչ միայն պետք է կարդալ, այլև նրանով պետք է ղեկավարվել ամենօրյա աշխատանքներում: Հարկավոր է վոչ միայն ընտրել տվյալ վոտանավորը կամ պատմվածքը, այլ և «Խոսքի զարգացումը» գլխից ծանոթանալ՝ ինչպես ընթերցել կամ պատմել յերեխաներին. վոչ միայն ընտրել յերգը, այլև ընթերցել այն մասին, թե ինչպես պետք է սովորեցնել յերեխաներին յերգել և այլն:

Հրապարակում յերեխաների հետ աշխատելը պատասխանատու և պատվավոր գործ է: Դաստիարակը պարտավոր է մտածված և լուրջ վերաբերվել դեպի այդ աշխատանքը, նա պետք է աշխատի իր վրա՝ կարդա յերեխաների դաստիարակության մասին գրքեր և լավ պատրաստվի իր աշխատանքի համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային յերկրում կուսակցությունը և կառավարությունը բացառիկ մեծ ուշադրություն են դարձնում կանանց և յերեխաներին:

Ստալինյան Սահմանադրությունն ամրապնդեց ԽՍՀ Միությունում կնոջը տրված՝ տղամարդուն հավասար իրավունքները տնտեսական, պետական, կուլտուրական և հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում: «Կանանց այդ իրավունքների իրականացման հնարավորությունն ապահովվում է կնոջը տղամարդուն հավասար իրավունք· տալով աշխատանքի, աշխատանքի վարձատրության, հանգստի, սոցիալական ապահովագրության ու կրթության ասպարեզում, մոր ու մանկան շահերի պետական պահպանությամբ, կնոջը հղիության ժամանակ արձակուրդ տալով՝ պահպանելով աշխատավարձը, ծննդատների, մանկամսուրների ու մանկապարտեզների լայն ցանցով»: (ԽՍՀՄ Սահմանադրությունից, գլուխ X, հոդ. 122):

Դրա համաձայն լայնանում է մանկական հիմնարկությունների՝ մսուրների, մանկապարտեզների, մանկական հրապարակների ցանցը, կառուցվում են պիոներական պալատներ և այլն: Այդ հիմնարկություններում յերեխաներն ապրում են ուրախ և զվարթ, ստանում են ճիշտ դաստիարակություն, բազմակողմանի զարգացում: Մայրն այդ ժամանակ կարող է հանգիստ աշխատել, սովորել, հանգստանալ:

Ի՞նչպիսի խնդիրներ են դրված նախադպրոցական հրապարակի առաջ:

Նախադպրոցական հիմնարկությունը—մանկապարտեզը և մանկական հրապարակը—յերեխաներին պետք է դաստիարակի կոմունիզմի ոգով, ֆիզիկապես առողջ, առույգ, կենսուրախ:

Հրապարակի աշխատողները պետք է հոգան յերեխաների առողջության մասին, նրանց ճիշտ ֆիզիկական դաստիարակու-

թյան մասին. պետք է կազմակերպեն լավ սնունդ, յերեխաների
մեջ դաստիարակեն կուլտուր-առողջապահական ունակություն-
ներ, մաքրասիրություն, ակուրատություն, կարգապահություն,
հոգատար վերաբերմունք դեպի իրերը, խաղալիքները:

Հրապարակի ամբողջ աշխատանքը պետք է կառուցված լինի
օրվա կայուն կարգուկանոնի հիման վրա (ռեժիմով): Յերե-
խաների սնունդը, քունը, խաղը, պարապմունքները, զբոսանք-
ները պետք է տարվեն վորոշ ժամերին:

Անհրաժեշտ է մանկական հրապարակում ապահովել յերեխա-
յի ընդհանուր զարգացումը, դաստիարակել հետաքրքրություն
դեպի շրջապատի կյանքը և բնությունը, սեր դեպի գեղեցիկը
(բնություն, գեղարվեստական պատմվածքներ, նկարներ, յերա-
ժշտություն, յերգեր և այլն), դաստիարակել յերեխաների մեջ
սեր դեպի մեր հիանալի հայրենիքը, դեպի Կարմիր բանակը, դե-
պի մեր հայրենիքի առաջնորդները և հերոսները, դաստիարակել
համարձակություն, նախաձեռնություն, հաստատակամություն,
ընկերական փոխհարաբերություն յերեխաների մեջ, կարողանալ
միասին խաղալ, ուշադիր վերաբերվել դեպի փոքրիկ յերեխանե-
րը, քաղաքավարություն, հարգանք ծնողների և մեծերի հան-
դեպ:

Այս բոլոր խնդիրներն իրականացվում են դաստիարակի կող-
մից յերեխաների հետ ամենօրյա դաստիարակչական աշխատանք-
ների միջոցով, խաղերի և զանազան հետաքրքիր զբաղմունքների
(յերգեցողություն, յերաժշտության ունկնդրություն, զանազան
պատմվածքների և հեքիաթների ընթեր-
ցում և ունկնդրում, զբոսանքներ և այլն) միջոցով: Հրապարակի
աշխատանքներում ամենից մեծ տեղը պետք է հատկացվի յերե-
խաների խաղերին:

Նախադպրոցական հրապարակի դաստիարակը պետք է կրի
լրիվ պատասխանատվություն իրեն հանձնարարված յուրաքան-
չյուր յերեխայի ճիշտ դաստիարակության համար:

Իր գործին տիրապետելը, սերը դեպի յերեխաները, ուշա-
դիր վերաբերմունք դեպի յուրաքանչյուր յերեխան, արագ և
ճիշտ պատասխանելը նրա բոլոր հարցումներին—սրանք են յերե-
խաների հետ տարվող դաստիարակչական աշխատանքների հաջո-
ղության կարևորագույն պայմանները:

Դաստիարակը գրավում է յերեխաներին իր աշխուժությամբ,
կենսուրախությամբ, նախաձեռնությամբ, խաղեր և հետաքրքիր
ու բազմապիսի պարապմունքներ անցկացնելու հմտությամբ: Նա

պետք է ցուցաբերի բացառիկ հոգատարություն յերեխաների մա-
սին, պատասխանատվություն կրի ամեն մի յերեխայի կյանքի և
առողջության համար:

Նախադպրոցական հիմնարկների բոլոր դաստիարակները պետք է սիստեմատիկ աշխատանք տանեն իրենց գաղափարական-քաղաքական, ընդհանուր կուլտուրական մակարդակի և մանկավարժական վորակավորման բարձրացման վրա:

Յերեխաների հրապարակ հաճախելու առաջին իսկ օրերից դաստիարակը պետք է հոգա այն մասին, վոր նրանց կյանքը հրապարակում լինի ուրախ, բերկրալի և ընկերական, վորպեսզի յերեխաներն իրենց լավ զգան: Դաստիարակը համախմբում է իր շուրջը յերեխաներին, կազմակերպում է հետաքրքիր խաղեր և պարապմունքներ, սովորեցնում է նրանց համերաշխ կերպով խաղալ, իրենց մեջ ընկերաբար բաժանել խաղալիքները:

Ամեն մի նոր յեկած յերեխային դաստիարակը ցույց է տալիս, թե վորտեղ պետք է հանել զգեստը, լվացվել, օգնում է այն յերեխաներին, վորոնք դեռևս չեն կարողանում այս բոլորը կատարել:

Դաստիարակն առանձին ուշադրություն է դարձնում այն յերեխաների վրա, վորոնք դժվարությամբ են ընտելանում նոր միջավայրին, առանձնանում են, յերեխաների հետ չեն խաղում: Այդպիսի յերեխաների հետ դաստիարակը պետք է ինքն ավելի հաճախ խաղա, քան մյուսների հետ, տա նրանց խաղալիքներ, զրուցի նրանց հետ, օգնի նրանց՝ ընտելանալու նոր միջավայրին:

Դաստիարակը սովորեցնում է յերեխաներին հոգատար և սիրալիր վերաբերվել իրար հետ: Նա ինքը հոգատար է դեպի ամեն մի յերեխա, ամեն առավոտ դիմավորում է նրանց փաղաքշանքով, զրուցում է նրանց տան կյանքի, յեղբայրների, քույրերի, ծնողների մասին, կանխում է յերեխաների վեճերը և այլն: Յեթե յերեխան վշտացած է մի վորևիցե բանից, դաստիարակը նրան օգնության է գալիս, հանգստացնում է նրան: Յերեխայի հիվանդանալու դեպքում դաստիարակը տեղեկանում է նրա առողջության մասին, ուղարկում է նամակ, նկարներ, խաղալիքներ, ուրախությամբ դիմավորում է յերեխային հիվանդությունից հետո:

Դաստիարակը պետք է ճանաչի յուրաքանչյուր յերեխային՝ նրա առանձնահատկությունները, հետաքրքրությունները, հակումները, ընդունակությունները և դեպի ամեն մեկն ունենա առանձին մոտեցում. մեկին բավական է միայն սիրալիր կերպով

հիշեցնել, մյուսի հետ հարկավոր է լրջորեն խոսել, մեկից կարելի չէ պահանջել առաջադրությունն ինքնուրույն կատարել, մյուսին հարկավոր է օգնել:

Դաստիարակը նույնիսկ ամենափոքր յերեխաներին առաջադրում է վորոշ պահանջներ՝ կարգը չխանգարել խաղալու, պարապմունքների, ուտելու ժամանակ, հոգատար վերաբերվել դեպի իրերը, խաղալուց հետո հավաքել խաղալիքները, լինել քաղաքավարի, կատարել ծնողների, դաստիարակի պահանջները:

Մեծ յերեխաներին, բացի դրանից, հարկավոր է սովորեցնել հարգել մեծերին (զիջել տեղը, բարձրացնել ընկած իրը և այլն), առանձին ուշադրությամբ վերաբերվել դեպի հիվանդները և ծերերը, օգնել փոքրերին, որինակ՝ կոճկել գոգնոցը, օգնել հագնվելու:

Ավելի մեծ յերեխաներին կարելի յե հանձնարարել վոչ-բարդ առաջադրանքներ, որինակ՝ պարապմունքների համար պատրաստել թուղթ, բաժանել մատիտներ, վրձիններ, ներկեր, պարապմունքից հետո հավաքել դրանք, լվանալ վրձինները, օգնել պատրաստելու սեղանը, բաժանել անձեռոցիկները և այլն:

Դաստիարակն ինքը պետք է որինակ ծառայի յերեխաներին, բոլորի նկատմամբ լինի ուշադիր, հետևի մաքրությանը, կարգուկանոնին, քաղաքավարի վերաբերվի մարդկանց: Այդպիսի դաստիարակին յերեխաները կվերաբերվեն սիրով և հարգանքով, կաշխատեն որինակ վերցնել նրանից, հոժարությամբ կկատարեն նրա բոլոր պահանջները:

Անհրաժեշտ է աստիճանաբար յերեխաներին ծանոթացնել շրջապատի կյանքի հետ: Զբոսանքների ժամանակ կարելի յե անցնել հիվանդանոցի կամ դպրոցի մոտով, մանկամսուրի մոտով, տեսնել տրակտորը կամ բեռնատար ավտոմեքենան, կամ նոր շենք, կամ դաշտում ինչպես են աշխատում կոլտնտեսականները և այլն: Այդ ժամանակ յերեխաներին չպետք է տալ յերկար բացատրություններ իրենց տեսածների մասին: Բավական է, յեթե նրանք իմանան, վոր «դպրոցում սովորում են աշակերտները», «մանկամսուրը փոքրիկ յերեխաների համար է»: Այդպիսով յերեխաները կսկսեն աստիճանաբար ըմբռնել իրենց մատչելի յերևույթները: Հարկավոր է յերեխաների հետ, բացի այդ, դիտել նկարներ, ժուռնալների իլյուստրացիաները, ընթերցել նրանց համար մանկական գրքեր:

Այս ամենը նույնպես կընդարձակի յերեխաների պատկերացումները շրջապատի կյանքի մասին:

Յերեխաների մեջ դեպի մեր հիանալի հայրենիքը, դեպի Կարմիր բանակը, դեպի մեր ղեկավարները, դեպի անվանի մարդիկ սեր դաստիարակելու համար դաստիարակն օգտագործում է հասարակական կյանքի այն փաստերն ու դեպքերը, վորոնք մատչելի յեն յերեխաների ըմբռնմանը:

Դաստիարակը պատմում է ու կարդում յերեխաներին մեր առաջնորդների—Լենինի ու Ստալինի մասին, արտահայտում է իր սերը նրանց նկատմամբ, յերեխաների հետ միասին յերգում է նրանց մասին, դիտում է նրանց նկարները: Որինակ՝ «Հոկտեմբերիկ» ամսագրից կարդում է պատմվածքներ՝ «Ի. Վ. Ստալինի մանկությունը», «Ուլյանովների ընտանիքը», «Վ. Ի. Լենինի դպրոցական տարիները». ընկեր Ստալինի կյանքի մասին կարդում է վոտանավորներ, Բոդիչևսկայի «Իմ նվերը» և այլն:

Դաստիարակը պատմում է ամբողջ աշխարհի աշխատավորության սիրո մասին դեպի Լենինը և ընկեր Ստալինը: Կարելի յե ցույց տալ «Լենինը յերեխաների հետ» կամ «Ստալինը և Մամլաքյաթը» նկարները, պատմել ընկեր Ստալինի և Լենինի սիրո մասին դեպի յերեխաները, նրանց հոգատարության մասին հանդեպ յերեխաները: Կարելի յե միաժամանակ կարդալ վոտանավորներ:

Դաստիարակը պատմում է հերոսության և դեպի մեր հայրենիքը նվիրված լինելու որինակների մասին, որինակ՝ չելյուսկինականների և պապանինականների հերոսության մասին, «Սեդով» սառցահատի մասին, հերոս օդաչուների մասին, սահմանապահների, բանվորների, կոլտնտեսականների, դաշտերի ստախանովականների սխրագործությունների մասին: Դաստիարակը կարող է շատ հետաքրքիր դեպքեր պատմել կարմիր-բանակայինների կյանքի մասին, նրանց կարգապահության, տոկունության, առանձին հերոսական վարմունքների մասին: Պատմելու համար նյութեր կարող են մատակարարել թերթերը՝ «Խորհրդային Հայաստան», «Ավանգարդ», մանավանդ «Պիոներ կանչը», «Հոկտեմբերիկը», մանկական գրքերը: Այնտեղ, վորտեղ կա ալլոսկոպ կամ մոգական լապտեր, լավ կլինի ցույց տալ համապատասխան նկարներ:

Այս ամենը նպաստում է՝ դաստիարակելու յերեխաների մեջ սեր դեպի մեր հիանալի հայրենիքը, հիացմունք դեպի մեր քաջարի Կարմիր բանակը:

Իր աշխատանքում դաստիարակն օգտագործում է նույնպես առանձին տեղական դեպքեր: Որինակ՝ ինչպես կոմյերիտականն

ազատեց խեղդվողին, կամ թե ինչպես կոլտնտեսականը փրկեց ամբարը հրդեհից, կամ ինչպես հովիվը փրկեց հոտը բուք-բորանից և այլն: Այդպիսի օրինակներ շատ կան մեր կոլտնտեսություններում, դրանց մասին գրվում է տեղական թերթերում:

Յերեխաների մեջ դեպի հայրենիքը սեր դաստիարակելու անհրաժեշտ պայմանն է հանդիսանում դաստիարակի քաղաքական գրագիտությունը, նրա անհաշտվողականությունը ժողովրդի թշնամիների հանդեպ, նրա նվիրվածությունը Լենինի—Ստալինի գործին:

Մեծահասակ յերեխաներին հարկավոր է ծանոթացնել քաղաքի կյանքի հետ: Ցույց տալ նկարներ, պատմել քաղաքի կյանքի, մեծ գործարանների, տների, պիոներական պալատների մասին: Կարելի յե օգտագործել բացիկների (նկարների) հավաքածու «Մոսկվա», «Մոսկվա—Վոլգա ջրանցք», «Զորագես», «Սևանգես», «Տեքստիլ» և այլն: Բացիկների սերիաները շատ կօգնեն յերեխաներին ակնառու կերպով պատկերացում ստանալու մեր կարմիր մայրաքաղաքի մասին, մեր նվաճումների մասին: Օրինակ, կարելի յե ցույց տալ «Մոսկվա» հյուրանոց, «Մեծ թատրոն», Յերևանի «Օպերային թատրոն», «Ս. Կ. գործարան», «Տրամվայ» նկարները,—պատմել, թե դրանք ինչպիսի մեծ նվաճումներ են:

Ցույց տալով «Կրեմլ», «Կարմիր հրապարակ» բացիկները, հարկավոր է պատմել, վոր Կրեմլում ապրում է և աշխատում մեր կառավարությունը, մեր սիրելի ընկեր Ստալինը, Կարմիր հրապարակում կանգնած է Լենինի դամբարանը, Կարմիր հրապարակ են հավաքվում հեղափոխական տոներին Մոսկվայի ամբողջ աշխատավորները:

Հեղափոխական տոներին՝ մայիսի 1-ին, Միջազգային յերիտասարդական օրը, Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության օրը և այլն անպայման պետք է մանկական հրապարակում կազմակերպել տոնակատարություն:

Դաստիարակը յերեխաների հետ միասին պատրաստվում է տոնին, սովորեցնում է նոր յերգեր, վոտանավորներ, զարդարում է շենքը և հրապարակը, յերեխաներին տանում է կոլտնտեսություն՝ տեսնելու, թե այնտեղ ինչպես են պատրաստվում տոնին, ինչ է կատարվում ակումբում, յերեխաների մեջ հրահրում է տոնին անհամբեր սպասելու զգացմունքը:

Տոնի օրը յերեխաները դուրս են գալիս փողոց՝ դիտելու և

վողջունելու ցույցը, իսկ մանկհրապարակում հանդես են գալիս յերգերով, խաղերով, պարերով:

Դաստիարակն իր ամենօրյա աշխատանքների ընթացքում պատմում է յերեխաներին այն մասին, վոր ԽՍՀՄ-ում և ՀԽՍՀ-ում ապրում են զանազան ազգությունների աշխատավորներ, նրանք խոսում են զանազան լեզուներով. բոլոր աշխատավորները կառուցում են ուրախ, յերջանիկ կյանք, սիրում են սոցիալիստական հայրենիքը և մեր առաջնորդներ Լենինին, Ստալինին:

Դաստիարակը ցույց է տալիս նկարներ ԽՍՀՄ ժողովուրդների կյանքից ու կենցաղից, սովորեցնում է յերեխաներին վոտանավորներ, ժողովրդական յերգեր, պարեր (ռուսական, վրացական, ադրբեջանական, ուկրաինական և այլն): Յեթե կոլտնտեսությունում ապրում են զանազան ազգությունների աշխատավորներ, դաստիարակը դրա մասին պատմում է յերեխաներին, ընդգծելով, վոր զանազան ազգությունների կոլտնտեսականները միասին համերաշխ աշխատում են:

Նախադպրոցական հիմնարկների առաջ դրված է խնդիր—յերեխաներին դաստիարակել հակակրոնական վոգով:

Մեզ մոտ դեռ կան մարդիկ, վորոնք կատարում են կրոնական ծեսեր, հաճախում են յեկեղեցի: Դրանով նրանք վատ ազդեցություն են գործում յերեխաների վրա: Յեթե դաստիարակն իմանում է, վոր յերեխայի ընտանիքում կատարում են կրոնական ծեսեր, հաճախում են յեկեղեցի, կրում են խաչեր,—պետք է յերեխաների առաջ արտահայտի իր բացասական վերաբերմունքն այդ փաստերի նկատմամբ, նշելով, վոր մեր յերկրի բոլոր լավ մարդիկ—Լենինը, Ստալինը, գիտակից բանվորները, կոլտնտեսականները,—աստծուն չեն հավատում, քանի վոր վոչ մի աստված գոյություն չունի:

Այդ դեպքում հատուկ նշանակություն է ստանում աշխատանքը ծնողների մեջ: Պետք է նրանց պարզաբանել կրոնի վնասը, համոզել նրանց՝ յերեխաներին յեկեղեցի չտանել, չպատմել յերեխաներին գոյություն չունեցող աստծու մասին:

Դաստիարակը պետք է աշխատանք տանի ծնողների մեջ վոչ միայն հակակրոնական հարցերի մասին: Հարկավոր է, վոր ծնողներն իմանան, թե ինչպես են դաստիարակվում յերեխաները հրապարակում, թե ինչպես պետք է նրանց դաստիարակել տանը:

Հարկավոր է հաճախել յերեխաների տունը, զրուցել ծնողների հետ յերեխայի դաստիարակության մասին, պատմել յերեխաների առաջադիմության մասին: Օրինակ, պատմել, թե ինչպես է

երեխան իրեն պահում հրապարակում, ցույց տալ նրա քանդակը, նկարը:

Հրապարակի աշխատողները ծնողների հետ միասին պետք է դաստիարակեն մեր խորհրդային երեխաներին առողջ, աշխույժ, կենսուրախ, ջերմորեն սիրող մեր հիանալի հայրենիքը:

ԻՆՉ Է ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԸ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ

Մանկապարտեզները և մանկհրապարակները դաստիարակում են նախադպրոցական հասակ ունեցող—4—7 տարեկան երեխաներին:

Ամեն կոլտնտեսություն կարող է կազմակերպել մանկապարտեզ կամ մանկհրապարակ: Մանկապարտեզներն աշխատում են ամբողջ տարին, իսկ մանկհրապարակները՝ միայն ամառը:

Գյուղում կազմակերպելով մանկապարտեզ կամ մանկհրապարակ, դրանով կոլտնտեսությունը կոլտնտեսուհիների համար ստեղծում է լավ աշխատելու անհրաժեշտ պայմաններ, նրանց հնարավորություն է տալիս սովորել, ապրել կուլտուրական կյանքով և հանգստանալ, վորպեսզի նրանց երեխաները ճիշտ դաստիարակություն ստանան: Ամառային մանկհրապարակը խոշոր նշանակություն ունի վոչ միայն կոլտնտեսուհի—մայրերի աշխատանքի արտադրողականության բարձրացման համար, այլև երեխայի դաստիարակության և առողջության ամրապնդման համար: Անհրաժեշտ է, վորպեսզի ամառվա ընթացքում ամեն մի կոլտնտեսություն ունենա սեփական մանկհրապարակ:

Ամառային մանկհրապարակը կազմակերպում է ինքը կոլտնտեսությունը և այն պահում է իր միջոցներով: Հրապարակի կազմակերպումը պետք է հանձնարարել հրապարակում աշխատելու համար առանձնացրած այնպիսի կոլտնտեսուհու, վորն անցած լինի նախադպրոցական դասընթացներ: Նրան օգնելու համար կոլտնտեսության վարչությունն ուղարկում է միքանի կոլտնտեսուհի ու կոլտնտեսական—կոլտնտեսության ակտիվից:

Կոլտնտեսությունը պետք է հատկացնի շենք հրապարակի համար, վերանորոգի այն, սարքավորի կահույքով, ամանեղենով, գրականությամբ և խաղալիքներով: Հրապարակում աշխատելու համար ուղարկել կոլտնտեսուհիներ: Հատուկ դասընթացներում նրանց պատրաստվելու ժամանակաշրջանում ապահովել նյութապես, վարձատրել նրանց աշխօրով կամ դրամով (ըստ պայմանա-

վորվածության)․ առանձնացնել անհրաժեշտ քանակությամբ մթերք յերեխաների սննդի համար, ներգրավել ծնողներին՝ մասնակցելու հրապարակի աշխատանքներում նորմալ պայմաններ ստեղծելու գործին:

Յեթե հրապարակում յերեխաները շատ չեն, 15—30 հոգի, նրանց բոլորին տեղավորում են մեկ խմբակում: Յեթե յերեխաների թիվը հասնում ե 50-ի կամ 70-ի, ապա նրանց բաժանում են 2 կամ 3 խմբակի․ փոքրերի խմբակ՝ 4—5 տարեկաններ, միջակների խմբակ՝ 5—6 տարեկաններ և մեծերի խմբակ՝ 6—7 տարեկաններ: Յերեխաների քանակը մեկ խմբակում 30-ից ավելի չպետք ե լինի:

Աշխատանքը, յերեխաների դաստիարակությունը հրապարակում բարդ և պատասխանատու գործ ե: Այդ իսկ պատճառով հրապարակում աշխատելու համար հարկավոր ե ուղարկել ստուգված և առավել գրագետ կոլտնտեսուհիներ, վորոնց վարչությունը ճանաչում ե վորպես ակտիվ աշխատողների, վորպես բարեխիղճ վերաբերմունք ունեցողների հանդեպ իրենց հանձնարարված գործը և կոլտնտեսային գույքը:

Այդ գործը հարկավոր ե հանձնարարել 18 տարեկանից վոչ պակաս կանանց և աղջիկների, վորոնք սիրում են յերեխաներին և կարողանում են նրանց հետ պարապել, վորոնք (ցանկալի յե) ունեն վոչ-լրիվ միջնակարգ կամ միջնակարգ կրթություն և անցել են նախադպրոցական դասընթացներ: Առաջին հերթին ոգտագործել նրանց, ովքեր անցյալում աշխատել են հրապարակում և տարել են լավ աշխատանք:

Հրապարակում աշխատելու համար հարկավոր են՝ հրապարակի վարիչ, դաստիարակչուհիներ խմբակների թվի համեմատ, հավաքարարուհիներ, խոհարարուհի: Յեթե մանկհրապարակում կա միայն մեկ խմբակ, վարիչը վորոշ ժամեր պարապում ե յերեխաների հետ, փոխարինելով դաստիարակչուհուն:

Մանկապարտեզները և մանկհրապարակներն աշխատում են ժողովրդական կրթության բաժինների ղեկավարության ու հսկողության տակ: Շրջանային ժողկրթբաժինները պարտավոր են՝ հրապարակում աշխատելու համար կոլտնտեսության կողմից ուղարկված աշխատողներին պատրաստել, բանալ հրապարակներ, ղեկավարել նրանց աշխատանքները, հրահանգավորել հրապարակի աշխատողներին: Ժողկրթբաժինն իր տեսուչների և մեթոդմիավորումների միջոցով պետք ե տեղում ոգնություն ցույց տա նրանց:

Հրապարակի կազմակերպման անմիջական աշխատանքներին մասնակցում են՝ կոլտնտեսության վարչությունը, գյուղխորհուրդը և գյուղի հասարակական ակտիվը: Մանկհրապարակի աշխատողները—վարիչը, դաստիարակները պետք ե աշխատանքի ընթացքում առաջին իսկ որից ամենասերտ կապ պահպանեն կոլտնտեսության վարչության, գյուղխորհրդի և գյուղի կոլտնտեսության հասարակական ակտիվի հետ: Հրապարակի աշխատանքներին հարկավոր ե մասնակից անել գյուղի ինտելիգենցիային՝ ուսուցչին, բժշկին և մյուսներին: Նրանք կարող են հրապարակին մեծ ոգնություն ցույց տալ և՛ խորհուրդներով և՛ գործով:

Սկզբնական շրջանում վարիչը ծանրաբեռնված կլինի շատ խնդիրներով և գործերով՝ կապված հրապարակի կազմակերպման սկզբնական շրջանի աշխատանքների հետ:

Հարկավոր ե ակտիվի հետ միասին ջոկել ամենահարմար շենք մանկական հրապարակի համար,—լավ տեղամասով, ստվերաշատ բակով կամ պարտեզով, մշակել նախահաշիվ՝ հրապարակի պահպանման համար և կոլտնտեսության վարչության առաջիկա նիստում այս բոլոր խնդիրների համար ստանալ վորոշում:

Խոշոր ոգնություն կարող են ցույց տալ հասարակական ակտիվը, կոմյերիտական կազմակերպությունը—հրապարակը կահույքով և խաղալիքներով սարքավորելու, տեղամասը մաքրելու, շենքը զարդարելու, մանկհրապարակի շրջապատը կանաչազարդելու (ծաղկանոցներ, ծաղկաթմբեր և այլն) աշխատանքներում:

Յերեխաների ընդունելությունը հրապարակ—մեծ և կարևոր գործ ե․ այստեղ հասարակայնությունը կոգնի անցկացնել 4—7 տարեկան յերեխաների հաշվառումը:

Յերեխաների ընդունելությունը կատարում ե կոլտնտեսության վարչությունը:

Առաջին որը հրապարակում յերեխաների համար պետք ե լինի տոնական․ պետք ե պատրաստել առանձնապես համեղ կերակուր, բաժանել նվերներ, անցկացնել խաղեր, յերգել, նվագել պատեֆոն, պարել յերեխաների հետ և այլն:

Կոլտնտեսության վարչությունը պետք ե հրապարակի յերեխաների բժշկական սպասարկումն ապահովի շրջանային առողջապահական բաժնի միջոցով: Վարիչը և դաստիարակները ակտիվի հետ միասին պետք ե լավ պատրաստվեն յերեխաների ընդունելության և հրապարակի բացման համար․ կարգավորել և մաքրել շենքն ու հրապարակը, պատրաստել և հարմար դասավորել կա-

հույքն ու խաղալիքները, պատերից կախել (ապակու տակ) ղեկավարների՝ Լենինի, Ստալինի, Վորոշիլովի նկարները և համապատասխան գեղարվեստական նկարներ:

Հրապարակի վարիչը պետք է վարչության նիստերից մեկում, իսկ հետագայում նաև կոլտնտեսականների ընդհանուր ժողովում հաղորդի, թե վո՛րտեղ և ի՛նչպես է կազմակերպվել մանկհրապարակը (վորպեսզի այդ մասին բոլոր կոլտնտեսականներն իմանան) և ի՛նչ աշխատանքներ են նախատեսված կատարել հրապարակում նախադպրոցական յերեխաների դաստիարակության համար ամառվա ընթացքում: Հրապարակի աշխատանքներն ավարտելուց հետո հարկավոր է կատարած աշխատանքների մասին տալ հաշվետվություն և՛ կոլտնտեսության վարչության նիստում, և՛ կոլտնտեսականների ընդհանուր ժողովում: Հաշվետվությանը զուգընթաց կարելի յե կազմակերպել ցուցահանդես, վորտեղ ցուցադրել յերեխաների լուսանկարները, մանկական նկարներ, քանդակներ և այլ աշխատանքներ:

Մանկհրապարակի աշխատանքի ընթացքում ժամանակ առ ժամանակ հարկավոր է հրավիրել կոլտնտեսության վարչության և գյուղխորհրդի անդամներին, կոլտնտեսուհիների ակտիվին, կոմյերիտականներին՝ տեսնելու համար յերեխաների կյանքը հրապարակում, մասնակցելու տոներին, վորպեսզի նրանք իմանան և տեսնեն, թե ի՛նչպես են ապրում յերեխաները հրապարակում:

Յերեխաների կյանքի մասին հրապարակում և նրանց դաստիարակության մասին կարելի յե պատմել կոմյերիտականներին, պիոներներին, ներգրավել նրանց մանկհրապարակին ոժանդակելու համար: Մեծ ոգնություն պետք է ցույց տա մանկհրապարակին նաև կուսկազմակերպությունը:

Հասարակայնության հետ միասին աշխատանքը կստեղծի լավագույն պայմաններ հրապարակում յերեխաների համար և հրապարակը կդարձնի մշտական մանկապարտեզ:

ՄԱՆԿՀՐԱՊԱՐԱԿԻ ՇԵՆՔԸ, ՏԵՂԱՄԱՍԸ ՅԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ

Շենքը

Մանկհրապարակի համար հարկավոր է ջոկել ընդարձակ, լուսավոր, չոր շենք տախտակյա հատակով, ցանկալի յե՝ պատուհանները դեպի արևոտ կողմը: Շենքը պետք է տեղավոր-

ված լինի բարձր և չոր տեղ, հեռու լինի ճանապարհներից և բազմամարդ տեղերից (ճաշարան, վարչության գրասենյակ և այլն):

Հրապարակի համար հատկացված շենքը պետք է դիտի բժիշկը: Յեթե նա գտնի, վոր շենքը հարմար է,—պետք է անցնել շենքի մաքրմանը և վերանորոգմանը. վերանորոգել դռները, պատուհանները, խնամքով սպիտակեցնել պատերը և առաստաղը և, յեթե հնարավոր է, ներկել հատակը:

Շենքը դրսի կողմից նույնպես հարկավոր է վերանորոգել. վերանորոգել կտուրը, պատշգամբը, պարտեզը, պատրաստել ցուցանակ («Մանկական հրապարակ») և ամրացնել այն աչքի ընկնող տեղում:

Տեղամաս

Տեղամասը հարկավոր է ընտրել չոր, արևոտ, հրապարակի շենքին մոտիկ: Նա պետք է ունենա վոչ միայն բաց հրապարակ արևի համար, այլև ծառերով ու թփերով ստվերավորված տեղեր: Տեղամասը հարկավոր է ցանկապատել մոտավորապես 2 մետր բարձրությամբ:

Տեղամասի մի մասը հարկավոր է առանձնացնել յերեխաների շարժական խաղերի համար: Մյուս մասը, վորը պիտանի յե մշակման համար, առանձնացնել մանկական բանջարանոցի և ծաղկանոցի համար: Ստվերաշատ տեղերում պատրաստել սեղաններ յերեխաների ճաշի և պարապմունքների համար: Ստվերաշատ տեղերում նույնպես կազմակերպվելու յե յերեխաների քունը (ծալովի մահճակալների վրա):

3453 / 40

Քամիներից և անձրևից պաշտպանվելու համար պատրաստվում են ծածկեր (ցանկալի յե յուրաքանչյուր խմբակի համար առանձին ծածկ): Յեթե հրապարակում ծառեր չկան, ապա սնունդը, պարապմունքները և ցերեկային քունն անց են կացվում ծածկի տակ:

Տեղամասի մի մասը զբաղված է լինելու տնտեսական շինություններով. սրահ՝ վառելափայտի համար, փոքր սրահ՝ բակի և բանջարանոցի գործիքների համար: Տեղամասի՝ քամուց պաշտպանված մի անկյունում հարկավոր է պատրաստել տախտակամած և կառուցել դուշ:

ՀՍԽՀ-ССРА им. А. Мясникяна

Ինչպես պատրաստել ծածկը

Ծածկը պատրաստելու համար հողը հավասարեցվում է, տափանվում և ապա ծածկվում հարթ տախտակներով: Ծածկի բարձրությունը 3 մետրից պակաս չպետք է լինի: 30 յերեխայից բաղկացած խմբակի համար ծածկի մակերեսը պետք է լինի 8×10 մետր: Կտուրը ծածկվում է տաշած տախտակներով, վորը կարելի յե ներկել բաց գույնով (վոչ մի դեպքում մուգ գույնով չներկել, վորպեսզի կտուրը արևի ճառագայթներից չշիկանա):



Գծ. 1. Ծածկը նախածածկով

Զուգարաններ

Հրապարակի զուգարանները պետք է հարմար լինեն յերեխաների համար և պահպանվեն շատ մաքուր: Զուգարանները պետք է պատրաստել տեղամասի հեռավոր անկյուններում: Զուգարաններն անպայման պետք է ունենան տախտակյա հարթ հատակ (հարմար՝ լվանալու համար), ամուր փակվող դռներ, ապակեպատ լուսամուտներ: Զուգարանների մեծությունը պետք է լինի 2×2,5 մետրից վոչ պակաս: Զուգարանները պետք է հաճախակի ախտահանել:

Տեղամասի սարքավորումը

1. Ցանկապատ—մագլցելու համար. Նրա չափերը փոքրերի համար՝ ,բարձրությունը—100 սմ, յերկարությունը—200 սմ, 4 լայնակի չեղափայտ՝ 3 սմ հաստությամբ, իրարից 20 սմ հեռավորությամբ: Սյուների տրամագիծը—15 սմ: Ցանկապատի հիմնական յերեսքին միացվում են թեեր՝ 100 սմ յերկարությամբ, բութ անկյան տակ:



Գծ. 2. Ցանկապատ միջին և մեծ հասակի յերեխաների համար

2. Հրապարակ—սողալու համար, թեք և հարթ տախտակամածով, կողքերից սանդուխքներ՝ բարձրանալու և իջնելու վարժությունների համար: Հրապարակի չափերն են՝ բարձրությունը՝ 60—100 սմ, թեքվածքի մակերեսը՝ 100×200 սմ. սանդուխքը՝ 3—4 աստիճաններով, աստիճանների լայնությունը՝ 20 սմ:

3. Գերաններ և տախտակներ—հավասարակշռության վարժությունների համար, անշարժ դրությամբ գետնին ամրացված. լայնությունը փոքրերի համար՝ 30 սմ, մեծերի համար՝ 10—15 սանտիմետր:

4. Կանգնակ—թռիչքների համար 200 սմ բարձրությամբ, մեկը մյուսից 5 սմ հեռավորությամբ ցցիկներով: Առաջին զույգ ցցիկները գետնի յերեսից 15 սմ բարձր:

Սյուները թաղվում են հողի մեջ վոչ պակաս քան 35 սմ խորությամբ: Ցցիկները կարելի յե հագցնել ցանկացած բարձրության վրա: Կանգնակին հարմարեցվում է պարան՝ ծայրերին կա-

դած ավազով լիքը քսակներ. պարանն առանց ամրացնելու գըցվում է ցցիկների վրա, ցածր մասում՝ թռիչքների համար, իսկ վերևում՝ թռիչքի ժամանակ ձեռքով գանգին հասնելու համար:

Նույն այդ կանգնակը կարելի է օգտագործել թռիչքների, նպատակին նետելու և վոլեյբոլի ցանց ամրացնելու համար:



Գծ. 3. Ցանկապատ–աշտարակ

Հրապարակի սարքավորումը

Հրապարակը կազմակերպելու ժամանակ հարկավոր է յուրաքանչյուր կոլտնտեսությունում պատրաստել հարմար և ամուր կահույք, վորպեսզի այն դիմանա միքանի տարի: Կահույքը կարելի է վերցնել պատրաստի կամ պատրաստել այստեղ տրված գծագրերի համաձայն—կոլտնտեսության արհեստանոցում: Ինչպիսի՞ կահույք է հարկավոր հրապարակի համար:



Գծ. 4. Գերաններ և տախտակներ հավասարակշռության վարժությունների համար



Գծ. 5. Կանգնակ թռիչքների համար

1. Սեղաններ (հաշվելով 1 սեղան 8 յերեխայի համար)։ Սեղանների չափսերը մեծ յերեխաների համար՝ յերկարությունը— 135 սմ, լայնությունը—70 սմ, բարձրությունը—56 սմ։ Սեղանի չափսերը փոքր յերեխաների համար՝ յերկարությունը և լայնությունը նույնն են, բարձրությունը—47—49 սմ. վոտքերի լայնությունը բոլոր տարիքի յերեխաների համար ներքևում՝



Գծ. 6. Մանկական սեղան 8 հոգու համար

2,5×2,5 սմ, վերևում՝ 6×6 սմ, սեղանատակի լայնությունը՝ 7 սմ։ Սեղանների անկյունները պետք է լինեն բութ։ Սեղանների համար հարկավոր է ձեռք բերել մոմլաթ (կլյոնկա), ցանկալի յե բաց գույնի։ Սեղանները և մոմլաթը պետք է պահվեն որինակելի մաքրության մեջ։



Գծ. 7.

Ծանոթություն. 8 մարդու համար սեղանը թույլատրվում է միայն մեծ յերեխաների խմբերում և հրապարակում։

2. Աթոռիկներ (ըստ յերեխաների քանակի)։ Մեծ յերեխաների համար աթոռիկների չափսերն են—վոտքերի բարձրությունը՝ 31 սմ, նստատեղը՝ 31×28 սմ, մեջքի բարձրությունը՝ 30 սմ։ Աթոռիկների չափսերն են փոքր յերեխաների համար՝ վոտքերի բարձրությունը—26 սմ, նստատեղը—29×25 սմ, մեջքի բարձրությունը—25 սմ։ Բոլորի համար վոտքերի լայնությունն է—3×3 սմ։ Անկյունները բութ են։ Սեղանները և աթոռները ներկել բաց գույնով։

Տարիք	Աթոռի բարձրությունը հատակից	Նստելատեղի լայնությունը առջևի յեզրով	Մեջքի բարձրությունը	Նստելատեղի խորությունը մինչև մեջքը (գոտակարը)
Փոքր	26	29	25	25
Միջակ	28	30	27	27
Մեծ	31	31	30	28

3. Մեջքով նստարաններ (7—8 հատ)—առավոտը յերեխաներին ընդունելու, ճաշից հետո հանգստանալու համար. Նստարանի յերկարությունն է 153 սմ, մյուս չափսերը նույնն են, ինչ վոր աթոռներինը։



Գծ. 8.

4. Պահարաններ․ *մեկը ամանեղենի համար և ամեն մի խմբին մեկական պահարան խաղալիքների և ուսումնական պիտույքների համար (ամանեղենի պահարանում դարակները պետք է ծածկված լինեն մոմլաթով)։ Պահարանների չափսերն են՝ բարձրությունը—100 սմ, լայնությունը—80 սմ, դարակների լայնությունը կամ պահարանի խորությունը—25 սմ։*



Գծ. 9. *Պահարան գրենական պիտույքների և խաղալիքների համար*

5. Դարակներ *(կանգնած)—ամեն խմբին 2 հատ. մեկը՝ խաղալիքների համար, մյուսը՝ շինարարական նյութերի համար։ Դարակի յերկարությունը—1 մետր, լայնությունը—30 սմ։ Դարակի բարձրությունը—յերեխայի հասակի համեմատ։*

6. Կախարաններ յերեսսրբիչների համար։ *Ամեն մի խմբի համար (կանգնած, շարժական)։ Կախարանի բարձրությունը—ըստ խմբի յերեխաների հասակի՝ մեծ յերեխաների համար (6—7 տարեկան) մոտավորապես—100 սմ, փոքրերի համար— 80 սմ։ Յուրաքանչյուր յերեխա պետք է ունենա բաժանմունք կախիչով․ բաժանմունքի լայնությունը—10—12 սմ, խորությունը—15 սմ։ Կախիչների արանքում կան ֆաներից միջնորմներ։ Վերևում—բաժանմունքներ ունեցող դարակ յուրաքանչյուր յերեխայի համար, վորտեղ դրվում են՝ բաժակը, ատամի փոշին, ատամի խոզանակը (այս բոլորը հարկավոր է դնել ըստ յերեխաների թվի)։*



Գծ. 10. *Բուֆետ ամանեղենի համար*

7. Կախովի լվացարաններ *լաղաններով (8—10 յերեխային մեկ լվացարան)։ Լաղանի տակ պետք է պատրաստել կլոր անցքերով աթոռակներ։ Աթոռակի բարձրությունը մեծերի համար՝ 53—55 սմ, փոքրերի համար՝ 48—50 սմ, լվացարանի բարձրությունը հատակից փոքրերի համար՝ 70 սմ, մեծերի համար—80 սմ։ Լվացարանները պետք է լինեն դեպի աջ կամ ձախ կողմը*



Գծ. 11. *Կախարաններ յերեսսրբիչների համար*

բացվող ծածկով: Պատի վրա, վորտեղ կախված է լվացարանը, պետք է կախել մոմլաթ: Յեթե լվացումը կատարվում է բակում, ապա հարկավոր է ընտրել քամուց պաշտպանված տեղ: Վոչ մի դեպքում չթողնել յերեխաներին լվացվել անմիջապես հողի վրա, այլ անպայման լաղանի կամ դույլի վրա: Լվացարանի աջ կողմից՝ յերեխայի ծռած արմունկների բարձրության հավասար ամրացնել դարակիկ՝ սապոնամանի համար, ձախ կողմից պատրաստել կախարան, վորպեսզի յերեխան լվացվելու ընթացքում կախի յերեսսրբիչը:

8. Ձեռք բերել փոքրիկ գոգավոր թիակ, խոզանակ աշխատանքից հետո սեղանները մաքրելու համար, արկղ կամ զամբյուղ—աղբի համար և մաքուր փալասի մի քանի կտոր:

9. **Մահճակալներ քնելու համար** — ըստ յերեխաների թվի: Մահճակալները կարելի յե գնել պատրաստի, կամ պատրաստել ծալովի մահճակալներ և շրջաքաշել պարուսինով կամ պարկի կտորով:

Մահճակալների չափսերն են՝ բացված մահճակալի բարձրությունը հատակից՝ 40—45 սմ, լայնությունը՝ 60—65 սմ, յերկարությունը՝ 125—140 սմ:

Յերեխաների քնի համար պետք է լինեն՝ բարձ, 2 բարձի յերես, 2 սավան, պարկ՝ անկողնի սպիտակեղենի համար, ծածկոց, իսկ ցուրտ յեղանակի համար—վերմակ (յուրաքանչյուր յերեխայի համար):

10. Յուրաքանչյուր յերեխայի համար պետք է կարել վոչ պակաս 2 զույգ տրուսիկ[1], 2 թեթև բաճկոնակ կամ շապիկ, 2—3 քթի թաշկինակ: Այդ բոլորը հարկավոր է նշանել և գործածել միայն տվյալ յերեխայի համար: Սպիտակեղենը կարելիս պետք է մասնակից անել մայրերին: Յեթե կա հնարավորություն, հարկավոր է գնել յուրաքանչյուրի համար մեկական զույգ սանդալ կամ չուստ անտառ կամ դաշտ զբոսանքի գնալու համար:

11. Վերնազգեստի համար (աշնանը և ձմեռը) սարքավորել բաժանմունքներ ունեցող կախարաններ՝ յուրաքանչյուր յերեխայի համար, վերևում կառուցել դարակիկ գլխարկների համար:

12. Յերեխաների քանակի համաձայն հարկավոր է գնել ափսեներ, բաժակներ ափսեներով, գդալներ—թեյի ու ճաշի և պատառաքաղներ: Ամանեղենը պիտի լինի հախճապակյա, գդալները՝ ալյումինի:

Բացի դրանից հարկավոր է գնել տնտեսական գույք և խոհանոցի ամանեղեն (տես հավելված № 1):

Ամբողջ տնտեսական գույքը պետք է լինի լավ վորակի և բավարար քանակով:

1 Տրուսիկներն այնպես պիտի կարված լինեն, վորպեսզի ազատ պատեն ծրունքները, չքերեն և չգրգռեն վոտների արանքները:

ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

Մանկական հրապարակի աշխատողները լրիվին պատասխանատու յեն յերեխաների դաստիարակության, կյանքի և առողջության պահպանման համար:

Մանկական հրապարակի վարիչի պարտականությունները

Մանկական հրապարակի վարիչը ղեկավարում է հրապարակի վողջ տնտեսական և դաստիարակչական աշխատանքները:

Ծանոթություն. Միակոմպլեկտ հրապարակի վարիչն ինքն է տանում յերեխաների դաստիարակչական աշխատանքները:

Վարիչն ապահովում է անհրաժեշտ պայմաններ յերեխաների առողջության ամրապնդումն ապահովելու համար (հետևում է որվա կարգուկանոնի և սանիտարական-առողջապահական կանոնների կատարմանը):

Նա ամեն կերպ աշխատում է սարքավորել հրապարակը կահույքով, ուսումնական պիտույքներով, ամանեղենով, խաղալիքներով, պատասխանատու յե հրապարակի ամբողջ գույքն անվնաս պահելու համար: Վարում է գույքամատյանը: Ամսե-ամիս ստուգում է ամբողջ գույքը, գույքի փչացման դեպքում ակտ է կազմում նրա դուրսգրման մասին. աշնանը գույքը ակտով հանձնում է կոլտնտեսության տնտեսվարին: Վարում է դրամական հաշվետվությունը:

Ապահովում է սննդամթերքի ստացումը, հետևում է կերակրի լավորակ պատրաստմանը և մթերքների ճիշտ ծախսմանը: Վարում է մթերքի մուտքի և յելքի մատյանը:

Ապահովում է հակահրդեհային միջոցառումների կատարումը և շենքի ու սարքավորման ժամանակին վերանորոգումը:

Ընդունում է յերեխաներին հրապարակը, կազմում է յերեխաների ցուցակը կցված ձևով (տես հավելված № 8):

Յերեխաների հետ տարվող աշխատանքներին ճիշտ ընթացք

տալու համար վարիչն այցելում է խմբերի պարապմունքները: Անց է կացնում աշխատողների հետ խորհրդակցություններ դաստիարակչական աշխատանքների և տնտեսական հարցերի շուրջը:

Հետևում է ներքին կարգապահության կանոնների կատարմանը (պարտականությունների բաշխում աշխատակիցների միջև), բոլոր աշխատողների ժամանակին աշխատանքի ներկայանալուն և նրանց վրա դրված պարտականությունների բարեխիղճ կատարմանը: Դուրս է գրում մանկական հրապարակի համար թերթեր, գնում գրքեր, աշխատողների հետ անց է կացնում զրույցներ, ընթերցում է գրքեր յերեխաների դաստիարակչական հարցերի շուրջը («Ոգնություն գյուղի նախադպրոցական աշխատողին» և այլն):

Վարիչը կազմակերպում և տանում է աշխատանք ծնողների մեջ յերեխաների դաստիարակության հարցերի շուրջը: Մշակում է կանոններ ծնողների համար: Տանում է աշխատանք ծնողական կոմիտեյի հետ:

Կապ է պահպանում կոլտնտեսության վարչության հետ, գյուղխորհրդի հետ, հենվելով կոլտնտեսության կուսակցական կազմակերպության վրա, ոգնության ներգրավելով հրապարակի աշխատանքին գյուղի ինտելիգենցիային (ուսուցչին, բժշկին, բուժակին, խրճիթվարին, ակումբավարին և այլն):

Վարիչն իր աշխատանքներում հաշվետու յե կոլտնտեսության վարչության և ծնողական ժողովի առաջ:

Հրապարակի վարիչը պատասխանատու յե

Շրջժողկրթբաժնի և կոլտնտեսության վարչության կարգադրությունների կատարման համար:

Հրապարակում յերեխաների դաստիարակության ճիշտ դրվածքի համար:

Մանկական հրապարակի բոլոր յերեխաների կյանքի և անվտանգության համար:

Դաստիարակների և տեխնիկական աշխատողների կողմից իրենց պարտականությունների ճշգրիտ կատարման համար:

Հաստատված սանիտարական կանոնների և բժշկի կարգադրությունների կատարման համար:

Մթերքների և դրամական միջոցների ճիշտ ոգտագործման համար:

Փաստաթղթերի, տետրերի և գրքերի կանոնավոր դրության և պահպանման համար:

Հրապարակի ամբողջ գույքի պահպանման համար:

Մանկական հրապարակի դաստիարակի պարտականությունները

Դաստիարակն անց է կացնում առորյա ամբողջ դաստիարակչական աշխատանքը, խաղերը և պարապմունքները յերեխաների հետ:

Հետևում է իր խմբի յուրաքանչյուր յերեխայի առողջությանը, կատարում է բժշկի պահանջները յերեխաների պահպանման և առողջության ամրապնդման համար և հետևում է յուրաքանչյուր յերեխայի մաքրությանը և կոկիկությանը: Հոգատար և ուշադիր վերաբերմունք է ցույց տալիս յուրաքանչյուր յերեխայի կարիքներին և հետաքրքրություններին:

Դաստիարակը կազմում է իր աշխատանքի պլանը, ամեն որ կանոնավոր և ուշի-ուշով պատրաստվում է պարապմունքներին· մասնակցում է հրապարակի վարիչի հրավիրած խորհրդակցություններին· հետևում է, վոր յերեխաները կանոնավոր հաճախեն մանկհրապարակը, ամեն որ նշանակում է յերեխաների հաճախումը, այցելում է այն յերեխաների ընտանիքները, վորոնք չեն հաճախում հրապարակ, պարզում է չհաճախելու պատճառները· հետևում է, վոր յերեխաներից վոչ մեկը չհեռանա հրապարակից· տանում է աշխատանք ծնողների հետ յերեխաների դաստիարակության հարցերի շուրջը:

Մանկական հրապարակի դաստիարակն աշխատում է մանկական հրապարակի վարիչի ղեկավարությամբ և հաշվետու յե նրա առաջ իր աշխատանքի համար:

Դաստիարակը պետք է գա հրապարակ առնվազն 1/4 ժամ յերեխաների գալուց առաջ, գնա հրապարակից փոխարինող դաստիարակի գալուց հետո, կամ բոլոր յերեխաների գնալուց հետո:

Դաստիարակը պատասխանատու յե

Խմբի բոլոր յերեխաների կյանքի և անվտանգության համար, նրանց ճիշտ դաստիարակության համար:

Յուրաքանչյուր յերեխայի մաքրության համար (նա ինքը պետք է լինի մաքուր և կոկիկ):

Յերեխաների հաճախման համար։

Խմբի սենյակի, պահարանների, դարակների և տեղամասի մաքրության և կարգուկանոնի համար։

Նրան հանձնված գույքի, խաղալիքների և պիտույքների պահպանման և մաքրության համար։ Խաղալիքների, գործիքների և կահավորության կոտրվելու դեպքում միջոցներ է ձեռք առնում նրանց վերանորոգման համար։

Բժշկի աշխատանքը

Բժիշկը զննում է տեղամասը և հրապարակի շենքը, տալիս է թույլտվություն այդ շենքի օգտագործման համար, այնուհետև հետևում է շենքի և տեղամասի սանիտարական դրությանը, հրապարակում սանիտրական կանոնների կատարմանը։

Մինչև հրապարակի բացումը քննում է յերեխաներին, այնուհետև սիստեմատիկաբար հետևում յուրաքանչյուր յերեխայի առողջությանը, նշանակում է բուժում, հետևում է իր նշանակումների կատարմանը։

Հանկարծակի հիվանդացած յերեխաներին հասցնում է անհապաղ օգնություն, անց է կացնում անհրաժեշտ պրոֆիլակտիկ (հիվանդությունը կանխող) միջոցառումներ մանկական հրապարակում։

Հետևում է յերեխաների սննդին հրապարակում, վարիչի հետ միասին կազմում է ճաշացուցակ (մենյու)։ Ծնողների և հրապարակի անձնակազմի հետ անց է կացնում զրույցներ յերեխայի առողջապահության հարցերի շուրջը, յերեխայի հիվանդությունների կանխման, առաջին օգնություն ցույց տալու, սնունդը և շենքը առողջապահական վիճակում պահպանելու հարցերի շուրջը։

Տեխնիկական անձնակազմի պարտականությունները

Մանկհրապարակի տեխնիկական անձնակազմը (հավաքարար, խոհարար) աշխատանքը տանում է հրապարակի վարիչի ցուցումներով և ղեկավարությամբ—ներքին կարգապահական և սանիտարական կանոնների համաձայն։

Ամբողջ անձնակազմը յենթարկվում է բժշկական քննության հրապարակը բացվելուց առաջ և այնուհետև ամսեամիս։

Մեծ հրապարակներում (2—3 խումբ, յերեխաների քանակը 50—80 հոգի) պետք է լինեն խոհարար և հավաքարար։ Մեկ խումբ ունեցող հրապարակը (15—30 յերեխա) կարող է ապասարկի մեկ տեխնիկական աշխատող, վորը կկատարի և՛ խոհարարի, և՛ հավաքարարի պարտականությունները։

Մանկական հրապարակի խոհարարը պատասխանատու յե յերեխաների սնունդը համեղ և առողջարար (մաքրության բոլոր կանոնների պահպանման հետ միասին) պատրաստելու համար։ Նա պատրաստում է նախաճաշ, ճաշ, ընթրիք և մատուցում է սնունդը յերեխաներին։

Լվանում է ամանեղենը, սրբում է կաթսաները, մաքուր և կանոնավոր է պահում խոհանոցը և ամանեղենը, լվանում է սրբիչները հնգօրյակում մեկ անգամից վոչ ուշ, յեփում է խմելու ջուր յերեխաների համար, ամանեղենը, կահույքը և հատակը լվանալու համար ջուր է բերում։

Մանկհրապարակի հավաքարարը, պատասխանատու յե շենքի, տեղամասի և հրապարակի ամբողջ կահավորման մաքուր և կանոնավոր դրության համար։

Հավաքարարը հրապարակ է գալիս յերեխաների գալուց կես ժամ առաջ, բաց է անում լուսամուտները, մաքրում է կահույքի փոշին, նախապատրաստում է այն ամենը, ինչ անհրաժեշտ է յերեխաների լվացվելու համար։

Յերեկոյան, յերեխաների գնալուց հետո, հավաքարարը լվանում է հատակը և սրբում կահույքը։ Յեթե օրվա ընթացքում յերեխաներն օգտվում են շենքից, ապա նրանց բացակայության ժամանակ մաքրում է հատակը թաց ավելով։

Յերեկոյան, յերեխաների գնալուց հետո, կամ առավոտը, մինչև նրանց գալը, նա մաքրում և մի թեթև ջրում է տեղամասը։

Օրվա ընթացքում հետևում է զուգարանին, անհրաժեշտության դեպքում սրբելով այնտեղի խոնավությունը. հետևում է, վորպեսզի յերեխաների համար ջրամաններում և տակառիկներում խմելու յեռացրած ջուր լինի, ջուր է լցնում լվացարանները, հետևում է, վորպեսզի լվացարանների մոտ մաքուր լինի։

Կեսօրվա քնի համար պատրաստում է մահճակալները, դրանք հավաքում է քնից հետո, օգնում է դաստիարակներին՝ փոքրիկներին քնեցնելու գործում։ Օգնում է դաստիարակին յերեխաներին լողացնելու կամ ջրով շփելու դեպքում, յերբեմն մնում է փոքրերի մոտ, յերբ մեծ յերեխաները դաստիարակի հետ էքսկուրսիա յեն գնում։

Հավաքարարը և խոհարարը պատասխանատու յեն իրենց հանձնած բոլոր տնտեսական առարկաների հետ խնամքով վարվելու համար, նրանց մաքուր և ապահով դրության համար: Հավաքարարը և խոհարարը պիտի հետևեն իրենց հագուստի մաքրությանը:

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԵԼ ՊԼԱՆ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Յերեխաների հետ աշխատանքը կանոնավոր և արդյունավետ անցկացնելու համար դաստիարակչուհին պետք է պարտադիր կարգով նախօրոք պատրաստվի խաղերին ու պարապմունքներին և կազմի իր աշխատանքների օրացուցային պլանը: Ամենօրյա պլանի մեջ սովորաբար նախատեսվում են այն պարապմունքները, խաղերը և զբոսանքները, վոր դաստիարակը ծրագրել է անցկացնել յերեխաների հետ: Պլանը պետք է կազմել այնպես, վորպեսզի յերեխաների հետ անցկացվեն տարբեր պարապմունքներ և խաղեր: Այդ դեպքում վորոշ խաղեր և պարապմունքներ կարող են կրկնվել փոքր ինչ ավելի հաճախ, քան մյուսները:

Կազմելով յերեխաների մեջ տարվելիք աշխատանքի պլանը, հարկավոր է ճիշտ դասավորել խաղերը և զբաղմունքներն որվա ընթացքում. շարժական զբաղմունքները և խաղերը հարկավոր է անցկացնել նստած վիճակում միաժամանակ խաղալուց հետո, չտալ մեկը մյուսի հետևից յերկու նստովի կամ շարժական զբաղմունք:

Պլանն ավելի լավ է կազմել կարճ ժամանակամիջոցի—5—10 որվա համար:

Աշխատանքի ճիշտ կազմակերպման համար բավական չէ միայն կազմել պլան: Դաստիարակը պետք է ամեն որ լավ նախապատրաստվի պարապմունքներին, ժամանակին պատրաստի անհրաժեշտ պիտույքները և նյութերն առաջիկա աշխատանքի համար, ձեռք բերի նոր գրքույկ, լրացնի վորոշ գունավոր մատիտներ, ներկեր, թուղթ, նոր խաղալիքներ: Յեթե պլանում յերեխաների համար նշված է նոր շարժական խաղ, դաստիարակը նախօրոք ինքը պիտի ուսումնասիրի այդ խաղը, կամ, յեթե նախատեսված է, որինակ, զբոսանք դեպի այգի մրգեր քաղելու, հարկավոր է պատրաստել զամբյուղներ, նախօրոք վորոշել, թե վո՛ր ճանապարհով գնալ, վո՛ր վայրում իջնել, ճանապարհի վո՛ր տեղում կազմակերպել հանգիստը. յեթե նախա-

տեսվում է գրույց կամ ընթերցում, նախօրոք հարկավոր է կարդալ այն գիրքը, վորից պիտի ընթերցվի յերեխաներին: Նկարչության համար պիտի պատրաստել ներկեր և թուղթ:

Որվա վերջում դաստիարակը գրի յե առնում, թե ի՛նչ է նրան հաջողվել անցկացնել և վորը փոխարինել ուրիշ զբաղմունքով:

Հրապարակում փոքրահասակների խմբի յերեխաների մեջ տարվելիք աշխատանքի որինակելի պլան
1/VI—13/VI

Ամիս և ամսաթիվ	Որվա խաղերը և պարապմունքները ու նրանց բովանդակությունը	Ի՛նչն է կատարված, ինչը վոչ և ինչով է փոխարինված
1/VI	1. «Տնային կենդանիներ» նկարների դիտումը: 2. Շարժական խաղ «Կատուն և մկնիկները»:	
2/VI	1. Նկարչություն գունավոր մատիտներով: 2. Յերգ «Մեղու»:	
3/VI	1. Զբոսանք դեպի մարգագետին ծաղիկ քաղելու: 2. «Գնդիկ-բոքոնիկ» հեքիաթի պատմումը:	
4/VI	1. Ծեփ: 2. Շարժական խաղ «Կատուն և մկնիկները»:	
5/VI	1. 2—3 գույնի սոսնձաներկով նկարչություն: 2. Խաղեր ավազի հետ նոր խաղալիքներով—դույլիկներով, բահիկներով:	
6/VI	1. Կարմիր, կապույտ և կանաչ թղթերից ձևեր կտրատելը: 2. Ծանոթ յերգերի կրկնությունը:	
8/VI	1. Վատագինի «Տնային կենդանիներ» նկարների դիտումը: 2. Խաղեր ջրի և լողացող խաղալիքների հետ:	
9/VI	1. Նկարչություն գունավոր մատիտներով: 2. «Ընտանի կենդանիներ» խաղալիքներով խաղեր:	

Ամիս և ամսաթիվ	Որվա խաղերը և պարապմունքները ու նրանց բովանդակությունը	Ի՞նչն է կատարված, ինչը վոչ և ինչով է փոխարինված
10/VI	1. Ծեփ: 2. «Անձրև» վոտանավորի ուսուցում:	
11/VI	1. Խաղեր նոր խոշոր շինանյութերով: 2. Ծանոթ յերգերի կրկնություն:	
12/VI	1. Նկարչություն կարմիր և կապույտ սոսնձաներկերով: 2. «Պապն ու շաղգամը» հեքիաթի պատմումը:	
13/VI	1. Ծանոթ յերգերի կրկնություն: 2. Զբոսանք դեպի կոլտնտեսային այգի: Ծանոթություն. Յերկրորդ զբաղմունքն անց է կացվում քնից հետո:	

Հրապարակում մեծահասակների խմբի յերեխաների մեջ տարվելիք աշխատանքի օրինակելի պլան 1/VI—13/VI

Ամիս և ամսաթիվ	Որվա խաղերը և պարապմունքները ու նրանց բովանդակությունը	Ի՞նչն է կատարված, ինչը վոչ և ինչով է փոխարինված
1/VI	1. Ծեփ յերեխաների ցանկությամբ: 2. Քայլք: Հին յերգերի կրկնություն և նոր յերգի ուսուցում «Առաջ քայլենք»: 3. Բանջարի հավաքում մանկական բանջարանոցում:	
2/VI	1. Բարտոյի «Մրոտ աղջիկը» գրքույկի ընթերցումը: 2. «Կըկու և թռչուններ» խաղը և ուրիշ ծանոթ խաղեր:	
3/VI	1. Նկարչություն սոսնձաներկերով:	

Ամիս և ամսաթիվ	Որվա խաղերը և պարապմունքները ու նրանց բովանդակությունը	Ի՞նչն է կատարված, ինչը վոչ և ինչով է փոխարինված
	2. Սովորեցնել նոր վոտանավոր «Արտուտիկը» Հ. Հայրապետյանի:	
4/VI	1. Զբոսանք: Ծաղիկներ հավաքելը, ծանոթ ծաղիկների ճանաչումը նրանց հոտից: Պատմել «Մամլաքյաթը»—թարգմ. Ռ. Կիրակոսյանի: 2. Շոգեքարշի և վագոնների կառուցում լուցկու տուփերից և կոճերից:	
5/VI	1. Կտրատում և կպցնում: 2. Խաղ: Տրվում են սեղանի խաղեր՝ «Դինգին», «Վո՞ր ժամն է»: 3. Պատմել Լ. Տոլստոյի «Ճնճղուկն ու ծիծեռնակը» պատմվածքը:	
6/VI	1. Նկարչություն գունավոր մատիտներով: 2. «Մկան թակարդ» խաղը և ուրիշ խաղեր: 3. Զբոսանք դեպի մարգագետին ծաղիկներ քաղելու: Սենյակները զարդարելու համար ծաղկեփնջեր կազմել: Ծանոթություն: Յերրորդ պարապմունքը նախատեսված է որվա յերկրորդ կեսի համար, քնից հետո:	
8/VI	1. Նկարչություն սոսնձի և գունավոր ներկերով: 2. Պատմել «Ընկեր Ստալինի մանկությունը»: Ծանոթ վոտանավորների կրկնում և հանելուկների լուծում:	
9/VI	1. Պարապմունքներ ազատ ընտրությամբ: 2. «Կանաչ դաշտի լալեն եմ յես»—Միրզոյանի յերգի ուսուցում: 3. Շարժական խաղերի կրկնություն:	
10/VI	1. Աշխատանք ծաղկանոցում—ծեծած աղյուսով (կարմիր և սպիտակ) ծաղկանոցի յեզրերի սարքավորումը: 2. Զբոսանք—կոլտնտեսականների հունձը դիտելու համար:	

Ամիս և ամսաթիվ	Օրվա խաղերը և պարապմունքները ու նրանց բովանդակությունը	Ի՞նչն է կատարված, ինչը՝ վոչ և ինչով է փոխարինված
11/VI	1․ Կրկնել «Ընկեր Ստալինի մանկությունը» պատմվածքը։ 2․ Շարժական խաղեր։ «Ջի–ձի» և յերեխաներին ծանոթ ուրիշ խաղեր։	
12/VI	1․ Ծեփ ազատ ընտրությամբ։ 2․ Դիդակտիկ խաղեր յերեխաների ազատ ընտրությամբ։	
13/VI	1․ Դաշտի ծաղիկներ կտրատելը գունավոր թղթից և կանաչ թղթի վրա կպցնելը։ 2․ «Կատուն, աքլորը և աղվեսը» հեքիաթի պատմումը։ 3․ «Ալ յայլուխս»—պարի ուսուցում։	

Այստեղ յերեխաների մեջ տարվելիք աշխատանքի օրինակելի պլանը նրա համար է տրված, վորպեսզի ոգնություն ցույց տրվի դաստիարակներին աշխատանքի պլան կազմելիս։

Տարբեր մանկական հրապարակներում լինում են տարբեր պայմաններ,—այսպես, օրինակ, հրապարակ կա, վորը մոտ է անտառին, մյուսը՝ մոտ է գետին, մեկը դաշտի կողքին է գտնվում, իսկ մի ուրիշը նրանից հեռու տարածության վրա։ Հրապարակ կա, վոր առաջին տարին չի աշխատում․ յերեխաներն այդ հրապարակում արդեն շատ են նկարել, քանդակել, գիտեն վոտանավորներ, իսկ մի ուրիշ մանկական հրապարակում՝ յերեխաներն այցելում են առաջին տարին։ Այստեղից պարզ է, վոր ոգտվելով գրքույկում զետեղված պլանից, յուրաքանչյուր դաստիարակ պետք է վերցնի տրված պլանից այն խաղերը և պարապմունքները, վորոնք հարմար են իր պայմաններին։

Յուրաքանչյուր դաստիարակ աշխատանքի պլան կազմելիս պետք է աշխատի, վոր ամեն որ չկրկնվեն միևնույն խաղերը, վոր խաղերը և յերեխաների պարապմունքները լինեն բազմազանի և հետաքրքիր։

Գրքում տրված են մեծ քանակով վոտանավորներ, պատմվածքներ, խաղեր, յերգեր, բայց դա չի նշանակում, վոր հարկավոր է ամբողջ նյութն ոգտագործել իրար հետևից։ Գրքում

զետեղված նյութերը հարկավոր է ոգտագործել հետզհետե։ Մեկ որում յերկու նոր նյութ, օրինակ, նոր յերգ և նոր վոտանավոր տալ չի կարելի։

Յերեխաներին ծանոթ պատմվածքները, հեքիաթները, յերգերը յերեխաների պահանջով կարելի յե կրկնել նույն որը և միքանի որ իրար հետևից։

Յուրաքանչյուր դաստիարակ պետք է հիշի, վոր խաղերը և պարապմունքները յերեխաների մեջ տարվող դաստիարակչական աշխատանքի միայն մի մասն են։ Դրանց անցկացմանը պատրաստվելիս պետք է մտածել և վաղվա ամբողջ աշխատանքի մասին,—ինչպես առավոտյան հանդիպել յերեխաներին, լվացվելու ժամանակ նրանցից ում վրա առանձին ուշադրություն դարձնել, ինչպես լավ կազմակերպել յերեխաների քունը և այլն։

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(Հաստատված են ԽՍՀՄ Առժողկոմատի պետական սանիտարական ինսպեկցիայի կողմից)

I․ Հրապարակի շինությունը և տեղամասը պետք պահվի մաքուր և կանոնավոր դրության մեջ։ Արգելվում է հրապարակները կառուցել գոմերի և գոմաղբի կույտերի մոտ։

Բացումից առաջ հրապարակի շենքը պետք է սպիտակեցրած լինի։

1․ Սենյակների հատակը լվանալ ամեն որ։ Վեցօրյակում մեկ անգամ հատակը լվանալ տաք ջրով։ Մաքրելու ժամանակ պետք է սեղանները և պահարանները շարժել տեղից։

2․ Որական յերկու անգամ հատակները սրբել թաց ավելով կամ մաքրել թաց շորով։

3․ Վեցօրյակում մեկ անգամ սապնախառը տաք ջրով լվանալ ամբողջ կահույքը, դռները և լուսամուտները։

4․ Սեղանների մոմլաթները մաքրել թաց շորով ուտելուց առաջ և հետո, և ամեն որ որվա վերջում լվանալ տաք ջրով և սապոնով։

5․ Բոլոր պարապմունքները, քունը, ուտելն անցկացնել բացոթյա, անցնելով սենյակները միայն անձրևային կամ քամոտ յեղանակին։ Սենյակների լուսամուտներն ամբողջ որը պահել բաց, բայց պաշտպանված ճանճերից (մառլայով)։ Փեղկերը մաքրել ամեն որ։ Լվանալ ամեն վեցօրյակում։

6. Խաղաղ յեղանակին յերեխաների լվացվումը անցկացնել բացօթյա: Սենյակի ներսում լվացարաններից օգտվելու դեպքում սենյակի հատակը միքանի անգամ մաքրել չորով, թույլ չտալով խոնավություն առաջանա լվացարանների մոտ: Լվացարանները հարմարեցնել յերեխաների հասակին, ծորակների քանակը պիտի լինի 10 յերեխային մեկ հատից վոչ պակաս: Սրբիչների կախարանները պետք է լինեն բաժանմունքներով յուրաքանչյուր յերեխայի համար: Սրբիչները պիտի փոխել վեցօրյակում մեկ անգամից վոչ պակաս:

7. Զուգարանները կառուցել տեղամասի առանձին անկյունում փայտե հատակով 3—4 անցքերով: Հատակը և նստարանը լվանալ ամեն օր ալկալիախառն (սոդա) տաք ջրով և մաքրել նավթով: Որվա մեջ հատակը մաքրել միքանի անգամ, թույլ չտալով, վոր խոնավություն առաջանա: Հետևել, վոր յերեխաներն օգտվեն միայն զուգարանից և չկեղտոտեն բակը: Ամեն օր զուգարանների ու կեղտաջրի փոսերում չաղ տալ քլորակրի լուծույթ:

8. Անկողնի սպիտակեղենը, բարձերը, վերմակները պահել յուրաքանչյուրի համար նշված առանձին տոպրակներում: Անկողնի սպիտակեղենը փոխել վեցօրյակը մեկ անգամ: Բարձերը, վերմակները, ներքնակներն օդափոխել և թափ տալ յուրաքանչյուր վեցօրյակ:

9. Սպիտակեղենի լվացում և չորացումը չկատարել մանկական հրապարակի շենքում, այլ կատարել բակում կամ սրահում: Սապոնաջուրը թափել խաղահրապարակից հեռու:

10. Մանկական հրապարակի տեղամասը ջրել և սրբել ամեն օր մինչև յերեխաների գալը: Տեղամասում տեղավորել միքանի արկղ աղբի համար, աղբն ամեն օր հավաքել և թափել բակի հեռավոր անկյունում սարքված ծածկվող աղբահորը:

11. Ամբողջ ամանեղենը լվանալ յերկու անգամ՝ սկզբում տաք ջրով, ապա ողողել յեռացրած ջրով: Թեյի և ճաշի ամանեղենը պետք է լինեն հախճապակյա, գդալները—ալյումինի:

12. Ամիսը մեկ անգամ անցկացնել սանիտարական օր՝ առաստաղները և պատերը մաքրել, կահույքը, պատուհանները, դռները և խաղալիքները լվանալ, ամանեղենը յեռացնել, անկողինները թափ տալ և այլն:

II. Սանիտարական կանոններ հրապարակի աշխատողների, յերեխաների և ծնողների համար.

1. Հրապարակի աշխատողները պետք է օրինակ լինեն յերեխաների համար, նրանք հագնված պիտի լինեն մաքուր և կոկիկ, պիտի հետևեն իրենց ձեռքերի, մազերի և հագուստի մաքրությանը: Բոլոր աշխատողները պիտի հագնեն խալաթներ և սպիտակ գլխակապ. խոհարարի գլխի մազերն ամբողջապես պետք է ծածկված լինեն գլխակապով:

2. Ծնողները յերեխաներին պիտի հրապարակ բերեն մաքուր լվացված ու հագնված և հանձնեն դաստիարակչուհուն: Վերնազգեստով հրապարակի շենքը մտնել արգելվում է: Ծնողների մուտքը մանկական սենյակները և մանկական անկյունները թույլ է տրվում միայն վարիչի կամ խմբի դաստիարակչուհու համաձայնությամբ:

3. Յերեխաները հրապարակում պետք է սովորեն, վարժվեն ու ընտելանան մաքրությանը: Յերեխաների յերեսը, ձեռքերը, պարանոցը և ականջները պետք է լինեն մաքուր: Մազերը պետք է կտրել ամեն ամիս: Յեղունգները պիտի կարճ կտրել, վեցօրյակը մեկ անգամ:

4. Մշտապես հետևել յերեխաների մարմնի, սպիտակեղենի և հագուստի մաքրությանը, և յեթե հայտաբերվի վորևե յերեխա կեղտոտ մարմնով, սպիտակեղենով կամ հագուստով, հարկավոր է նույն օրն ևեթ իրազեկ դարձնել ծնողներին, առաջարկելով նրանց համապատասխան միջոցներ ձեռք առնել:

5. Յերեխաների ամառային հագուստը պիտի լինի հարմար և թեթև՝ տրուսիկներ կամ կոմբինացիա, բաճկոնակ կամ թեթև բլուզ, սանդալներ բոբիկ վոտներին կամ բոլորովին բոբիկ: Ամեն յերեխա պիտի ունենա հատուկ նշանով թաշկինակ:

6. Ամեն օր, յերեխաների հրապարակ գալու ժամանակ, դաստիարակը չափում է այն յերեխաների տաքությունը, վորոնք իրենց վատ են զգում, դիտում է նրանց մաշկի մաքրությունն ամբողջ մարմնի վրա: Հիվանդ յերեխաներն առանց բժշկի թույլտվության հրապարակ չեն ընդունվում:

7. Ամեն անգամ ուտելուց և զուգարանից օգտվելուց հետո պիտի ձեռները լվանալ. քնելուց առաջ պիտի լվացվել և լվանալ վոտները մինչև ծունկը: Ուտելուց հետո պիտի վողողել բերանը:

8. Անհրաժեշտ է ամեն օր բժշկի ցուցումով լողացնել յերեխաներին դուշի կամ ցնցուղի տակ արևի ջրով և չորացնել յերե-

խաներին առանձին-առանձին սրբիչներով։ Վեցօրյակում մեկ անգամ յերեխաներին լողացնել սապոնով և տաք ջրով։

9. Յուրաքանչյուր յերեխա պետք է ապահովված լինի առանձին սրբիչով և բաժակով՝ բերանը ողողելու համար։

10. Սեղանի վրա ամեն յերեխա պիտի ունենա առանձին ճաշի պնակ, գդալ, բաժակ և թեյի ափսե։

11. Յուրաքանչյուր յերեխա պետք է ունենա առանձին մահճակալ։

12. Ապահովել յերեխաներին կանոնավոր, լավորակ, բավականաչափ և բազմատեսակ սնունդով նշանակված ժամերին, վոչ մի դեպքում թույլ չտալով սեղանի մոտից հեռանալ հացի կամ այլ մթերքի կտորներ ձեռքերին։ Յերեխաներին կերակրել որական 3—4 անգամ։ Մալարիային, շոգ շրջաններում խմելու համար յերեխաներին տալ միայն յեռացրած ջուր, վորը պիտի պահվի մաքուր, փակ ամանի մեջ։

III. Վարակիչ հիվանդությունների կանխումը.

1. Հիվանդացած յերեխային առանձնացնել և տեղավորել հատուկ սենյակում—մեկուսարանում։

2. Յերեխաների սկզբնական ընդունելությունը հրապարակ կատարել միայն բժշկական քննությունից հետո։

3. Հիվանդությունից հետո յերեխային թույլ տալ գալու հրապարակ միայն բժշկական վկայականով։

4. Յեթե յերեխայի գլուխն է ցավում կամ կոկորդը, կամ յեթե մարմնի վրա ցան է դուրս տվել, անմիջապես պետք է նրան տեղավորել մեկուսարանում, չթողնելով այնտեղ մյուս յերեխաներին, և ապա ուղարկել բժշկական քննության։

5. Ընդունելության ժամանակ անցկացնել բոլորի համար ծաղկի պատվաստում։

6. Յեթե յերեխայի բնակարանում կան հիվանդության դեպքեր, թույլ չպետք է տալ, վոր նա մանկական հրապարակ գա առանց բժշկի թույլտվության։ Հիվանդացած յերեխաների ծնողները պարտավոր են անմիջապես տեղյակ դարձնել մանկական հրապարակի վարիչին յերեխայի հիվանդության մասին։

7. Թույլ չտալ, վոր յերեխաները շփում ունենան այն ընտանիքների հետ, վորտեղ կան վարակիչ հիվանդություններ։ Յեթե ընտանիքում կան վարակիչ հիվանդներ, նրա անդամները հրապարակի շենքը և տեղամասը չպետք է այցելեն։

8. Համաճարակ հիվանդությունների առկայության դեպքում

հրապարակի յերեխաներին պետք է յենթարկել համապատասխան պատվաստման, համաձայն տեղական առբաժնի կարգադրության։ Հրապարակի անձնակազմը պետք է ոգնություն և ոժանդակություն ցույց տա բժշկին պատվաստումն անցկացնելու ժամանակ։

9. Համաճարակի ժամանակ ամեն որ բոլոր խաղալիքները, պիտույքները և մանկական կահույքը պիտի լվանալ ախտահանող լուծույթով. ստամոքսա-աղիքային հիվանդությունների դեպքում՝ քլորաջրով, մանկական վարակիչ հիվանդությունների ժամանակ՝ լիզոլի յերկտոկոսային լուծույթով կամ կարբոլաթթվի յերկտոկոսային լուծույթով։ Ստամոքսա-աղիքային հիվանդությունների դեպքում ամանեղենը լվացվում է քացախաթթվի կեստոկոսային լուծույթով։

10. Հարկ յեղած պայքար մղել ճանճերի, կրծողների (մկներ, առնետներ և այլն) դեմ, հրապարակի ամբողջ տեղամասը մաքրել աղբից ու կեղտից, ցանցապատել լուսամուտները, բոլոր սննդամթերքները պահել ճանճերից պաշտպանված վիճակում[1]։

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոգատար վերաբերմունքը դեպի յերեխայի առողջությունը թե՛ մանկապարտեզի և թե՛ մանկական հրապարակի ամբողջ դաստիարակչական աշխատանքի առանցքը պիտի կազմի։

Ի՞նչ հիմնական պահանջներ պիտի կատարել, վորպեսզի նախադպրոցականի ֆիզիկական դաստիարակությունը ճիշտ հողի վրա դրված լինի։

Նախ և առաջ յերեխային, ինչպես և այն ամենը, ինչի հետ նա շփվում է, անհրաժեշտ է պահել գերազանց մաքրության մեջ—շենքը, հագուստը, կահավորումը, խաղալիքները և այլն։ Յերեխայի մարմինը կարիք է զգում մշտական, ուշադիր խնամքի։ Մաշկը յերեխայի արյան շրջանառության, շնչառության և ամբողջ կյանքի համար ունի մեծ նշանակություն։ Մաշկն իր կարևոր և պատասխանատու դերը կարող է կատարել միայն այն դեպքում, յեթե նա մաքուր պահվի։ Մաշկի կեղտոտումը փակում է նրա մեջ յեղած բազմաթիվ անցքերը, վորոնցով դուրս

1 Այս կանոնների հետ պետք է ծանոթացնել բոլոր աշխատողներին և պահանջել նրանց պարտադիր կատարումը։

են գալիս վնասակար նյութերը և գազերը, առաջացնում է բորբոքում: Փոշու և կեղտի հետ հաճախ ներս են բերվում այն անտեսանելի էակները (միկրոբները), վորոնք մաշկի միջով անցնում են արյան մեջ և առաջացնում են զանազան վարակիչ հիվանդություններ:

Ցեխի հետ միասին հաճախ յերեխայի ձեռքերի վրա ընկնում են ճիճուների ձվերը, վորոնք յերեխայի մատներով անցնում են նրա բերանը, այնտեղից ստամոքսա-աղիքային անցքը և առաջացնում են ճիճվային հիվանդություններ:

Հետևելով յերեխայի մաքրությանը, պետք է հատուկ ուշադրություն դարձնել այն տեղերին, վորտեղ ավելի շատ են հավաքվում փոշին, ցեխը և նրանց հետ միկրոբները. դրանք են գլխավորապես ձեռքերը, վոտքերը և մազերը:

Մաքրության պահպանման միջոցները շատ հասարակ են և միշտ գտնվում են ձեռքի տակ—հարկավոր է միայն ավելի հաճախ դիմել նրանց: Դրանք են՝ ջուրը և սապոնը: Որական պետք է լվացվել 2 անգամ՝ առավոտյան և յերեկոյան (քնելուց առաջ)- լվանալ յերեսը, ձեռքերը, պարանոցը, ականջների հետևը, իսկ յերեկոյան՝ նաև վոտքերը: Ձեռքերը միշտ պիտի լվանալ ուտելուց առաջ, զուգարանից հետո, ավազի և կավի հետ խաղալուց հետո: Յուրաքանչյուր յերեխա պիտի ունենա հատուկ նիշով առանձին սրբիչ, առանձին քթի թաշկինակ, իսկ վոտքերը մաքրելու համար՝ մաքուր շոր:

Պահանջվում է մաքուր պահել ու խնամել նաև յերեխայի բերանը: Շրջապատից բերանով մարմնի ներսը կարող են անցնել վնասակար նյութեր (փոշի, ցեխ, գազեր) և միկրոբներ: Ահա թե ինչու հարկավոր է բերանը պահել մաքուր և թույլ չտալ, վոր բերանում կուտակվեն սննդի մնացորդները, վորոնք կարող են նպաստել միկրոբների բազմանալուն: Փոքր յերեխաներին պետք է սովորեցնել մաքրել ատամներն ատամի փոշով—վերևից ներքև, դրսից և ներսից: Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր յուրաքանչյուր յերեխա պետք է ունենա իր սեփական ատամի խոզանակը և փոշին:

Յերեխայի մարմնի մաքրությունն այնքան ավելի հեշտությամբ և այնքան ավելի լավ կարելի յե պահել, վորքան ավելի մաքուր է պահպանվում այն շենքը, վորում նա յե գտնվում: Շենքի պահպանման կանոնները հիշված են վերևում: Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, վոր շենքը պետք է մաքրել յերեխաների

բացակայության ժամանակ, ողանցքները բանալ և մաքրել անպայման թաց ավելով կամ թաց շորով: Չոր ավելով կամ չոր շորով մաքրելու ժամանակ փոշի կբարձրանա, կտարածվի ամբողջ շենքում և նորից կնստի իրերի և հատակի վրա: Այդպիսի մաքրումից և վոչ մի ոգուտ չկա:

Ֆիզիկական դաստիարակության կարևոր խնդիրներից մեկն է՝ զարգացնել յերեխաների մեջ սեր դեպի մաքրությունը, ձըգտում դեպի այն: Այդ խնդիրը հեշտ է լուծվում, յեթե յերեխան փոքր հասակից մեծանում է մաքուր շրջապատում, յեթե մաքրությամբ են պահվում նրա հագուստը և վոտնամանը, յեթե նա միշտ տեսնում է, թե ինչպես իրեն շրջապատող հարգված և սիրված մեծերը սիրում և գնահատում են մաքրությունը և ուրախ են լինում շրջապատի մաքրությունից, թույլ չեն տալիս կեղտոտություն և անկարգապահություն, իրենց խորհուրդներով և որինակով համառ և սիստեմատիկաբար սովորեցնում են յերեխաներին մաքրություն և ակուրատություն:

Այսպես, հետևելով յերեխայի մաքրությանը, աշխատելով, վորպեսզի շենքում և հրապարակում տիրի մաքրություն, բացատրելով մայրերին և հայրերին մաքրության նշանակությունը, դաստիարակը կատարում է մեծ և լուրջ գործ—նա ապահովում է և պահպանում յերեխայի առողջությունը: Այս խնդրում ամեն մի մանրունք ունի իր նշանակությունը:

Մաքրությունը միայն պահպանում է յերեխայի առողջությունը, իսկ յերեխայի ուժերի և առողջության աղբյուրը հանդիսանում է սնունդը: Առողջ սնունդը կարևոր պայմաններից մեկն է ֆիզիկական ճիշտ զարգացման համար: Յերեխան աճող, ակտիվ եյակ է, վոր գտնվում է մշտական շարժման մեջ:

Շարժվելով, վազելով, թռչելով, խաղալով իր խաղալիքների հետ, յերեխան որվա մեջ շատ ուժ է կորցնում: Ունենալով փոքր մարմին՝ յերեխան համեմատաբար ավելի շատ սննդի պահանջ է զգում, քան մեծերը (որինակ, 4 տարեկան յերեխայի կշիռը 4 անգամ փոքր է մեծի կշռից, բայց սննդի պահանջ նա զգում է միայն յերկու անգամ մեծից պակաս):

Ի՞նչ սնունդ է ոգտակար յերեխային,—այն սնունդը, վորը վորակով և քանակով համապատասխանում է յերեխայի իրական պահանջներին: Ծանր է անդրադառնում յերեխայի առողջության վրա պակաս կերցնելը. դա հասցնում է ուժերի թուլացման, ապառման: Բայց վնաս է և շատակերությունը. դա ծանրաբեռ—

նում է մարսողական օրգանները, գոյացնում է ավելորդ բեռ-ճարպ, որպիսի հանգամանքը կարող է առաջ բերել մաշկի հիվանդություններ և ստամոքսային խանգարումներ: Շատ կերցնելը կարող է լինել ոչ միայն ընդհանուր, այլև մասնավոր, այսպես ասած, միակողմանի: Այսպես, օրինակ, երեխային չափից դուրս առատ կերակրում են ալրային (շիլա, կարտոֆիլ) կամ մսե (միս, ձու), կամ չափազանց յուղալի կերակրով:

Սննդարար նյութերի յերեք հիմնական խումբ, վորոնք պարունակվում են սննդամթերքներում,—սպիտակուցներ (ձվի սպիտակուց, մսի սպիտակուց, կաթ և այլն), ածխաջրեր (ոսլա, շաքար) և ճարպեր (յուղ, ճարպ)—պետք է պարունակվեն յերեխայի սննդի մեջ այնպիսի քանակով, վորը համապատասխանում է յերեխայի պահանջներին, այսինքն, նախադպրոցականն օրվա ընթացքում պետք է ստանա սննդի հետ մոտավորապես 50—55 գր. սպիտակուց, 40—45 գր. յուղ, 220 գր. ածխաջրեր: Պարզ է, վոր ցածր խմբի յերեխաները մի փոքր քիչ պետք է ստանան, քան մեծերը: Գրքի հավելվածում տրվում են նախադպրոցականի օրվա սննդի չափերը և մթերքների բաշխման տախտակը (տես հավելված № 2):

Յերեխայի ամբողջ օրվա սննդի չափը պետք է դասավորվի այնպես, վոր նա ստանա՝ նախաճաշին—սննդի մոտավորապես 25%-ը, ճաշին—40%-ը, հետճաշիկին—15%-ը և ընթրիքին—20 տոկոսը: Նախաճաշը պետք է բաղկացած լինի, բացի մեկ բաժակ սուրճից կամ թեյից, կարագով բուլկուց, նաև տաք կերակրից—բրնձով շիլայից, մաննիով շիլայից, կարտոֆիլի կոտլետից և յեռացրած ջրով լավ լվացած մրգերից, հատապտուղներից, գազարից:

Ճաշը պետք է լինի 3 տեսակից՝ առաջին տեսակը—սուպ, բոզբաշ, բուլյոն, բորշչ և այլն, յերկրորդը—միս, թարմ ձուկ և այլն, յերրորդը—կիսել, կոմպոտ, թարմ հատապտուղ, միրգ:

Մի կերակուր ընդունելուց մինչև մյուսը պետք է անցնի (մոտավորապես) 3½—4 ժամ:

Յերեխայի առողջ սնունդը կախված է վոչ միայն սննդի նորմալ քանակից, այլև նրա լավ վորակից:

Մթերքների լավորակ և թարմ լինելուց բացի առաջին տեղը պետք է բռնեն նույնպես և նրանց համը և բազմազանությունը: Համեղ պատրաստած ուտելեղենը առաջացնում է մարսողական հյութերի արտադրում ավելի մեծ քանակով և ավելի յեռան-

դուն ներգործող է, քան անհամ կերակուրը: Այդ պատճառով համեղ ուտելիքն ավելի հեշտ է մարսվում և ավելի լրիվ է յուրացվում: Բազմատեսակ կերակուրը մեծ նշանակություն ունի յերեխային առողջ սնունդ մատակարարելու գործում: Միատեսակ կերակուրը, յեթե մինչև անգամ քանակով և համով բավարար է,—վնասակար է ազդում յերեխայի աճման և առողջության վրա: Միայն կերակրի բազմատեսակության դեպքում կարելի յե յերեխային ապահովել այն բոլոր նյութերով, վորոնք հարկավոր են նրա ճիշտ աճման և ուժերի ամրապնդման համար: Առանձնապես կարևոր է, վոր յերեխայի կերակուրը պարունակի բազմատեսակ բանջարեղեն (կաղամբ, գազար, բազուկ և այլն): Բանջարեղենը և մրգերն արժեքավոր են գլխավորապես նրանով, վոր նրանք պարունակում են այն նյութերը, վորոնք գիտության մեջ ստացել են վիտամին անունը, այսինքն՝ կենսական նյութեր: Թեև սննդամթերքների մեջ վիտամինները պարունակվում են չնչին քանակությամբ, այնուամենայնիվ նրանց նշանակությունը յերեխայի աճման և առողջության համար շատ մեծ է: Այն սնունդը, վորն աղքատ է վիտամիններով, կամ վորի մեջ վիտամինները բացակայում են, կասեցնում է աճումը, առաջացնում է ջղային հիվանդություններ, լնդախտ, ռախիտ և այլն:

Ինչո՞ւմն է ճաշի առաջին տեսակի՝ սուպի, բուլյոնի նշանակությունը: Դա վոչ այնքան նրանց սննդարարությունն է, վորքան ներվային սիստեմի վրա նրանց աշխույժ ներգործում ունենալն է, ախորժակի գրգռումն է և յեռանդուն գործող մարսողական հյութերի արտադրումն է: Պարզ է, վոր մեծ քանակով բուլյոն և սուպ տալն իմաստ չունի, այստեղ շատ ավելի կարևոր է, վորպեսզի նրանք համեղ պատրաստված լինեն: Գերադասելի յե ½ աման համեղ բուլյոնը, քան 2 աման անհամը:

Կաթը ամենաարժեքավոր սննդամթերքներից մեկն է: Կաթը միշտ պետք է գտնվի յերեխայի ուտելիքի մեջ: Կաթի արժեքը, վորը նրան դարձնում է անփոխարինելի, վոչ թե նրա բարձր սննդարարությունն է (մեկ բաժակ կաթը—200 գր., սննդարարությամբ մոտավորապես հավասար է 60 գր. հացի կամ 2 ձվի), այլ դյուրամարսությունը և նրա մեջ գտնվող բոլոր սննդարար նյութերի **լրիվ յուրացումը**, ինչպես և այն, վոր կաթը պարունակում է յերեխայի աճման համար անհրաժեշտ բոլոր նյութերը: Կաթն անհրաժեշտ է յերեխաներին, բայց այն հարկավոր է տալ յերեխաներին վորոշ քանակով: Նախադպրոցական

հասակի յերեխաների համար որական 3 բաժակ փոքրերին և 2 բաժակ մեծերին՝ լիովին բավական է։

Ասենք մի քանի խոսք էլ կարագի մասին։ Կարագը, բացի նրանից, վոր հարուստ է արժեքավոր վիտամիններով (միևնույն քանակում), 12 անգամ սննդարար է կաթից և կարտոֆիլից և 8—9 անգամ սննդարար է մսից։

Հարկավոր է տալ նույնպես հիմնական ցուցումներ ուտելիքի պատրաստման մասին։ Սննդամթերքների հատկությունների հետ ծանոթ չլինելը հաճախ պատճառ է դառնում նրանց պատրաստման սխալ պրիոմների, վորոնց հետևանքով և կորչում են սննդարար նյութերը և քայքայվում են վիտամինները։ Պետք է հիշել, վոր յեթե կերակուրը յեփվում և պատրաստվում է թույլ կրակի վրա և մանավանդ բաց ամանում, ապա ավելի արագ են քայքայվում վիտամինները, քան յեթե կերակուրը պատրաստվում է ավելի կարճ ժամանակամիջոցում, ուժեղ կրակի վրա, փակ ամանում։ Կերակրի շոգեխաշելը փակ ամանում ավելի լավ է պահպանում վիտամինները, քան յեփումը։ Բանջարեղենը զգուշությամբ է հարկավոր մաքրել, շատ յերեսից, վորովհետև նրանց յերեսի մասերը պարունակում են սննդարար նյութեր և վիտամիններ։ Բանջարեղենները շատ յեփելու դեպքում կորչում են արժեքավոր նյութեր։ Այդ պատճառով ջուրը, վորի մեջ յեփվում է բանջարեղենը, հարկավոր է կամ ավելացնել սուպին կամ մատուցել առանձին ամանով, ճաշի վրա լցնելու համար։ Սուպը յուղով կամ մածնով համեմել հարկավոր է պատրաստի ձևով, վորովհետև յերբ յուղերը յեփվում են, ապա վիտամինների մի մասը փչանում է։ Անհրաժեշտ է միանգամայն վերջ տալ նախորյակին պատրաստած և կամ ճաշից կամ ընթրիքից մնացած կերակուրը տաքացնելուն։

Յերեխայի ուժերի լրիվ զարգացման համար անհրաժեշտ է նաև, վոր յերեխան լինի գործունյա և վոր նրա գործունեությունը արտահայտվի նրա համար առողջ և գրավիչ ձևով։

Ահա թե ինչու դաստիարակի ճիշտ ղեկավարած խաղը յերեխայի զարգացման և նրա ուժերի ամրապնդման ամենալավ միջոցն է։ Խաղի հետ անբաժանելի կերպով կապված է խաղալիքը։ Խաղալիքների խելացի ընտրությունը մեծ նշանակություն ունի ֆիզիկական ճիշտ դաստիարակության համար։ Պետք է ուշադրություն դարձնել, վոր խաղալիքը լինի ամուր, սարքած կանոնավոր, դիմացկուն, վոր ներկերը նրա վրայից վեր չգան,

վոր չլինեն սուր անկյուններ և յեզրեր, չլինեն դուրս ցցված մեխեր։ Յերեխաներին խաղալու և պարապելու համար տրվող ամեն ինչի չափը և կշիռը վոչ միայն պետք է համապատասխանեն նրանց ուժերին, այլև մարմնի չափսին և պետք է այնպես կառուցված լինեն, վոր յերեխաները նրանցից ոգտվելու դեպքում կարողանան հեշտությամբ պահպանել մարմնի ճիշտ դիրքը։ Ինչպես չափազանց ցածր կամ չափազանց բարձր աթոռը կամ սեղանը դրդում են յերեխային ընդունել մարմնի՝ կմախքի համար վնասակար դիրք (նստել մեջքը կորացրած, գլուխը կռացրած կամ վոտքերը՝ ձգած և այլն), այնպես էլ կարճ կոթ ունեցող բահը կամ փոցխը, կամ ցածր ողը, կամ չափազանց մեծ ձեռնասայլակը և այլն առաջ են բերում յերեխայի մարմնի վոչ ճիշտ դիրք կամ պահանջում են ուժերի չափազանց մեծ լարում։ Յերեխայի շարժումների զարգացման համար չափազանց կարևոր է, վոր նրա տրամադրության տակ լինեն բավական թվով այնպես կոչված շարժական խաղալիքներ (սայլակներ, ցատկիչներ և այլն)։

Յերեխայի առողջության ամրապնդման համար կարևոր է զարգացնել և կատարելագործել՝ կյանքում անհրաժեշտ հիմնական շարժումները. վազքը, քայլքը, ցատկումները։ Ամենից շատ այս հիմնական շարժումները զարգանում են յերեխաների խաղերում։ Բացի դրանից դաստիարակն ունի լայն հնարավորություններ, վորպեսզի յերեխային սովորեցնի վստահ քայլել, արագ վազել, ճարպիկ ցատկել։ Օրինակ, զբոսանքի ժամանակ՝ անցնել նեղ ճանապարհով, ցատկել առվակի վրայով, անցնել չորուկների միջով և այլն։

Յերեխաների շարժումները զարգացնելու համար հարկավոր է ամեն կերպ ոգտագործել շարժական խաղերը խաղալիքներով (գնդակ, ող, ցատկիչ և այլն)։

Յերեխայի խաղերը և շարժումները կապված են ուժերի ծախսման հետ։ Ահա թե ինչու անհրաժեշտ են յերեխայի համար քունը, հանգիստը։ Քնի ժամանակ վերականգնվում և կուտակվում են ուժերը։ Հետևապես հանգիստը և քունը առողջության այնպիսի պայմաններ են, ինչպես և աշխույժ և ուրախ գործունեությունը։ Յերեխան աճում է, նրա որգանիզմում ստեղծվում են նոր մասնիկներ, մեծանում են գոյություն ունեցող մասնիկների չափսերը։ Այդ պատճառով հասկանալի յե, վոր յերեխայի հանգստի և քնի պահանջն ավելի ուժեղ է, քան մեծի, և վոր-

քան յերեխան փոքր ե, այնքան յերկարատև պետք ե լինի նրա քունը: Դաստիարակը և ծնողները հոգատար պետք ե վերաբերվեն յերեխայի քնին և պետք ե ստեղծեն այնպիսի պայմաններ, վորոնք յերեխային հանգիստ և բավականաչափ յերկարատև քնելու հնարավորություն տան: Մինչև 5 տարեկան յերեխաները, բացի գիշերվա քնից (10—11 ժամ), կարիք են զգում ցերեկվա 2 ժամվա քնի, մեծահասակ նախադպրոցականները (մինչև 7 տարեկան)—$1\frac{1}{2}$ ժամվա ցերեկային հանգստի (պառկած վիճակում): Առողջության ամրապնդման համար շատ օգտակար ե յերեխայի ցերեկային քունն անցկացնել բացոթյա (բաց պատշգամբում կամ մաքուր և չոր տեղամասում, ծալվող մահճակալների վրա):

Առողջության ամրապնդման ամենալավ, ամենաապահով միջոցը—դա յերեխաների գտնվելն ե բաց օդում և մանավանդ նրանց շարժումները բաց օդում: Յերեխաների ամառային ամբողջ կյանքը հնարավոր չափով պետք ե ընթանա բացոթյա: Գյուղական պայմաններում թարմ, մաքուր օդը, արևը, լայնարձակությունը, անտառը, այգիները—այն ամենը, ինչ ուրախացնում ե յերեխային, ամրապնդում և կոփում-կազդուրում ե նրա ուժերը—այդ ամենը մոտ ե, այսպես ասած, ձեռքի տակ ե, և հարկավոր ե միայն, վոր դաստիարակը հասկանա դրանց բարերար նշանակությունը, ցանկանա և կարողանա նրանցից օգտվել: Անհրաժեշտ ե, վոր յերեխաները կարողանան ուրախ թռչկոտել, վազվզել, գրոսնել, խաղալ բաց օդում: Միայն անձրևը, ուժեղ քամին պետք ե ստիպեն յերեխաներին մնալ շենքում: Վորպեսզի կյանքը բաց օդում լինի գրավիչ, անհրաժեշտ ե, վոր տեղամասը կամ հրապարակն ունենան բավականաչափ ավազ, ձեռնասայլակներ, պատգարակներ, ցատկիչներ, գնդակներ, ֆաների տախտակներ, խոշոր շինարարական նյութեր, բահեր և այլն: Խաղերը և պարապմունքներն այգում և բանջարանոցում հանդիսանում են ուրախության ու հրճվանքի աղբյուր և հրաշալի միջոց առողջության ամրապնդման և օրգանիզմի կազդուրման-կոփման համար:

Ամառը յերեխաների առողջության ամրապնդման և նրա ուժերի կոփման-կազդուրման համար լայն կերպով պետք ե օգտագործվեն արևը և լողանալը (բժշկի խորհրդով):

Գյուղական միջավայրում գարնանը և ամառը յերեխաներն ամբողջ օրը անց են կացնում բաց օդում և բավականաչափ յենթարկվում են արևի ճառագայթների բարերար ազդեցության: Շոգ օրերին, արևահարությունից խուսափելու համար, յերեխաները պետք ե ծածկեն սպիտակ գլխարկ, պարապմունքները և խաղերը պետք ե ընթանան ստվերի տակ:

Լողանալը շատ օգտակար ե առողջության համար: Լողանալու համար պետք ե ընտրել այնպիսի տեղ, վորտեղ հատակը հարթ ե, մաքուր, ջուրը խորը չե, հոսանքը հանդարտ: Առաջին անգամ պետք ե լողանալ ջրի վոչ պակաս քան 18° ըստ Ռեոմյուրի (22° ըստ Ցելսիուսի) ջերմաստիճանի տակ, այնուհետև կարելի յե թույլ տալ յերեխաներին լողանալ և ավելի ցածր ջերմաստիճանի տակ, բայց վոչ պակաս 16° Ռ. (20° Ց.):

Լողանալու տևողությունը՝ սկսած 3 րոպեյից մինչև 8 րոպե: Յերեխաները լողանալու ժամանակ պետք ե լինեն շարժման մեջ: Պետք ե ուշադիր հետևել, թե ինչպես են իրենց զգում յերեխաները լողանալու ժամանակ: Յեթե յերեխան դողում, մրսում ե—ուրեմն պետք ե լողանալը դադարեցնել: Յերեխաների լողանալու ժամանակ դաստիարակն անդադար իր ուշադրությունը պետք ե կենտրոնացնի բոլոր յերեխաների վրա: 20—25 հոգուց բաղկացած լողացող յերեխաների խմբին պետք ե հետևեն 2 հասակավոր. յեթե այդ պայմանը բացակայում ե, ապա լողանալ չի կարելի:

Խորը և զառիվայր ափեր, տղմոտ կամ անհարթ հատակ ունեցող գետում, ինչպես և անծանոթ, չուսումնասիրված տեղում յերեխաների լողանալն արգելվում ե:

Բացի լողանալուց ջուրը կարող ե օգտագործվել օրգանիզմի ամրապնդման և կազդուրման համար ջրցանման ձևով: Դրա համար կարելի յե սարքավորել հատուկ տեղ դուշի համար, կամ ջրցան կատարել սովորական ցնցուղով վոչ մեծ բարձրությունից: Սկզբում ջուրը գործ են ածում 30° Ց. բարեխառնությամբ, այնուհետև հետզհետե ջերմաստիճանը իջեցնելով հասցնում են նրան մինչև 22°—20° Ց.: Ջուրը տաքացնում են արևի տակ լայն լագանում. լագանը ամեն օր լվանում են: Պետք ե հետևել, վոր ջուրը չթափի ականջների մեջ:

Հարկավոր ե, վոր վոչ միայն յերեխան ապրի առողջ կյանքով, այլև տեսնի իր շուրջը մեծերի առողջ կյանքը: Յերեխան պետք ե տեսնի աշխույժ, ուրախ, կենսուրախ, սիրալիր դեմքեր, լսի հանգիստ, պարզորոշ խոսակցություն: Վախը առողջության վոխերիմ թշնամին ե: Յերեխային շրջապատող մեծերը

պետք է կարողանան պահել իրենց, չարտահայտեն յերեխաների ներկայությամբ վախ, տագնապ, սարսափ, շփոթության և իրենց կորցնելու զգացմունքներ։ Վոչ մի դեպքում չպետք է գործածել նաև այնպիսի սպառնալիքներ, արտահայտություններ, վորոնց նպատակն է վախեցնել յերեխային։ Դաստիարակներն իրենք պետք է լինեն արի և դաստիարակեն յերեխայի մեջ արիություն և հավատ դեպի իր ուժերը, դեպի իր ընդունակությունները՝ իրագործելու համար իր առաջ դրված խնդիրները, համբերատարությամբ դիմանալու վորևէ մնասվածքի, ցավի։ Միայն այս պայմանը կատարելով ֆիզիկական դաստիարակության նշված պահանջների կատարումը հնարավորություն կտա աճեցնել առողջ, ամուր և կոփված փոխարինողներ։

ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՈՐՎԱ ՌԵԺԻՄԸ

Յերեխաների առողջության և ճիշտ զարգացման համար անհրաժեշտ է ստեղծել որվա վորոշակի ռեժիմ։ Ամեն բան պետք է ունենա իր ժամանակը՝ և՛ ուտելը, և՛ խաղը, և՛ պարապմունքները, և՛ հանգիստը։ Պետք է հետևել, վոր յերեխաները շատ չհոգնեն, վոր շարժական խաղերը հաջորդեն հանգիստ խաղերին։ Յերեխաների այն խաղերը և պարապմունքները, վորոնք պահանջում են ուժերի մեծ ծախսում (որինակ, շարժական խաղերը, հեռավոր զբոսանքները), ավելի լավ է անցկացնել առավոտները, նախաճաշից հետո կամ ցերեկվա քնից միառժամանակ անցնելուց հետո, յերբ յերեխաները զվարթ են և հոգնած չեն։ Որվա միջում և վերջում, յերբ յերեխաները հոգնած են, նրանց հարկավոր է հանգիստ (ցերեկվա, գիշերվա քուն)։ Լողանալու ժամերը վորոշվում են բժշկի խորհրդով—նայած տեղի կլիմային։ Խորհրդային Հայաստանի պայմաններում ավելի լավ է լողանալ ցերեկվա ժամը 11—12, յերբ ջուրը տաքանում և հասնում է ցանկալի ջերմաստիճանին։

Ահա մանկական հրապարակի որվա որինակելի ռեժիմը փոքրահասակ և մեծահասակ յերեխաների համար.

Որվա ռեժիմը 9-ժամյա մանկհրապարակում

1. Յերեխաների հավաքը	ժամը	7-ին	6. Ճաշ	ժամը	12—
2. Նախաճաշը	»	8—30	7. Քուն	»	1—30
3. Զբաղմունքներ և խաղեր	»	9—	8. Խաղեր և զբաղմունքներ	»	3—
4. Զբոսանք	»	9—45	9. Հետճաշիկ	»	3—30
5. Լողանալը	»	11—12	10. Տուն գնալը	»	4—

Ծանոթություն.—Այն յերեխաներին, վորոնց շատ վաղ են բերում, հարկավոր է պառկեցնել, վոր նրանք ել քնեն կամ հանգիստ պառկեն։ Յեթե մանկհրապարակն աշխատում է 9 ժամից ավելի կամ պակաս, այդ դեպքում վարիչը դրան համապատասխան կազմում է հրապարակի որվա ռեժիմը։

Յերեխաների գալը

Հրապարակ գալու ժամը կախված է նրանից, թե յերբ են սկսում աշխատանքը դաշտում, բայց ցանկալի չե չընդհատել յերեխաների քունը և հրապարակ բերել նրանց առավոտյան ժամը 7-ից վոչ շուտ։

Մինչև յերեխաների հրապարակ գալը դաստիարակը տեղամասում պատրաստում է խաղերի և պարապմունքների համար անհրաժեշտ նյութերը, բերում է խաղալիքներ, շինանյութ և տեղավորում սենյակի կամ հրապարակի զանազան տեղերում, վոր յերեխաները կարողանան խաղալ և զբաղվել փոքրիկ խմբերով, չխանգարելով իրար։ Սովորաբար յերեխաները գալիս են հրապարակ վոչ բոլորը միասին, այլ հետզհետե։ Դաստիարակը դիմավորում է նրանց, սիրալիր բարևում է յերեխաներին և ծնողներին, նայում է՝ մաքուր են յերեխաները, ունեն թաշկինակներ, հարցնում է, թե ինչով է ցանկանում յերեխան առավոտյան զբաղվել, կազմակերպում է յերեխաների համար հանգիստ խաղեր և զբաղմունք։

Պետք է աշխատել, վոր յերեխաները հրապարակ գան լվացված, մազերը և յեղունգները կտրած։ Բայց յեթե վորևէ պատճառով յերեխան տանը չի լվացվել, պետք է անմիջապես ուղարկել նրան լվացվելու։

Դաստիարակը հետևում է, վոր յերեխան մաքուր լվացվի, լվանա ձեռքերը, յերեսը, պարանոցը, ականջները։

Յեթե յերեխան չգիտե լվացվել, դաստիարակը սովորեցնում է, յերբեմն ոգնում է, հետևում է, վոր յերեխաները լավ սրբվեն։ Մեծահասակ յերեխաները հրապարակ գալուց հետո մաքրում են ատամները։ Պետք է սովորեցնել յերեխաներին ատամները ճիշտ մաքրել—թացացնել խոզանակը, վերցնել մի քիչ փոշի, մաքրել բոլոր ատամները վերևից ներքև, դրսից և ներսից։ Ապա մաքուր վողողել բերանը յեփ տված ջրով, լվանալ բաժակը և դնել նրա մեջ խոզանակն այնպես, վոր կոթը ներքևում լինի։

Լվացվելուց և ատամները լվանալուց հետո յուրաքանչյուր յերեխա հավաքում և դնում է իր տեղն ոճառը, ատամի փոշին, բաժակը, սրբիչը և այլն։

Հրապարակում պետք է ունենալ կանոնավոր կախարաններ յուրաքանչյուր յերեխայի համար հատուկ նշանով, մաքուր սրբիչներ՝ նշաններով, բաժակներ՝ բերանը վողողելու համար, ոճառի փոքրիկ կտորներ։

Նախաճաշ, ճաշ, ընթրիք

Նախաճաշից առաջ դաստիարակը հիշեցնում է յերեխաներին, վոր նրանք ձեռները լվանան։ Յերեխաները լվացվում են վոչ բոլորը միասին, այլ 4—5 հոգուց բաղկացած խմբերով։ Մյուսները դեռ կարող են շարունակել խաղալ. յերեխաների մի մասը ոգնում է դաստիարակին հավաքելու խաղալիքները։

Առաջինը ձեռները լվանում են հերթապահները, հետո փոքրահասակ յերեխաները և ապա մյուսները։

Հերթապահներն ոգնում են սեղան սարքելուն. դասավորում են գդալները, բերում են պնակներով հացը նախորոք կտրած բարակ կտորներով (1—2 պնակ յուրաքանչյուր սեղանին), բերում են թեյամանի կամ ընդհանուր ճաշամանի պատվանդանը և այլն։ Յերեխաները չպետք է բերեն ուտելիքը։

Ամբողջ ամանեղենը բերում է հավաքարարը, իսկ յերեխաները միայն ոգնում են այն սեղանին դասավորելու։ Ուտելուց հետո հերթապահները ոգնում են հավաքելու սեղանը։ Ամանեղենը յերեխաները չեն լվանում։ Դաստիարակը հետևում է հերթապահների աշխատանքին, ցույց է տալիս ինչը ինչպես անել, ոգնում է յերեխաներին, ինքը կատարում է ավելի ծանր աշխատանքը։

Փոքրիկները սկզբից հետևում են, թե ինչպես են հերթապահում մեծերը։ Հետո նրանք սկսում են քիչ-քիչ ոգնել հերթապահներին, որինակ, դասավորում են գդալները։

Յերեխաները հերթապահում են յերկուսից-յերեք հոգով։ Ամեն որ դաստիարակը նշանակում է հերթապահներ։ Մեծահասակ յերեխաները բոլորը հերթով հերթապահություն են անում։

Անհրաժեշտ է, վոր հրապարակում բաժակները ափսեներով և պնակները լինեն բավարար քանակով, ըստ յերեխաների թվի, պատառաքաղներ (մեծահասակ յերեխաների համար), ցանկալի յե ունենալ անձեռոցիկներ։

Յուրաքանչյուր յերեխա սեղանին ունի իր մշտական տեղը։

Յերեխաները ազատ են նստում, վոր չխանգարեն իրար։ Աթոռը հարկավոր է մոտ դնել սեղանին, վոր յերեխան կարողանա ուտել ափսեյի մեջ և չթափի կերակուրը։ Սեղաններն այնպես են դասավորում, վոր դաստիարակը իր նստած տեղից կարողանա դիտել բոլոր յերեխաներին։

Յերեխաները նստում են սեղանի շուրջը, յերբ արդեն ամեն ինչ պատրաստ է ուտելու համար։ Ուտելու ժամանակ դաստիարակը խոսում է յերեխաների հետ հանգիստ, կամաց։

Լիովին թույլատրելի յե սեղան նստած ժամանակ կամաց խոսակցությունը յերեխաների միջև։

Դաստիարակը հետևում է, վոր բոլոր յերեխաները նստած լինեն հարմար, մոտենում է այն յերեխաներին, վորոնց հարկավոր է ճիշտ նստեցնել, կամ ցույց տալ՝ ինչպես պահել դգալը։ Դաստիարակը սովորեցնում է յերեխաներին ուտել առանց շտապելու, լավ ծամել ուտելիքը, ուտել միայն սեղանին։ Նա հոգում է, վոր յերեխաներն ուտեն մինչև վերջը. յերբեմն փոքրերին ինքն է ուտեցնում, յեթե նրանք արդեն հոգնել են և վատ են ուտում։ Յերեխաները նաև սովորում են սեղանից կանոնավոր հեռանալ ուտելուց հետո. աթոռը դնել իր տեղը, կանոնավոր ծալել անձեռոցիկը։

Ճաշից հետո յերեխաները վողողում են բերանը, վորպեսզի ատամների արանքներում կերակուր չմնա և չփչացնի ատամները։

Խաղեր յեվ զբաղմունքներ

Նախաճաշից հետո, քանի դեռ հավաքարարը հավաքում է ամանեղենը, փոքրահասակ յերեխաները խաղում են։ Մեծահասակ յերեխաները կարող են խնամել կենդանիներին. կերակրում են նրանց, փոխում են ձկների ջուրը կամ նույնպես խաղում են։

Յերբ վերջանում է ամանեղեն հավաքելը, սկսվում են զբաղմունքները։

Պարապմունքները կարող են լինել տարբեր՝ նկարչության մատիտներով, ներկերով, ծեփ կավից, ընթերցում, պար, պարապմունք բնական նյութերով, տերևներով, մամուռով, կոներով և այլն։

Դաստիարակը դեռ նախորյակին պատրաստում է աշխատանքի պլանով նախատեսված պարապմունքի համար անհրաժեշտ

վողջ նյութերը, սրում է մատիտների ծայրերը, կտրատում է թուղթը, պատրաստում է ներկը, առանձնացնում է կարդալու կամ պատմելու համար գիրքը և ուշադրությամբ կարդում է, վոր լավ հիշի. կամ յեթե նախատեսված է զբոսանք, դաստիարակը ընտրում է այդ զբոսանքի վայրը:

Մինչև պարապմունքը դաստիարակը հերթապահների հետ միասին հարմար դասավորում է հրապարակի վրա սեղանները և աթոռները, դասավորում է նախորոք պատրաստված նյութերը, և յերեխաները նստում են սեղանի շուրջը:

Պարապմունքի ժամանակ դաստիարակը ցույց է տալիս յերեխաներին, թե ինչպես աշխատել, վորևէ իր պատրաստել, քաջալերում է նրանց աշխատանքը. սովորեցնում է կոնանավոր վերաբերվել նյութերի հետ. ուշադրությամբ լսում է յերեխաների հարցերը և պատասխանում է նրանց: Ունկնդրելով յերեխաների խոսակցությանը, նա իմանում է, թե ինչո՞վ են նրանք հետաքրքրվում. հետևում է, վոր յերեխաները վերջացնեն սկսած գործը և լինեն ուշադիր ու ակուրատ:

Պարապմունքը վերջացնելուց՝ հետո յերեխաները վեր են կենում սեղանից և ազատ խաղում են:

Յերեխաների պատրաստած աշխատանքները հավաքվում են կամ հենց իրենց՝ յերեխաների կողմից, կամ հերթապահի, դաստիարակի կողմից և տարվում ու պահվում են դրանց համար հատկացված տեղերում՝ դարակներում, ալբոմներում, թղթապանակներում:

Պարապմունքից հետո դաստիարակը հերթապահների հետ հավաքում է նյութերը, գրքերը, սրբում է սեղանը մաքուր նամ շորով:

Պարապմունքի տևողությունը՝ փոքրահասակ յերեխաների համար մոտավորապես 15—20 րոպե, իսկ մեծահասակների համար—30 րոպե:

Ծանոթություն: *Պարապմունքները պետք է անց կացվեն թարմ ոդում: Շենքը փոխադրվում են միայն անձրևի դեպքում:*

Պարապմունքից հետո յերեխաները խաղում են հենց այդտեղ, տեղամասում: Դաստիարակը հետևում է, վորպեսզի յերեխաների խաղերը չլինեն միատեսակ, վորպեսզի յերեխաները շատ չհոգնեն: Այն յերեխաներին, վորոնք քիչ են շարժվում, նա աշխատում է գրավել դեպի ընդհանուր խաղերը կամ ինքը նրանց հետ խաղ է սկսում: Յեթե յերեխաները յերկար ժամանակ

զբաղվում են հանգիստ խաղերով,—որինակ, ավազի հետ, տիկնիկների հետ, իրենց շինած կառուցվածքների հետ,—ապա նա առաջարկում է նրանց խաղալ մի վորևէ շարժական խաղ կանոններով: Ընդհակառակը, յեթե յերեխաները շատ են վազվզել, հոգնել են, դաստիարակը հավաքում է նրանց և նստեցնում է, վոր նրանք հանգստանան. այդ ժամանակամիջոցում կարելի յե յերգ յերգել, վոտանավոր արտասանել:

Յեթե շոգ որ չէ, կարելի յե զբոսանք կազմակերպել դեպի այգի, գետակ, անտառ, դաշտ (մեծերի համար վոչ հեռու 1 կմ. իսկ փոքրիկների—½ կմ): Զբոսանքի ժամանակ հարկավոր է առանձին ուշադրություն դարձնել թույլ յերեխաներին, վորպեսզի շատ չհոգնեն նրանք, հարկավոր է ճանապարհին հաճախ հանգիստ տալ:

Ջրցանում, լողացում

Ջրցանումը (դուշ) կամ յերեխաների լողացումը պետք է անցկացնել միայն բժշկի թույլտվությամբ: Բժիշկը նշում է, թե վո՞ր յերեխաներին կարելի յե լողանալ և վորքան ժամանակ, ո՞ւմ կարելի յե ջրցան անել:

Ջրցանումը կամ լողացումն անց է կացվում մոտավորապես ցերեկվա ժամը 11—12-ը, որական մեկ անգամ, չոր, տաք յեղանակին:

Յերեխաներին ջրցանել հարկավոր է տեղամասում, քամուց պաշտպանված տեղում:

Յերեխաներին գետում լողացնել կարելի յե բժշկի խորհրդով և միայն այն ժամանակ, յերբ ջուրը տաք է և քամի չկա:

Յերեխաներին կարելի յե լողացնել պահպանելով բոլոր այն նախազգուշությունները, վորոնք վերը հիշված են:

Յեթե յեղանակը չոր է, տաք, ցերեկվա քունը անց է կացվում տեղամասի ստվերոտ կողմում կամ այգում (յեթե կա այգի), կամ ծածկի տակ:

Անձրևային յեղանակին, յերբ քունն անց է կացվում սենյակում, պետք է անպայման նախորոք ավլել հատակը թաց ավելով կամ շփել թաց շորով, բավականաչափ ոդափոխել սենյակը և լուսամուտներն ամբողջովին բաց թողնել, մաղայով պաշտպանելով սենյակը ճանճերից ու մոծակներից:

Մահճակալները դասավորում են մեծերը:

Ճաշից առաջ յերեխաներն ոգտվում են զուգարանից, լվա—

նում են վոտները. վորոշ յերեխաների պետք է զուգարան ուղարկել ճաշից հետո, քնից առաջ:

Յերեխաները պառկում են քնելու առանց հագուստի և կոշիկների, միայն սպիտակեղենով: Հագուստեղենը խնամքով դարսում են աթոռակների վրա:

Դաստիարակը սովորեցնում է յերեխաներին պառկել հանգիստ, առանց աղմուկի, իր մահճակալի վրա (բոլոր մահճակալները նշված պետք է լինեն այնպես, վոր ճանաչեն թե՛ փոքրերը և թե՛ մեծերը), պառկել աջ կողքի վրա, ձեռները պահել վերմակից դուրս:

Յերեխաներին քնեցնելիս դաստիարակը խոսում է նրանց հետ շատ կամաց, նույնը պահանջվում է նաև յերեխաներից: Այդպիսի պայմաններում յերեխաները շատ շուտ քնում են: Յեթե յերեխան ինքը չի կարողանում հանվել, գտնել իր մահճակալը, դաստիարակն ոգնում է նրան. քնելու ժամանակ նստում է նրանց մոտ, դիտում է, թե ինչպես են նրանք քնում, հետևում է, վոր դեռ չքնածները չխանգարեն քնածներին:

Մեծահասակ յերեխաների համար քնելը պարտադիր չէ, նրանք կարող են հանգիստ պառկել: Այն յերեխաները, վորոնք արդեն հանգստացել են և մյուսներից շուտ են արթնացել, կարելի յե թույլ տալ հանդարտ վեր կենալ, հագնվել և զբաղվել հանգիստ խաղով:

Յերեխաներն արթնանալուց հետո կանոնավոր հագնվում են, իրենց տեղն են դնում աթոռակները: Մեծահասակ յերեխաները վարժվում են դասավորել իրենց անկողնի պարագաները:

Յերեխաների յերեկոյան խաղերը յեվ զբաղմունքները

Մինչև հետճաշիկը յերեխաները խաղում և զբաղվում են ով ինչպես ուզի: Հետճաշիկից հետո, յերբ արևն ավելի քիչ է տաքացնում, կարելի յե մի քիչ աշխատել բանջարանոցում, ծաղկանոցում: Հետո կարելի յե գնալ զբոսանքի՝ գետը կամ լիճը, դաշտը, մարգագետինը:

Զբոսանքի ժամանակ յերեխաները խաղում են զանազան խաղեր, վազում են գնդակի հետևից, թռցնում են փռռանները, միջատներ են հավաքում, դիտում են նրանց, վորսում են շերեփուկներ, ձկներ, խխունջներ բնության անկյան համար, հավաքում են ծաղիկներ, կոներ, տերևներ, ճյուղեր, մամուռ, սունկեր, հատապտուղներ և այլն: Թույլ յերեխաներին հարկավոր է

զբաղվել ավելի հանգիստ խաղերի, վորոնք չեն պահանջում լարված շարժումներ:

Յեթե յերեխաները հրապարակում չեն գիշերում, ապա զբոսանքից հետո նրանք գնում են տուն: Յերեխաների հետևից յեկող ծնողների հետ դաստիարակը կարող է այդ ժամանակ զրուցել յերեխաների մասին, պատմել նկարների, ծեփի և այլ աշխատանքների մասին, պայմանավորվել նրանց հետ, թե ի՛նչ է հարկավոր անել յերեխայի մաքրության և առողջապահության համար:

Այսպես է անցկացվում որվա ճիշտ ռեժիմը մանկական հրապարակում: Կյանքի այսպիսի դասավորությամբ յերեխաները միշտ էլ լինում են հանգիստ, առույգ և ուրախ: Նրանց որը լցված է հետաքրքիր խաղերով և զբաղմունքներով: Միևնույն ժամանակ յերեխաները չեն հոգնում և չեն հուզվում, վորովհետև նրանք ժամանակին հանգստանում են, ժամանակին ուտելիք են ստանում, մաքուր ոդում շատ են լինում, բավական չափով ոգտվում են առողջության համար այնպիսի կարևոր բարիքներից, ինչպես ոդը, արևը և ջուրը:

Շնորհիվ այս ամենի յերեխաների առողջությունը ամրապնդվում է, նրանք լավ կազդուրվում են, աճում և զարգանում:

Ինչպես մենք տեսանք, դաստիարակի առաջ խնդիր է դրված՝ դաստիարակել յերեխաների մեջ կուլտուրական ունակություններ:

Կրկնենք մեկ անգամ ևս, թե ի՛նչ բանի պետք է վարժեցնել յերեխաներին հրապարակում գտնված ժամանակամիջոցում:

Հարկավոր է, վոր յերեխաները սովորեն լվացվել ուտելուց առաջ և կեղտոտվելուց հետո, զուգարանից հետո. լվացվել առավոտյան և քնելուց առաջ, անկողին մտնել մաքուր վոտներով: Մեծ յերեխաները սովորեն ամեն որ մաքրել ատամները, իսկ քնելուց առաջ՝ և՛ փոքրերը, և՛ մեծերը սովորեն վողողել բերանը: Յերեխաները սովորեն սրբվել միմիայն իրենց յերեսսրբիչներով: Անհրաժեշտ է նաև յերեխաները սովորեն կուլտուրականորեն և կանոնավոր ուտել, ճիշտ բռնել գդալը, ուտել առանց շտապելու և լավ ծամել ուտելիքը, ուտել միայն սեղանի մոտ, ոգտվել անձեռոցիկից, ուտելուց հետո սեղանը թողնել կանոնավոր վիճակում:

Մեծ ուշադրություն պետք է դարձնել յերեխաների հագուստի ակուրատությանը և մաքրությանը, նրանց կուլտուրական

տեսքին: Յերեխաները սովորում են ակուրատ հագնվել, ոգտվել թաշկինակից, սանրվել, կանոնավոր ոգտվել զուգարանից:

Հարկավոր է դաստիարակել յերեխաների մեջ իր իրերը և շրջապատը մաքուր և կարգուկանոնով պահելու սեր: Յերեխաները սովորում են կանոնավոր կերպով հավաքել խաղալիքները և նյութերը, վերցնել գրքեր և նկարներ մաքուր ձեռքերով, պահպանել կարգուկանոն պարապմունքների ժամանակ, չկեղտոտել տեղամասը և շենքը, շենք մտնելիս սրբել ոտները:

Այս ամենի համար փոքրերին հարկավոր է մեծերի ոգնությունը, իսկ մեծահասակները հետզհետե սովորում են ինքնուրույն կերպով անել այն ամենը, ինչ ներում է իրենց ուժը: Առանձնապես կարևոր է, վոր դաստիարակչուհին և մանկական հրապարակի ամբողջ անձնակազմն իրենք միշտ կարգապահության և մաքրության որինակ հանդիսանան յերեխաների համար, անհրաժեշտ հոգատարություն հանդես բերեն դեպի մաքրությունն ու կարգուկանոնը:

ՈՐԸ ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

(Մանկական հրապարակների աշխատանքի փորձից կոլտնտեսություններում 1938 թ.)

Առավոտյան ժամը 7-ն է: Որը հրապարակում սկսվում է:

Ներս մտնելով դռնից, յերեխաները բարևում են դաստիարակչուհուն: «Բարև Ձեզ, ընկե՛ր Սաթիկ»:

Ընկեր Սաթիկը ուրախությամբ դիմավորում է յերեխաներին, նա գիտե, թե ինչ պիտի ասի յուրաքանչյուր յերեխային: «Հապա՛, ի՞նչպես է ձեր այծիկը»,—հանաքով հարցնում է նա Սուրիկին:

Նա գիտե, վոր Սուրիկենց տնտեսության մեջ այծ է ավելացել, Սուրիկը այծիկի հետ շատ ժամանակ է անցկացնում և սիրում է նրան: Սուրիկը տարված սկսում է պատմել, թե ինչպես այծիկը բարձրացել էր գոմի կտուրը, իսկ նա՝ նրա հետևից. հետո այծիկը—«թռավ ուղիղ գետին»: Ընկեր Սաթիկը ծիծաղում է և խոսակցության ժամանակ աննկատելի կերպով դիտելով նրա ձեռները, յեղունգները կտրում է: «Գնա և մաքուր լվացվիր»,—ասում է ընկեր Սաթիկը:

Իսկ այնտեղ արդեն լվացվում է Կոլյան: Նա առաջարկում է Սուրիկին. «Տեսնենք ո՛վ շուտ կլվացվի», իսկ Սուրիկը՝ «Չէ՛, յես ով շուտ չեմ խաղա»: «Իսկ ինչպե՞ս դու պիտի խաղաս»:

«Չգիտեմ, յես դեռ չեմ վորոշել»:

«Յես հիմա տրակտորով կգնամ և յերեխաներին էլ հետս կվերցնեմ»:

«Իսկ ինձ կվերցնե՞ս»:

«Այո»:

Ընկեր Սաթիկն արդեն զրուցում է Մանյայի հետ.

«Ա՛յ, Մանյան էլ յեկավ. դու հիմա ի՞նչ պետք է անես, Մանյա»: «Պետք է խաղամ, ա՛յ, այնտեղ»—ցույց տալով ավազի արկղը, ասում է նա:

«Ի՛նչ մաքուր յեկավ մեր Վանիկը. շապիկը մաքուր, մազերը սանրած»—ասում է ընկեր Սաթիկը:

«Յես էլ վաղը այդպես կգամ», «Յես էլ», «Յես էլ»—լսվեցին ամեն կողմից յերեխաների ձայները:

Վանիկը գոհունակությամբ ժպտում է:

Ահա սեղանի առաջ նստած են յերեք յերեխա: Նրանք նկարում են «Անտառ», «Անասունների բակը»: Մանիկը նույնիսկ գնացք է նկարել, վորը Մոսկվա յե գնում:

«Յես հիմա յերեխաներ կնկարեմ, նրանք ընկ. Սաթիկի հետ գնում են ծաղիկներ հավաքելու»: «Իսկ յես կնկարեմ՝ ինչպես մենք հորթուկներ տեսանք»:

Ամեն մեկը նկար է ցույց տալիս ընկ. Սաթիկին, գիտենալով, վոր նա կգովի, ուշադրությամբ կդիտի, կխոսի:

Յերեք յերեխա գնդակ են խաղում, գցում են վեր և աշխատում բռնել:

Ընկեր Սաթիկն այստեղ էլ հասավ, նրանց գլխավերևը գնդակը բռնեց: «Յես բոլորից ճարպիկ եմ»: Յերեխաները հասկանում են, վոր նա կատակ է անում, ծիծաղում են, իսկ նա այնպես վարպետորեն է գցում, վոր գնդակն ընկնում է Գոհարիկի ձեռքը: «Յես էլ եմ ճարպիկ», գոչում է Գոհարիկը:

Յերկու փոքրիկներ ավազից գնդեր են շինում և շարում են:

«Ա՛յ, ապրեք, ինչքա՛ն գնդեր եք պատրաստել, բոլոր յերեխաներին խաղալու համար կբավականացնի»: Յերեխաները գոհ են, ցանկանում են ավելի շատ պատրաստել:

«Կատյա, ոգնիր նրանց»—ասում է ընկեր Սաթիկն առանձին կանգնած աղջկան: Կատյան յերկչոտությամբ մոտենում է: «Յես կարկանդակ կշինեմ»,—ասում է նա: «Ինձ էլ կհյուրասիրես, Կատյա, չէ՞»:

Կատյան դանդաղ պատրաստում է կարկանդակը և տալիս է ընկեր Սաթիկին: Ընկեր Սաթիկը ձևացնում է, թե կարկանդակ է ծամում: Կատյան արդեն ժպտում է:

Ընկեր Սաթիկը դիմում է յերեխաներին․ «Յերեխաներ, արդեն բոլորը հավաքվեցին, ժամանակն է նախաճաշելու։ Ձեռքներս լվանանք և ուտենք։ Միայն ամեն ինչ դրեք իրենց տեղը»։

Յերեխաները շտապ հավաքում են խաղալիքները, բոլորը դնում են իրենց տեղը․ քանի դեռ մեծերը հավաքում են, ընկեր Սաթիկը փոքրերին ուղարկում է լվացարանի մոտ, նախորոք նրանց գոգնոցների թևերը վեր հավաքելով։ Խոհարարուհին արդեն լցնում է սուրճը։

Յերեխաները հանդիստ նախաճաշ են անում։

Ընկեր Սաթիկը խոսում է կամաց, առանց ձայնը բարձրացնելու։ Փոքրերին ոգնում է․ «Ա՛յ, այսպես, բաժակից կխմես սուրճը, բոլորը-բոլորը», մոտեցնում է փոքրիկ յերեխայի բաժակը, վորը նայում է մեծերին և արդեն մոռացել է ուտել։

«Ի՛նչ լավ կերան այսոր Վանիկը և Գուրգենը»։

Նախաճաշը վերջացնելուց հետո յերեխաները հետզհետե վեր են կենում սեղանից և նորից՝ մեկը գիրք է նայում, մյուսը խաղում է և այլն։ Ընկեր Սաթիկը վերցնում է պատկերազարդ գիրքը, հավաքում է յերեխաներին և ասում․ «Նապաստակը հայրիկին չլսեց և նրա վոտիկը տրորվեց։ Ա՛յ, տեսնում եք,— ցույց է տալիս նկարը,— մեքենայի հետևից չի կարելի վազել»։

Յերեխաների մեծ մասը նստում է նավակ (կոլտնտեսությունը յերեխաների խաղերի համար մի մեծ նավակ է շինել) և յերգում են «Կանաչ դաշտի լալեն եմ յես» յերգը։ «Յերեխանե՛ր, յես գնում եմ ծեփելու»,— ասում է Մանյան, տեսնելով, վոր ընկեր Սաթիկը հերթապահ Կոլյայի հետ կավ է բերել և շարում է տախտակների վրա։ Յերեխաները վազում են սեղանի մոտ։ Նավակում մնում են փոքրերը․ նրանք ցանկանում են «նավարկել գետի վրա»։ «Դե՛, նավարկե՛ք, նավարկե՛ք, միայն թե շուտ յեկեք, թե չե մենք ձեզ կկարոտենք»,— ասում է ընկեր Սաթիկը։ 2 րոպեյից հետո փոքրիկները վազում են սեղանի մոտ․ «Մենք յեկանք»,— ուրախ խնդում են նրանք։

«Դե՛, նստեցեք ձեր սեղանին, այնտեղ կավը ձեզ է սպասում»։

Մեծերը և փոքրերը ծեփում են։ Ընկեր Սաթիկը մոտենում է մեկ սրան, մեկ նրան, վորին ոգնում է, վորին՝ խրախուսում, վորին՝ գովում։ Մեծերը խոշոր բաներ են ուզում ծեփել— տրակտոր, կոմբայն, ձի, գնացք։ Փոքրերը ծեփում են հասարակ բաներ և շուտ ել վերջացնում։

Ընկեր Սաթիկը խնամքով աշխատանքները դնում է սեղանի

վրա, վորտեղ արդեն գրված են թերթիկներ յերեխաների անուններով։ «Թող չորանան Կատյայի գնդակը և Շուշիկի նավակը»։

Ընկեր Սաթիկը նրանց ուղարկում է դեպի լվացարան․ «Մաքո՛ւր, մաքո՛ւր լվանալ ձեռքերը»։

Յերեխաները ձեռքերը լվանում են և վազում են «լողալու նավակով»։ Ընկեր Սաթիկը ձեռքը թափահարում է․ «Ցտեսություն»։

Մեծերը ավելի շատ են մնում սեղանի մոտ, միմյանց աշխատանքներն են նայում, խորհրդակցում են․ «Սուրիկի ձին նման չի դուրս յեկել»։ «Այո՛, գլուխը դեռ այնքան ել նման չե, բայց վոչինչ, Սուրիկը դեռ կսովորի և նրա մյուս ձին ավելի նման կլինի իսկականին»,— ասում է ընկեր Սաթիկը։ Յերեխաները վերջացնում են ծեփելը, տախտակները հավաքում են, ծեփվածքները տանում սենյակ և հերթով ձեռները լվանում։

Սեղանի մոտ յերկար նստելուց հետո յերեխաները շարժվելու կարիք են զգում, և այդ գիտե ընկեր Սաթիկը։ Նա մոտ է բերում կախարանը, վորի վրա կախված են ցատկապարանները, սանձերը։

Յերեխաները տեսնելով սանձերը, արդեն պայմանավորվում են խաղալ։ Ուրիշները գնում են ավազի մոտ, մի մասն ել գնում է դեպի նավակը, վերցնում են սանձերը, գնդակը։

Ընկեր Սաթիկն այդ ժամանակ մաքրում է սեղանը, բայց նա ամեն ինչ տեսնում է, ամենքին հետևում։

Յերբ Վանիկը և Պետիկը վերցնում են սանձը միաժամանակ և բարկացած նայում են մեկ-մեկու, ընկեր Սաթիկը կանխելով վեճը, ասում է․ «Իսկ ո՞վ է ձեզնից ձին և ո՞վ ձիապանը»․․ «Ո՛, ինչպես է սմբակը գոփում»․․․ Վանիկը սկսում է վոտքը գոփել գետնին, իսկ Պետիկը նրան լծում է։

Փոքրիկները հաճախ վազում են ընկեր Սաթիկի մոտ։ Նա ամեն մեկին շոյում է, ամենքին պատասխանում է ուշադիր։ Մանյան լուրջ կերպով տիկնիկներին փաթաթում է շորի մեջ․ «Աղջկանս կտանեմ մսուր և ինքս շուտ կգնամ ֆերմա։ Յես այնտեղ կթվոր եմ և պետք է կովերը կթեմ»։

Այս լսելով՝ Լուսիկն ասում է․ «Յես մսուրի վարիչն եմ, բայց քո յերեխային չեմ ընդունի․ նա տաքություն ունի և հարկավոր է տանել հիվանդանոց, բժիշկ Վարդանյանի մոտ»։ «Տվեք, յես կտանեմ, յես կառապան եմ»,— և Կիմիկը հրապարակի մյուս կողմն է տանում «հիվանդ աղջկան»։ Աղջիկն առողջ

է հանվել, և «մայրը» նրան սուր է տալիս, իսկ ինքը շտապում է «կով կթելու»: Նստում է աթոռիկի վրա և կարծես թե կթում է:

Ցերեկվա ճաշի ժամանակը: «Հերթապահնե՛ր, ճաշին պատրաստվելու ժամանակն է»,—ասում է ընկեր Սաթիկը: Փոքրերին նա կանչում է լվացարանի մոտ և օգնում է լվանալու ձեռքերը և երեսը:

Պետիկն ու Սոֆիկը ձեռքերը լվանում են ուրիշ լվացարանի տակ և սկսում են օգնել հավաքարարուհուն պատրաստելու սեղանը: Նրանք հերթապահ են: Հավաքարարուհին բերում է ափսեները, գդալները, մաքրում սեղանը, հերթապահները սկսում են շարել ափսեները և կանոնավոր կերպով նրանց աջ կողմից դասավորում գդալները: Ճաշի ժամանակ ընկեր Սաթիկը հետևվում է, որ բոլոր երեխաները լավ ուտեն, ավելացնում է նրանց բաժինը, որոնք նորից խնդրում են ավելացնել, հոգ է տանում, որ երեխաները հարմար և ազատ նստեն:

Կատյան վատ է ուտում: Մարոն պատահաբար հրում է նրան: Կատյան ջղայնանում է և լաց լինում: Ընկեր Սաթիկը շոյում է նրա գլուխը—հո հիվանդ չէ: «Կատյա՛, հիմա մեզ համար Վարդուհի մորաքույրը քաղցր կիսել կբերի, սուպը շուտ կեր»,—և կերակրում է նրան (Կատյան 3 տարեկան է):

Տան հետևը, ստվերում, արդեն պատրաստ են մահճակալները, նրանցից քիչ հեռու կա նստարան, 2 լագան և դույլով ջուր:

Երեխաների ոտքերը լվանում է տեխնիկական աշխատողը, և նրանք աստիճանաբար պառկում են քնելու մաքուր մահճակալների մեջ:

Ընկեր Սաթիկը խոսում է շշուկով, անցնելով բոլորի մոտով, ամենքին ծածկում է սավանով, ուղղում է բարձը: Աստիճանաբար երեխաները քնում են: Անհանգիստ է Կատյան և երկար ժամանակ չի քնում: Ընկեր Սաթիկը նստում է նրա մահճակալի մոտ, Կատյան քնում է: Երեխաները քնել են 1½ ժամ: Երբ սկսում են զարթնել, ընկեր Սաթիկն ասում է. «Կամաց վեր կենանք, թող փոքրերը միքիչ էլ քնեն»: Փոքրերը վեր են կենում վերջում, և քանի դեռ մեծերը լվացվում են, ընկեր Սաթիկը օգնում է նրանց հագնվելու:

Քնելուց հետո երեխաները հանգիստ են: «Ընկեր Սաթիկ, մենք ի՞նչ պետք է անենք»:

«Գնանք մանգալու, լա՞վ»:

«Իսկ ո՞րտեղ»:

«Ա՛յ, այնտեղ, մարգագետին, գետակի մոտ»:

Երեխաները հավաքվում են ընկեր Սաթիկի շուրջը և մեկը-մյուսի հետևից ցանկանում է հարց տալ, խոսել.

«Իսկ մենք այնտեղ ձկնիկ կտեսնե՞նք, կխաղա՞նք»:

«Ընկեր Սաթիկ, հիշո՞ւմ ես, այնտեղ ինչ ծաղիկ էր բուսել ջրում». «Իսկ այնտեղ մենք կրկին մայրիկին կտեսնենք»:

Ընկեր Սաթիկը պատասխանում է երեխաներին: Առաջարկում է նրանց նախ թեյ խմել: Հետճաշիկից հետո ամենափոքրերի ձեռքերից բռնելով, ուղղվում է դեպի դուռը:

«Երեխանե՛ր, գնանք մարգագետին»: Երեխաները հավաքվում են ընկեր Սաթիկի շուրջը. նա երգում է:

Երեխաները նրան ձայնակցում են և դուրս գալիս դռնից:

Մարգագետինը միքանի մետրի վրա է:

Այստեղ առաջին անգամը չէ, որ գալիս են: Մեծերը վազում են դեպի ափը, բայց մոտենալով, անցնում են ավելի կամաց, գողեգող, «թե չէ՝ էլի կխրտնեցնենք»: Եվ երբ մոտենում են, հիասթափված գոչում են. «Ա՛յ, տեսնում եք, էլի փախան»: «Ոչի՛նչ, հիմա ձկները կբարձրանան ջրի երեսը, և դուք նրանց կտեսնեք»: Երեխաները հանգստանում են և սկսում են կամաց խոսել: «Ա՛յ, ա՛յ նրանք»,—չհամբերելով մատով ցույց է տալիս Վանիկը: Ձկնիկներն արագ սուզվում են ջրի տակ: Երեխաները բարկանում են. «Ա՛խ, Վանիկ, ի՛նչ տեսակն ես, գնա՛»: Վանիկը արդարանում է. «Ես ոչինչ, ես նրանց ձեռք չտվի»...

«Այո՛, նրանք շատ վախկոտ են, երեխաներ, և արագաշարժ: Ահա՛ նրանք»: Երեխաներն ուրախ են. բավական նայում են ձկներին:

«Ընկեր Սաթիկ, յեկեք խաղանք»:

Երեխաները վազում են մարգագետնով, ուրախ թռչկոտելով: Կիմիկը գլուխը մի կողմ թեքելով, նմանեցնելով ձիու, խրխնջում է, վազում է երեխաների չորս կողմը: Մանյան կովին նմանեցնելով, դառնում է դեպի փոքրիկը—«մո՜ւ-ու-ո՜ւ»: Նա քիչ է մնում վախենա, բայց ընկեր Սաթիկը զգուշացնում է. «Իսկ նա քեզանից չի վախենում, կորի՛ր, կով»: Փոքրիկը կանաչ է պոկում և թափահարում է: Մանյան փախչում է:

Նապաստակ, պար արի,
Խլստակ, շուտ արի,
Կողիկ-մողիկ, շուտ արի,
Կողիկ-մողիկ, շուտ արի...

Յերգում է ընկեր Սաթիկը: Յերեխաները թռչկոտում են, ապա մոտենում, նստում են նրա շուրջը: Քիչ հետո վեր են կենում, գնում են գետի ափով:

Ընկեր Սաթիկը ծաղիկներ է քաղում, յերեխաներն ոգնում են նրան, փունջ են կապում: Մի քիչ անց վերադառնում են հրապարակ:

Նրանց դիմավորում է Կատյայի մայրը: «Ինչպե՞ս է իմ Կատյան» .—«Հա, այսօր ինչ-որ թույլ է, չի ուզում ուտել. յես արդեն մտածում էի, չլինի՞ թե նա հիվանդ է»:

«Նա գիշերը վատ է քնել, յես նրան ինձ մոտ պառկեցրի»:

«Իսկ մի՞թե կարելի է յերեխայի հետ միասին պառկել. ձեզ մոտ նեղ կլինի, օդը ծանր, դա վնասակար է»,—ասում է ընկեր Սաթիկը:

Կատյայի մայրը համաձայնվում է. «Յես արդեն ինքս տեսնում եմ, վոր այդպես չի կարելի անել»:

Ծնողները հետզհետե գալիս են յերեխաների հետևից, և յուրաքանչյուրի հետ ընկեր Սաթիկը խոսելու նյութ ունի:

Ընկեր Սաթիկը ծնողների հետ խոսում է յերեխաներից առանձին: Վարդանի մորը ասում է. «Ապրես, Հեղուշ, ի՜նչ լավ ես պահում տղայիդ, միշտ մաքուր է»: Վանիկի մորը՝ «Ի՜նչ լավ է պատմում տղադ այծիկի մասին. բոլոր յերեխաներով կգանք այծիկին տեսնելու»:

«Հիմա Գուրգենը յե՞րբ է պառկում քնելու»—հետաքրքրվում է նա: Գուրգենին առաջ ուշ էին քնեցնում, և նա բացատրում է նրա մորը դրա վնասակարության մասին: Գուրգենը քնից չէր կշտանում, գունատ էր լինում և կամակորություն անում: «Հիմա ժամանակին եմ քնեցնում, հայրն էլ է նրան հիշեցնում քնելու մասին: Ասենք, ինքն էլ է սովորել, ինչպես դուք ասում էիք, ժամանակին քնում է»: «Ճիշտ է, ճիշտ է, հարկավոր է միայն մի քանի անգամ պառկեցնել ժամանակին և յերեխան կսովորի: Յես ձեզ ցույց կտամ, թե Գուրգենը ինչպիսի ինքնաթիռ է շինել: Թող հայրը նրան տախտակ և մեխեր տա, նա տուն էլ կշինի»:

Մայրերը դաստիարակչուհուն սիրում են: Ամեն մեկը հաճույքով զրուցում, խորհրդակցում է նրա հետ և յեթե նա մի բան է խնդրում՝ հաճույքով ոգնում են:

Նրանք բոլորը միասին այնպես լա՜վ սարքեցին հրապարակը: Իսկ մի քանի մայրեր յերեխաների համար գլխարկներ և տրուսիկներ կարեցին:

Հետզհետե ծնողները յերեխաներին տուն են տանում: Ընկեր Սաթիկը մենակ է մնում: Ստուգում է և հավաքում խաղալիքները, վերհիշում իր աշխատանքային օրը:

Մտածում է այն մասին, թե ի՜նչ լավ կլինի վաղը բոլորով գնալ Վանիկի մոտ՝ այծը տեսնելու, իսկ մինչ այդ՝ յերեխաներին «Գայլը և յոթ այծիկները» հեքիաթը պատմել: Յերեխաները հետաքրքրվում են ձկներով—հարկավոր է ճարել բանկա և կենդանի ձուկ պահել. Թող ավելի մոտիկից դիտեն:

Վորոշում է գնալ Կատյայենց տուն, խոսել մոր հետ այն մասին, թե ինչպես է նա դաստիարակում իր աղջկան: Իր պլանավորման տետրում նա գրում է այդ բոլորը, վոր չմոռանա: Ընկեր Սաթիկը գրում է, թե ինչը յերբ պետք է կատարի:

Լավ է անցնում օրը ընկեր Սաթիկի մոտ:

Դաստիարակչուհու ուշադրությունից չի վրիպում վոչ Կատյայի վատ տրամադրությունը, վոչ Վանիկի և Պետիկի միջև սկսված վեճը և վոչ էլ փոքրիկի յերկյուղն այն ժամանակ, յերբ Մանյան նրան ուզում էր պոզահարել:

Նա ժամանակին կանխեց Կատյայի լացը, ժամանակին հիշեցրեց Վանիկին և Պետիկին ձի խաղալ:

Ինչքա՜ն զգայուն, ինչքա՜ն լավ է դիմավորում նա յերեխաներին:

Վարդանին գովելով, նա յերեխաների մեջ մաքուր լինելու ցանկություն է առաջ բերում: Յերեխային հարցեր տալով և լսելով նրա պատմածները այծի մասին, նա ավելի յե մտերմանում յերեխայի հետ: Նա հանդիստ է, անվրդով, կատակ է անում: Յերեխաների մեջ առաջ է գալիս լավ, առույգ, ուրախ տրամադրություն:

Նա գիտեր իր յերեխաների ընտանեկան պայմանները, յուրաքանչյուր ընտանիքի հետ աշխատանք է կատարում. Նրա մոտ արդեն այդ աշխատանքների դրական արդյունքները կան:

Վարդանը հիմա միշտ մաքուր է, Կիմիկը լավ է քնում, Վանիկը, վոր առաջ մարդկանցից քաշվում էր, լռակյաց էր, հիմա հաճույքով խոսում է, պատմում, ավելի զրուցասեր է դարձել:

Ընկեր Սաթիկը յերեխաների տան կյանքը գիտե ամենայն մանրամասնությամբ, հոգում է ամենքի մասին առանձին, զրուցում է ծնողների հետ:

Դրա համար էլ կոլտնտեսությունում նրան գնահատում են:

ԽԱՂ

Նախադպրոցական հասակի երեխաների կյանքում ամենամեծ տեղը գրավում է խաղը։

Նախադպրոցականների խաղերը չափազանց բազմազան են. ողակ գլորելը, գնդակ խաղալը, տիկնիկների հետ խաղալը, շինություններ շինարարական նյութերից, ավազից, կարմիր բանակի խաղեր, սեղանի խաղեր—լոտո, դոմինո և այլն։

Խաղը երեխային մեծ ուրախություն և բավականություն է պատճառում։

Խաղում իրենց դերերը կատարելով, երեխաներն այնպես են տարվում նրանցով, որ ամեն ինչի մասին մոռանում են։

«Տո՜ւ—տո՜ւ—տո՜ւ»—...համառորեն սուլում է «մեքենավարը», պտտելով ձեռքում ինչ-որ անիվ։ «Ճանապարհ տո՛ւր, թե չէ մեքենան կտրորի»,—և այնքան սպասելով, որ ճանապարհի վրա կանգնածը հեռանա, երեխան վազում է անիվը ձեռքին։

Երեխան ոչ միայն հնարում է, այլև ապրում է իր դերը. նա, ինչպես ասում են, ապրում է խաղով։

«Սկզբում յես շատ եյի վախենում, բայց յերբ պարաշյուտը բաց արի, այն ժամանակ ինձ լավ զգացի»,—խոստովանում է «պարաշյուտիստ» Ոնիկը։

Պատահած փայտը վեր է ածվում մեկ՝ ձիու—նրան լծում, կերակրում են..., մեկ՝ ինքնաթիռի—ժ՜...ժ՜...ժ.— թռչում են դեպի Հյուսիսային բևեռ..., մեկ էլ՝ տիկնիկի, յեթե փայտիկը մեջքին փաթաթեն։ Կարելի յե նրան պառկեցնել քնելու, հետո արթնացնել, տանել ման գալու, հեքիաթ պատմել։

Նախադպրոցականի խաղերը, դաստիարակի կողմից ուշադիր հետևելու և ղեկավարելու պայմաններում, հսկայական նշանակություն ունեն երեխաների դաստիարակության և յուրաքանչյուր երեխայի բազմակողմանի զարգացման համար։

Ամենից առաջ երեխաների խաղերը նպաստում են նրանց ֆիզիկական զարգացմանը։ Խաղալով երեխան վազում է, թռչում է, մագլցում է, ընդունում է բազմազան դրություն։ Ահա հարկավոր է պլպզել, փռել ավազը, ձգվել ոտքի թաթերի վրա՝ զանգը վերցնելու, թափ տանել՝ գնդակը նշանին խփելու, կռանալ և ողակը բռնել։ Այսպես խաղի ժամանակ մարզվում են երեխայի մկանները, զարգանում են նրա շարժումները։ Երեխաները դառնում են ճարպիկ, աշխույժ։

Բայց տարվելով խաղի միայն մի տեսակով, օրինակ, բավական երկար վազելով, երեխան հոգնում է,—դա դառնում է վնասակար նրա առողջության համար։ Երեխայի առողջության համար վնասակար է նաև երկար ժամանակ միևնույն դիրքում մնալը, օրինակ՝ սեղանի մոտ երկար նստելը, ավազի հետ խաղալիս կորացած դրությունը և այլն։ Դրա համար էլ երեխաներին հետևելիս, դաստիարակը պետք է տեսնի և ժամանակին ուղղի ամեն մի երեխայի. մեկին՝ շարժուն խաղերից փոխի հանգիստ խաղերի, օրինակ՝ խաղ սեղանի մոտ, տաշեղների, մոզաիկների, նկարների հետ. իսկ այն երեխային, վորը սիրում է երկար ժամանակ նստած վիճակում գրքով, նկարներով տարվել,—հետաքրքրել շարժական խաղերով, նրա հետ խաղալ, նրա հետ միասին մի վորևէ ընդհանուր խաղում մասնակցել։

Երեխայի առողջության համար մեծ նշանակություն ունեն խաղերը մաքուր օդում. երեխաները խորն են շնչում, արյան շրջանառությունն արագ է կատարվում, ամրանում և զարգանում են շնչառության օրգանները, շարժումները, լավանում է երեխայի ախորժակը, քունը։ Աճում, զարգանում և ամրապնդվում է երեխայի վողջ օրգանիզմը։

Երեխայի նորմալ աճման և զարգացման համար մեծ նշանակություն ունի նրա տրամադրությունը, խաղի ժամանակ նա ուրախ է, առույգ, աշխույժ և բավարարված։

Ամեն մի երեխայի այդ լավ տրամադրության համար դաստիարակը պետք է անխոնջ կերպով հոգ տանի։

Դաստիարակը երեխաներին սովորեցնում է խաղալ համերաշխ, մեկ-մեկու ոգնել։ Ընդհանուր խաղերի ժամանակ երեխաները տեսնում են, վոր միասին խաղալն ուրախ և հետաքրքրական է, լավ բաներ կհնարես, շուտ կկատարես։ Միասին կարելի յե մեծ բերդ կառուցել, կարմիր-բանակայինների իսկական շքերթ կազմակերպել։

Խաղը երեխաներից կազմակերպվածություն է պահանջում. հարկավոր է կանոններին յենթարկվել, կարողանալ կատարել հանձնարարությունները, ստանձնած դերը։ Խաղերը, վորտեղ երեխաները ցույց են տալիս մեր երկրի սիրելի հերոսներին, նպաստում են դաստիարակել նրանց մեջ հերոսություն, համարձակություն, դիմացկունություն, սեր դեպի մեր հայրենիքը և նրա անվանի զավակներին նմանվելու ցանկություն։

Հաճախ երեխաները պատկերացնում են նաև իրենց կոլտնտեսության կյանքի զանազան դեպքերը, բերքի տոնը, հեղափոխական տոները և այլն։ Այսպիսի խաղերը դաստիարակում են

յերեխաների մեջ հետաքրքրություն դեպի հասարակական կյանքը:

Խաղերում զարգանում է յերեխաների յերևակայությունը, ստեղծագործական նախաձեռնությունը, ինքնուրույնությունը, խելամտությունը:

Յերեխաները խաղերի միջոցով շատ բան են իմանում առարկաների և նրանց հատկությունների մասին: Նրանք բաց են թողնում նավակը առվակում, դիտում են ջրի հոսանքի ուղղությունը, նրանք խաղում են պտտանով, իմանում են քամու ուժն ու ուղղությունը: Նրանք դիտում են լարվող խաղալիքի շարժումները և ուսումնասիրում են նրա մեխանիզմը: Այսպես զարգանում է յերեխաների հարցասիրությունը և հետաքրքրությունը:

Յերեխաները շինանյութից կառուցում են զանազան սարքավորումներ· դրանով զարգանում է նրանց խելամտությունը, հնարամտությունը, ըմբռնողությունը, ստեղծագործական շնորհքը: Իսկ ինչքա՜ն-ինչքա՜ն խոսակցություններ տեղի յեն ունենում խաղի ժամանակ, ինչքա՜ն հիշողություններ, վորոնք ոժանդակում են յերեխայի արտահայտվելու կարողությանը, խոսքի զարգացմանը:

Այսպիսով, բազմատեսակ խաղերը յերեխայի բազմակողմանի զարգացման համար կարևոր միջոց են հանդիսանում:

Սակայն անհրաժեշտ է, վոր դաստիարակը միշտ ուշադիր և հոգատար լինի դեպի յերեխաների խաղերը, կարողանա ժամանակին ուղղություն տալ և ոգնել նրանց:

Ինչքան հարուստ և բազմակողմանի յեն յերեխաների տպավորությունները, այնքան հետաքրքիր և բազմատեսակ են նրանց խաղերը,—դրա համար ել այնքան մեծ է դաստիարակի դերը յերեխաների խաղերի զարգացման գործում:

Յեթե յերեխաների խաղերը բովանդակությամբ աղքատ են, ամեն որ նույն խաղերն են կրկնվում, դաստիարակը պետք է մտածի այն մասին, թե ինչպիսի պատմվածքներ, գրքեր, դիտելանյութեր, խաղալիքներ, նկարներ տա յերեխաներին, վորպեսզի նրանց մեջ ցանկություն առաջ գա խաղալու այն, ինչ վոր տեսել և լսել են:

Հարկավոր է նաև միշտ ուշադրությամբ հետևել խաղի ընթացքին: Լինում են մի շարք դեպքեր, յերբ անհրաժեշտ է դաստիարակի ժամանակին ոգնությունը, հակառակ դեպքում կամ խաղը խախտվում է, կամ ել վոչ ցանկալի ընթացք է ընդունում:

Ահա մի որինակ:

Յերեխաները «թատրոն» սարքեցին: Յերկու աթոռների միջև սեղանի վրա ցույց եյին տալիս խաղալիքները, յերգում եյին և ծիծաղեցնում «հասարակությանը»: Վարագույր պետք յեղավ: Յերեխաները վազեցին դաստիարակչուհու մոտ: Բայց նա գոհ լինելով այն բանից, վոր յերեխաներն իրենք այդպես լավ խաղում են, զբաղված եր ինչ-վոր իրեն աշխատանքով:

— Այս րոպեյիս:

— Ձե՛· մեզ շո՛ւտ տվեք,—պնդում եյին յերեխաները:

— Հիմա, հիմա... գրելս վերջացնեմ, իսկույն:

Բայց մինչև գրելը վերջացրեց և հետո վարագույրի համար հարմար բան գտավ, «հասարակությունը» ցրվեց, և «թատրոնը» դատարկվեց: Վշտացած «դերասանները» հրաժարվեցին վարագույրից:

— Արդեն մեզ հարկավոր չե...

Ահա և մեկ ուրիշ դեպք, յերբ դաստիարակը վարպետորեն յերեխաների խաղը ղեկավարում է: Բերենք մի մանկապարտեզի դաստիարակի որինակը:

Առավոտյան ժամը 10-ն է: Սահմանված պարապմունքներից հետո յերեխաներն անցնում են տարբեր խաղերի: Յերեխաների մի մասը խաղում է ավազի հետ:

Մի տղա մեծ տուն է շինում իր բակով: Դաստիարակը մոտենում է նրան, մի րոպե նայում յերեխայի կառուցած բակին, տանը և ասում—«Ա՛յ, Կոլյա, ի՛նչ լավ տուն ես շինել· մի քիչ ել յեթե մեծ շինեյիր, իսկ և իսկ մեր ջրհան մեքենայի շենքը կլիներ իրեն դուշով»:

«Իսկ յես հիմա ջրհանի շենքը կշինեմ, վորտեղ աշխատում է քեռի Վասիլը, դեռ խողովակն ել հետը կշինեմ»,—ասում է Կոլյան:

Դաստիարակը հետևում է և ոգնում է յերեխային:

Կոլյային միանում են մի խումբ յերեխաներ: Նրանք քննարկում են, թե ի՛նչից և ի՛նչպես կարելի յե լավ խողովակ շինել: Կոլյան յեղեգներ է բերում, և յերեխաներն ուշադրությամբ ուսումնասիրում են յեղեգները:

Վանիկ· «Ա՛յ, լավ խողովակներ կլինեն, հա՛»:

Կոլյա· «Մի՞թե այդպիսի խողովակներ են լինում· դրա մեջ դեռ փականներ ել կան, ջուրը չի անցնի»:

Դաստիարակը բացատրում է յերեխաներին, վոր յեղեգնի

վերին մասը կարելի յե կտրել և կլինի ջրի իսկական խողովակ, իսկ միջուկը հարկավոր է մաքրել:

Դաստիարակի ոգնությամբ յերեխաները միասին սկսում են խողովակ շինել: Ահա և պատրաստ է: Սկսվում է խողովակների ամրացումը այնպես, ինչպես ջրհան մեքենայի վրա յե սարքված: Մի քիչ ջանք թափելուց հետո խողովակն ամրացված է թեք դրությամբ:

Յերեխաների առաջ կանգնած են նոր դժվարություններ: Ինչի՞ց և ի՞նչպես շինել ջրաճնշիչ բակը: Դաստիարակը յերեխաների համար արկղիկ է բերում. յերեխաները փորձում են արկղիկը ամրացնել տան կտուրին: Արկղիկը չի պահվում:

«Յեկեք արկղի յերկու կողմերից անցքեր բացենք, խողովակները միջից անցկացնենք և խողովակն արկղի հետ միասին դնենք տանիքին»:

Առաջարկությունն ընդունվում է, և խողովակներն այդպես էլ ամրացնում են:

Յերեխաները հրճվանքով գոչում են.

«Խողովա՛կը, խողովա՛կը, ինչպես իսկական ջրհան մեքենայի վրայինը լինի»:

Այդ ժամանակ յերեխաների մի յերկրորդ խումբ կազմվեց, վորը ջանասիրությամբ ավազը փորում եր և շինում մի յերկար, թեք ջրանցք, վորը վերջանում եր փոքրիկ ջրամբարով: Այդ ջրանցքով ջուրը պետք է հոսի վոռոգման համար:

Յերեխաներն աշխատում են հետ չմնալ ջրհան մեքենան սարքողներից:

Նինա. «Շո՛ւտ, շո՛ւտ, հիմա դինամոն կաշխատի, ջուրը բաց կթողնեն, իսկ մեզ մոտ ջրանցքը դեռ պատրաստ չէ».

Մանյա. «Մենք մոռացել ենք ջրանցքի յեզրերին ծառեր տնկել, չե՞ վոր շոգ ժամանակ նստելու և խաղալու համար հով չենք ունենա»:

Փոքրիկները ծաղիկներ և կանաչներ են բերում և մեծերի հետ ջրանցքի յեզրերին ծառեր ու ծաղիկներ են տնկում:

Վանիկը կռացել է իրենց սարքած ջրհան մեքենայի պատի մոտ և սուսուփուս ինչ-վոր բան է շինում: Շինարարության տաք ժամանակ նրա վրա վոչվոք ուշադրություն չդարձրեց: Յերբ վոր խողովակներն արդեն սարքված եյին, Կոլյան հիշեց, վոր իրենք մոռացել են դուշը շինել:

Կոլյա. «Իսկ դուշ մենք այնպես էլ չշինեցինք»:

Վանիկ. «Ապա, նայի՛ր...»

Բանից դուրս է գալիս, վոր նա արդեն վերջացնում է դուշի շինարարությունը:

Դուշի խողովակը դուրս է գալիս տան պատից, միանալով ջրհանի խողովակների հետ: Դուշից ջուրը թափվելու տեղը շրջապատված է յեղեգնի ցանկապատով և ավազե թմբերով:

Ամեն ինչ պատրաստ է: Կարելի յե անցնել խողովակներով ջուր բաց թողնելուն:

Սոֆիկ. «Ընկեր Շուշիկ, սպասեցե՛ք, ջրողը յես կլինեմ»:

Նա արագ վազում է արկղի մյուս կողմը և շինում է մի ուղղանկյուն հողամաս-բանջարանոց, վորն առվակներով մասերի յե բաժանում, կանգնում է բահը ձեռքին ջրամբարի մոտ և լուրջ հայտարարում է. «Յես պատրաստ եմ, ջուրը բաց թողեք»:

Մեծ ուրախություն յեղավ յերեխաների համար, յերբ ջուրը արկղ-բակից խողովակով սլացավ ներքև և սկսեց հանդարտ հոսել ջրանցքով:

Վանիկ. «Ինչո՞ւ դուշի միջով ջուր չեք բաց թողնում. նա չի աշխատում, իսկ յերեխաները հիմա մանկապարտեզից կգան»:

Յերեխաները միայն այժմ նկատեցին, վոր դուշը խողովակին չի միանում և ջուրն այնտեղ թափվել չի կարող: Անսպասելիությունից յերեխաները շփոթվեցին և չգիտեյին Վանիկին ինչ պատասխանեն:

Դաստիարակչուհին շտապեց վերացնել այդ անհարմար դրությունն ասելով. «Վանի՛կ, դուշն այսօր դեռ չի աշխատում, ջրհան մեքենան այսօր միայն առաջին փորձն է անում: Մեզ բանվոր է հարկավոր, վոր ջրհան մեքենայի շինության գլխին դրոշակ շինի, վորը ցույց տա, թե յե՞րբ է մեքենան աշխատում»:

Վանիկ. «Յես այդպիսի դրոշակ կշինեմ»: Յեվ Վանիկը աշխույժով կպչում է նոր առաջադրանքի կատարմանը:

Յերեխաները խաղը շարունակում են, դույլերով բակը ջուր են լցնում և խողովակներով բաց են թողնում, ջուրը տարածվում է բանջարանոցի հողամասով: Բարձրանում և իջնում է դրոշակը, վորը ցույց է տալիս աշխատանքն սկսվելը և վերջանալը:

Բայց ահա յերեխաները հոգնեցին: Հարկավոր է յերեխաների ուշադրությունը գրավել մի ուրիշ խաղով կամ զբաղմունքով: Դաստիարակը բերում է պատեֆոնը, դնում է պլաստինկան և յերեխաներին ասում է. «Կոլտնտեսականները հոգնեցին աշխա-

տելուց: Նրանք գնում են հանգստանալու և յերաժշտություն լսելու»:

Այս ասելով, նա լարում է պատեֆոնը:

Յերեխաները մոտենում են պատեֆոնին, լսում են յերաժշտությունը և ուրախ պարում են:

Պարերում մասնակցում է նաև դաստիարակը, աշխատելով պարի մեջ ներգրավել չպարող յերեխաներին և առաջարկելով հանգստանալ շատ պարողներին:

* *
*

Շատ բան է հարկավոր լինում յերեխաներին նրանց բազմազան խաղերը ծավալելու համար. վարագույր՝ թատրոնի համար, վերմակ՝ հիվանդ «արջուկի» համար և «բժշկական խողովակ», կարմիր-բանակայինների և կարմիր-նավաստիների գլխարկներ, փոստատարի պայուսակ, կշեռք՝ կոոպերատիվ խաղալու համար, յերկաթուղի խաղալու համար դրոշակներ, աստղեր, շինանյութերի համար զանազան նյութեր և այլն:

Հաճախ յերեխաներն իրենք են միջոց գտնում դրությունից դուրս գալու համար. հնարում են, հայտնագործում, հարմարեցնում մեկ այս, մեկ այն, և խաղը ավելի հետաքրքրական է դառնում: Բայց հաճախ պետք յեկող առարկայի բացակայությունը շփոթեցնում, հիասթափեցնում է յերեխաներին և ձախողում է նրանց խաղը: Դրա համար էլ միշտ հարկավոր է բազմապիսի նյութերի պաշար ունենալ, վորոնք պետք յեղած դեպքում յերեխաները կարողանան ոգտագործել իրենց խաղերում:

Բացի դրանից, հրապարակում միշտ պետք է լինեն այնպիսի նյութեր, վորոնց ոգնությամբ յերեխաներն իրենք կարողանան շինել այն, ինչ իրենց հարկավոր է. կոճեր, արկղներ, շպագատ, շորեր, փայտի կտորներ, գունավոր թղթեր, ստվարաթուղթ, մեխեր և այլն: Այդ ամենն, իհարկե, պետք է լինեն մաքրած, լվացած և պահվեն կանոնավոր:

Խաղերի ժամանակ յերեխաներին հետևելիս դաստիարակը կարող է նախագուշակել, թե ինչ է հարկավոր յերեխաներին, բայց հարկավոր չէ առաջ վազել առաջարկություններով և դրանք փաթաթել յերեխաների վզին:

Կարելի յե փորձել, հիշեցնել յերեխաներին նրանց տեսածի կամ լսածի այս կամ այն մանրամասնությունները.

— Իսկ հիշո՞ւմ եք ինչ արեց տրակտորիստուհին աշխատանքից հետո:

Պատահում է, վոր բավական է մի այսպիսի հարց յերեխայի հիշողությունը թարմացնելու համար: Մեկը շորի կտոր է գտնում և հոգատարությամբ սրբում է խաղալիք-տրակտորը: Մեկ ուրիշը քաշ է տալիս ցնցուղը՝ դա բենզին է: Սկսվում է քննարկությունը, թե դա վորտեղ լցնի: Մեկ ուրիշն էլ մանր շինարարական նյութի միջից մի ձող է բերում. «Հարկավոր է տրակտորը վերանորոգել, յես վարպետ եմ»:

Յերեխաների խաղերը զարգացնելու համար դաստիարակի պրիոմները շատ բազմազան պետք է լինեն: Այստեղ դաստիարակը պետք է մեծ նրբազգացություն ունենա: Յերբեմն անզգուշ նկատողությունը, մինչև անգամ բարեսիրտ ծաղրանքը խորտակում է յերեխայի ստեղծագործությունը, և նա, տրամադրությունն ընկած, վիրավորված՝ չի վերադառնում այլևս խաղին:

Հարկավոր է նաև կարողանալ արագ, իսկույն, հենց աշխատանքի ընթացքում մտածել ինչպես և ինչով ոգնել յերեխաներին, վոր հրապուրիչ խաղը չընդհատվի, վոր զարգանա յերեխայի նախաձեռնությունը, ստեղծագործական հնարամտությունը:

Հաճախ յերեխաները լավ հնարում են, բայց իրագործել իրենց մտածածը չեն կարողանում: Նման դեպքերում հարկավոր է դաստիարակի ոգնությունը:

Որինակ, շինարարական նյութից շոգենավ են շինում: Կայմ է հարկավոր, բայց այն կանգնեցնել չհաջողվեց, ընկնում է: Յերեխաները հուզված են և պատրաստ են խաղը դադարեցնելու: Դաստիարակը յերեխաների անհաջողությունը նկատեց, նա ոգնում է կայմը կանգնեցնելուն, և խաղը նորից շարունակվում է. «Իսկական շոգենավ է, կայմով»:

Հաճախ մեծ յերեխաների խաղերի ժամանակ կարելի յե սահմանափակվել միայն խորհուրդներով:

Լուսարձակ է հարկավոր: Փոխանակ դաստիարակն ինքը յերեխաների համար այդ պատրաստի, նա հիշեցնում է միայն, թե ինչպես կարելի յե այն շինել, և հետո նրանց հետ միասին հավաքում է հարկավոր ձողիկները, կոճերը, շպագատը և այլն և ոգնում է յերեխաներին լուծել իրենց առաջ դրված հետաքրքիր խնդիրը՝ իրենց խաղի համար լուսարձակ շինելը: Ինչքա՜ն հպարտություն, ի՜նչ բավականություն—իրենք մտածեցին և իրենք էլ պատրաստեցին:

Պատահում է, վոր դաստիարակի մի հարցը, մի ակնարկը

բավական է, վորպեսզի խաղը դառնա ավելի բովանդակալից և հետաքրքիր:

Յերեխաները կինո յեն խաղում: Խաղն այն է, վոր յերեխաներն աթոռները շարում են և նստում, իսկ յերկու-յերեք յերեխա ցույց են տալիս նկարներ և պատմում նրանց մասին:

Մի քանի րոպեյով կինոյի հաճախորդ է դառնում նաև դաստիարակը: «Յես էլ եմ ուզում կինո գնալ, բայց, ա՛յ, տոմս չունեմ»,—ասում է նա:

Մի ակնթարթում տոմսը ճարվեց—մի վորևէ թղթի ձևով: Դաստիարակին նստեցրին, մասնակից են դարձնում «ֆիլմից» ստացած իրենց տպավորություններին:

Իսկ վաղվա համար, առավոտվանից, կինոյի պատրաստություններ են տեսնում. վոմանք ջանասիրությամբ տոմսեր են կտրատում, մյուսներն այն ներկում են: Ինչ-վոր մեկը սարքում է դրամարկղը, ավելի հարմար են շարում աթոռները, արդեն կինոյի և՛ վարիչ, և՛ տոմսավաճառ, և՛ հսկիչ կա: «Հասարակությունն» էլ առանց գործի չի. նրանք զուգվում են, հավաքվում են, գնում են՝ ինչ-վոր բանի մասին աշխույժ զրուցելով. ամենայերկար ճանապարհով—կինոն հեռու յէ: Բոլորը իրարանցման մեջ են, բոլորը գոհ են: Կինոյի ծրագիրն էլ մանրամասնորեն նախապատրաստվում է. կինո նկարից բացի կլինեն նաև յերգիչներ և արտասանողներ: Նրանք քչփչում, խորհրդակցում են. ցանկանում են հասարակությանն ինչ-վոր հետաքրքիր բան ցույց տալ: «Կինո» խաղը շարունակվում է, կինո յեն հրավիրվում արդեն փոքրիկները: Նրանց նկարներով տոմսեր են ուղարկում, առաջին կարգի աթոռները նրանց համար են պատրաստում, նրանց դիմավորում են, նստեցնում են. հետո ճանապարհ են դնում: Դաստիարակներն այս խաղում մասնակցություն են ունենում, և կինոյի հաճախումը վերջանում է ընդհանուր յերգով ու պարով:

Նման խաղերի դաստիարակչական նշանակությունը շատ մեծ է: Նրանք յերեխաների մեջ ուժեղացնում են մտերմությունը, աստիճանաբար ուղղում են յերեսառած և կամակոր յերեխաների բնավորությունը:

Միշտ չէ, վոր հաջողվում է պետք յեղած հարաբերությունները ստեղծել խառն խմբերի փոքրերի և մեծերի միջև: Հաճախ մեծերը փոքրերին ծաղրում են, խլում են նրանց հետաքրքիր խաղալիքները, քանդում են նրանց կառուցումները:

Ինչ խոսք, վոր այսպիսի դրությունն անթույլատրելի յէ:

Բայց վատ է նաև այնտեղ, վորտեղ մեծերը վորպես թե ուշադիր են դեպի փոքրերը, սակայն այդ ուշադրությունը յերբեմն արտահայտվում է նրանով, վոր նրանց փաստորեն խնամում են, գրկում են, սիրալացնելով խոսում են հետները, ամեն բանում զիջում են: Այս փչացնում է թե՛ մեկին և թե՛ մյուսին:

Պատահում են դեպքեր, յերբ դաստիարակի ակտիվ միջամտությունը խաղին անհրաժեշտություն է դառնում՝ յերեխաների մեջ ծագած կոնֆլիկտը հարթելու համար:

Որինակ. խաղում են գնացք... 3 հոգի ցանկանում են շոգեքարշ լինել: Ահա, ուր վոր է, կռիվը կսկսվի: Այս նկատելով, դաստիարակն ոգնում է յերեխաների մեջ վեճը հարթելուն:

— Իսկ ո՞ւր է ձեր կայարանապետը, ո՞վ է գնացքն ընդունում:

— Յես,—նրա մոտ է վազում Սարգիսը:

— Իսկ Կոլյան թող գնացքի ուղեկցողը լինի:

— Իսկ յես շոգեքարշը կլինեմ,—ասում է Լիդան:

Յերեխաները բավարարված են: Խաղն անցնում է աշխույժ և ուրախ: Այն ինչ խաղը կարող եր խանգարվել, յեթե դաստիարակը ժամանակին ոգնության չհասներ:

Յերեխաների խաղին մասնակից դառնալով, դաստիարակն ոգնում է յերեխաներին իրար հետ համաձայնվել, դեպի խաղն է հրավիրում առանձին յերեխաների, գտնում է նրանց համար համապատասխան դերեր և այլն:

Հաճախ դաստիարակը խաղին մասնակից է դառնում նրա մեջ նոր բան մտցնելու, խաղը հետաքրքրական դարձնելու և զարգացնելու նպատակով:

Մի մանկապարտեզում յերեխաները հաճախ հիվանդանոց յեին խաղում, բայց խաղը շատ միորինակ եր: Մի «բժիշկ» յերեխա բժշկում է հիվանդներին՝ մյուս յերեխաներին: Վոմանց թխկթխկացնում է և թևի տակն է դնում ջերմաչափը, մյուսներին վիրակապ է անում, նախորոք ձեռքին կամ մատին վազելին քսելով: Հիվանդները պառկում եյին դիվանին և տնքում եյին: Մի անգամ դաստիարակը շորի մեջ փաթաթում է տիկնիկը և նույնպես գնում է «բժշկի» մոտ:

— Դո՞ւք էլ եք յեկել բժշկի մոտ,—դառնում է նա խաղացող յերեխաներին:—Իմ աղջիկս է հիվանդացել, կարծեմ քութեշ է, պետք է տանել հիվանդանոց:

Սպասելով, մինչև վոր «բժիշկը» կընդունի իրեն, նա զրուցում եր իր աղջկա հետ, հանգստացնում եր նրան, խնդրում եր

մյուս հիվանդներին կամաց խոսել, վորովհետև աղջկա գլուխը ցավում է:

«Ընդունարանում» ուրիշ «մայրեր» ել յերևացին իրենց աղջիկների հետ, ելի տիկնիկներից:

Բժիշկը քննեց նրանց և հայտարարեց. «Քութեշ է, հարկավոր է տանել հիվանդանոց»: Խաղին մասնակցեցին յերկու տղա, վորոնք մինչ այդ բեռնատար մեքենա եյին խաղում:

— Մենք հիվանդներին հիվանդանոց կտեղափոխենք: Դաստիարակն իր աղջկան մեքենայի մեջ դնելով, ծածկեց նրան վերմակով:

— Չլինի թե նա մրսի:

Դրանից հետո նա խաղից դուրս յեկավ, բայց յերեխաները շարունակեցին խաղալ նոր ձևով: Շինարարական նյութից սկսեցին հիվանդանոց շինել, վորտեղ տանում եյին հիվանդներին: Այնտեղ տեղափոխեցին մահճակալները և նրանց վրա պառկեցրին հիվանդներին:

Հետագայում յերեխաներն իրենք եյին խաղերի մեջ նոր բան մտցնում: Նրանք սկսեցին հիվանդներին առանձին սեղանի մոտ ցուցակագրել և հետո բժշկի մոտ եյին ուղարկում գրությունը ձեռքին: «Շտապ օգնության» մեքենան սկսեցին հեռախոսով կանչել, շոֆերը և սանիտարը հիվանդներին փաթաթելու համար դաստիարակչուհուց մի շոր խնդրեցին, մեքենան քշում եյին շատ զգույշ: Հիվանդները լավանում եյին, և հիվանդանոցից մեքենայով նրանց տեղափոխում եյին իրենց մայրերի մոտ:

Յերեխաները հաճախ վերադառնում եյին «հիվանդանոց» խաղին, խաղում եյին մեծ հետաքրքրությամբ, խաղը նրանց մոտ անցնում եր շատ կազմակերպված:

Հաճախ դաստիարակն իր վրա յե վերցնում խաղի ամենադժվարին դերը:

Որինակ.

Յերեխաները խաղում են նոր խաղալիքներով—զանազան շարժիչներով: Նրանք տարված են խաղով, սուլում են, զնգահարում են, շարժվում են զանազան ուղղություններով: Հետզհետե աճում է աղմուկն ու հուզմունքը:

Դաստիարակը կանգնում է սենյակի մեջտեղ և դիմում է յերեխաներին.

— Քաղաքացինե՛ր, հետևեցեք շարժման կանոններին: Յերբ վոր ձեռքս բարձրացնեմ, շարժումը դադարում է. անցնում են

անցորդները: Յերբ ձեռքս կողմ եմ մեկնում, անցնում են մեքենաները:

Յերեխաները հետաքրքրվեցին, սկսեցին հետևել «միլիցիոների» շարժումներին և պահպանել կանոնները: Այդ կենտրոնացրեց նրանց ուշադրությունը, աստիճանաբար հանդստացրեց հուզմունքը: Միքանի րոպեյից հետո դաստիարակին մոտենում է մի յերեխա.

— Յես արդեն գիտեմ, թե ի՛նչպես է հարկավոր անել, այժմ յե՛ս կլինեմ միլիցիոներ:

Դաստիարակն իր դերը նրան զիջեց և խաղից դուրս յեկավ: Հետագայում յերեխաները «միլիցիոների» դերում սկսեցին փոխվել, գլխարկ շինեցին, գարաժ շինեցին, կազմակերպված դուրս եյին գալիս այնտեղից, և հետո այնտեղ եյին դնում մեքենաները, աշխատանքից հետո մաքրում եյին, նայում եյին և վերանորոգում եյին:

Յերբեմն դժվար եր լինում խաղը վերջացնել: Հաճախ ճաշի ժամանակն է, բայց խաղը իր ծաղկման շրջանումն է գտնվում: Յերեխաներին դժվար է բաժանվել խաղից: Դաստիարակը դիմում է յերեխաներին. «Հարկավոր է ուտել»: Բայց յերեխաներն այդ չեն լսում: Ուրիշ կամակոր դաստիարակ հասնում է նրան, վոր յերեխաները վերջիվերջո խաղը թողնում են. բայց պետք է տեսնել, թե ինչպիսի՞ տխրությամբ են նրանք նստում ուտելու:

Գործն ուրիշ կերպ է դրված այնտեղ, վորտեղ դաստիարակն ուշադիր վերաբերմունք ունի դեպի յերեխաները:

Որինակ, ժամանակն է ճաշելու, իսկ յերեխաները օդանավ են խաղում:

—Ոդանավը թռիչքը վերջացրեց,—ասում է դաստիարակչուհին:—Ոդաչուները դուրս են գալիս, նրանք պետք է ճաշեն: Նրանք կլվացվեն և կճաշեն:

Յեվ յերեխաներն ուրախ պատրաստվում են ճաշելու:

Ահա և ուրիշ որինակ:

Յերեխաները կոլտնտեսություն են խաղում: Դաստիարակի այն հիշեցմանը, թե հարկավոր է լվացվել և նստել ճաշելու, չեն պատասխանում և շարունակում են խաղալ:

Այն ժամանակ դաստիարակը դիմում է յերեխաներին.

— Ո՞վ է ձեր բրիգադիրը:

— Յես եմ,—պատասխանում է Միշան:

— Ճաշելու շչակը խփեք: Յես ճաշարանի վարիչն եմ: Բան-

վորների ճաշը պատրաստ է: —Տո՛ւ—տո՛ւ. վերջացրեք աշխատանքը: Ճաշի ժամանակն է:

Ուրախ խմբով գնում են «բանվորները» լվացվելու, շարունակելով իրենց բանվորներ յերևակայել, գնում են մեծ-մեծ քայլերով, յերկար ժամանակ լվանում են ձեռները—«մեքենայի յուղը վոչ մի կերպ չի լվացվում»:

Պատահում են դեպքեր, յերբ հարկավոր է լինում նույնիսկ մի քիչ ռեժիմից նահանջել, վոր յերեխաների խաղը նրա ծաղկման շրջանում չճախողվի:

Մի հրապարակում այսպիսի դեպք է պատահել: Դաստիարակը հերթապահի հետ բացում է ճաշի սեղանը, իսկ յերեխաներին կանչելը հեշտ գործ չէ. Զապայեվ են խաղում:

— Մենք միայն այս բերդը կգրավենք և կգանք ճաշելու: Ա՛յ, Զապայեվն առաջ է ընթանում...

Դաստիարակը ճիշտ վորոշեց, վոր պետք է հաշվի առնել յերեխաների ցանկությունը, չհանդիմանել նրանց ճաշից ուշանալու համար:

— Լավ՛, յերբ վոր բերդը գրավեք, հնչեցրեք հավաք: Մարտիկները պետք է հանգստանան և ճաշեն:

Ինչպես պետք է վարվել, յերբ խաղը վոչ ցանկալի բնույթ է ընդունում:

Մի մանկապարտեզում յերեխաները զբոսանքի ժամանակ սկսեցին հարբածներ ներկայացնել: Դաստիարակը, հասկանալով, վոր յերեխաները վոգևորված են և վոր արգելելը այստեղ չի ոգնի, մոտենում է խաղի ղեկավար Կոստյային և ասում.

—Խանութում հրդեհ է, հանգցրեք այն: Փրկեցեք մարդկանց և ապրանքը: Այս միտքը յերեխաներին դուր յեկավ: Նրանք սկսեցին հրդեհաշեջներ խաղալ:

Նման միջոցներով շատ հաճախ հաջողվում է յերեխաների ուշադրությունը թեքել վնասակար խաղերից, ինչպիսիք են՝ հարբածներ, կռվարարներ և այլ խաղեր:

Բայց յեթե յերեխաները շարունակում են խաղալ վոչ ցանկալի, վնասակար խաղը, որինակ՝ սպիտակներ, հարբածներ,—հարկավոր է արգելել այդ, արտահայտել թշնամական վերաբերմունք դեպի սպիտակները, արհամարհական վերաբերմունք դեպի հարբածները, վորոնց ներկայացնում են յերեխաները իրենց խաղերում:

Բայց խնդիրը միայն վնասակար խաղը վերացնելը չէ հրապարակից, հարկավոր է պարզել, արդյո՞ք տանն էլ յերեխաները

չեն խաղում այդ խաղերից, և խոսել այդ մասին ծնողների հետ, ցույց տալով այն միջոցները, վորոնցով հարկավոր է պայքարել վնասակար խաղերի դեմ:

Վերևում բերված խաղերի որինակները մեծ մասամբ վերաբերում են մեծահասակ նախադպրոցականներին:

Մեծահասակ յերեխաների խաղերը շատ բազմազան են: Յերեխաներն իրենց խաղերում ներգրավում են շատ տարբեր խաղալիքներ, ինչպես և ինքնագործ առարկաներ: Որինակ՝ լուսակիր (светофор), կշեռք, դրամարկղ, տոմսեր և այլն:

Փոքրիկների գործունեությունը խաղերում հաճախ միակողմանի յէ, նրանք յերկար ժամանակ կրկնում են միևնույն բանը: Որինակ՝ յերեխան քաշ է տալիս սայլակը, ինչ-վոր բան մեկ դնելով նրա մեջ և մեկ էլ վերցնելով: Յեթե դա մեքենա յէ, այդ ժամանակ նա սուլում է, և նա յէ ամբողջ խաղը: Խաղը տիկնիկի հետ հաճախ այն է միայն, վոր տիկնիկին մեկ փաթաթում են, մեկ բռնում և յերկար ժամանակ գրկած ման են ածում:

Փոքրիկները հաճախ կառուցում են, առանց մտածելու, թե ի՞նչ է դուրս գալու: Յեվ յերբ վոր ստացված ձևը մի ինչ-վոր ծանոթ առարկա յէ հիշեցնում, յերեխան ուրախանում և զարմանում է.

— Տուն դուրս յեկավ:

Դաստիարակի խնդիրն այն է, վոր աստիճանաբար բարդացնելով փոքրիկների խաղերը, զարգացնի նրանց ստեղծագործությունը և ինքնագործունեությունը:

Ինչպես մեծահասակ նախադպրոցականներին, այնպես էլ փոքրիկներին շատ կարևոր է ապահովել բազմատեսակ տպավորություններով:

Դաստիարակի պատմած հեքիաթը, զրույցը, դիտողությունները, նկարները, խաղալիքները և այլն, այս բոլորը հանդիսանում են յերեխայի ուրախ ապրումների, տպավորությունների աղբյուր, հանդես են գալիս նրա խաղերում, խոսակցության մեջ և այլն:

Ինչ վերաբերում է փոքրիկների խաղի ընթացքում դաստիարակի ոգնությանը, ապա այն այստեղ նշանակալի չափով պետք է ավելի մեծ լինի, քան մեծերի մոտ:

Յերբեմն հարկավոր է լինում վոչ միայն յերեխային ոգնել խաղալիքն ընտրելիս, այլև նրա հետ խաղալ, ցույց տալ, թե ի՞նչ կարելի յէ այդ խաղալիքի հետ անել:

Ահա դրված են գեղեցիկ, գույնզգույն գնդակներ, յերեխան հիանում է նրանցով, ձգտում է դեպի դրանց, վերցնում է իր ձեռքը, բայց ինչպես այն օգտագործի. գլորեց—բայց գնդակը գլորվեց այնպես, վոր հազիվ գտնվեց. գցեց—բայց ինչ վոր մեկին կպավ ու ցավացրեց:

Դաստիարակը մի թեք հարթություն է պատրաստում տախտակից սեղանի կամ հարթ գետնի վրա, նրանից մեկ-յերկու մետր հեռավորությամբ ցանկապատ է շինում աղյուսիկներից կամ այլ խաղալիքներից ու յերեխայի հետ հերթով ցած է գլորում գնդակները:

Յերեխաներն առանձին-առանձին տիկնիկ են խաղում: Կարելի յե հավաքել յերեխաներին, սարքել մանկական հրապարակ խաղ, մի փոքր խաղալ նրանց հետ և դեպի խաղը գրավել մյուս յերեխաների ուշադրությունը:

Յերեխան ինչ-վոր բան է կառուցում, թույլ է գնում շինարարությունը, բլոկները հավասար չեն, ուր վոր է, կփլչեն: Կարելի յե նստել այդ յերեխայի կողքին և կառուցել այն, ինչ վոր նա յե կառուցում:

— Յես էլ ջրհոր եմ կառուցում... տե՛ս:

Մի ուրիշ յերեխայի, վորը խաղում է միորինակ, որինակ, ավազից թխվածքներ է պատրաստում, դաստիարակն առաջարկում է.

— Արի՛ միասին խաղանք: Ավազի մեջ տնակ է պատրաստում:

— Ահա տնակը: Ո՞վ պետք է ապրի այստեղ: Յեթե յերեխան չի ասում, թե ով պետք է ապրի տնակում, դաստիարակչուհին առաջարկում է.

— Մի սիրուն աղջիկ այստեղ կապրի. նա ջոկում է մի խաղալիք և դնում տան մոտ:

— Իսկ այս փայտից մենք ի՞նչ պետք է պատրաստենք. արի ցանկապատ շինենք: Յերեխան վոգևորված, դաստիարակի հետ միասին սկսում է պատրաստել:

— Դու մենակ վերջացրու, իսկ յես հիմա կգամ: Յերեխան հաճախ վոչ միայն վերջացնում է դաստիարակի հետ սկսածը, այլև ինքն արդեն խաղի մեջ սկսում է ստեղծել իրենը, նորը: Յերբ դաստիարակը միառժամանակից հետո նորից գալիս է ավազե տնակի մոտ, յերեխան հպարտությամբ բացատրում է, թե ի՛նչ է այս, կամ ի՛նչ է այն և թե ի՛նչ պետք է հետագայում լինի: Նա արդեն ոգտագործում է զանազան խաղալիքներ, ինչպես

որինակ՝ հավ, աքլոր, ճուտեր, կերակրում ու ջուր է տալիս նրանց և այլն:

Դաստիարակի կողմից դեպի յերեխան ունեցած ուշադիր վերաբերմունքը և ժամանակին ցույց տրված ոգնությունը նրա խաղին՝ ունենում է խոշոր նշանակություն նույնիսկ այն ժամանակ, յերբ կարծես թե յերեխան ինքն էլ լավ խաղում է:

Բայց վորպեսզի հետաքրքիր խաղեր ծավալել այնպիսի խաղալիքներով, ինչպես, որինակ՝ մատրյոշկան, բուրգը, տակառիկները և այլ քանդովի խաղալիքներ,—դաստիարակը պետք է յերեխային ոգնի:

Ահա նա նստում է յերեխայի մոտ և խաղում է նրա հետ միասին, մոտավորապես այսպես.

— Վո՞րն է քեզ մոտ ամենամեծ տիկնիկը: Յերեխան ջոկում է հարկավոր տիկնիկը:—Ահա սա մայրիկն է, նա գնում է խանութ և վերցնում է իր հետ ամենափոքր աղջկան... վորտե՞ղ է նա,—ահա նրանք գնացին: Տանը մնացին ավելի մեծ քույրերը,—ահա նրանք: Նրանք առանց մայրիկի սկսեցին տխրել: Նրանք էլ խանութ վազեցին... Առաջ վազեց փոքրիկ քույրը, իսկ հետո՝ մեծը:

Յերեխան այդ ժամանակ հետևում է մատրյոշկաների մեծությանը, սովորում է նրանց համեմատել և մեծությունը վորոշել—փոքրը, մեծը տարբերել:

Ահա բոլորը միասին հետ են գալիս. առջևից մայրիկն է, հետո ամենամեծ աղջիկը, և այսպես մինչև ամենափոքրիկը: Յերեխան դաստիարակչուհու պատմածի համաձայն մատրյոշկաները դասավորում է: Հետո շարում է նոր ձևով—ամենափոքրից մինչև ամենամեծը: Հետագայում, յեթե յերեխան ինքնուրույն վոչինչ չի հնարում, դաստիարակչուհին նրան հիշեցնում է, թե ուրիշ ի՛նչ կերպ կարելի յե մատրյոշկաներ շարել, որինակ, զույգերով (զբոսանքի յեն գնում): Դրա համար հարկավոր է մատրյոշկաներից վերցնել յերկու ժողովածու:

Ահա զույգերով շարվեցին, ըստ հասակի: Ահա մեծը փոքրի հետ (հեռու գնացին, հարկավոր է փոքրերին հետևել)... Ահա նորից մեկ-մեկ, իրար հետևից գնացին. տեղերը փոխում են,—փոքրը մեծի հետ և այլն:

Հարկավոր է յերեխաների հետ խաղալ նաև մատրյոշկաների քանդովի մասերով: Կարելի յե մասերը խառնել և ամեն մի յերեխայի տալ 2—4 տարբեր մասեր այնպես, վոր վոչ վոք իր ունեցած մասերից չկարողանա մի լրիվ մատրյոշկա սարքել:

Հետո ամեն մեկը հերթով ցույց է տալիս իր ունեցած ցանկացած մասը և պահանջում է նրան համապատասխանող կտորը: Ով շուտ գտավ համապատասխանող մասը, նա սարքում է ամբողջ մատրյոշկան և վերցնում է իրեն, այսինքն՝ խաղը տանում է: Ով վոր սխալվում է, ասում է, թե ինչումն է սխալը... կամ շատ փոքր է, կամ մեծ է: Նա արդեն տարվեց:

Այս խաղը զարգացնում է յերեխաների աչքաչափը: Նա յերեխաներից մեծ ուշադրություն է պահանջում: Դա հարկավոր է անցկացնել մեծահասակ յերեխաների հետ:

Մատրյոշկաներով կարելի յե մի ամբողջ շարք խաղեր հորինել: Կարևոր է միայն հետևել, վոր նրանք բարդ չլինեն և յերեխաների հետաքրքրությունը շարժեն: Կարևորն այն է, վոր յերեխաները հետագայում այդ խաղերը խաղան առանց դաստիարակի ոգնության:

Մյուս դիդակտիկ խաղալիքը—դա բուրգն է, վորը յերեխաների կողմից նույնպես միակողմանի յե ոգտագործվում և շուտով դադարում է նրանց հետաքրքրել, յեթե դաստիարակն այդ խաղերը չի ղեկավարում և չի ոգնում նրանց բազմակողմանի ոգտագործմանը: Փոքրիկները բավականությամբ քանդում և նորից հավաքում են բուրգերը, բայց առաջ չեն գնում: Հարկավոր է նրանց հետ նոր ձևով խաղալ:

Բազմատեսակ խաղերն ամեն մի խաղալիքի հետ՝ ոժանդակում են յերեխաների ընդհանուր զարգացմանը:

Լավ կլինի յերեխաներին խնամքով պատրաստված փոքրիկ գունավոր գործեր տալ (կարմիր, դեղին, կապույտ, կանաչ և այլն): Յերեխաներն ամեն մի գործի գույնին համապատասխան ող են ընտրում բուրգի ողերից և խաղում են նրանցով. հաշվում են, նաշխեր են սարքում և այլն:

Դաստիարակն ինքը պետք է ճիշտ անվանի ողակների գույները, յեթե յերեխաները դրանք չգիտեն: Իսկ հետագայում խաղերը դասավորի այնպես, վոր յերեխան ինքը կարողանա գույները տարբերել և անվանել:

Յերեխաները դաստիարակի ղեկավարությամբ տեղի ունեցող այսպիսի խաղերից հետո սկսում են իրենք ողակները համակարգել տարբեր ձևով՝ մեկ ըստ մեծության, մեկ ըստ գույնի (կարելի յե, որինակ՝ յեղած միևնույն գույնի բուրգերի ողակներից պատրաստել տարբեր գույնի ողակներից բաղկացած բուրգ, կարելի յե բուրգը կառուցել միայն յերկու գույնով,

որինակ, կապույտից և դեղինից, շարելով մեկ-մեկ կամ յերկու-յերկու ողակներով և այլն): Սա յերեխայի համար շատ հետաքրքիր է: Նա հիմա նկատում է ողակների վոչ միայն գույնի ու մեծության տարբերությունը, այլև գիտակից կերպով ջոկում է ըստ գույնի և ըստ մեծության, ջոկում է ցանկացած մեծությունը աչքաչափով և ցույց է տալիս նրանց տարբերությունը. ահա սա ամենամեծն է, իսկ սա ամենափոքրը. սա չի համապատասխանում, հարկավոր է մի քիչ ավելի փոքրը, հարկավոր է ավելի մեծը... և այլն:

Այս ամենը շատ է զարգացնում յերեխաներին:

Հետագայում դաստիարակը կարող է այս տիպի խաղերը բարդացնել նաև այսպես. ո՞վ ավելի շուտ կարող է իր բուրգը հավաքել: Բոլորը սկսում են միաժամանակ, պայմանական նշանից հետո: Տանում է նա, ով առաջինը հերթով և կանոնավոր հավաքում է իր բուրգը: Այս տիպի խաղերը հարկավոր է անցկացնել մեծերի հետ:

Շատ հետաքրքիր խաղեր կարելի յե կազմակերպել բնական նյութերով—մասուրներով, կոներով, կաղիններով, գետային և ծովային քարերով և այլն....

Այս բոլորը յերեխաները շատ են սիրում հավաքել, բայց չիմանալով, թե ի՛նչ կարելի յե անել դրանց հետ, հաճախ դեն են գցում:

Դաստիարակը պետք է պատրաստի բավական քանակությամբ ազատ արկղներ և տեղավորի դրանք լայն հարմար դարակի վրա ցանկապատի մոտ կամ ծածկի տակ: Այստեղ պետք է պահվեն տեսակավորված այդ բնական նյութերը:

Դաստիարակը սովորեցնում է յերեխաներին լցնել այդ բնական նյութերը, չխառնելով մեկը մյուսին, կանոնավոր պահել:

— Ա՛յ թե ինչպիսի կոն եմ յես այսոր գտել—հրճվում է յերեխան մյուսներին ցույց տալով,—«ամենից մեծն է»:

Սկսում են համեմատել կոները, դուրս են բերում-դասավորում: Հայտաբերում են նաև ամենափոքրը:

Մի ուրիշ անգամ բերում են քարեր, տարանձին ձևի և գույնի: Յեվ նորից հանում են բոլորը, շարում և նայում են, հիշում են, թե վո՛րտեղ, ի՛նչը և յե՛րբ գտան:

Դաստիարակը պետք է խրախուսի յերեխաների հետաքրքրությունը դեպի այդպիսի հայտաբերումն ու խոսակցությունները.

Նա յերեխաների ուշադրությունը գրավում ե այն բանի վրա, ինչ վոր յերեխաները չեն նկատել: «Տեսե՛ք ինչ փոքրիկ քար ե, և ինչքա՜ն թեթև ե»—և յերեխաները սկսում են փնտրել քարերի մեջ մեկը՝ ամենածանրը, մյուսը՝ թեթևը, յերրորդը՝ ամենաթեթևը:—«Տեսեք ի՞նչ հարթ տերև ե սա, ա՛յ, և կոշտ տերև, շոշափեցեք, յերեխաներ»:

Յերեխաները շոշափում են տերևները, համեմատում և խոսում են նրանց մասին:

Դաստիարակը ինքը ժամանակ առ ժամանակ հավաքույթ նյութեր ե բերում և յերեխաների հետ ուսումնասիրում ե այն, կարգավորում ե, զրուցում և զանազան խաղեր ե հնարում. որինակ.

— Յերեխաներ, յեկեք դասավորենք ամենամեծից—ամենափոքրը. յես քարերը կդասավորեմ, Միշի՛կ, իսկ դո՞ւ ինչ, իսկ դո՞ւ, Վանիկ... Բոլորը դասավորելուց հետո հերթական կարգով—վորը՝ կոները, վորը՝ քարերը և վորն ել՝ տերևները,—յերեխաները միասին նայում են ամեն մեկի աշխատանքը:

— Հիմա յեկեք հակառակն անենք—դասավորենք ամենափոքրից—ամենամեծը... և այլն:

Հետաքրքիր ե դասավորել զույգերով, յեռյակներով, մերթ միանման առարկաներ միևնույն մեծության և մերթ՝ տարբեր:

Յեթե տերևները լավ են չորացած, կարելի յե փակցնել թղթի վրա ալբոմում:

Յեթե կոները կանգնեցնենք հարթ մակերեսի վրա, ապա կարելի յե նրանցով պատկերել մանկ. հրապարակի յերեխաներ և շարել տարբեր ձևերով. մի շարքով, զույգերով, յեռյակներով, քառյակներով... կարելի յե նրանց կանգնեցնել զույգերով՝ մեծը փոքրի հետ, կամ շարքով՝ մեծը փոքրից հետո... կարելի յե շուրջպար անց կացնել և այլն: Յեթե կոները ներկել զանազան գույներով, ապա կարելի յե նրանց հետ խաղալ այսպես,—իմ պիոներները բոլորն ել կապույտ բլուզներով են, տեսե՛ք, շարվեցին... —իսկ իմ ջոկատը՝ գույնզգույն, կարմիր, կապույտ, դեղին և այլն:

Յեվ շարում են նրանց մեկ այսպես, մեկ այնպես:

Այս տիպի խաղերը գրավում և միաժամանակ զարգացնում են յերեխաներին:

Յերեխաների խաղերը հեշտ ե բազմապիսի դարձնել, ավելացնել խաղում զանազան ուրիշ առարկաներ (բացի հիշված խաղալիքներից), որինակ՝ շոշափելի խաղեր.

1) «Շոշափի՛ր և գտի՛ր՝ ինչ ե պահված պարկում»: Կարելի յե ոգտագործել նման և տարբեր ձևի բանջարեղեններ, ինչպես, որինակ, գազարը, վարունգը, բազուկը, շաղգամը, կարտոֆիլը և այլն: Կարելի յե ոգտագործել զանազան յերկրաչափական ձևեր, խորանարդաձև, աղյուսաձև, գլանաձև և այլն:

2) «Շոշափի՛ր և իմացի՛ր՝ ինչից ե պատրաստված» (գնդակը՝ ռեզինից, գունդը՝ փայտից և այլն):

Կազմակերպել այնպիսի խաղեր, վորոնք զարգացնում են ուշադրությունը և տեսողական հիշողությունը:

Գլորել կարմիր գունդը՝ կարմիր դրոշակը բարձրացնելու դեպքում, կանաչ գունդը՝ կանաչ դրոշակը բարձրացնելու դեպքում և այլն:

3) «Իմացի՛ր՝ խաղալիքներից վորը պակասեց»: Յերեխաները սեղանի վրա դիտում են մի քանի խաղալիքներ, վորից հետո աչքերը փակում են, իսկ դաստիարակն այդ ժամանակամիջոցում խաղալիքներից մեկը վերցնում ե:

4) «Ասա՛՝ ինչպես եր»: Այստեղ բոլոր խաղալիքները մնում են սեղանի վրա, միայն փոխվում ե նրանց դասավորությունը:

Սարքել այնպիսի խաղեր, վորոնք զարգացնում են լսողությունը: «Ո՞վ կանչեց»:

Խաղ՝ ուժեղ և մեղմ յերաժշտությունը տարբերելու և այլն:

Այսպիսի խաղեր կարելի յե անցկացնել թե՛ առանձին յերեխաների հետ, թե՛ փոքրիկ խմբակներով:

Այս (դիդակտիկ) խաղերի նշանակությունը շատ խոշոր ե: Նրանք զարգացնում են յերեխաների տեսողությունը, շոշափելիքը, լսողությունը, յերեխային սովորեցնում են հաշվել, զարգացնում են նրա ուշադրությունը, դիտողականությունը, հիշողությունը և ըմբռնողությունը:

Այսպիսի խաղերը պետք ե տեղ գտնեն ամեն մի գյուղական մանկական հրապարակում:

Յեթե հրապարակում 2—3 խմբեր կան, ապա փոքրերին հարկավոր ե առանձնացնել և նրանց խաղերի համար ստեղծել հանգիստ պայմաններ:

Իսկ յեթե խումբը մեկ հատ ե և տարբեր հասակի յերեխաներից ե կազմված, ապա հարկավոր ե առանձնակի ուշադիր վերաբերմունք ցուցաբերել դեպի փոքրերը, չթողնել, վոր մեծերը նրանց վրա ճնշում գործ դնեն, և մեծերի մեջ ել զարգացնել դեպի փոքրերը նման ուշադիր և հոգատար վերաբերմունք:

Ամեն մի գյուղական մանկական հրապարակ յերեխաներին

պետք է ապահովվի մոտավորապես հետևյալ խաղալիքներով․

ա) Շարժական խաղերի համար․ *սանձեր, ցատկիչներ, մեծ և միջակ գնդակներ (փոքրերը տեղամասում հեշտ կորչում են), սերսո, կեգլի, օղեր, սայլեր, բեռնատար մեքենաներ և այլն։*

Շատ կարևոր է, որ շարժիչների հետ միասին (սայլերը, մեքենաները և այլն) յերեխաներին տրվեն անմիջապես նաև զանազան «բեռ», որպեսզի յերեխաները կարողանան բեռնել, դատարկել, տանել, բերել և այլն։

Աշխատանքի ամառային պայմաններում այդպիսի բեռ կարող է ծառայել ամենից առաջ բնական նյութը՝ կաղիններ, խեցիներ, փոքրիկ գեղեցիկ քարեր և այլն։ Կարելի յե կեչու հաստ ճյուղերից սղոցել զանազան մեծության կտորներ։ Հետաքրքիր է նրանց շարել այնպես, որ ճանապարհին չթափվեն, այնպես շարել, որպեսզի լավ նստեն իրար վրա, հեշտ բեռնաթափել, իսկ հետո կարելի յե նրանց օգտագործել նաև որպես կառուցողական նյութ։

բ) Խաղալիքներ ավազի խաղերի համար․ *հաճախ ավազի շատ հետաքրքիր խաղեր ենք դիտում՝ նախադպրոցականների խաղերի մեջ։ Այստեղ և՛ յերկաթուղի կա, և՛ կամուրջներ, և՛ տոննելներ և անասնաբակ և այլն։*

Ավազի հետ խաղերի ծավալման առաջին պայմանը—դա նրա մեծ քանակությունն է։ Այստեղ պետք է լինեն թեթև, բայց ամուր յերկաթյա բահեր (բահի կոթի յերկարությունը պետք է հասնի յերեխայի անութին–կռնատակը)։ Լավ ցանկապատել ավազի տեղը, որ ավազը շաղ չտրվի։ Այդպիսի ավազե բակում լավ կլինի միքանի ցածր նստարաններ դնել, որ յերեխաները հնարավորություն ունենան նստելու, յերբ որ ցանկանան։ Ավազը ամեն օր պետք է մաքրել փոցխի օգնությամբ, ջրել և ժամանակ առ ժամանակ ավելացնել, որ նա միշտ շատ լինի, և յերեխաները կարողանան այնտեղ զանազան կառուցումներ շինել։

Բացի կաղապարներից, հարկավոր է ունենալ նաև դույլեր, գոգավոր թիակներ, փոքրիկ մաղեր, որոնց միջոցով փոքրերը մեծ հաճույքով ավազ են մաղում, ունենալ նաև ֆաներից վառ գույնի խաղալիքների հավաքածու, ինչպես՝ տնային կենդանիներ և թռչուններ, պիոներների, կարմիր–բանակայինների, կարմիր–նավաստիների ֆիգուրներ և այլն։

Յերեխաների ավազի խաղերի համար անհրաժեշտ է նաև բազմատեսակ բնական նյութեր։ Բացի կոծոծներից, կաղիններից, խեցիներից, քարերից և այլն, լավ կլիներ ունենալ յերե-

խաների համար նաև մամուռ, ծառի կեղև, ճյուղեր, քոթուկներ զանազան ձևի ու չափի և այլն։

գ) Խաղալիքներ ջրի խաղերի համար․ *լողացող (ցելլուլոիդ) ձկներ, բադեր, գորտեր և այլն։ Դրանց հետ հարկավոր է ունենալ նաև փոքրիկ շշեր՝ հաստ ապակուց և ձագար՝ ջուրը մի անոթից մյուսը լցնելու համար (մի բան, որը փոքրերին շատ է զբաղեցնում) և ինքնաշեն խաղալիքներ՝ կեղևից, ինչպես, օրինակ, նավակներ և փոքրիկ հարթ քարեր։*

Ջրի խաղերի համար հրապարակում պետք է ունենալ 2—3 տաշտ (ցինկից կամ տախտակից), որը դրված լինի ամուր և ցածր պատվանդանների վրա։ Տաշտում միշտ պետք է ածել թարմ և մաքուր ջուր։

դ) Խաղեր շինարարական նյութերով․ *տեղամասում յերեխաների խաղերի համար հարկավոր է առանձնացնել մեծ չափերի կառուցողական նյութեր։ Դրա համար հրապարակում պետք է պատրաստել արկղներ, տախտակի կտորներ, ֆաների թերթեր, փայտեր, կոճղեր, բոլորը խնամքով տաշել, մեխերից ազատել, որ միանգամայն ապահով լինի այդ նյութերի գործածությունը յերեխաների համար։*

Յերեխաների համար մի մեծ շինարարություն, օրինակ, տնակ, կարող են շինել մեծերը։

Լավ է միքանի ժամանակից հետո շինել այնպիսի մեծ կառուցվածք, ինչպիսին է, օրինակ, շոգենավը։

Այս ամենն օժանդակում է յերեխաների ստեղծագործական խաղերի զարգացմանը և նրանց միավորմանը խաղում։

Շատ արժեքավոր է հրապարակում ունենալ նաև սեղանի վրա օգտագործվող շինանյութ։

Այս նյութերով խաղերը շատ են հետաքրքրում յերեխաներին և զարգացնում են նրանց հնարամտությունը, յերևակայությունը, ֆանտազիան, ըմբռնողությունը։ Սկսելով վոչ–բարդ շինանյութերից, ինչպես, օրինակ, տնակը, յերեխաները աստիճանաբար սովորում են պատրաստել այնպիսի հետաքրքիր շինություններ, ինչպես՝ կամուրջ, ջրաղաց և այլն։

Կառուցողական խաղերում յերեխաները ծանոթանում են զանազան ձևերի հետ՝ խորանարդ, աղյուսիկ և այլն։ Ծանոթանում են նաև զանազան չափերի հետ—օրինակ՝ մի աղյուսը բարձր է, մյուսը—ցածր, մի գլանը յերկար է, մյուսը—կարճ, մեկը—փոքր, մյուսը—մեծ և այլն...

Դաստիարակը ձգտում է սովորեցնել յերեխաներին այդ նյութերն ու խաղալիքները արկղներում կանոնավոր դարսել, հաճախ այդ ինքն է անում, վոր շինանյութերի պահպանման մեջ քաոսային դրություն չառաջանա: Դրանք դարսել է հարկավոր այնպես, վոր յերեխան տեսնի նյութի բոլոր ձևերը և չափսերը:

ե) Տիկնիկներ. տիկնիկի շորերը պետք է ազատ հանվեն և հագցվեն: Սա խաղի համար շատ կարևոր հանգամանք է: Կարելի յե տիկնիկի շորերը փոխել. լվանալ և արդուկել տիկնիկի սպիտակեղենն ու վերնազգեստը, մի բան, վոր յերեխաները շատ են սիրում: Կոճակները կոճկելու ժամանակ զարգանում է յերեխայի մատների ճարպկությունը, ճկունությունը:

Տիկնիկների հետ հարկավոր է ունենալ նաև տիկնիկի կահույք, խաղալիք-ամանեղեն և այս բոլորը պետք է պահպանվեն կարգին և մաքուր:

զ) Խաղալիք-կենդանիներ տնային և վայրի:

է) Բացի առանձին խաղալիքներից, լավ է ունենալ նաև ամբողջական հավաքածուներ — «Մանկապարտեզ», «Թռչունների բակ», «Կարմիր բանակ»: Հետաքրքիր են այն հավաքածուները, վորոնք վորևէ հեքիաթ են ցուցադրում:

ը) Խաղալիք-զվարճալիք, որինակ՝ ման յեկող հորթ, թռչող ճնճղուկ, կռկռան բադիկ և այլն:

թ) Բուրգեր, մատրյոշկաներ, ձվեր, գնդակներ, տակառներ և ուրիշ քանդովի խաղալիքներ, մոզաիկներ և այլն: Խաղալով նրանց հետ, յերեխան զարգացնում է իր տեսողությունը, լսողությունը, շոշափելիքը, նա վարժվում է տարբերել գույները, ձևը, մեծությունը և այլն:

Հարկավոր է այնպիսի խաղալիքներ գնել, վորոնք վառ գույներով են ներկված, վորոնք յերեխաներին ճիշտ գաղափար կարող են տալ գույների մասին:

ժ) Ձողիկները (лучинки) և կոնստրուկտորները հատկացվում են միջին և բարձր տարիք ունեցող յերեխաներին: Հարկավոր է յերեխային ցույց տալ՝ ինչպես ամրացնել ձողիկների ծայրերը, ինչպես ամրացնել կոնստրուկտորի մասերը: Դրա համար դաստիարակը նախորոք պետք է սովորի ձողիկներից և կոնստրուկտորի մասերից զանազան ձևեր և իրեր շինել:

Նկարները, վորոնք դրված են արկղներում յերեխաների ընդօրինակման համար, առաջին շրջանում չպետք է ոգտագործել: Միայն հետագայում, յերբ յերեխաներն իրենք արդեն բա-

վական բազմատեսակ ձևերով կոգտագործեն այդ ձողիկներն ու կոնստրուկտորները, այն ժամանակ արդեն կարելի յե առաջադրանք տալ՝ շինի՛ր, ինչպես այստեղ է, կամ—լավ նայիր և հիշողությամբ կառուցիր:

Մեծ ուշադրություն պետք է դարձնել այս խաղալիքների դասավորման ու պահպանման վրա: Ինչքան խաղալիքների պահպանման ժամանակ կարգուկանոն լինի, այնքան յերեխայի համար հեշտ է խաղը վերջացնելուց հետո խաղալիքը դնել իր տեղը, այնքան հեշտ է նրա մեջ սեր դաստիարակել դեպի կարգուկանոնը և խնամքով վերաբերմունք դեպի խաղալիքները: Խաղալիքները պետք է մոտիկ պահվեն այն տեղից, վորտեղ յերեխաները խաղում են նրանցով—որինակ, այնպիսի խաղալիքները, ինչպես սայլերը, ավտոմեքենաները և այլն, պետք է պահել շարժական խաղերի համար հատկացված տեղամասում: Ավազի հետ խաղալու խաղալիքները պահել բաժանմունքներով արկղի մեջ, վորը դրվում է ավազի մոտ, սեղանի խաղալիքները՝ պատվանդանների կամ դարակների վրա՝ սեղանի մոտ: Բոլոր խաղալիքները պետք է պահվեն այնպես, վոր յերեխաները իրենք կարողանան վերցնել:

Կոտրված խաղալիքները հարկավոր է անմիջապես հավաքել, ինչ վոր հարկավոր է՝ ցանկալի յե նորոգել յերեխաների ներկայությամբ և հասկացնել, թե ինչու յե կոտրվել:

Բացի այն խաղերը, վորոնք յերեխաներն են հնարում, կան նաև հատուկ խաղեր—կանոններով՝ «Մուկն ու կատուն», «Սագեր-կարապներ» և այլն:

Կանոններով խաղերը հաճախ տեղի յեն ունենում դաստիարակի անմիջական մասնակցությամբ:

Կանոններով խաղերը յերեխաներից պահանջում են մեծ ուշադրություն, հերթականության պաշտպանում, որինակ, պատասխանել ժամանակին, լռել, յերբ վոր հարկավոր է, մի պայմանական ազդանշանից հետո՝ վազել, մեկ ուրիշ ազդանշանից հետո՝ կանգնել և այլն: Այս ամենն ոժանդակում է յերեխայի մեջ դաստիարակելու կանոններին յենթարկվելու կարողություն, համբերություն և իրեն ղեկավարելու ընդունակություն:

Կանոններով խաղերը շատ բազմազան են:

ՇԱՐԺԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Շարժական խաղերն անհրաժեշտ են յերեխաների ճիշտ ֆիզիկական զարգացման համար։ Նրանք ամենից առաջ յերեխայի մեջ զարգացնում են ճարպկություն, խիզախություն, վճռականություն և հնարագիտություն։ Նրանք ոժանդակում են յերեխաների մեջ կազմակերպվածություն դաստիարակելուն, միասին և հերթով գործելու հմտության—պահպանելով խաղի վորոշակի կանոնները։ Նրանք ոժանդակում են նաև յերեխայի մեջ ուշադրություն, հիշողություն, դիտունակություն և հնարամտություն զարգացնելուն։

Ուրախ և աշխույժ անցկացրած շարժական խաղերը յերեխաներին մեծ ուրախություն և բավականություն են պատճառում։

Շարժական խաղերը հրապարակում անցկացնելիս դաստիարակը պետք է պահպանի անհրաժեշտ առողջապահական պահանջները։ (Լավ կլինի, յեթե այն անցկացվի որվա յերկրորդ կեսին, ստվերոտ տեղում)։ Հաճախ կարելի յե խաղալ նաև զբոսանքի ժամանակ—այգում, անտառում, մարգագետնում, յեթե որն այնքան ել շոգ չե, և յերեխաները հոգնած չեն։

Խաղի ժամանակ հարկավոր է հետևել, վոր յերեխաները չհոգնեն և շատ ել չհուզվեն։ Լավ կլինի, վոր հաճախ, այդ նպատակով, անցկացվի հանգիստ, վորպես խաղի շարունակություն։ Որինակ, գնացք խաղալիս դաստիարակն առաջարկում է «գնացքին» կանգ առնել կայարանում, շոգեքարշի համար ջուր վերցնել, ստուգել վագոնները և վերանայել նրանց, յեթե դա հարկավոր է և այլն։ Հաճախ շարժական խաղից հետո, վորը տաքացրել—գրգռել է յերեխաներին, կարելի յե անցնել մի հանգիստ խաղի կամ քայլել յերեխաների հետ։

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել թույլ յերեխաներին, չթողնելով, վոր նրանք հոգնեն։

Նախքան խաղը յերեխաների հետ անցկացնելը դաստիարակըն ինքը այն լավ պետք է հիշի։ Նոր խաղի մասին յերեխաներին պետք է պատմել աշխույժ և կարճ, պարզ և հասկանալի կերպով, բացատրել՝ վորոնք են խաղի գլխավոր կանոնները և իսկույն խաղն սկսել։ Խաղն անցկացնելիս դաստիարակն առանձնապես պարզ պետք է կատարի այն շարժումները, վորոնք յերեխաներն ընդորինակում են։ Հարկավոր է հիշել, վոր այս ճանապարհով են զարգանում և կատարելագործվում յերեխաների շարժումները։

Բացի այդ, շատ կարևոր է հետևել յերեխաների կողմից խաղի կանոնները պահպանելուն և ուղղել առանձին յերեխաների կատարած սխալները։

Սկզբում դաստիարակը խաղում է յերեխաների հետ, փոքրերի խմբում, համարյա միշտ ղեկավարողի դերը կատարելով և տալով խաղի կանոնները պահպանելու որինակ։ Խաղը կարելի յե սկսել փոքր խմբով, իսկ հետո խաղի մեջ ներգրավել նաև մնացած յերեխաներին։

Յերբ յերեխաները խաղը լավ գիտեն (առանձնապես բարձր խմբերում), նրանք հաճախ խաղում են մենակ, ղեկավարողի դերը յերեխաներից մեկն է կատարում։ Դաստիարակը պետք է հետևի, վոր բոլորը կատարեն խաղի կանոնները, չվիճեն և չճնշեն ավելի թույլ յերեխաներին։

Նոր խաղ պետք է սովորեցնել միայն այն ժամանակ, յերբ յերեխաները հինը յուրացրած են լինում։

ՇԱՐԺԱԿԱՆ ԽԱՂԵՐ 3—5 ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Գնացք։ Յերեխաները կանգնում են շարքով մի գծի վրա, ամեն մի յերեխա ներկայացնում է վագոն, իսկ առջևում կանգնածը՝ շոգեքարշ։ Դաստիարակը սուլում է, շոգեքարշը՝ նույնպես և գնացքն սկսում է շարժվել սկզբում դանդաղ, իսկ հետո՝ արագ։ Կայարանին մոտենալիս (նախորոք նշանակված տեղը) գնացքն ընթացքը դանդաղեցնում է և կանգնում։ Դաստիարակի սուլոցով շոգեքարշը նույնպես սուլում է (սովորաբար շոգեքարշին այդ գործում ոգնում են յերեխաները), և շարժումը վերըսկըսվում է։

Լավ է, վոր «գնացքը» լինի չկցված, վորովհետև կցումը դժվարացնում է յերեխաների շարժումները։ Յերեխաներից ամեն մեկը կարող է շարժումներն արտահայտել այնպես, ինչպես ուզում է—ձեռքերն ազատ շարժել, փնչացնել, սուլել և այլն։

2. «Կատուն և մկները» խաղի նկարագրությունը։ Հրապարակի մի կողմում գտնվում է մկնիկի բունը, հակառակ կողմում՝ մառանը, վորտեղ դրված են կոներ, մանր առարկաներ և այլն, իսկ մի այլ կողմում՝ կատվի տունը։

Յերեխաներից մեկը կատարում է կատվի դերը: Նա քնում է իր անկյունում, իսկ մկները դուրս են վազում իրենց բնից և մտնում են մառանն ու ձևացնում, թե կրծում են շաքարը, ճարպը (այնտեղ շարված առարկաները): Հանկարծ կատուն արթնանում է, մլավում մեկ անգամ ու սկսում է որսալ մկներին: Մկները փախչում են իրենց բները: Բռնած մկներին կատուն տանում է իր տունը:

Խաղի կանոնները: *Մկները կարող են իրենց բները փախչել միայն կատվի մլավելուց հետո: Կատուն կարող է բռնել միայն այն մկներին, վորոնք չեն կարողացել թաքնվել իրենց բներում:*

Խաղի գնահատականը: *Այս խաղում յերեխաները վազելու և ազդանշանին արագ արձագանքելու վարժություն են ձեռք բերում:*

Այս խաղի մի այլ վարիանտը: *Յերեխաները բաժանվում են մի քանի խմբերի: Ամեն մի խումբ իր միջից ընտրում է կատու, մնացածները մկներն են: Բոլոր խմբերը, բացի մեկից, շրջան են կազմում, իսկ շրջան չկազմող խմբի յերեխաները դուրս են մնում շրջանից՝ դրանք մկներն են: Այդ խմբի կատուն մտնում է շրջանի մեջ: Շրջանը դանդաղ պտտվում է և յերգում՝*

Կատուն յեկավ փիսի՛կ-փիսի՛կ,
Հազար նազով, ինչպես հարսիկ.
Կատո՛ւ, կատո՛ւ, ճանկերդ սուր,
Ինչո՞ւ յես դու այսօր տխուր.
Յերևում է՝ մուկ չես ճանկել.
Վոչինչ, փորձի՛ր, փորձի՛ր մեկ էլ:

Վերջին խոսքերի ժամանակ խմբերի թվի քանակությամբ յերեխաները դռներ են բաց անում, այսինքն՝ յուրաքանչյուր խմբի ծայրերին գտնվող յերեխաներն իրենց ձեռքերը բաց են թողնում: Կատուն վազում է մկների հետևից, անցնելով շրջանի բոլոր դռներով, իսկ մկները փախչում են նույն ճանապարհով: Յերբ կատուն որսում է պայմանական թվով մկներ, օրինակ՝ 2—3 մուկ, ապա այդ խումբն անցնում է շրջան, իսկ շրջանից դուրս է գալիս մի այլ խումբ, և նորից խաղը վերսկսվում է:

Խաղը վերջանում է, յերբ խմբերը նույն ձևով մասնակցում են խաղին:

Խաղի կանոնները: *Որսալ կարելի յե վորտեղ պատահի՝ թե՛ շրջանի ներսը և թե՛ շրջանից դուրս, սակայն յերգի վերջին խոսքերից հետո միայն:*

Խաղի գնահատականը: *Այս խաղը զարգացնում է ռիթմի*
զգացում, արագ վազելու և փախչողին բռնելու ունակություն:

3. Փուչիկ: *Դաստիարակը յերեխաների հետ խիտ շրջան է*
կազմում, ձեռքերից բռնած: Հետո սկսում են աստիճանաբար
շրջանը լայնացնել, արտասանելով հետևյալ խոսքերը·

Գե՛հ, փքվի՛ր, իմ փուչիկ,
Եվ չմնաս դու պստիկ·
Փուչիկ, դու շատ չփքվես,
Թե չէ հանկարծ կպայթես:

Յերեխաները ձեռքերը չեն բաց թողնում այնքան ժամանակ,
մինչև վոր դաստիարակն ասում է—«պուհ»—«փուչիկը տրաք-
վեց»: Այն ժամանակ յերեխաները բաց են թողնում իրենց ձեռ-
քերը, նստում են թաթերի վրա և ծափ տալով բացականչում են՝
«հո՛պ»: Դաստիարակը մոտենում է յերեխաներից ամեն մեկին և
թեթև ձեռք է տալիս նրան: Յերեխան, վորին նա ձեռք տվեց,
կանգնում է: Յերբ բոլոր յերեխաները կանգնում են, փուչիկը
համարվում է նորոգված, և խաղը վերսկսվում է: Խաղը կարելի
յե կրկնել 3—4 անգամ:

4. Գունավոր տներ.—*Խաղահրապարակի չորս անկյուններում*
դաստիարակը ցցում է տարբեր գույների (կարմիր, կապույտ, դե-
ղին, կանաչ) մեկական դրոշակ: Յերեխաները նույնպես ստանում
են մեկական այս կամ այն գույնի (նշաններից) դրոշակ և շարքի
կանգնելով, իրար հետևից քայլում են: Յերբ դաստիարակը ծափ
է տալիս, յերեխաներից յուրաքանչյուրը վազում է իր «տունը»
(կարմիր դրոշակավորները հրապարակի այն անկյունը, վորտեղ
ցցած է կարմիր դրոշակը և այլն): Խաղը կարելի յե կրկնել
2—3 անգամ: Շահում է այն խումբը, վորն ամենից շուտ է շար-
վում իր տեղում:

ՀԱՆԳԻՍՏ ԽԱՂԵՐ ՓՈՔՐԵՐԻ ՀԱՄԱՐ

5. Իմացի՛ր՝ ձեռքիդ ինչ է: *Յերեխաները նստում են սեղանի*
շուրջը կամ աթոռների վրա շրջանաձև և ձեռքերը դնում մեջքերին:
Մանկավարժն անցնելով նրանց հետևից, յուրաքանչյուրի ձեռքին
վորևէ փոքր առարկա յե դնում՝ խորանարդ, գունդ, լուցկի,
գնդակ, տիկնիկ, ձկնիկ և այլն: Ստանալով առարկան, յերեխան
պետք է շոշափի, տա անունը և ցույց տա բոլորին: Յեթե առար-

կայի անունը ճիշտ չասաց, ապա մյուսները խմբովին տալիս են առարկայի ճիշտ անունը: Խաղը վերջանում է այն ժամանակ, յերբ առարկաներն անցնում են յերեխաների մեծ մասի ձեռքով:

6. Իմացի՛ր՝ վորտեղ զանգահարեցին: Մի յերեխա կանգնում է դեմքով դեպի դաստիարակը և աչքերը փակում է, մնացած յերեխաները նստում են իրար կողքի—պատի մոտ: Յերեխաներից մեկն ու մեկին տալիս են զնգաններ (погремушки) կամ զանգակ: Դաստիարակն առաջարկում է զանգահարել: Աչքերը փակած յերեխան պետք է ձեռքով ցույց տա, թե վորտեղ զանգահարեցին: Յեթե նա ուղղությունը ճիշտ ցույց տվեց, նրա փոխարեն ընտրվում է մի նոր յերեխա—խաղավար: Յեթե ուղղությունը ճիշտ ցույց չտվեց, ապա նորից գուշակում է:

Գնդակի խաղեր փոքրերի համար

1. Կարողացիր գլորել գնդակը: Յերեխաներն իրարից փոքր հեռավորության վրա կիսաշրջանաձև նստում են, իսկ դաստիարակը նրանցից վոչ հեռու, դիմացից գնդակը գլորում է յուրաքանչյուրին հերթով: Յերեխաները գնդակը գլորելով վերադարձնում են դաստիարակին:

2. Գնդակի խաղ: Յերեխաները շրջան են կազմում: Շրջանի կենտրոնում դրվում է բաց արկղ: Յերեխաները հերթով գնդակը գցում են արկղի մեջ: Սկզբում յերեխաները կանգնում են արկղից 2 քայլ հեռավորության վրա, ապա հեռավորությունն աստիճանաբար մեծացվում է մինչև 4—5 քայլ:

3. Բռնիր գնդակը: Յերեխաները շրջան են կազմում: Դաստիարակը կանգնում է շրջանի կենտրոնում և հերթով բոլոր յերեխաներին է գցում մեծ գնդակը, իսկ յերեխան այն հետ է գցում դաստիարակին: Սկզբում պետք է գցել կես մետր հեռավորությունից և աստիճանաբար տարածությունը մեծացնել մինչև մեկևկես մետր:

ՇԱՐԺԱԿԱՆ ԽԱՂԵՐ 5—7 ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Վազքի վարժություններ: Հրապարակի յերկու հակադիր ծայրերում գծում են յերկու տուն: Խաղացողները կանգնում են տներից մեկում: Հրապարակի կողքին (յերկու տների միջև)

կանգնում են 1—2 հոգի (բռնողներ): Յերեխաները միասին ասում են.

Մենք փոքրերս ժիր, առույգ,
Ինչպես թռչող լավ նժույգ,
Շատ ենք սիրում վազվզել,
Հապա փորձիր մեզ բռնել:

Վերջին խոսքի հետ վազում են դեպի դիմացի տունը, իսկ բռնողները վազում են նրանց բռնելու: Բռնվածները ժամանակավորապես դուրս են գալիս խաղից: Խաղը վերջանում է 3—5 հոգի բռնվելուց հետո:

Նոր բռնողն ընտրվում է չբռնվածներից: Նոր խաղի սկզբից բոլոր բռնվածները մասնակցում են խաղին: Առաջին բռնողին նշանակում է դաստիարակը կամ նա ընտրվում է հաշվելու ոգնությամբ:

Հաշվելու համար ընտրվում է մի վորևիցե թիվ, մինչև վորը յերեխաները կարողանում են հաշվել, որինակ 10,15: Դաստիարակը կամ յերեխաներից մեկը հաշվում է յերեխաներին: Նա, վորին ընկնում է վերջին թվանշանը, համարվում է բռնողը: Թվերի փոխարեն կարելի յե վերցնել առարկաներ կամ փոքր բանաստեղծություններ: Խաղի կրկնության ժամանակ նոր բռնողին ընտրում է նախորդ բռնողը:

2. Գայլը և հոտը: Հրապարակի մի ծայրում մի գիծ է գծվում, վորն իբր թե առանձնացնում է կոլտնտեսության անասունների բակը, հակառակ կողմում—արոտատեղն է, իսկ կողքից՝ գայլի բունը: Բաժանվում են՝ ով կլինի հովիվը, գայլը, կովերը, վոչխարները: Դուրս է գալիս հովիվը հրապարակի մեջտեղը և ասում.

Արև ծագեց,
Շողը փայլեց,
Հովիվ Սարոն
Սրինգ փչեց.
Դո՛ւ-լո՛ւ-լո՛ւ, դո՛ւ-լո՛ւ-լո՛ւ:

Վերջին խոսքերի հետ կովերը բառաչում և դուրս են գալիս հրապարակի մեջտեղ:

Այնտեղ են դուրս գալիս նաև վոչխարները: Հովիվը քշում է նրանց արոտատեղ հետևյալ խոսքերով.

Շուտ դուրս յեկեք,
Վո՛չխա՛ր, կովե՛ր,
Սպասում են ձեզ
Կանաչ դաշտեր։

Այս խոսքերից հետո բոլոր կենդանիները ցրվում են զանազան կողմեր, իսկ հովիվը վերադառնում է մարզադետին—հրապարակի մեջտեղը։ Խաղավարի «Գա՛յլ» բառին ամբողջ հոտը հավաքվում է հովվի շուրջը, իսկ նրանք, ովքեր չեն կարողանում հասնել հովվին, գայլը բռնում և տանում է իր բունը։ Խաղը վերջանում է այն ժամանակ, յերբ բռնվածների թիվը կհասնի 3—5 հոգու (նայած ինչպես են պայմանավորվել)։

3. Թռչուններն ու կկուն։ *Բոլոր խաղացողները ներկայացնում են թռչուններ և ունեն առանձին նշված տեղ—բուն։ Մի յերեխա կանգնում է մի կողմ, առանց բնի, ներկայացնելով իրենից կկու։ Խաղավարի «Քը՛շ թռեք» խոսքի հետ միասին թռչունները դուրս են գալիս բներից և թռչում վորտեղ ուզեն։ Կկուն թռչում է նրանց հետ։ «Տուն» բառի հետ բոլորը (կկուն էլ) վազում են բները զբաղեցնելու։ Նա, ով մնաց առանց բնի, դառնում է կկու։*

4. Կատուն և ճնճղուկները։ *Խաղացողները շրջան են կազմում։ Շրջանը գծվում է և պատկերում մի մեծ լիճ, վորը գոյացել է անձրևից հետո։*

Ճնճղուկները լողանում են լճի մեջ։ Կատուն տեղավորվում է շրջանից մի կողմ։ Խաղացողները թռչկոտում են յերկու վոտի վրա, թռչում են մեկ՝ շրջանի մեջ և մեկ էլ՝ դուրս են թռչում այնտեղից։ Դաստիարակի «Կատո՛ւն» բառի հետ կատուն վազում է դեպի լիճը և սկսում լճից դուրս քշել նրանց, այսինքն՝ բռնել այն ճնճղուկներին վորոնք չեն կարողացել ժամանակին լճից դուրս թռչել։ Բռնվածները խաղից դուրս են գալիս (մի կողմ են կանգնում)։ Կատուն կարող է բռնել միայն շրջանում գտնվողներին։ Խաղը վերջանում է այն ժամանակ, յերբ կատուն 3—5 ճնճղուկ է բռնում (նայած ինչպես են պայմանավորվել)։ Նրանք, ում կատուն վոչ մի անգամ չի բռնել, համարվում են խաղը տանողներ։ Խաղը կրկնելու ժամանակ կատուն ընտրվում է խաղը տանողների միջից։

5. «Ձիեր» խաղի նկարագրությունը։ *Բոլոր խաղացողները նստում են հրապարակի մեկ կողմ աթոռակների կամ նստարանների վրա կամ թե կանգնում են։ Հրապարակի հակառակ կողմը գտնվում է ձիերի գոմը, վորտեղ տեղավորված են աթոռակներ, և ամեն մի աթոռակի տակ դրված է մի փայտ։*

Յերեխաները ներկայացնում են կառապաններ կամ կարմիրբանակայիններ, վորոնք քնած են։ Դաստիարակի ազդանշանով նրանք արթնանում ու գնում են ձիերը լծելու, այսինքն՝ ամեն մեկը աթոռակի տակից վերցնում է փայտը։ Ապա բոլորը շարք կազմած ընթանում են արագ վազքով՝ դաշտով կամ կամուրջներով։ «Վերադառնալ» ազդանշանը լսելով՝ նրանք վազում են դեպի գոմը․ ձիերը կապում (փայտերը դնում աթոռակների տակ), վազում հակառակ կողմը և նստում աթոռակների վրա։

Խաղը տանում է այն յերեխան, վորն ամենից շուտ է աթոռ գրավում։

Խաղի կանոնները։ *Կամրջի վրայից անցնելը և վազելով տեղը վերադառնալը կատարվում է դաստիարակի ազդանշանով։*

Խաղի գնահատականը։ *Խաղը զարգացնում է ճարպկություն, արագավազություն, ուշադրություն։*

6. Վո՛րտեղ է գնդակը։ *Յերեխաները շրջան են կազմում և փոխանցում են գնդակը իրենց մեջքի կողմից այնպես, վոր շրջանի կենտրոնում կանգնածը—խաղավարը—գնդակը չնկատի։ Խաղավարը յերեխաներից մեկն ու մեկի ձեռքին գնդակը նկատելով ցույց է տալիս այդ յերեխային և ասում է․ «Ձեռքե՛րդ»։ Վերջինս պետք է բարձրացնի ձեռքերը վեր, բաց ափերով։ Յեթե նա ձեռքերը բարձրացնի գնդակով կամ գնդակը վայր գցի, ապա խաղը վերջանում է։ Յեթե նրա ձեռքերը դատարկ յեղան, ապա նա ձեռքերը դնում է մեջքին, և խաղը շարունակվում է։ Փնտրողը փոխվում է, յերբ 2—3 յերեխա գնդակով բռնված լինեն (խաղի սկզբում շրջանը խիտ չպետք է լինի, իսկ հետո, յերբ յերեխաները խաղը յուրացրին, կարելի յե շրջանը խտացնել)։*

ՀԱՆԳԻՍՏ ԽԱՂԵՐ ՄԵԾ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

7. Ո՛վ թաքնվեց։ *Յերեխաները շրջան կազմած նստում են։ Դաստիարակը շրջանում առանձնացնում է 3—5 յերեխա և առաջարկում է խաղավարին նայել և միտը պահել նրանց։ Դրանից հետո խաղավարը դուրս է գնում սենյակից, իսկ առանձնացված այդ 3—5 հոգուց մեկ յերեխա (դաստիարակի նշանակումով) պահ-*

վում է: Եթե խաղավարը վերադառնալով գուշակում է, թե ով է պահվել, ապա նա իր փոխարեն ընտրում է նոր ղեկավար, իսկ ամբողջ խումբը նրան ծափահարում է: Եթե չգուշակեց, ապա նորից սենյակից դուրս է գալիս, իսկ պահվողը նորից նստում է իր հին տեղը: Վերադառնալով, խաղավարը պետք է իմանա, թե ով էր խմբից պահվել: Նոր ընտրված ղեկավարը միտն է պահում մի նոր խումբ երեխաների, և խաղը վերսկսվում է:

8. Պահպանիր առարկան: Երեխաները կանգնած են շրջանաձև, ոտները տարածած կողմ, ձեռքերը մեջքերին: Մեկը կանգնած է շրջանի մեջտեղը: Շրջան կազմած յուրաքանչյուր երեխայի ոտների մոտ դրված է որևէ առարկա: Շրջանի մեջտեղը գտնվող երեխան աշխատում է վերցնել առարկաները, իսկ մյուսները, պպզելով ու ձեռներով ծածկելով առարկաները, թույլ չեն տալիս: Հենց որ վտանգն անցնում է, նորից վեր են կանգնում և ձեռքերը դնում իրենց մեջքերին: Հարձակվողը փոխվում է մեկ առարկա հափշտակելուց հետո: Խաղը վերջանում է 2—3 հարձակվող փոխելուց հետո:

Պետք է հետևել, որ հարձակվողը չխլի պաշտպանված առարկան և հարձակվողի հեռանալուց հետո պաշտպանողը պպզած չմնա:

9. «Ով է թռչում» խաղի նկարագրությունը: Խաղացողները շրջանաձև նստում են: Դաստիարակն իրար հետևից թռչունների, միջատների, կենդանիների և զանազան առարկաների անուններ է ասում: Որևէ թռչողի անուն ասելու դեպքում, երեխաները թևերը բարձրացնում են, պատկերացնելով թռչելու գործողությունը և միաժամանակ ասում. «Թռչում է»: Չթռչող կենդանու անուն տալու դեպքում երեխաները միայն պատասխանում են. «Ոչ»: Օրինակ՝ դաստիարակն ասում է՝ «Բզեզ», բոլոր երեխաները ձեռքերը բարձրացնում են ու միաժամանակ ասում՝ «Թռչում է». եթե դաստիարակն ասի՝ «Ձի», երեխաները միայն պատասխանում են՝ «Ոչ» և ուրիշ ոչինչ:

Դաստիարակը երեխաներին շփոթեցնելու համար իր յուրաքանչյուր խոսքին ձեռքերը բարձրացնում է: Այն երեխաները, որոնք չթռչող առարկաների, կենդանիների անունը տալիս ձեռքերը կբարձրացնեն կամ ասեն «Թռչում է», իբրև սխալ կատարողներ, հանձնում են իրենց խաղագրավը:

Վերջում դաստիարակը հերթով յուրաքանչյուր խաղագրավը ծածուկ բռնում, հարցնում է երեխաներին՝ «Այս գրավի տերն ի՞նչ անի»: Երեխաների որոշմամբ գրավի տերը երգում, պարում կամ արտասանում է: Խաղը վերջանում է, երբ բոլոր գրավատերերը կատարել են որոշված գործողությունը:

Խաղի գնահատականը: Այս խաղը զարգացնում է երեխաների ուշադրությունը, զսպվածությունը և դիտունակությունը:

10. «ՁԱՅՆԻՑ ՃԱՆԱՉԻՐ» խաղի նկարագրությունը: Խաղացողները կանգնում կամ նստում են շրջանաձև, մեկը կանգնում է շրջանի կենտրոնում:

Կենտրոնի երեխան փակում է աչքերը, մյուսներից մեկը դաստիարակի ցուցումով տալիս է նրա անունը: Գուշակողը, բացելով աչքերը, պետք է ասի, թե ո՞վ էր իր անունը տվողը: Եթե երեխան ճիշտ որոշեց, ապա մեկին իրեն փոխարինող է ընտրում ու ինքն անցնում շրջանը, հակառակ դեպքում՝ մեկ անգամ էլ է փորձում:

Այս խաղի մի այլ վարիանտը: Դաստիարակի ազդանշանով բոլոր երեխաները վազվզում են հրապարակում, ապա նրա կանչին՝ «Մեկ, երկու, երեք, շուտ շրջան կազմեք», բոլորը շրջան են կազմում, մեկը կանգնում է կենտրոնում:

Բոլոր խաղացողներն ասում են.

Մենք բավական խաղացինք,
Ապա շրջան կազմեցինք.
Դու հանելուկը լուծիր,
Ո՛վ քեզ կանչեց, իմացի՛ր:

Խաղի շարունակությունն ընթանում է վերը նկարագրված ձևով:

Խաղի կանոնները: Խաղը պետք է անցկացնել իրար լավ ճանաչող երեխաների հետ:

Խաղի գնահատականը: Այս խաղը զարգացնում է լսողությունը, լեզուն և ռիթմի զգացումը:

11. Մրոտը: Հրապարակի մի ծայրին գծվում է «քաղաք»: Խաղացողներից մեկին ընտրում են «մրոտ», մյուսները վազվզում են հրապարակում գոչելով. «Ես չեմ վախենում մրոտից»: «Մրոտն» աշխատում է ձեռքով հպվել երեխաներից որևէ մեկին, իսկ նրանք աշխատում են խուսափել «մրոտից»: Երբ «մրոտին» հաջողվում է ձեռքով հպվել երեխաներից որևէ մեկին, այդ վերջինը դառնում է «մրոտ», և խաղը նույն կարգով

շարունակվում է: Խաղի կանոնի համաձայն «մրոտը» իրավունք չունի մտնելու «քաղաքը»:

ԹՈԿՈՎ ԽԱՂԵՐ ՄԵԾ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Յերեխաները հերթով թռչում են թոկի վրայից, վորը սկզբում գետնի վրա յե դրված, իսկ հետո հորիզոնական ուղղությամբ կախված է փայտերից շատ փոքր բարձրության վրա. բարձրությունը աստիճանաբար ավելացվում է մինչև 35—40 սմ: Վնասվածքներից խուսափելու համար, խորհուրդ է տրվում թռիչքի տեղում ավազ լցնել (միքիչ թրջած) կամ թեփ:

2. Կարելի յե թոկից զանգակ կախել և թոկը կապել յերեխայի ծնկների բարձրության: Յերեխաները, վազելով, պետք է սողան թոկի տակից, աշխատելով զանգակին չկպչել:

3. Կարելի յե թոկը կապել յերեխայի վեր բարձրացրած ձեռքերից ել ավելի բարձր. յերեխաները հերթով, մոտենալով թոկին, պետք է վեր ցատկեն այնպես, վոր կարողանան հասնել և խփել թոկից կախված զանգակին: Այս խաղը շատ օգտակար է յերեխայի մեջքն ամրացնելու և ուղղելու համար:

4. Անբուն նապաստակը: *Յերեխաների միջից ղեկավարն ընտրում է «վորսորդ» և «անբուն նապաստակ»: Մնացած յերեխաները յերեք—յերեք իրար ձեռք բռնած շրջանաձև դասավորվում են հրապարակում իրարից քիչ հեռու:*

Յուրաքանչյուր շրջանում (բնում) գտնվում է մեկ նապաստակ, վորը կանգնում է բնի կենտրոնում:

Անբուն նապաստակը և վորսորդը կանգնում են իրարից մեկ-յերկու մետր հեռավորության վրա:

Ղեկավարի՝ խաղն սկսելու ազդանշանով «վորսորդը» վազում է «անբուն նապաստակի» հետևից: «Նապաստակը» խույս տալով, մտնում է վորևէ բուն: Նույն պահին այդ բնում գտնվող «նապաստակը» պետք է դուրս վազի իր բնից: Այժմ «վորսորդը» հետապնդում է այդ նոր «նապաստակին», վորը, «վորսորդից» խուսափելով, վազում մտնում է մի ուրիշ բուն և այդպես շարունակ:

Մեկին բռնելու դեպքում բոլոր յերեխաների տեղերը փոխվում են, և խաղն սկսվում է նորից:

Խաղացողները փոքրաթիվ լինելու դեպքում բների փոխարեն հատակին կավճով քաշում են փոքրիկ կլոր շրջաններ: Խաղի այս վարիանտի դեպքում բոլոր խաղացողները ակտիվ մասնակցում են խաղին:

խաղի գնահատականը: *Այս խաղը զարգացնում է ճարպկություն, արագավարժություն, պաշտպանվելու ունակություն:*

5. *Յերեխան միայնակ վազում է և ցատկում կարճ թոկով (յերկարությունը մոտավորապես 2 մետր):*

6. Կարուսել: *Գետնի վրա շրջանաձև դրվում է ծայրերը կապած հաստ պարան: Յերեխաները մոտենում են պարանին, բռնում և բարձրացնում են գետնից աջ կամ ձախ ձեռքով (ինչպես կասի ղեկավարը):*

Յերեխաներն սկսում են քայլել հետևյալ խոսքերով.

Պտտվում է, պտտվում է,
Պտտվում է կարուսելը.
Դե հիմա ել շրջանով,
Առաջ շարժվենք վազելով:

Կարուսելն սկսում է պտտվել սկզբում դանդաղ, ապա ավելի արագ, և յերեխաները միաժամանակ վազում են առանց բառեր արտասանելու: Դաստիարակչուհու «Հետ դարձ» խոսքի հետ յերեխաներն արագ հետ են դառնում, արագությամբ բռնում են պարանից մյուս ձեռքով և վազում են հակառակ կողմը:

Կամաց, կամաց, մի՛ շտապեք,
Կարուսելը թող կանգնի.
Մեկ-յերկու մենք ասենք,
Այսպես խաղը վերջացնենք:

Կարուսելի շարժումը հետզհետե դանդաղում է, և վոտանավորի վերջին խոսքի վրա կանգ առնում:

ԽԱՂԵՐ՝ ԳՆԴԱԿԸ ՅԵՎ ԱՅԼ ԻՐԵՐ ԳՑԵԼՈՒ ՅԵՎ ԳԼՈՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ—ՄԵԾԱՀԱՍԱԿ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ո՛վ ավելի հեռու կգցի: *Յերեխաները շարվում են մի գծի վրա յերկու-յերեք շարք, ամեն շարքում 7—8 յերեխա, նայած հրապարակի լայնությանը:*

Առաջին շարքում կանգնած յերեխաներից յուրաքանչյուրի ձեռքում կա ավազով լցրած փոքրիկ տոպրակ: Դաստիարակչուհու «Սկսիր» խոսքի հետ նրանք գցում են իրենց ձեռքի տոպրակները: Նշանակվում է, թե ո՛վ ավելի հեռու գցեց: Գցողները վազում են տոպրակների հետևից, վերցնելով այն հանձնում են

իրենց հետևում կանգնած յերկրորդ շարքի յերեխաներին և իրենք անցնում են վերջին շարքը:

Տոպրակը պետք է դցել թե՛ աջ և թե՛ ձախ ձեռքով:

Այս խաղը զարգացնում է յերեխաների թափը և նախապատրաստում է նրանց գնդաթի (գորոդկի) խաղը խաղալու:

Տոպրակները պատրաստվում են ամուր, յերկտակ ծալած կտորից և մեջը լցնում ավազ: Տոպրակների ծավալը պետք է լինի մոտավորապես 10×6×3 սմ, քաշը՝ 150—200 գրամ:

2. Գնդաթի (գորոդկի): Խաղի համար հարկավոր է 10 գորոդկի և 4—5 փայտ, խաղացողների թվի համեմատ: Փայտերը պետք է հավասար լինեն յերեխաների ձեռքի յերկարությանը, այսինքն 40—50 սմ, 3—4 սմ տրամագծով: Փայտերի քաշը պետք է լինի 200—300 գրամ. գորոդկիների յերկարությունը պետք է լինի 15 սմ, հաստությունը՝ 3—4 սմ: Գորոդկիները դարսում են իրարից 15—20 սմ հեռավորության վրա:

Յերեխաները բաժանվում են 2 խմբի: Յուրաքանչյուր խմբի յերեխաները փայտերով հերթով խփում են՝ գորոդկիներից 10—15 քայլ հեռավորության վրա կանգնած:

Դաստիարակը հետևում է, վոր խաղը 20 րոպեյից ավելի չտևի և յերեխաները չհոգնեն:

Դաստիարակը խաղի սկզբում բացատրում է, վոր փայտը կարելի յե դցել միայն այն ժամանակ, յերբ գորոդկիների մոտ մարդ չկա կանգնած, և ամբողջ խաղի ընթացքում հետևում է դրան:

ՍԵՂԱՆԻ ՏՊԱԾ ԽԱՂԵՐ

Նկարներով տպած խաղերը լինում են ամենաբազմազան բովանդակությամբ. այստեղ կան կենդանիների, բույսերի, զանազան խաղալիքների, տնային առարկաների պատկերներ և այլն:

Յերեխաները յերկար դիտում են գեղեցիկ և իրենց հասկանալի նկարները, խաղում են նրանց հետ: Դիտելով նկարները, յերեխան հիշում է իր տեսած առարկաները և սիրով պատմում նրանց մասին: Շատ անգամ դիտելով միևնույն նկարները, յերեխաներն իրենց հիշողության մեջ ամրացնում են նկարում յեղած առարկայի ձևը, նրա գույնը և մյուս հատկանիշները, հարստանում է յերեխայի պատկերացումը շրջապատի կյանքի նկատմամբ:

Նկարներով խաղերը զարգացնում են յերեխաների ուշադրությունը, խելամտությունը, հիշողությունը, լեզուն և այլն:

Հրապարակի ամենափոքր յերեխաները (3 տարեկանները) հաճախ դեռ լավ չեն կարողանում դիտել նկարները: Ուշադրություն չդարձնելով նրան, թե ի՛նչ է նկարված քարտերի վրա, նրանք նկարներից կառուցում են տնակներ, դասավորում են սեղանի վրա ինչպես պատահում է,—կամ ուղիղ կամ շրջված, դարսում են իրար վրա, նկարներով խփում են սեղանին, լսելով առաջացած ձայնը:

Այդպիսի փոքրիկների հետ նախ և առաջ հարկավոր է միասին դիտել մի քանի նկարներ (ամենից հետաքրքիրները): Դաստիարակը բոլոր յերեխաներին դասավորում է շրջանաձև, վորպեսզի բոլորը կարողանան լավ տեսնել, մեկ-մեկ ցույց է տալիս նկարները, ասում է անունը, պարզաբանում է յերեխաներին ծանոթ վորևե հատկանիշը, որինակ՝ «Ահա աքլորիկը. նա յերգում է ծուղ-րու-ղու... յերգենք և մենք...»: Յերեխաներն ընդօրինակում են աքլորի ձայնը, նայում են նկարին: «Իսկ սա շոգեքարշն է... Տո՛ւ-տո՛ւ. նա գնում է, գնում ու թխթխկացնում...»: Դաստիարակը տակտով թխկացնում է վոտներով:

Յերեխաներն անում են նույնը: Մոտավորապես նույն յեղանակով յերեխաներն ուսումնասիրում են և մյուս նկարները:

Դաստիարակը մասնակցում է յերեխաների խոսակցությանը, օգնում է նրանց փոխանակել նկարները, հսկում է, վոր յերեխաները խնամքով վերաբերվեն դեպի նկարները:

Սկզբից ևեթ հարկավոր է յերեխաներին սովորեցնել կանոնավոր դասավորել և հանել նկարներն արկղներից. իսկ խաղերից հետո դասավորել իրենց տեղը: Կոտրած արկղը հարկավոր է անմիջապես հեռացնել և վերանորոգել:

Ավելի մեծահասակ յերեխաներին դաստիարակը տալիս է նկարներն արդեն ինքնուրույն դիտելու համար: Դաստիարակն այդ ժամանակ ուշադրությամբ դիտում է յերեխաներին, լսում է նրանց խոսակցությունները, պատասխանում է նրանց հարցերին, վորոշ հարցեր տալիս է ինքը:

Մեծերի խմբի յերեխաներին կարելի յե տալ ավելի բարդ բովանդակություն ունեցող նկարներ: Այդ նկարներում արդեն կարող են լինել վոչ միայն յերեխաներին ծանոթ առարկաներ կամ կենդանիներ ու բույսեր, այլև նորը, հեռավորն ու անծանոթը. այսպես, որինակ՝ հեռավոր յերկրների կենդանիները, Թռիչքը դեպի Հյուսիսային բևեռ և այլն:

Այդպիսի նկարների միջոցով հարկավոր է զրուցել երեխաների հետ՝ հարցնել այն մասին, թե ի՛նչ է նկարված յուրաքանչյուր նկարում, ո՛րտեղ են այդ նրանք տեսել, կամ թե ի՛նչ են լսել դրա մասին և այլն: Հարկավոր է երեխաների ուշադրությունը դրավել նրա վրա, ինչ նրանք չեն նկատել նկարի մեջ:

Եթե երեխաները շատ են խոսում և հաճույքով, այդ դեպքում հարկավոր է հետևել, որ երեխաները խոսեն հերթով, իրար չխանգարեն, չընդհատեն:

Իսկ եթե երեխաները լուռ են, դաստիարակի հարցերին պատասխանում են միավանկ—այո՛, ոչ,—ապա դաստիարակը կարող է առանց հարցերի ինքը պատմել նկարների մասին: Իսկ հետագայում երեխաներն իրենք սկսում են սիրով խոսել նկարների մասին:

Երբ երեխաներն արդեն լավ են ծանոթացել նկարներին, կարելի յե անցնել կանոններով խաղերին:

Նախքան երեխաների հետ խաղալը, դաստիարակն ինքը պետք է լավ ուսումնասիրի տվյալ խաղի կանոնները:

Շատ բարդ կանոնները ծանրացնում են երեխաներին, խաղը կորցնում է իր հետաքրքրությունը: Փոքրիկների համար հարկավոր է ամեն կերպ հեշտացնել այդպիսի դժվարությունները: Իսկ եթե խաղի կանոնները ոչ մի դժվարություն չեն ներկայացնում, երեխաներից չեն պահանջում ոչ մի մտավոր լարում,—ապա այդպիսի խաղերը ևս քիչ են հետաքրքրում երեխաներին:—Երեխայի համար դուրեկան է հաղթահարել որոշ դժվարություններ: Այդ կարևոր է հատկապես մեծահասակ երեխաների համար:

Պետք է նաև նախորոք պարզել, թե ի՛նչպես նստեցնել երեխաներին, որ բոլորին հարմար լինի և տեսանելի, որտեղ նստի ինքը դաստիարակը, ի՛նչպես երեխաներին բաժանել նկարները, որ նրանք երկար չսպասեն խաղը սկսելուն, և ի՛նչպես խաղը վերջացնել:

Երեխաների մեծ խմբով խաղալը լավ է այն դեպքում, երբ խաղն արդեն անց է կացվել փոքր խմբով, և երբ ամեն մի երեխա արդեն ծանոթ է և հասկացել է խաղի կանոնները: Այդ դեպքում բոլոր երեխաները կլինեն միատեսակ ակտիվ և շահագրգռված, իսկ դաստիարակն ավելի հեշտ կարող է դիտել ամեն մի երեխային. ուշադիր է արդյոք նա, կատարում է արդյոք խաղի բոլոր կանոնները, թե ոչ:

Նկարներով խաղերը, ինչպես և կանոններ ունեցող խաղերը,

շատ երկար չպետք է տևեն. փոքրիկների համար՝ 7—10 րոպե, մեծերի համար՝ 10—15 րոպե:

Ամեն մի նկարներով խաղ, որը դաստիարակը կազմակերպում է փոքրահասակ նախադպրոցականների հետ, պետք է անցնի ուրախ և կազմակերպված և երեխաներին հաճույք պատճառի:

Նկարներով խաղի ամենապարզ վարիանտն է—«Թաքցնենք և գտնենք»: «Թաքցնենք և գտնենք» խաղն անց է կացվում սեղանի շուրջը: Դաստիարակը բաժանում է երեխաներին նախորոք պատրաստած միատեսակ նկարներ, օրինակ՝ ճուտիկը, կատվի ձագը, քոթոթը և խողի ճուտը:

Մեկ դաստան դաստիարակը վերցնում է ինքը, նա խաղում է երեխաների հետ և իր գործողությունների ընթացքում տանում է պարզ խոսակցություն, «Մեր նկարները դնենք իրար կողքի: Ձեզ մոտ ի՞նչ է նկարված նկարներում»: Երեխաները դասավորում են իրենց նկարները, ասում են, թե ի՛նչ է նկարված, նայում են հարևանների նկարներին և համոզվում, որ բոլորի մոտ միևնույն նկարներն են:

Դաստիարակն ընտրելով հարմար ժամանակ, երբ երեխաները խոսել և հանդստացել են, առաջարկում է. «Բերեք, երեխաներ, թաքցնենք կատվի ձագը» և շրջում է նշված նկարը, որ չերևա: Երեխաները նույնպես «թաքցնում են», յուրաքանչյուրն իր կատվի ձագը: Դաստիարակը, ստուգելով երեխաների նկարները, շարունակում է՝ «Կատվի ձագը թաքցրինք, նա էլ չկա. խողի ճուտը կա, քոթոթիկը կա, ճուտիկը կա, իսկ կատվի ճուտը չկա.—փախել է ինչ-որ տեղ»: «Հիմա բերեք թաքցընենք քոթոթիկին»: Բոլորը շրջում են համապատասխան նկարը:

«Քոթոթիկն էլ փախավ... էլ ո՞վ մնաց մեզ մոտ», և երեխաների հետ միասին շարունակում է՝ «Խողի ճուտը կա և ճուտիկը կա, իսկ կատվի ձագը և քոթոթիկը փախել են, նրանք չկան...»:

Այսպես շարունակվում է խաղը, մինչև որ բոլոր նկարները թաքցվում են: «Էլ ոչ ոք չկա»: Հետո դաստիարակն առաջարկում է. «Բերեք գտնենք կատվի ձագը... ո՞ւր է նա»: Գտնելով կատվի ձագը, նա դնում է սեղանի վրա՝ նկարը դուրս: «Ահա գտանք կատվի ձագը: Իսկ քոթոթիկը չկա, խողի ճուտը չկա, ճուտիկը չկա: Հիմա ո՞ւմ պետք է փնտռենք» և այլն:

Խաղը վերջանում է, երբ բոլոր նկարները դրված են նկարը դուրս:

Կա նկարներով խաղի մի ավելի բարդ վարիանտ ևս, վորը զարգացնում ե յերեխաների տեսողական հիշողությունը․ դա «Նայիր և հիշիր» խաղն ե։

Յեթե չհաջողվի գնել այդ տպած խաղը (հեղինակ Դոբրոկլոնսկի), ապա կարելի յե ոգտագործել կենդանիների, բույսերի, տնային իրերի ցանկացած զույգ նկարները 10—12 զույգ։

«Նայիր և հիշիր» խաղը տարվում ե սեղանի շուրջը, բայց նկարները յերեխաներին չեն տրվում, այլ բոլորը խառնելուց հետո դասավորվում են սեղանի կենտրոնում 4—5 շարք, նկարները դուրս․ խաղում են 5—10 յերեխաներ։

Այս խաղի կանոնները հետևյալն են․ յերեխաներն ուշադրությամբ նայում են նկարներին, աշխատում են հիշել նույնանման նկար ունեցող քարտերի տեղը, վոմանք կարողանում են հիշել մեկ զույգ, մյուսները՝ յերկու։ Մեկ-յերկու րոպեյից հետո նկարները շրջվում են հենց իրենց տեղերում (նկարներով յերեսը ցած), և ամեն խաղացող հերթով բացում ե յերկու նկար։ Նա շրջելով նկարները՝ թողնում ե իրենց տեղում։ Յեթե նկարների զույգը նույնանման ե լինում, ապա այդ քարտը յերեխան վերցնում ե իրեն—դա նրա շահածն ե, իսկ յեթե սխալվում ե, նրա հերթը կորչում ե և նրա բացած նկարները նորից իրենց տեղում հետ են շրջվում։ Խաղը նույն ձևով շարունակում ե հետևյալ յերեխան։

Խաղը շարունակվում ե մինչև բոլոր նկարների վերջանալը։ Հաղթողը լինում ե նա, ով հավաքում ե ամենից շատ զույգ նկարներ։

Դաստիարակը պետք ե լավ բացատրի յերեխաներին բոլոր այս կանոններն առաջին խաղի ընթացքում և չշտապեցնի նրանց։ Պետք ե յերեխաներին հասկացնել, վոր նկարները պետք ե հերթով բանալ և հսկել, վոր յերեխաները կիրառեն այդ կանոնը, մանավանդ, յերբ նրանք արդեն խաղում են ինքնուրույն։

Յեթե կպարզվի, վոր յերեխաների մեծամասնությունը չի հիշում զույգ նկարների տեղը և «Նայիր ու հիշիր» խաղն առայժմ դժվար ե նրանց համար, այդ դեպքում հարկավոր ե վորոշ ժամանակով հետաձգել այդ խաղը և խաղալ յերեխաների հետ «Թաքցնենք ու գտնենք» խաղն ըստ հիշողության, իսկ հետո նորից «Նայիր ու հիշիր» խաղը։

Կարելի յե առաջին շրջանում հեշտացնել այս խաղի կանոնները, որինակ, այսպես․ ամեն խաղացող բանում ե միայն մեկ նկար։ Առաջին յերեխան բանում ե ցանկացած նկարը, յերկրորդը, յեթե նա չի հիշում բացած նկարի զույգի տեղը, բանում ե նորից պատահական մեկ ուրիշ նկար։ Յեթե նկարը նման չի առաջիվա հանած նկարին, ապա հերթը կորչում ե, նկարը շրջում են, և նույն ձևով բացած նկարի նման նկար ե փնտրում յերրորդը և այլն։

Սակայն խաղի պրոցեսում յերեխաները նկարների տեղն ավելի արագ են հիշում և դրանով իսկ ավելի հեշտությամբ են գտնում հանած նկարի զույգը։

Զույգ նկար բացողը նկարները վերցնում ե իրեն։ Հետևյալը նորից բանում ե մեկ նկար, իսկ մյուսները շարունակում են փնտրել նրա զույգը և այլն։

Լոտո խաղեր

Փոքրերի համար կարելի յե ոգտագործել Ֆեդյայեվսկայայի «Ծուղ-րու-ղուն» կամ Եյգեսի «Լոտոն փոքրերին»։

Խաղը նույնպես տարվում ե սեղանի շուրջը։ Յերեխաները ստանում են մի-մի հատ մեծ նկարազարդ քարտ։ Փոքրիկ նկարիկները, վորոնցով պետք ե ծածկեն քարտի նկարները, վերցնում ե ինքը դաստիարակը։

Ստանալով մեծ քարտերը, յերեխաները նայում են նկարները, տալիս են նկատած առարկայի անունը։ Հետո դաստիարակը ցույց ե տալիս յերեխաներին իր ձեռքի փոքրիկ նկարներից մեկը, ասում ե նկարի անունը և հարցնում ե, թե ո՛ւմ մոտ կա նույնանման նկար։ Ով ճիշտ ե պատասխանում, նա ստանում ե դաստիարակից փոքրիկ նկարը և դնում ե իր քարտի նույնանման նկարի կողքին—յերեսը վերև դարձրած։

Կարելի յե առանց փոքրիկ նկարները ցույց տալու հարցնել, որինակ՝ ո՞ւմ մոտ ե խնձորը․ կամ թե չե՝ ո՞ւմ մոտ կա այսպիսի նկար, հարցից հետո հարցնել՝ իսկ սա ի՞նչպես ե կոչվում։

Այսպիսով դաստիարակն աշխուժացնում ե լոտո խաղը, զանազան ձևերով հարցեր տալով յերեխաներին։ Նա ոգնում ե յերեխաներին նկարների վրայի առարկաները ճանաչել և տալ նրանց ճիշտ անունները։

Հետագայում, լոտոյի խաղերի ժամանակ, կարելի յե խաղը ձևափոխել, քիչ ավելի բազմազան դարձնել, որինակ՝ դաստիարակն առաջարկում ե յերեխաներին վոչ միայն ասել նկարի անունը, այլև պատմել նրա մասին, որինակ․

«Ինձ մոտ դույլ կա,—նա կանաչ է... Ինձ մոտ կատվի ձագ կա,—նա մոխրագույն է, մռմռում է... Ինձ մոտ հագուստ կա—նա կարմիր է, ոձիքով է» և այլն: Կարելի յե առարկայի վերաբերյալ ասել վոտանավոր կամ հանելուկ:

Լոտո խաղերը շատ ոգտակար է հետզհետե բարդացնել, վոր նրանք հետաքրքիր լինեն նաև մեծ յերեխաների համար: Նախ մենք տալիս ենք յերեխաներին սովորական լոտո. լոտոյի մեծ քարտերի վրա նկարված են նույն նկարները (2-ից մինչև 4), ինչ վոր փոքրերի վրա: Յերեխայի առաջ խնդիր է դրվում. նայել այն նկարին, վորը ցույց է տալիս դաստիարակը, կամ լսել՝ ի՛նչ նկարի մասին է նա հարցնում և իր առջևի քարտի վրա գտնել նույնանմանը: Հետո կարելի յե տալ ավելի բարդ և հետաքրքիր լոտո, ինչպես որինակ՝ Մեչչերյակովի «Փոքրիկները»[1]:

Այստեղ մեծ քարտի վրա նկարված է միայն մեկ նկար (կատու, բադ, խոզ և այլն), իսկ նրա շուրջը—դատարկ քառակուսիներ:

Յերբ դաստիարակը ցույց է տալիս յերեխաներին փոքրիկ նկարները, վորոնց վրա նկարված են կատվի ձագեր, կամ բադիկներ, խոզի ճուտեր և այլն, ապա յերեխաների առաջ խնդիր է դրվում՝ իմանալ թե վոր մեծ քարտին է վերաբերվում յուրաքանչյուր փոքրիկ նկարը: Ամեն մեծ կենդանու շուրջը—մեծ քարտերի քառակուսիների վրա—հավաքվում են նրա փոքրիկ ձագուկները:

Այս լոտոն կարելի յե խաղալ միքանի ձևով:

Խաղ առաջին. «Ո՞ւր են իմ մանկիկները»:

Յեթե հրապարակում «Փոքրիկները» խաղից կա մեկ արկղ, ապա կարող են խաղալ 7 հոգի: Ամեն մեկին փոքրիկ նկարներից տրվում են 6-ական՝ ճուտիկ, բադիկ, խոզուկ, կատվի ձագ, շնիկ և ճագար: Մեծ քարտերը դաստիարակը վերցնում է ինքը: Յերեխաները նկարները դասավորում են իրենց առաջ: Դաստիարակը բանալով մեծ քարտերից մեկը և, ձևանալով վորպես նրա վրա նկարած մայրիկը, փնտրում է իր մանկիկներին, կանչում է նրանց, որինակ.

— Ծո՛ւղ-րո՛ւ-ղո՛ւ, ո՞ւր եք դուք, իմ բալիկներ, ո՞ւր եք դուք, ճուտիկներ: Ծուղ-րու-ղու պատասխանեցեք ինձ, հավաքվեցեք:

---

[1] Քիչ առաջ մենք ասացինք, թե ինչպես ոգտագործել այս խաղի փոքրիկ նկարները, իսկ այստեղ ցուցումները վերաբերում են թե՛ մեծ և թե՛ փոքր քարտերին:

Խաղացողներից ամեն մեկն իր նկարներից ջոկում է «ճուտիկ» նկարը և, ճուտիկի նման ձայներ արձակելով, տեղավորում է այն մեծ քարտի վրա:

Հետո կատուն մլավելով կանչում է իր ձագուկներին և այլն:

Խաղը վերջանում է, յերբ մեծ քարտերը ծածկվում են փոքրիկ նկարներով՝ բոլոր մայրերը հավաքել են իրենց ձագուկներին:

Խաղ յերկրորդ. «Ո՞ւր է մեր մայրիկը»:

Յերեխաները ստանում են մեծ քարտերը (ամեն մեկը մեկ հատ), իսկ դաստիարակը վերցնում է բոլոր փոքրիկ նկարները: Վոր չխառնվի, նա իր առաջ դարսում է նման նկարներն առանձին կույտերով (ամեն մի կենդանի առանձին կույտում) և ինքն իրենից ներկայացնում է վորպես ձագուկներ, վորոնք կորցրել են իրենց մորը:

Խաղացողներն արդեն հերթով պատասխանում են ձագուկների կանչին և հաջորդաբար, իրենց քարտին համապատասխան, հավաքում են փոքրիկներին:

Խաղը շատ ձգձգելու և յերեխաներին յերկար սպասելուց չձանձրացնելու համար, լավ է ամեն մի մայրիկին տալ 2—3 ձագուկ:

Հանձնարարություններ խաղերը

Այս խաղը սեղանի շուրջը չի տարվում: Հանձնարարություններ խաղը շարժական է: Յերեխաները նստում են կիսաշրջանաձև: Կարող են մասնակցել 10—12 յերեխա, իսկ նկարների թիվը պետք է լինի 20 և ավելի:

Դաստիարակը նկարները տեղավորում է զանազան տեղեր—սեղանների, աթոռների վրա: (Յեթե յերեխաները շատ փոքր են, նկարները տեղավորել մեկ տեղ, որինակ, մեկ սեղանի վրա):

Ամեն մեկը ստանում է հանձնարարություն—բերել այս կամ այն նկարը: Ամենափոքրերին կարելի յե տալ նկար՝ հանձնարարելով, վոր նրանք փնտրեն նույնանման նկար: Մյուսներին կարելի յե միայն ցույց տալ նկարն՝ ասելով. «Հիշի՛ր և գտի՛ր ճիշտ այսպիսին»: Վերջապես կարելի յե միայն նկարի անունը տալ:

Այստեղ նույնպես շատ կարևոր է հանձնարարությունները տալ զանազան ձևերով: Յերբեմն կարելի յե տվյալ նկարին համապատասխան ծանոթ յերգեր, վոտանավորներ, հանելուկներ

տել և հարցնել երեխաներին, թե ում մասին է այս երգը կամ ոտանավորը, իսկ հետո առաջարկել գտնել համապատասխան նկարը։ Կարելի է և հակառակը․ առաջարկել երեխաներից յուրաքանչյուրին ընտրել ցանկացած նկարը, հետո դրանք ցույց տալ բոլոր երեխաներին և նրա մասին երգել կամ պատմել։

Տված խաղերն, իհարկե, հարկավոր է ժամանակ առ ժամանակ լրացնել նորերով, բայց և հին խաղերը չպետք է գործածությունից հանել։ Մեկ-մեկ երեխաները հիշում են հին խաղի մասին և մեծ հաճույքով հենց իրենք վերցնում են խաղը, նայում նկարներին և խաղում։ Սա շատ արժեքավոր է։ Երբեմն էլ ինքը դաստիարակը կարող է առաջարկել երեխաներին խաղալ հին նկարներով և հիշել ծանոթ երգեր ու ոտանավորներ։

Հանձնարարություններ խաղը նույնպես աստիճանաբար հարկավոր է բարդացնել, որ նրանք երեխաների համար լինեն հետաքրքիր և միևնույն ժամանակ արժեքավոր դաստիարակչական տեսակետից։

Փոքր երեխաների առաջ մենք այս խաղում դնում ենք ավելի պարզ խնդիր․ բոլոր նկարների միջից գտնել մեկ բնորոշ նկար, որը դաստիարակի կողմից կամ ցույց է տրվում երեխաներին կամ տրվում անունը։

Մեծ երեխաներին այդպիսի հանձնարարությունները հետաքրքիր չեն, այդպիսի խաղերը ձանձրալի են։

Հանձնարարություններ խաղի կանոնների մեջ մեծերի համար պետք է լինեն որոշ դժվարություններ, որոնք նրանք կարող են հաղթահարել։ Այդ պատճառով մեծ երեխաների հետ մենք անց ենք կացնում հանձնարարություններ-հանելուկներ։

Այս խաղերի համար կարելի է օգտագործել նույն առարկաներով նկարները, բայց փոխարեն դույլ, բաժակ, թաթմաններ, վառնամաններ և այլն գտնել հանձնարարելու, մենք տալիս ենք հանձնարարություն հանելուկի ձևով, օրինակ՝ «Բերել այն, ինչով ջուր են կրում, ինչով թեյ են խմում, ինչ հագնում են ձեռքերին, ինչ հագնում են ոտքերին և այլն»։ Աստիճանաբար տրվում են և ավելի բարդ հանելուկներ, օրինակ․ «բերել այն ամենը, ինչ ուտում են, այն ամենը, ինչ հագնում են, ինչով խաղում են» և այլն։

Հանձնարարություններ խաղերում կարելի է օգտագործել ցանկացած նկարները, օրինակ, նկարներ, որոնք ներկայացնում են զանազան կենդանիներ։ Հանելուկների մի մասը կարող է վերաբերվել առանձին կենդանիների ձայնին (բերել նրան, ով մլավում է, ով կչկչում է, ով ծուղրուղու է կանչում և այլն)։ Մյուսները վերաբերվում են առանձին կենդանիների արտաքին տեսքին, օրինակ, բերել նրան, ով կնճիթ ունի, ում մուշտակը ձմեռը սպիտակ է, ամառը՝ մոխրագույն, ում բուրդը խուճուճ է, ում քիթը հինդ կոպեկանոցի նման տափակ է, պոչը՝ պտտված և այլն։

Կարելի է աստիճանաբար տալ ավելի բարդ հանելուկներ, որոնցով երեխան պետք է ընտրի ոչ թե մեկ, այլ մի քանի կենդանիներ... օրինակ, բերել բոլոր նրանց, ովքեր ապրում են անտառում, ովքեր ապրում են թռչնաբնում, անասնաբակում, ովքեր ապրում են ցուրտ երկրներում, ովքեր ապրում են տաք երկրներում և այլն։

Այսպիսի հետաքրքիր հանելուկներ կարելի է նախապատրաստել և բույսերով նկարների համար, օրինակ, բերել այն, ինչ բուսնում է անտառում, դաշտում, պարտեզում։ Բերել այն, ինչից եփում են մուրաբա, պատրաստում են չիր, ինչից պատրաստում են փունջ և այլն։

Երեխայի փնտրելու միջոցին դաստիարակը մնացած երեխաների հետ կամացուկ քննարկում է, թե ինչպիսի նկարներ պետք է ջոկել՝ հանելուկը լուծելու համար։ Երբ հանձնարարությունը կատարված է, երեխաները ստուգում են և կարող են ծափահարել նրան, ով ճիշտ է կատարում հանձնարարությունը։

Մեծ երեխաների համար կան մի շարք հետաքրքիր, ուրախ տպած խաղեր ևս, որոնք իրենց կանոններով միանգամայն նրանց հասկանալի և մատչելի են։

Երբ երեխաները յուրացնում են որևէ խաղի կանոնները, հետագայում նրանք խաղում են արդեն ինքնուրույն, առանց դաստիարակի։

Դաստիարակը պետք է խրախուսի երեխաների ինքնուրույն խաղերը և աննկատելի կերպով օգնի նրանց հարկավոր դեպքերում։

ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ, ԾԵՓ ԵՎ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐ ԶԱՆԱԶԱՆ ՆՅՈՒԹԵՐՈՎ

Ամեն մի դաստիարակ լավ գիտե, թե ինչ հաճույքով են երեխաները պատրաստում զանազան նյութերից խաղալիքներ,—

նկարում են, ծեփում, կարում տիկնիկների համար հագուստ: Այդ պարապմունքները երեխաների մեջ զարգացնում են հնարամտություն, խելամտություն, ճաշակ դեպի զանազան ձևերը և գույները: Երեխաները սիրում են թղթի վրա նկարել մատիտներով և ներկել, գույներն ընտրելով ըստ իրենց ճաշակի: Պատրաստելով խաղալիքը՝ երեխան մտածում է՝ որքան կարելի յե լավ հարմարեցնել մեկ մասը մյուսին, ինչպես պատրաստել խաղալիքը, որ նա լինի դիմացկուն: Տարվելով ծրագրածի իրականացումով՝ երեխան ձգտում է գործը հասցնել մինչև վերջ, հաղթահարում է փոքր դժվարությունները, որոնք պատահում են նրա աշխատանքի ընթացքում: Սա երեխաների մեջ զարգացնում է հաստատակամություն:

Այս զբաղմունքների համար բնությունը տալիս է հարուստ նյութեր: Զբոսանքների, էքսկուրսիաների ժամանակ դաստիարակը երեխաների ուշադրությունն է դարձնում դեպի բնության և շրջապատող կյանքի մեջ յեղած հետաքրքիրն ու գեղեցիկը: Երեխաները դիտում են բեռնատար ավտոմեքենան, որը կանգ է առել կոլտնտեսության պահեստի առաջ, հավաքում են զանազան գույնի տերևներից փնջեր, դիտում են, թե գարնանը ինչպես է գետի վրա շարժվում սառույցը, դիտում են արևի տակ փայլփլող լճակները և նոր աճող կանաչը: Բայց և ինչպիսի՜ հետաքրքիր տպավորություններ են ստանում երեխաները նույնիսկ տնից հեռու չգնալով: Ահա բակում փայլփլուն փետուրներով և կարմիր կատարներով աքլորները և հավերը... Ահա հայրը լծում է ձին, դցելով նրա վրա անհրաժեշտ սարքը... Գարնանը երեխաներին ուրախացնում են բադերի և հավերի ճուտերը, որոնք դեղին գնդակների նման ցրված են տան առաջ: Գրավելով երեխաների ուշադրությունն այդ ամենի վրա, դաստիարակը զարգացնում է նրանց դիտողականությունը և հարցասիրությունը: Նա երեխաների համար ընթերցում է հետաքրքիր գրքեր և ցույց է տալիս նկարներ:

Իրենց տպավորությունները տեսածի ու լսածի մասին երեխաներն արտահայտում են նկարելու և քանդակելու միջոցով, թղթով և ուրիշ նյութերով կազմակերպած զբաղմունքների մեջ: Երեխաները սիրում են նկարել ու քանդակել այն, ինչով նրանց երևակայությունը ամենից շատ է զբաղվում, ինչ նրանց առանձնապես հետաքրքրում է: Նրանք պատրաստ են անվերջ ներկայացնել կարմիր-բանակայիններ, մյուսները—սավառնակ, ուրիշները—բնության գեղեցիկ տեսարաններ: Դաստիարակը

օգտվում է այս զբաղմունքներից, որպեսզի ընթացք տա երեխաների հետաքրքրությանը, լայնացնի նրանց մտահորիզոնը:

Նկարչություն

Դաստիարակը պետք է հիշի, որ նախադպրոցական հասակի երեխաներն այնպես չեն նկարում, ինչպես մեծերը: Նրանք միանգամից չեն սկսում կենդանիներ, մարդիկ, առարկաներ պատկերացնել: Ամենափոքրիկ երեխաներն սկզբնական շրջանում թղթի վրա միայն խազմզում են մատիտով և ներկ քսում: Այնուամենայնիվ այդ զբաղմունքը նրանց համար օգտակար է: Երեխաները ծանոթանում են իրենց անծանոթ նոր նյութերի հետ, զանազան գույների հետ: Մեծին թվում է, թե նկարված են խազիկներ, բծիկներ, իսկ փոքրիկը բացատրում է, որ իր մոտ «թռչուններ են թռչում», «հատապտուղները թափվեցին»:

Ավելի մեծ երեխաների նկարներն ավելի ճիշտ են պատկերում առարկաները և շրջապատի կյանքի երևույթները: Նրանք արդեն նկատում են նկարների թերությունները. «կարմիր-բանակայինը այդպիսի ձի չի ունենում»—ասում է երեխաներից մեկը մյուսին, նկատելով փոքրիկ ձի մեծ ձիավորի տակ:

Որոշ երեխաների մոտ նկարելու ժամանակ առաջ են գալիս դժվարություններ. նրանք չեն կարողանում նկարել այն, ինչ որ իրենք են ուզում: «Ձիու վոտքերը չեն ստացվում», «կարմիր-բանակայինը չի ստացվում», «Ծառեր նկարել չեմ կարողանում»,—գանգատվում են երեխաներն այդպիսի դեպքերում: Հարկավոր է նրանց օգնել: Երեխան ավելի հեշտ կնկարի, յերբ տեսնի, նայի նկարին կամ խաղալիքին: Սակայն հաճախ դա էլ չի օգնում գործին. այդ ժամանակ դաստիարակը ինքը պետք է առանձին թղթի վրա ցույց տա, թե ի՛նչպես են նկարում մի վորևիցե առարկա:

Զբաղմունքների ժամանակ դաստիարակը նայում է՝ արդյո՞ք երեխաները հարմար են նստած թե վոչ, ցույց է տալիս նրանց, թե ինչպես պետք է բռնել մատիտը, վրձինը, ինչպես վերցնել ներկը: Առաջին իսկ օրերից երեխաները սովորում են ճշտապահության: Դաստիարակի ուշադիր վերաբերմունքի շնորհիվ երեխաները շատ շուտ ընտելանում են այն բանին, որ ներկերով նկարչության ժամանակ ձեռքերը և շորերը մնան մաքուր, որ նկարը չլինի անփույթ: Պարապմունքի ժամանակ դաստիարակը վոչ միայն ոժանդակում է երեխաների հանդըս-

տուլթյանը, այլև նա պետք է օգտագործի գրավումնքը նրա հա—
մար, վոր դաստիարակի յերեխաներին, զարգացնի նրանց: Դաս—
տիարակը հոգում է այն մասին, վոր յերեխաների մոտ հետա—
քրքրություն զարգանա դեպի գույնը, դեպի ձևը, դեպի նրանց
բազմազանությունը:

Բերենք մի քանի օրինակներ:

Նախաճաշից հետո յերեխաները նստել են նկարելու: Դաս—
տիարակը տարբեր վերաբերմունք է ունենում այն բանին, թե
ինչպե՛ս և ի՛նչ են նկարում յերեխաները: Նրանցից վոմանք
մտածում են նկարել շատ հետաքրքիր բաներ՝ տրակտորներ,
ձիեր, կարմիր—բանակայիններ: Կարիք չկա նրանց խորհուրդ
տալ ինչ նկարել: Բայց մեծերից մի քանիսին դաստիարակն առա—
ջարկում է վերցնել ավելի շատ գունավոր մատիտներ, կամ
ցույց է տալիս՝ ինչպես սովերագծել, վոր ավելի պայծառ,
ավելի գեղեցիկ լինի: Ուրիշների մոտ նա նկատում է, վոր
նրանց նկարները միօրինակ են, բովանդակությամբ աղքատ են:
Դաստիարակն այստեղ արդեն մոտենում է զգուշորեն: Այդպիսի
դեպքերում լավ է յերեխայի հետ սկսել խոսակցություն նկարա—
ծի մասին. «Ո՞վ է ապրում այս տնակում»,—հարցնում է նա,
տեսնելով տնակը, վորը յերեխան շարունակ նկարում է... և
տան կողքին կարող է յերևալ մարդու կերպարանք. «Սա պա—
պիկն է, նա պետք է կոլտնտեսության բանջարանոցը հսկի»:
«Իսկ վո՞րտեղ է բանջարանոցը»,—շարունակում է խոսակցու—
թյունը դաստիարակը. «Այստեղ, ցանկապատի հետևն է»,—պա—
տասխանում է փոքրիկ աղջիկը, ցույց տալով պատկերած ցան—
կապատը:

Այսպես նկարչությունն առիթ է տալիս, վոր յերեխաները
վերստեղծեն իրենց զանազան տպավորությունները շրջապա—
տից: Դաստիարակը քաջալերում է յերեխային, վորը թղթի վրա
դասավորել է խայտաբղետ կետեր, արել է ինչ—վոր գծեր.
«Ահա, ի՛նչ լավ է նկարել Սուրիկը»,—հավանությամբ ասում է
նա այդպիսի յերեխայի մասին. «Նրա նկարում և՛ կետեր կան, և՛
շրջաններ, և այն էլ ինչքա՛ն բազմազան... գեղեցիկ, դեղին,
կապույտ»:

Փոքրիկ յերեխաներին, վորոնք արդեն փորձում են պատկե—
րել առարկաներ և տալ նրանց անունը, հարկավոր է օժանդակել
այդ ցանկության մեջ, քաջալերելով նրանց, խորհուրդ տա—
լով, իսկ յեթե հարկավոր է՝ նաև օգնելով յերեխային: Ցեվ
այն յերեխաները, վորոնք թղթի վրա միայն խազում են մատի—

տով կամ վրձինով, նույնպես չպետք է մնան առանց դաստիա—
րակի ուշադրության. Նրանցից վոմանց լավ կլինի առաջարկել
ներկ, կամ նոր գույնի մատիտներ, մյուսների մեջ հետաքրք—
րություն առաջացնել նկարի գծերի և կետերի խայտաբղետու—
թյամբ: «Տե՛ս, թե Մարոն ինչ լավ շրջաններ է նկարել...դու էլ
կարող ես այդպիսիները նկարել»,—ասում է դաստիարակն այն
յերեխային, վորի թուղթը լցված է միատեսակ խառնիխուռն
գծերով: «Իսկ Վահանը գիտե կետեր և շրջանիկներ նկարել»,—
ասում է նա մեկ ուրիշ անգամ:

Ցերեխաները նկարում են կամ ամբողջ խմբով, կամ միայ—
նակ, կամ փոքրիկ խմբով—զբաղմունքների կամ խաղերի ժամե—
րին, ըստ ընտրության: Նկարչության համար յերեխաներին տա—
լիս են սև և գունավոր մատիտներ ու ներկեր: Ներկերով նկար—
չությունը հարկավոր է անցկացնել առանձին, մատիտներովը՝
առանձին:

Մեծ յերեխաները նկարում են զանազան թեմաների շուրջը:
Ցերեխաների տպավորությունները զբոսանքից, դաստիարակի
պատմվածքները, ռադիո—հաղորդումը յերեխաների համար,—այս
բոլորը արտացոլվում են նրանց նկարների մեջ: Մեծ յերեխանե—
րի նկարների մեջ պատահում են և՛ գյուղատնտեսական աշխա—
տանքների պատկերներ, բնության պատկերներ և՛ մեր կյանքի
հերոսական դեպքերի մասին, վոր նրանք լսել են պատմվածքնե—
րից: Ցերեխաները նկարների մեջ արտահայտում են իրենց սերը
դեպի մեր ղեկավարները, յերազանքներն այն մասին, թե ինչ
կուզեյին դառնալ, յերբ մեծանան:

Մեծ յերեխաներին ինքը դաստիարակը կարող է մեկ—մեկ
առաջարկել մի վորևիցե բան նկարել: Նրանք ունեն շատ տպա—
վորություններ, ավելի զարգացած կարողություններ, նախա—
ձեռնություն և հաստատակամություն: Նկարչությունն ըստ
առաջադրության օգնում է դաստիարակին՝ ընթացք տալու յերե—
խաների հետաքրքրություններին:

Լավ է յերեխաների հետ անցկացնել դեկորատիվ նկարչու—
թյուն ներկերի միջոցով, թղթից կտրած շրջանները, ժապա—
վենները, գորգիկները զարդարել նախշերով: Մեծ յերեխաներին
կարելի յե տալ նախշազարդելու փայտից, տաշեղներից և այլ
նյութերից պատրաստած իրերը: Ցերեխաներին գեղեցիկ նախ—
շերի հետ ծանոթացնելու համար դաստիարակը նրանց ցույց է

տալիս նախշազարդված ամաններ, գործված յերեսսրբիչներ և ժողովրդական արվեստի այլ առարկաներ։

Յերբ յերեխան վերջացնում է նկարը, դաստիարակն ուշադրությամբ գննում է նրա աշխատանքը, յերբեմն խորհուրդ է տալիս ելի վորոշ բան ավելացնել, ընդգծում է, թե ի՛նչն է առանձնապես հաջող ստացվել, յերբեմն ցույց է տալիս բացերը։

Ամեն մի նկարի տակ նա գրում է յերեխայի անունը և ազգանունը, ամսաթիվը և կարճ գրում է, թե ինչ է պատմել յերեխան իր նկարի մասին։

Դաստիարակը սովորեցնում է յերեխաներին խնամքով վերաբերվել իրենց աշխատանքների հետ, պահել նրանց կարգին։ Դրա համար յերեխաներից յուրաքանչյուրի համար նա պատրաստում է թղթակալ կամ ծրար, տալով նրանց գրավիչ տեսք։ Յերեխաները թանգ են գնահատում փոքրիկ նկարով կամ նախշով գեղեցիկ թղթակալը, վորը պատրաստել է դաստիարակը կամ յերեխաները։ Նրանք խնամքով դասավորում են իրենց նկարները թղթակալի մեջ։ Ժամանակ առ ժամանակ դաստիարակն առաջարկում է յերեխաներին նայել, թե ի՛նչ են նրանք նկարել և ընտրել ամենից հաջողը։

Լավագույն նկարները կարելի յե փակցնել ալբոմում, վորը հետո յերեխաները նայում են։ Դաստիարակն առաջին իսկ օրերից յերեխաներին սովորեցնում է խնամքով վերաբերվել դեպի թուղթը և զբաղմունքների պիտույքները։ Նա հոգում է, վորպեսզի յերեխաները չկեղտոտեն իրենց շորերը և սեղանները, իրենց նկարները, վորպեսզի նրանք իմանան՝ ո՞ւր պետք է հավաքել պատրաստած աշխատանքները և չմոռանան դրա մասին։ Նա յերեխաներին ընտելացնում է՝ զբաղմունքից հետո չթողնել սեղանը չհավաքած, հավաքել մատիտները տուփերի մեջ, լվանալ վրձինները։ Յերեխաների մեջ այդպիսի սովորություններ դաստիարակելուն նպաստում է դաստիարակի անձնական օրինակը։

Ինչպես մյուս զբաղմունքների, այնպես էլ նկարչության համար մեծ նշանակություն ունեն լավ պատրաստած նյութերը, լավ կտրտած թուղթը, լավ սրած մատիտները, հարմար վրձինները։ Թուղթը կտրվում է դպրոցական տետրի յերեսի չափ կամ քիչ նրանից ավելի։

Թուղթը չի կարելի տալ ամբողջ տետրերով։ Յերեխան ստանալով ամբողջ տետրը, կտանի միքանի գծիկ առաջին յերեսի վրա, կշրջի—նորից կանի անփույթ նկար. այդպես մեկ զբաղմունքի ընթացքում նա կարող է օգտագործել համարյա ամբողջ տետրը։ Փոքր յերեխաներին մատիտները և ներկերը հարկավոր է տալ աստիճանաբար. նախ 2—3 գույն, մինչև վոր յերեխաները սովորեն տարբերել նրանց, ճշտորեն օգտվեն նրանցից, հետո արդեն ավելացնել մնացած գույները։

Նկարչության համար յերեխաներին կարելի յե տալ ջրաներկեր, ինչպես և «գուաշ» ներկերը։ Լավ է վերցնել նկարչության համար փափուկ վրձինները, մազի հաստության կամ ավելի բարակ։ «Գուաշը» բացում են ջրում մինչև ջրալի, հում սերի խտություն և գործածում են բացված վիճակում։

Փոքր յերեխաներին ներկի բանկայի հետ տալիս են միքանի վրձին։ Յերեխաները վերցնում են վրձինն այս կամ այն գույնի ներկ ունեցող բանկայից, հետո նորից դնում են իրենց տեղը։ Մեծ յերեխաներին վրձիններ տալիս են ամեն մեկին։ Մեկ ներկով ներկելուց հետո յերեխան լվանում է վրձինը բաժակով ջրի մեջ, թեթև սրբում է շորով, հետո վերցնում է մյուս գույնի ներկը։

Ջրաներկերով օգտվելն ավելի դժվար է, քան բացված ներկերով, դրա համար ջրաներկերը լավ է տալ միայն մեծ յերեխաներին։ Յեթե ջրաներկերը պատրաստվում են փոքրերի հետ զբաղմունք անցկացնելու համար, ապա ներկերը հարկավոր է բանալ բանկայի մեջ յեռացրած ջրով։

Կարելի յե նաև օգտագործել գործվածքներ ներկելու ներկեր։

Ծեփ

Յերբ յերեխաներին տալիս են կավ, նրանք ճմռում են այն, գլորում են գլանիկներ, գնդիկներ, պատրաստում են բլիթներ։ Աստիճանաբար յերեխաներն սկսում են ծեփել ամաններ, բանջարեղեն, մրգեղեն, մարդիկ, կենդանիներ։ Ծեփի, ինչպես և նկարչության մեջ յերեխաները ստեղծագործորեն արտացոլում են այն, ինչի մասին գիտեն, ինչ նրանց հետաքրքրում է։

Մեծ յերեխաների քանդակներն ավելի բազմազան են իրենց բովանդակությամբ։ Նրանք ծեփում են մարդիկ՝ աշխատանքի ժամանակ, կարմիր-բանակայիններ՝ իրենց պոստում, զբաղմունքների ժամանակ, օդաչուներ, տրակտորիստներ, յերեխաներ խաղալիս, զբոսնելիս, կենդանիներ, թռչուններ։ Յերեխա-

ներին յերբեմն հաջողվում է իրենց ծեփով ցույց տալ շարժում, օրինակ, ինչպես տղան սղանում է դահուկներով, ինչպես կարմիր-բանակայինը նշան է բռնում հրացանով: Այստեղ էլ, ինչպես և նկարչության մեջ, յերեխաները տալիս են հեքիաթների բովանդակությունը: Նրանք ծեփում են աղվեսն ու Նապաստակը. աժդահա արջը՝ փոքրիկ տնակի առջևում: Դաստիարակը ցույց է տալիս, թե ինչպես առարկայի առանձին մասերն ամրացնել իրար հետ, ինչպես գլորելով պատրաստել կլոր գնդիկ, ինչպես պատրաստել անիվ: Մասերը միացնելու համար կարելի յե տալ փայտիկներ, բայց շատ բազմազան նյութեր տալ հարկավոր չէ, վորովհետև յերեխաները նրանցով կտարվեն, կդադարեն քանդակել և կսկսեն խաղալ:

Յերբեմն կավը լավ է օգտագործել ուրիշ զբաղմունքներում ևս, բացի քանդակից. օրինակ, նրանով լավ է ամրացնել կաղինը փայտիկների վրա, յերբ յերեխաները բնական նյութերից պատրաստում են խաղալիք—«մարդիկ»: Կավից քանդակած առարկաները կարելի յե յերբեմն չորանալուց հետո ներկել: Ավելի հաջող աշխատանքները կարելի յե վառարանում թրծել, վորպեսզի նրանք չկոտրվեն և նրանցով կարելի լինի ավելի յերկար խաղալ:

Դաստիարակը յերեխաներին սովորեցնում է ակուրատ կերպով վարվել կավի հետ: Յերեխաները սովորում են սեղանը մաքուր պահել: Մինչև քանդակելը նրանք իրենց թևերը քշտում են: Քանդակելիս անհրաժեշտ է սեղանի վրա յերեխաներից յուրաքանչյուրի առաջ դնել տախտակ կամ մոմլաթի կտոր: Աշխատանքը վերջանալուց հետո յերեխաներն իրենց պատրաստած իրերը հավաքում են դարակների վրա կամ պահարանում, կավի մնացորդները թափում են հատուկ ամանի մեջ (տաշտ. մատուցարան), տախտակները դարսում են իրար վրա: Միքանի ավելի մեծ յերեխաներ հենց տեղում լվանում են տախտակները և դարսում իրենց տեղը:

Զբաղմունքներ թղթով

Յերեխաների հետ կարելի յե անցկացնել թղթով բազմազան զբաղմունքներ:

Սկզբում, յերբ յերեխաները դեռևս չեն կարողանում թուղթ կտրել, դաստիարակը նրանց տալիս է թղթից կտրած փոքրիկ շրջանակներ, քառակուսիներ, յեռանկյունիներ: Յերեխաները

դասավորում են դրանք սեղանի վրա, կարող են դրանցով խաղալ, հետո սոսնձով կպցնում են դրանք թղթի վրա—նախշի ձևով: Այդպիսի զբաղմունքները կարելի յե կրկնել ավելացնելով ձևերի քանակը և բազմազանությունը:

Փոքր յերեխաներին տրվում է պինդ թուղթ: Դրանից նրանք կտրում են՝ ինչ վոր ցանկանում են, յերբեմն փակցնում են սոսնձով ուրիշ թղթի վրա, իսկ յերբեմն էլ խաղում են կտրատած ձևերի հետ: Մեծ յերեխաներին դաստիարակը սովորեցնում է յերկտակ ծալելու միջոցով թուղթ կտրելու միքանի ձևեր, վորպեսզի ստացվի, օրինակ, վորևէ նախշ, տերև կամ յերկու կողմից էլ ձկնիկ—իրար նման: Յերեխաները փորձում են թուղթը 4—6 անգամ ծալելու միջոցով կտրել այնպես, վոր ստանան ծաղիկներ, աստղիկներ:

Կտրելու համար յերբեմն տալիս են նույնպես պատրաստի ուրվագծեր: Յերեխաներն ուրվագծերով կտրում են զանազան ֆիգուրներ, ամրացնում են նրանց հենարանների վրա, նկարազարդում են, խաղում են նրանց հետ:

Մեծ յերեխաներին աստիճանաբար սովորեցնում են գունավոր թղթից կտրատել զանազան առարկաներ, կպցնել դրանք թղթի վրա, վորպեսզի ստացվեն ամբողջական նկարներ (ապպլիկացիաներ): Այդպես, օրինակ, կապույտ թղթից կարելի յե կտրել ծով, բաց-կապույտից—յերկինք, շագանակագույնից—շոգենավ, դրոշակը—կարմիր, առագաստը—սպիտակ: Ճիշտ այնպես, ինչպես և նկարչության և ծեփի ժամանակ, դաստիարակը կարող է յերեխաներին տալ առաջադրանք, օրինակ, պատկերել՝ սարից սահնակով իջնելը, կտրել և կազմել նախշեր աստղերից, տերևներից:

Ծանոթություն.— Յեթե դժվար է գտնել վառ գույնի թուղթ, ապա կարելի յե ներկել (այդ մասին տես էջ 127):

Լավ է նույնպես օգտագործել հին ամսագրերի շապիկները, յերբ նրանք ունեն վառ գույներ:

Թղթից ծալելու միջոցով կարելի յե պատրաստել ինքնաթիռներ, թռչուններ, նետեր, պտուտաններ, փուռան և քամու հետ խաղալու այլ խաղալիքներ, նավակներ, տնակներ, ծառեր:

Յեթե մանկապարտեզում մկրատներ քիչ կան, ապա կարելի յե պայմանավորվել ծնողների հետ, վորպեսզի թղթով զբաղմունքների օրերին յերեխաները տնից բերեն իրենց հետ մկրատ: Փոքր յերեխաների համար հարկավոր է ջոկել ավելի փոքր մըկ-

րաներ, վորպեսզի նրանց համար դժվար չլինի բռնել: Մկրատների ծայրերը սուր չպետք է լինեն (կարելի յե մկրատների ծայրերը կլորացնել կոլտնտեսության արհեստանոցում):

Թղթով զբաղմունքներ անցկացնելիս դաստիարակը պետք է ուշադրություն դարձնի մաքրության և ակուրատության վրա: Տեսնելով վոր յերեխան ֆիգուրները սոսնձում է հապճեպ, անկանոն, պետք է յերեխայի մեջ հետաքրքրություն առաջ բերել՝ ավելի կանոնավոր դասավորելու ֆիգուրները, կամ նրա մեջ միտք ծագեցնել՝ նրանցից կառուցել պարզ առարկաներ, որինակ, յեռանկյունուց և քառակուսուց—տնակ տանիքով, շրջաններից և ուղղանկյուններից—վագոններ և այլն:

Այն յերեխաները, վորոնք արդեն վարժվել են մկրատ գործածելու և կտրատելու մեջ, պետք է դաստիարակից ստանան ցուցումներ և խորհուրդներ՝ ինչպես կատարել աշխատանքները, վոր ավելի բարդ և գեղեցիկ ձև ստացվի, յերեխաները կարողանան արտահայտել այն, ինչ նրանց զբաղեցնում է, ինչ նրանք սիրում են:

Յեթե յերեխաները շարունակ կտրում են միայն անձեռոցիկներ, ապա դա սահմանափակում է նրանց միտքը, այդպիսի զբաղմունքները շուտով դառնում են ձանձրալի յերեխաների համար: Դաստիարակը պետք է հսկի զբաղմունքների բովանդակության բազմազանության վրա, յերեխաները մերթ կտրում ու կպցնում են փոքր պատկերներ, նախշերի ձևով, կամ նկարներ են կազմում գունավոր ֆիգուրներից, կամ դասավորում են խաղալիքները, կամ պատրաստում են զարդեր իրենց սենյակի համար:

Զբաղմունքների ժամանակ դաստիարակը ձգտում է յերեխաներին սովորեցնել կտրել ճիշտ և մաքուր, դրա հետ միասին յերեխաների մեջ զարգացնում է կարողություն՝ պատկերել իր մտածածը: Դրան հաճախ խանգարում է հենց իրենց՝ դաստիարակների կողմից պատրաստի շաբլոններով տարվելը, վորոնք յերեխաները յեզրագծում են ու կտրատում: Հարկավոր է սովորեցնել յերեխաներին՝ լինել ավելի ինքնուրույն: Իսկ դաստիարակին հարկավոր է հիշել այն մասին, վոր յերեխաների հնարավորությունները թույլ չեն տալիս անել այնպես, ինչպես դա հաջողվում է մեծերին: Դրա համար հարկավոր է վոչ ուղղել յերեխաների աշխատանքները, վոչ էլ նրանց փոխարեն կատարել աշխատանքների մեծ մասը:

ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐ ԶԱՆԱԶԱՆ ՆՅՈՒԹԵՐՈՎ

Ամառը յերեխաները հաճախ խաղում են ավազի հետ: Նրանք փորում են տունելներ, ջրանցքներ, ճյուղերից և ծաղիկներից ձևավորում են պարտեզներ, տաշեղներից շինում են տնակներ:

Հատապտուղներից յերեխաները շարում են ուլունքներ, ծաղիկներից հյուսում են պսակներ, հավաքում են ծաղկեփնջեր: Աշնանը գույնզգույն տերևներից պատրաստում են գլխարկներ, ոձիքներ, հյուսում են ծաղկեշղթաներ: Բնական նյութերից շատերը կարելի յե պահել ձմեռը ոգտագործելու համար: Լավ է, որինակ, զանազան գույների կավի պաշարներ ունենալ, հավաքել սոճու և կեչու կեղևներ, կոներ, կաղիններ, շագանակներ: Ամեն տեղ լինում են յուրահատուկ նյութեր:

Դաստիարակի հետ գնալով անտառը, բացատը, դաշտը, յերեխաները հավաքում են այն ամենը, ինչ կարող է պետք գալ զբաղմունքների համար: Բերած նյութերը տեղավորվում, դասավորվում են արկղների մեջ և դրվում պահարանը կամ դարակների վրա:

Յերեխաները հետաքրքրությամբ հավաքում են կոներ, համեմատելով դրանք ըստ մեծության, հաշվում են ձողիկները, վերածելով առանձին կապոցների: Սա նպաստում է յերեխաների մեջ առարկաների չափի, թվի պատկերացման զարգացմանը, սովորեցնում է նրանց կարգուկանոն: Այդ պաշարներից յերեխաները պատրաստում են խաղալիքներ, ոգտագործելով նաև այլ նյութեր՝ արկղիկներ, կոճեր, կարտոն, տախտակներ, թուղթ, թել և այլն:

Փայտյա ձողիկներից և կարտոնից կարելի յե պատրաստել շոգեքարշ վագոններով, սոճու կեղևից և փայտիկներից՝ շոգենավ, նավակ, թղթից—ինքնաթիռ, պարաշյուտ, կոներից և կավից—կենդանիներ, թռչուններ, ծառեր:

Մեծ յերեխաների հետ կարելի յե պատրաստել շատ խաղալիքներ:

Փոքրիկ յերեխաները (3—4 տարեկան), իհարկե, դեռևս չեն կարող խաղալիքներ պատրաստել: Նրանց համար ինքը դաստիարակը կարող է պատրաստել խաղալիքներ, կամ նա պատրաստում է մեծ յերեխաների հետ միասին, վորպես նվեր փոքրերին:

Սովորաբար յերեխաները խաղալիքները պատրաստում են ըստ իրենց ցանկության: Մեկը պատրաստում է շոգենավ, մյու-

ը՝ մարդ, յերրորդը՝ սայլ: Բայց յերբեմն էլ կարելի յե բոլոր յերեխաներին առաջարկել պատրաստել միևնույն խաղալիքը, օրինակ, գնացք, նավակ:

Զանազան նյութերով զբաղվելու ժամանակ, ինչպես և նկարչության ու ծեփի ժամանակ, դաստիարակը յերեխաներին մոտենում է վոչ միատեսակ. վոմանց խորհուրդ է տալիս, մյուսներին ցույց է տալիս, թե ինչպես պետք է պատրաստել խաղալիքը լավ, գեղեցիկ, ակուրատ:

Յեթե յերեխան դժվարանում է, դաստիարակն ինքը կարող է պատրաստել խաղալիքի առանձին մասերը:

Օգնելով յերեխային այս կամ այն խաղալիքը պատրաստելու մեջ, դաստիարակը չպետք է ճնշի յերեխաների ինքնուրույնությունն ու հնարամտությունը: Կարևոր է, վոր դաստիարակը ինքը կարողանա պատրաստել այս կամ այն խաղալիքը և խնամքով նախապատրաստվի զբաղմունքներին:

Յեթե նա վաղվա համար նշել է՝ զբաղվել յերեխաների հետ խաղալիքների պատրաստմամբ, ապա նախապես նա պետք է պատրաստի դրա համար զանազան նյութեր՝ թուղթ, կարտոն, տախտակներ, կոճեր, ծղոտ, կոներ, կաղիններ, թելեր, մետաղալար և այլն:

Նյութը հարկավոր է նախապատրաստել այնպիսի քանակությամբ, վոր բավականանա բոլոր յերեխաներին:

ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏԵԼ ԶԱՆԱԶԱՆ ԽԱՂԱԼԻՔՆԵՐ

1. Շոգենավ: *Սոճու կեղևից դանակով կտրվում է շոգենավի ներքին հիմնական մասը: Կեղևի ավելի փոքր կտորից կտրվում է խցիկը: Կլոր ձողիկներից պատրաստում են ծխնելույզները: Այդ ձողիկների ներքևի մասերը սրվում են վորպես ցցիկներ և խրվում են կեղևի յերկու կտորների մեջ, միացնելով նրանց: Կայմերը պատրաստվում են բարակ յերկար ձողիկներից, նույնպես սրված ծայրերով խրվում են կեղևի մեջ: Կայմերի վրա ամրացվում են կարմիր թղթից կամ չթից դրոշակներ:*

2. Գնացք: *Վագոնները պատրաստվում են լուցկու՝ նեղ կողքի վրա դրված տուփերից: Լավ է տուփերը կամ ներկել կամ գունավոր թուղթ փակցնել: Լուսամուտները կտրել մուգ թղթից և փակցնել վագոններին: Անիվները պատրաստվում են կամ կոճերից կամ կարտոնի շրջանակներից, վորոնք ամրացվում են վագոններին:*

Շոգեքարշը պատրաստվում է լուցկու տուփի ներսի մասից: Շոգեքարշի կաթսան պատրաստվում է պինդ թղթից. տուփի յերկարությամբ մի թուղթ օղակաձև կլորացվում է և փակցվում տուփին: Ծխնելույզը պատրաստվում է մուգ թղթից և հագցվում է շոգեքարշի կաթսայի վրա թողած անցքի մեջ: Անիվները պատրաստվում են ճիշտ այնպես, ինչպես և վագոնների անիվները: Վագոնները կարելի յե իրար միացնել թղթի կցիչներով (скрепками), *բարակ մետաղալարերով, թելերով:*

3. Պարաշյուտ: *Բարակ թղթից կամ գործվածքից կտրվում է շրջան: Շրջանը ծալվում է միջից, հետո նորից յերկու անգամ ծալվում է, յեզրերը կտրվում են—հիմա նա ունի հովանոցի ձև: Շրջանի յեզրերից կապում են 8 թել (ասեղի օգնությամբ), բոլոր թելերը կապվում են մեկ հանգույցով, վորին ամրացնում են թեթև բեռ (օրինակ, մի կտոր վոլորած թուղթ, փայտիկ, կարտոնից կտրած մարդ): Գեղեցիկ կլինի պարաշյուտը ներկել զանազան գույների շերտերով: Պարաշյուտները կամ ձգում են վեր, կամ մի բարձր տեղից ցած են թողնում. նրանք վորոշ ժամանակ թռչում են օդում:*

4. Կենդանիներ կոներից: *Յեղևնու կոները իրենց թեփուկներով հիշեցնում են կենդանիներին—վոզնուն, չնիկին, բուին, բադին: Գլուխը, թաթերը, պոչը կարելի յե պատրաստել լավ կավից, մածիկից* (замазка), *մոմից: Փոքր կոներից կարելի յե պատրաստել իշամեղու, մեղու—թևերը սարքելով հասարակ թափանցիկ թղթից: Վոտները պատրաստել մետաղալարից կամ փշերից:*

5. Խոզի ճուտեր կաղիններից: *Թարմ կաղինները լինում են փափուկ, և նրանց մեջ հեշտությամբ կարելի յե հագցնել սրածայր ձողիկներ, լուցկիներ: Այդպես պատրաստում են խոզուկների վոտները, պոչերը, ականջները: Մեծ կաղինը մայր խոզն է:*

6. Շինվածքներ կեչուց: *Կեչու կեղևը լավ ծռվում է, թելով կարվում է, գեղեցիկ գույն ունի: Կեչուց կարելի յե պատրաստել զամբյուղներ, զանազան ձևի դույլեր—թելով կարելու միջոցով: Կեչու իրերը կարելի յե զարդարել փորագրությամբ (մկրատով կտրել յեզրերը) կամ նախշազարդել:*

7. Կահույք տուփերից: *Զանազան ձևի ու մեծության տուփերից կարելի յե տիկնիկների համար պատրաստել բազմազան կահույքներ, օրինակ.*

ա) միացնել իրար 6 հատ լուցկու մեծ տուփեր յերկու շարք,

այնպես վոր նրանք կարողանան բացվել առաջ, Թուղթ կպցնել վերևից, կողքերից և հետևից: Կստացվի հանովի արկղներով կամոդ: Վորպեսզի արկղները հեշտ լինի հանել, կարելի յե նրանց կպցնել հուլունքներ կամ կոճակներ.

բ) յերեք արկղերից—մեկը մեծ, յերկարավուն և յերկուսը փոքր, և մի կտոր ֆաներից կամ կարտոնից կարելի յե պատրաստել բազմոց: Մեծ տուփի կողքերին կպցնել յերկու փոքրիկ տուփեր, իսկ հետևից՝ կարտոն (մեջքը): Բազմոցը ծածկել գեղեցիկ թղթով կամ չթով: Կարելի յե վերցնել հարթ, սպիտակ թուղթ և վրան նկարել նախշեր—շերտիկներ, ծաղիկներ և այլն.

գ) կլոր տուփից և կոճերից կարելի յե պատրաստել կլոր սեղան: Նույն ձևով պատրաստում են զանազան տուփերից—նստարաններ, աթոռներ, մահճակալներ:

8. Հրանոթ: *Կլոր փայտի ձողից, կարտոնից և կարտոնե կամ փայտե յերկու անիվից կարելի յե պատրաստել հրանոթ. անիվները մեխով ամրացնել հրանոթին (կլոր ձողիկին), կարտոնի վրա բանալ անցք և հագցնել հրանոթի փողին:*

Լավ է հրանոթը ներկել կանաչավուն ներկով:

9. Սայլակներ: *Բարակ կլոր գերանից կտրել անիվներ (դա մեծի գործ է): Սայլակը կարելի յե պատրաստել ֆաների արկղերից, կարտոնի խոշոր տուփերից: Սայլակի հատակին ամրացնել փայտիկներ, իսկ փայտիկներին առանցքներ: Առանցքների ծայրերին տեղավորվում են անիվները: Վորպեսզի անիվները պտտվեն, հարկավոր է ծակել, հագցնել առանցքների վրա և ամրացնել մեխով: Սայլակները կարելի յե զարդարել նախշերով, կամ ներկել զանազան գույներով:*

10. Ծառեր: 1) *Յեղևնու և սոճու կոները ներքևից սրել և ոսնձով կպցնել կոճերին: Կոները ներկել կանաչ գույնի (լավ է յուղաներկով):*

2) *Վերցնել մի փունջ ծղոտ, ներքևից ամուր կապել, վերևը թողնելով ցրված և ամրացնել կոճի վրա, ներկելով կանաչ գույնի:*

3) *Կապել մի փունջ կանաչ մամուռ և հագցնել կոճի մեջ:*

ԿԱՐ

Մեծ յերեխաները հաճույքով են զբաղվում տիկնիկների համար չոր կարելով: Նրանց դուր է գալիս զարդարել փոքրիկ գործվածքի կտորները գունավոր կարով: Ինքնագործ սփռոցները և վերմակները յերեխաները գցում են խաղալիքների—սեղանների և մահճակալների վրա: Դաստիարակի ոգնությամբ նրանք ձևում ու կարում են տիկնիկների համար պարզ զգեստներ, նրանց համար պարզ նախշերով ասեղնագործում են գոգնոցներ, թաշկինակներ: Այդ զբաղմունքներն ոգնում են դաստիարակին զարգացնելու յերեխաների ուշադրությունը, աչքաչափը, ճաշակը՝ թելերի և գործվածքների գույներն ընտրելու մեջ:

Յերեխաներն աստիճանաբար սովորում են կատարել ավելի կանոնավոր կար: Նրանք սովորում են մաքուր ձեռներով կար անել: Կարի համար լավ է վերցնել հարթ գործվածք առանց նկարի և գունավոր թելեր: Առաջին շրջանում դա առանձնապես անհրաժեշտ է, քանի վոր կարերը դառնում են ավելի նկատելի: Յերեխաներին տրվող ասեղները պետք է լինեն վոչ շատ բարակ, վոչ ել շատ փոքր: Յերեխաները սովորում են ինքնուրույն կերպով ասեղը թելել, անել հանգույցներ: Կարի նյութերի պաշարները հարմար է պահել արկղիկներում կամ տուփերում: Ասեղների համար դաստիարակը գեղեցիկ կտորից կարում է փոքրիկ բարձիկ և մեջը լցնում չոր թեփով:

Յերեխաների մեջ հետաքրքրությունը դեպի կարը առաջ է գալիս հաճախ տիկնիկներ խաղալիս: Ուշադիր դաստիարակը գիտե, թե յերբ է հարմար ժամանակն այդ զբաղմունքները սկսելու համար: Կարելի յե կարի զբաղմունքներում ընդգրկել փոքրիկ խմբեր, անգամ անհատ յերեխաներին: Սկզբնական շրջանում կլինեն դժվարություններ ասեղով աշխատելիս: Դաստիարակը համբերատար կերպով յերեխաների մեջ առաջ է բերում վստահություն դեպի իրենց ուժերը, բարդ պահանջներ չի ներկայացնում, ոգնում է: Պետք է կարով հետաքրքրել նաև տղաներին: Նրանցից վոմանք կարով չեն հետաքրքրվում, տհաճությամբ են վերցնում ասեղը: Սակայն տղաներին էլ գրավում է տների համար դրոշակ, տիկնիկների համար կարմիրբանակայինների վրան կամ սաղավարտ, տրակտորիստ-տիկնիկի համար՝ նոր շապիկ և ուրիշ զգեստներ կարելը:

Հետզհետե պետք է սովորեցնել յերեխաներին ինքնուրույն կարել իր հագուստի պոկված կոճակը, կամ կրծքակալին ժապավեն կարել:

Ղեկավարելով կարը, դաստիարակը պետք է առանձին հոգատարությամբ հետևի, վորպեսզի յերեխաները նստեն ճիշտ և հարմար, ցածր չկռանան կարի վրա, չմոտեցնեն կարը աչքերին շատ մոտիկ: Անուշադիր վերաբերմունքը դեպի յերեխայի նըս-

տելը, սենյակի անբավականաչափ լուսավորությունը աշխատանքի ժամանակ՝ կարող են հասցնել վատ հետևանքների—յերեխայի տեսողության փչանալուն, նրա իրանի կորացմանը:

* * *

Այսպիսով, սովորեցնելով յերեխաներին նկարչություն, ծեփ, զբաղմունք թղթի և այլ նյութերի հետ, դաստիարակը զարգացնում է յերեխաների մեջ և՛ սեր դեպի գեղեցկությունը, և՛ ստեղծագործական հնարագիտություն, դաստիարակում է հաստատակամություն և ինքնուրույնություն (այնտեղ, վորտեղ հարկավոր է հասնել մտածվածի կատարմանը): Նա յերեխաների մեջ դաստիարակում է աշխատանքի մեջ իրար ոգնելու, ընկերների հաջողություններին ուրախանալու ցանկություն:

Տարբեր նյութերով զբաղվելը, նկարչությունը և ծեփը հարկավոր է անցկացնել թե՛ ամբողջ խմբով և թե՛ առանձին յերեխային տալ նկարելու, ծեփելու կամ իր համար խաղալիք պատրաստելու հնարավորություն:

Դիտելով յերեխաների նկարները, քանդակը, ինքնագործ խաղալիքները, դաստիարակը պետք է կարողանա տեսնել, թե յերեխաները վորքանով են ճիշտ և լավ պատկերում զանազան առարկաները, հաջողվո՞ւմ է նրանց մտցնել հետաքրքիր բովանդակություն, կատարո՞ւմ են արդյոք աշխատանքը կանոնավոր: Նա սովորեցնում է խնամել և պահպանել իրենց աշխատանքները: Դաստիարակը հոգում է նույնպես այն մասին, վոր յերեխաները դառնան ավելի ինքնուրույն՝ զբաղմունքների համար ամեն ինչ նախապատրաստելու և աշխատանքները վերջացնելուց հետո հավաքելու:

Դաստիարակը նախորոք պետք է պատրաստվի զբաղմունքներին, պետք է ունենա անհրաժեշտ քանակով նյութեր և զանազան պիտույքներ, յերբեմն, մեծահասակ յերեխաների համար, պետք է նշի նաև բովանդակությունը: Յեթե զբաղմունքի համար նախատեսված է նոր նյութ, դաստիարակը ծրագրում է, թե ինչպես պետք է սկսել զբաղմունքը, վորպեսզի հետաքրքրեցնի յերեխաներին և ընթացք տա նրանց ստեղծագործությանը: Զբաղմունքների ժամանակ ուշադիր հետևելով յերեխաներին, ստեղծում է նրանց համար անհրաժեշտ հարմարություններ, սովորեցնում է նրանց պահպանել կուլտուր-առողջապահա-

կան կանոնները: Դաստիարակը խորհուրդ է տալիս յերեխաներին, թե ինչպես աշխատանքը կատարել գեղեցիկ, կանոնավոր, բովանդակությամբ բազմատեսակ, չճնշելով յերեխաների ինքնուրույնությունը, ոգնում է նրանց հանդես բերել իրենց հնարամտությունը և խելամտությունը:

ՊՐԱԿՏԻԿ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԴԱՍՏԻԱՐԱԿԻՆ

1. Ինչպես պատրաստել սոսնձաներկ: Սոսնձաներկը փոշի վիճակում գտնվում է կշռով: Հարկավոր է գնել ամենապայծառ գույների ներկեր՝ կարմիր, դեղին, կապույտ, կանաչ, սպիտակ (կավիճ), սև (մուր) 200—400-ական գր. ամեն մեկից: Հարկավոր է գործածել ատաղձագործական կամ դրասենյակային սոսինձ. ատաղձագործական սոսինձը յեռացվում է, դրասենյակայինը՝ լուծվում է տաք ջրում: Ներկը բաց է արվում թիթեղյա ամանում: Մի բաժակի չափ թիթեղյա ամանի մեջ բաց է արվում 3—4 ճաշի գդալ փոշի:

Յեթե ներկը հատիկավոր է, ապա պետք է այն փոշի դարձնել: Լցնել ամանի մեջ հեղուկ սոսինձը, տաքացնել, խառնել, և ահա ներկը պատրաստ է: Նա պետք է մածունի նման լինի:

2. Ինչպես պատրաստել կավը: Ծեփել կարելի յե գորշ, սպիտակ, դեղին կավով: Առանց ավազի խառնուրդի չորացած կավի կտորները դարսում են փայտե կիսատակառիկի կամ ցինկած դույլի մեջ և վրան լցնում ջուր: Յերբ կավը կակղեց, ավելորդ ջուրը թափում են, իսկ կավը խառնում: Ծեփի համար այն կավն է պիտանի, վորը լավ հունցվում է, չի կպչում ձեռքերին և չի փշրվում: Յերեխաներին կավը տալիս են տախտակի վրա, բռունցքի չափ կտորներով: Յեթե յերեխային զբաղմունքի ժամանակ ելի յե հարկավոր կավ, տալիս են լրացուցիչ կտոր: Կավը պետք է պահել հով տեղ, թաց շորով ծածկած:

3. Ինչպես ներկել թուղթը տարբեր գույներով: Վերցվում է անիլինի ներկ, վոր ոգտագործվում է շոր ներկելու համար: Փոշին լցվում է ափսեյի մեջ, խաշվում յեռացված ջրով և խառնվում: Այդ ներկի լուծույթի մեջ իջեցվում են թղթի վոչ մեծ կտորներ և ապա չորացվում պարանի վրա: Չորացրած թղթերը լավ կլինի հարթել տաք արդուկով: Թուղթը ներկում է դաստիարակը:

ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՅԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ

Յերգեցողություն

Յերգը մեծ տեղ է գրավում յերեխաների դաստիարակման գործում: Յերեխաները շատ են սիրում լսել յերգեր, իրենք նույնպես սիրում են յերգել:

Յերգեցողությունը յերեխաների տրամադրության վրա շատ մեծ ազդեցություն է գործում, դարձնում է նրանց ուրախ, աշխույժ: Յուրաքանչյուր մայր գիտե, վոր յերբ ծծկեր մանուկը լալիս է, ապա բավական է նրան մի վորևե ուրախ յերգ յերգել, և յերեխան դադարում է լաց լինելուց, ծիծաղում է և թռչկոտում:

Հանգիստ յերգով կարելի յե յերեխաներին հանգստացնել, աշխույժ յերգով՝ ուրախացնել:

Յերգեցողության շնորհիվ զարգանում է յերեխայի լսողությունը և խոսքը: Շատ յերեխաներ վորոշ հնչյուններ վատ են արտասանում, մինչև անգամ յերբեմն աղավաղում են բառերը: Յերգելիս բառերը վանկ-վանկ արտասանելով, յերեխան սովորում է ճիշտ արտասանել:

Պետք է հետևել, վոր յերեխաները յերգելիս չգոռան: Բարձր ձայնով յերգելիս յերեխաները լարում են իրենց թույլ ձայնալարերը, վորով կարող են իրենց վնասել: Ինքը դաստիարակը չպետք է բարձր յերգի, վորովհետև յերեխաները ընդօրինակում են դաստիարակին: Յերեխաների հետ հարկավոր է յերգել ավելի ցածր, նրանց համար տոնով: Յերեխաները չեն կարող այնպես բարձր յերգել, ինչպես մեծերը:

Յերգը սովորեցնում է յերեխաներին սերտորեն համախմբված յերգել, նա կազմակերպում է, համախմբում է նրանց:

Յերգի ընտրությունը: Ամառը, յերբ յերեխաներն առանձնապես հետաքրքրվում են կենդանիներով, թռչուններով, ծաղիկներով, կարելի յե նրանց սովորեցնել յերգեր ծաղիկների, պտուղների, կենդանիների մասին և այլն: Յերբեմն կարելի յե յերգը կապել պատմվածքի հետ, որինակ, յերեխաները լսել են պատմվածք Կարմիր բանակի մասին և նրանք հաճույքով սովորում են պարտիզանական և կարմիր-բանակային յերգեր: Գալիս է մայիսի 1-ը—պետք է յերեխաներին սովորեցնել մայիսմեկյան յերգ: Յերբեմն յերգերը կարելի յե կապել յերեխաների խաղերի հետ:

Յերեխաները հաճախ լսում են մեծերի յերգը, արագ սովո-

րում են նրանցից յերգել: Լավ յերգերի հետ միասին նրանք հաճախ սովորում են տարբեր տեսակի յերգեր, քառյակներ՝ անհամապատասխան բովանդակությամբ: Յերեխաները յերգում են այդ յերգերը, վորովհետև ուրիշ յերգեր չգիտեն:

Դաստիարակը պետք է այդպիսի յերգերի և քառյակների փոխարեն սովորեցնի մանկական կամ ժամանակակից հեղափոխական յերգեր, վորոնք յերեխաներին շատ են դուր գալիս:

Դաստիարակի նախապատրաստվելը: Ընտրելով յերգը, դաստիարակը պետք է լավ սովորի յերգի յեղանակը (մոտիվը) և հաստատ իմանա խոսքերը: Պետք է մտածվի և վորոշվի, թե ինչպես կատարել յերգը—տխուր, թե՞ ուրախ, դանդաղ, թե՞ արագ, վորտեղ յերգել կամաց և վորտեղ բարձր:

Դաստիարակը չպետք է մոռանա, վոր ինչքան ինքը լավ յերգի, ազդեցիկ յերգի, այնքան շատ դուր կգա յերգը յերեխաներին, նրանք ավելի շուտ և լավ կսովորեն, այնքան ավելի լավ կյերգեն այդ յերգը:

Յեթե դաստիարակը վատ գիտե յեղանակը և խոսքերը, յերեխաները նրանից աղավաղված և սխալ կսովորեն յերգը, իսկ աղավաղված յերգը փչացնում է յերեխայի լսողությունը:

Դաստիարակը պետք է յերգել սովորի և յերգերի անհրաժեշտ պաշար ձեռք բերի դասընթացների, սեմինար պարապմունքների, յերգեցիկ խմբակի, ռադիոյի, պատեֆոնի միջոցով:

Ինչպես անցկացնել յերգը: Վորպեսզի յերեխաները լավ, միասին յերգեն, հարկավոր է նրանց համար ստեղծել համապատասխան պայմաններ: Յերգի ժամանակ նրանց հարկավոր է նստեցնել նստարանների, աթոռների կամ խոտի վրա—կիսաշրջան կամ միքանի շարք, այնպես, վոր տեղը նեղ չլինի, հարմար լինի նստելու: Յերբ յերեխաները լսում կամ յերգում են, նրանք ցանկանում են նայել դաստիարակին և տեսնել, թե ինչպես է նա յերգում: Դրա համար դաստիարակը պետք է նստի յերեխաների դիմաց, յերեսը նրանց դարձրած, վորպեսզի յերեխաները կարողանան տեսնել նրա դեմքի արտահայտությունը, շրթունքների շարժումները և լսել բառերի վորոշակի և պարզ արտասանումը:

Դաստիարակը, նստեցնելով յերեխաներին, աշխատում է հետաքրքրեցնել նրանց նոր յերգով. կրճատ պատմում է նոր յերգի բովանդակությունը կամ հաղորդում է յերգի անունը:

Ստեղծելով յերեխաների մեջ տրամադրություն, դաստիարակը սկսում է յերգել: Վերջացնելով յերգը, նա կարող է կարդալ

յերգի ամբողջ տեքստը: Ապա նորից է սկսում յերգել, և յերեխաներն սկսում են ձայնակցել նրան: Յերկու—յերեք անգամից ավելի նոր յերգը չարժե յերգել, վորովհետև յերեխաները հետզհետե յեն յուրացնում այն: Յեթե պատահում են դժվար բառեր, վորոնք յերեխաները սխալ են արտասանում, պետք է այդպիսի բառերն առանձին կրկնել յերեխաների հետ:

Չի հանձնարարվում յերեխաներին յերգը սովորեցնել պատեֆոնի ոգնությամբ. յերեխաներն ավելի լավ են ըմբռնում յերգը՝ լսելով դաստիարակի ձայնը. բացի դրանից, դաստիարակը պատեֆոնի հնչյունների աղմուկում կդժվարանա լսել, թե վորքանով են յերեխաները ճիշտ յերգում: Յերգը սովորելուց հետո յերեխաները կարող են յերգել պատեֆոնի նվագի տակ. այդ ժամանակ դաստիարակը պետք է հետևի, վոր յերգը չկատարվի չափազանց բարձր կամ արագ: Դրա համար պատեֆոնը ունի կարգավորիչ:

Նոր յերգը սովորեցնելուց հետո դաստիարակը կրկնում է յերեխաների հետ նրանց ծանոթ յերգերից մեկ—յերկուսը:

Յերբ յերեխաները լավ են սովորել և յուրացրել յերգը, կարելի յե այդ յերգը տարբեր ձևերով կատարել: Վերցնենք, որինակ, «Շուտով կգա կանաչ գարուն» յերգը: Սկսում են յերգել բոլոր յերեխաները, ապա «Ջան, ջան» յերգում են մի խումբ յերեխաներ, հետո մյուս խումբը, իսկ հետո բոլոր յերեխաները միասին յերգում են կրկներգը, «սար ու ձորեր կծաղկեն», կամ մի քառյակ յերգում է յերեխաների մեկ խումբը, մյուս քառյակը —յերկրորդ խումբը: Այս յերգը կարելի յե անցկացնել և շարժումներով:

Սկզբնական շրջանում, յերբ յերեխաները դեռ քիչ յերգեր գիտեն, կարելի յե նրանց սովորեցնել ամսական 3—4 նոր մատչելի յերգ:

Յերգեցողության պարապմունքները պետք է կարճատև լինեն, վոր յերեխաները չհոգնեն: Մեծահասակ յերեխաները կարող են յերգել մոտավորապես 7—10 րոպե: Վորպեսզի յերգողները հանգստանան, ամբողջ խմբի յերգին հաջորդում է առանձին խմբերի, առանձին յերեխաների, դաստիարակի յերգը: Մի պարապմունքի ժամանակ շատ յերգեր չպետք է յերգել: Ավելի լավ է մեկ—յերկու յերգ կրկնել:

Շատ կարևոր է, վորպեսզի յերեխաները սիրեն յերգել, և յերգը հաճախ հնչի մանկական հրապարակում: Դրա համար դաստիարակը պետք է հաճախ յերգի յերեխաների հետ:

Սակայն յերգելու համար պարտադիր չէ յերեխաներին միշտ նստեցնել շրջանաձև կամ շարքերով: Յերբեմն կարելի յե յերգել խաղի ժամանակ, նկարներ դիտելու ժամանակ, պատմվածք պատմելուց հետո, ամառային զբոսանքի ժամանակ: Յերգել կարելի յե ամեն որ, միայն ուտելուց վոչ անմիջապես հետո, վորպեսզի մարսողությունը չխանգարվի:

Յերաժշտական ունկնդրություն: Բացի յերգը լսելուց, յերեխաները սիրում են լսել, յերբ ծանոթ յերգերը կատարվում են մի վորևէ յերաժշտական գործիքով (դաշնամուրով, ջութակով, գարմոնով, բայանով, թառով, քյամանչով կամ պատեֆոնով): Այդպիսի ունկնդրությունը շատ ոգտակար է, դա հարստացնում է յերեխայի լսողությունը, զարգացնում է յերեխաների մեջ սեր դեպի յերաժշտությունը:

Յերաժշտական գործիքներով կարելի յե կատարել վոչ միայն յերգեր, այլև ուրիշ յերաժշտական յերկեր, ինչպես, որինակ, քայլերգ, պար: Յերաժշտական յերկը պետք է ընտրել հմտորեն: Յերաժշտությունը պետք է լինի պարզ և յերեխայի ըմբռնողության համար մատչելի:

Յեթե դաստիարակը ցանկանում է պատեֆոնով յերեխաների համար յերգ նվագել, ապա նա պետք է նախորոք լավ ծանոթանա պլաստինկային և գիտենա այն յերգի խոսքերը, վոր ցանկանում է նվագել յերեխաների համար:

Դաստիարակը չպետք է հոգնեցնի յերեխաներին յերաժշտության յերկարատև ունկնդրությամբ: Հաճախ յերեխաները մեկ պարապմունքի ընթացքում լսում են շատ նոր պլաստինկաներ, կամ ծանոթ պլաստինկաները միքանի անգամ: Այդպիսի դեպքերում յերեխաների մեջ կորչում է հետաքրքրությունը դեպի յերաժշտությունը, նրանք հոգնում են:

Սկզբներում, յերբ յերեխաները դեռ չեն վարժվել յերաժշտություն ունկնդրելուն, շատ չպետք է նրանց ծանրաբեռնել. ավելի լավ է նվագել մեկ—յերկու յերգ և ապա պարել: Նոր յերգ հարկավոր է տալ միայն մեկը, բայց թույլ տալ լսել յերկու—յերեք անգամ, վորպեսզի յերեխաներն ավելի լավ ըմբռնեն: Հետագայում յերեխաները կարող են լսել ավելի շատ յերգեր և յերաժշտական պիեսներ:

Այնտեղ, վորտեղ կա ռադիո, կարելի յե լսել ռադիոհաղորդումներ նախադպրոցական հասակ ունեցող յերեխաների համար: Յերաժշտությունը կարելի յե հաջորդափոխել պատմվածք պատմելով, պարով և այլն:

Շարժումներ նվագի և յերգի տակ: Վորոշ յերգերի տակ հարմար ե քայլել, մյուս յերգերի տակ՝ պարել, իսկ կան և այնպիսի յերգեր, վորոնք հաջող կերպով կապվում են խաղի հետ: Որինակ՝ «Փոքրիկ յերաժիշտը» յերգը կրկնվում ե, ընտրելով նոր և նոր յերաժիշտ: Շատ ավելի լավ ե յերգն ու պարն անցկացնել պատեֆոնի նվագի տակ, իսկ յեթե հրապարակն ունի պլատինկաներ—և՛ քայլերգով, և՛ պարերգերով—որինակ—«Յաբլոչկո», շալախո, կաբարդինկա,—ապա կարելի յե անցկացնել «Յեղիր ուշադիր» խաղը:

Յերեխաները նստում են աթոռների վրա: Դաստիարակն ասում ե յերեխաներին. «Դուք նվագից կամ յերգից պետք ե իմանաք, թե ի՛նչ պետք ե անեք—քայլեք, թե՞ պարեք (այնպես, ինչպես յես եմ ձեզ ցույց տվել կամ ինչպես դուք եք ցանկանում): Յերբ յերաժշտությունը վերջանա, դուք պետք ե նստեք՝ վոր աթոռին ուզեք, միայն թե դա պետք ե անեք արագ, վոր առանց տեղի չմնաք»: Դաստիարակը պատեֆոնով նվագում ե քայլերգ: Յերեխաները քայլում են մեկը մյուսի հետևից: Այդ ժամանակ դաստիարակն աննկատելի կերպով վերցնում ե աթոռներից մեկը: Քայլերգի առաջի մասը վերջանալուց հետո դաստիարակը բարձրացնում ե ասեղը պլատինկայի վրայից—նվագը դադարում ե, բոլոր յերեխաները վազում են տեղ գրավելու աթոռների վրա: Նրան, ով մնում ե առանց տեղի, յերեխաներն ասում են՝ « Վանիկ, Վանիկ, մի թմբի, դե շուտ արա, տեղ գտի»: Ապա պատեֆոնը նվագում ե «Յաբլոչկո» պարը և նվագի տակ յերեխաները պարում են: Յերաժշտությունը վերջանալուն պես բոլորը վազում են իրենց տեղերը: Հետո, հանգստի համար, նորից քայլերգ են նվագում և վերջում՝ նվագ ազատ պարի համար: Նախավերջին նվագի սկզբում դաստիարակը վերցրած աթոռը դնում ե իր տեղը, և խաղը վերջանում ե «առանց թմբողի»:

Շատ հաճախ պարերգի ժամանակ յերեխաների մեջ ցանկություն ե առաջանում հորինել ինքնուրույն շարժումներ: Դաստիարակը դիտելով հորինած շարժումները, գովում ե այն շարժումները, վորոնք պարզ են, ոգտակար են յերեխաների համար և համապատասխանում են նվագին: Յեթե, որինակ, հանգիստ յերաժշտության ժամանակ յերեխաները թռչկոտում են, հասկանալի յե, վոր այդպիսի շարժումները չեն համապատասխանում յեղանակին, և դաստիարակը պետք ե նկատի յերախաներին, վոր հանգիստ նվագի յեղանակի տակ պետք ե հորինել ուրիշ ավելի հանգիստ շարժումներ, և ընդհակառակը, ուրախ, բարձր յեղանակի տակ կարելի յե թռչկոտել և այլ ուժեղ շարժումներ կատարել:

Ոգտագործել պատեֆոնը լավ ե վոչ միայն յերաժշտություն, խաղ կամ պար անցկացնելիս, այլ և տոնակատարությունների ժամանակ:

Դաստիարակը պետք ե խնամքով վերաբերվի պլատինկաների հետ և նրանք պահի կանոնավոր:

1. Գործածելուց առաջ պետք ե սրբել պլատինկայի փոշին փլանելով:

2. Պլատինկան պետք ե պահել չոր տեղ, անպայման ծրարի կամ թղթի մեջ ուղղաձիգ դրությամբ (կողի վրա):

3. Ասեղները պետք ե փոխել պլատինկայի յուրաքանչյուր կողմը նվագելուց հետո:

Յեթե դաստիարակն այս կանոնները պահպանի, ապա պլատինկաները կպահպանեն հնչյունի մաքրությունը և ճշտությունը յերկար ժամանակ:

Յերաժշտական խաղալիքներ: Լավ յերաժշտական խաղալիքներ են՝ մաքուր լարած քսիլոֆոնը փայտե թիթեղիկներով, ծընծղաները—մետաղյա թիթեղիկներով և նույնպես դափն ու թըմբուկը:

Ծնծղաների և քսիլոֆոնների վրա դաստիարակը լողությամբ կարող ե նվագել մանկական յերգեր, ուրախ ժողովրդական մելոդիաներ: Հետզհետե յերեխաները լսելով և դիտելով դաստիարակի նվագը, իրենք ել կսովորեն նվագել լողությամբ: Չպետք ե ստիպել յերեխաներին նվագել այդ խաղալիքների վրա: Ով վոր ցանկանում ե յերեխաներից, նա ել կնվագե: Դաստիարակը պետք ե ոգնության հասնի յերեխային, յերբ սա խառնում ե մելոդիան և չի կարողանում գտնել այն թիթեղիկը, վորին պետք ե հարվածի:

Դափն ոգտագործում ե դաստիարակը: Նա զրնգացնում ե յերեխաների վազքի ժամանակ, խփում ե՝ քայլքի և պարի ժամանակ:

Թմբուկն ազատ ոգտագործում են յերեխաներն իրենց խաղերում: Յերբ մի քանի յերեխաներ կսովորեն նվագել նրա վրա, կարելի յե թմբուկն ոգտագործել քայլերգի ժամանակ, որինակ, «Կարմիր բանակ», «Պիոներներ» խաղերում, կանգնեցնելով առաջին շարքում այն յերեխաներին, վորոնք կարող են թմբուկ խփել:

ՅԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՅԵՐԿԵՐԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ՑՈՒՑԱԿ

ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

խոսք Ա. Շայքոնի

1. Քայլենք սիրով լի,
Ժիր ու թրթռուն,
Մեր հայր Ստալինի
Ծաղկունք վառվռուն:

Գոչում ենք, գոչում,
Ձայնով մենք արի,
Ողջույն, բյուր ողջույն
Մեր առաջնորդին:

2. Առաջ, դեպ առաջ,
Լինենք կենսուրախ,
Լինենք աննահանջ,
Ամուր և խիզախ:

Գոչում ենք, գոչում
Ձայնով մենք արի,
Ողջույն, բյուր ողջույն
Մեր առաջնորդին:

ՋԱ՜Ն, ԿԱՐՄԻՐ ՄԱՅԻՍ

խոսք Ա. Շայքոնի

1. Ջա՜ն, կարմիր մայիս,
Ազատ ու անահ,
Խնդության ամիս,
Ե՛կ, մեզ մոտ մնա:

Գալիս ես վորպես
Անվանի մի հյուր,
Մտնում ես հանդես
Դրոշակներով բյուր:

2. Ջա՜ն, կարմիր մայիս,
Ազատ ու անահ,
Խնդության ամիս,
Ե՛կ, մեզ մոտ մնա:

Զարդարում ես դու
Ե՛վ գյուղ, և՛ քաղաք,
Մտնում ամեն տուն
Ու ամեն մի բակ:

3. Ջա՜ն, կարմիր մայիս,
Ազատ ու անահ:

ՓՈՔՐԻԿ ՅԵՐԱԺԻՇՏԸ

1. Տես, Արմիկն է գալիս,
Յերաժիշտն է գալիս.
Դե շուտ, Արմիկ, նվագի,
Վոր մեր խումբը լավ պարի:

2. Արմիկը դադարեց
Ու իր տեղը նա կանգնեց,
Դե յեկեք, մենք ծափ տանք, ծափ,
Ահա այսպես՝ ծափ, ծափ, ծափ:

ԲԵՐՔԻ ՏՈՆ

Յերաժշտ. Միք. Միրզոյանի

1. Բերքի տոն, ջա՜ն, բերքի տոն,
Աշխատանքի, գովքի տոն,
Բերքի տոն, ջան, հե՛յ բերքի տոն,
Աշխատանքի, գովքի տոն:

2. Հոկտեմբերիկ ընկերներ,
Հոկտեմբերից ձեզ նվեր.
Բերքի տոն, ջա՜ն, հե՛յ բերքի տոն,
Աշխատանքի գովքի տոն:

3. Յերգենք, գովենք այգի, բաղ,
Ծառապտուղ ծառից կախ.
Բերքի տոն, ջա՜ն, հե՛յ բերքի տոն,
Աշխատանքի, գովքի տոն:

ԾՈՒՂՐՈՒՂՈՒ

խոսք Ղ. Աղայանի

1. Ծուղրուղու, աքլորը գիլ
Կանչեց թառին չիկ, չիկ, չիկ.
Զարթնեց մըթնում ծիտը ծառին
Ճի՜կ, ճի՜կ, ճի՜կ:

2. Ծուղրուղու, աքլորը գիլ
Կանչեց թառին չիկ, չիկ, չիկ.
Նստեց նանը տեղի միջին
Վո՜ւյ, վո՜ւյ, վո՜ւյ:

3. Ծուղրուղու, աքլորը գիլ
Կանչեց թառին չիկ, չիկ, չիկ,
Նախիրն արդեն հանդը տարան
Հո՛, հո՛, հո՛:

ԾԱՂԿԱՁՈՐ

Խոսք Կորյունի

1. Այնքա՛ն ծաղիկ, այնքա՛ն բույր,
Այնքա՛ն առվակ ու աղբյուր,
Այնքա՛ն գետեր քչքչան,
Ջան Ծաղկաձոր, ջանե-ջան։

2. Ծաղկաձորում ծաղկախաղ,
Թմբուկ, նվագ, յերգ ու պար,
Զով իրիկուն, թեժ խարույկ,
Մենք և՛ առողջ, և՛ առույգ։

1. Այնքա՛ն ծաղիկ, այնքան բույր,
Այնքա՛ն առվակ ու աղբյուր,
Այնքա՛ն գետեր քչքչան,
Ջան Ծաղկաձոր, ջանե-ջան։

ՇՈՒՏՈՎ ԿԳԱ

Խոսք Սեփ-Սարի

1. Շուտով կգա կանաչ գարուն,
Սար ու ձորեր կծաղկեն։
Ջա՛ն, ջա՛ն, ջա՛ն, ջա՛ն,
Ջա՛ն, ջա՛ն, ջա՛ն, ջա՛ն,
Սար ու ձորեր կծաղկեն։

2. Ետ կդառնան նախշուն հավքեր,
Գարնան գովքը կերգեն։
Ջա՛ն, ...
Ջա՛ն, ...
Գարնան գովքը կերգեն։

3. Բույն կշինեն դաշտում, այգում,
Ձվեր կածեն բներում։
Ջա՛ն, ...
Ջա՛ն, ...
Ձվեր կածեն բներում։

4. Ձագ կհանեն նախշուն, սիրուն
Իրենց փափուկ տներում։
Ջա՛ն, ...
Ջա՛ն, ...
Իրենց փափուկ տներում։

ՈՒՐԱԽԱՑԻՐ, ԻՄ ԾԻՏԻԿ

Խոսք Մատինյանի

1. Ուրախացիր, իմ ծիտիկ,
Եվ վոստոստի վիտ-վիտիկ.
Գարուն յեկավ մեզ համար,
Ծաղիկ բերեց անհամար։

2. Դադար չունիս, իմ ծիտիկ,
Եվ վոչ հանգիստ ու տիտիկ.
Գարնան պայծառ որերին
Ամբողջ որը ճյուղերին։

3. Եվ չենք խփի քեզ քարով,
Թեկուզ մնաս դու տարով.
Եվ չենք ձեռք տա քո բնին,
Մեջը թառած ձագերին։

ՏԻԿՆԻԿ

Խոսք Ա. Գեվորգյանի

1. Տիկ-տիկ-տիկ, սիրունիկ,
Նախշուն, խելոք իմ տիկնիկ.
Տես, տես, տես իմ յերես, ծի՛կ,
Տես, տես, տես իմ յերես, ծի՛կ։

2. Վեր-վեր-վեր, հաց տամ կեր,
Վեր, չուտ հավիր քո չորեր.
Չիկ-չիկ-չիկ, տուր պաչիկ, չի՛կ,
Չիկ-չիկ-չիկ, տուր պաչիկ, չի՛կ։

3. Լա-լա-լա, իմ բալա,
Թռիր, թռչենք, ել մի լա,
Ջան-ջան-ջան, հոգի ջան, ջա՛ն,
Ջան-ջան-ջան, հոգի ջան, ջա՛ն։

ՋԱՆ, ԱՇՈՒՆ

Խոսք Հ. Հայրապետյանի

1. Ջան, ջան, ջան, աշուն է,
Տես-տես-տես, նախշուն է.
Անուշ մրգեր ուտելու
Նա մեզ այգի յե կանչում։

2. Ջան, ջան, ջան, աշուն է,
Տես, տես, տես, նախշուն է.
Տանձ ու խնձոր ուտելու
Նա մեզ այգի յե կանչում։

3· Ջան, ջան, ջան, աշուն է,
Տես, տես, տես, նախշուն է·
Նուռ, սերկևիլ ուտելու
Նա մեզ այգի յե կանչում։

4· Ջան, ջան, ջան, աշուն է,
Տես, տես, տես, նախշուն է·
Դեղձ ու խաղող ուտելու
Նա մեզ այգի յե կանչում։

ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԾԱՆՈԹԱՑՈՒՄԸ ԲՆՈՒԹՅԱՆԸ

Ամառը յերեխաները բնության մեջ շատ հետաքրքիր բաներ են տեսնում։ Վորքա՞ն մեծ ուրախություն, բավականություն է պատճառում նրանց զբոսանքը դեպի անտառ, դաշտ, մարգագետին, այգի։ Դաշտում, այգում անհամար ծաղիկներ կան, խոտերի մեջ թռչկոտում են ճպուռներ, գորտեր, յերգում են թռչուններ։ Անտառում, պարտեզում կչկչում է փայտփորիկը, ծառից-ծառ են թռչկոտում թռչունները։

Ահա և հասան մրգերը՝ թութը, ծիրանը, խաղողը, ընկույզը...

Դաստիարակը պետք է պահպանի յերեխաների հետաքրքրությունը դեպի բնությունը, սովորեցնի դիտել կենդանիներին, բուսականությունը, խնամել նրանց։ Ահա անտառում, դաշտում հանդիպեցին մրջնոցի։ Դաստիարակն առաջարկում է յերեխաներին դիտել, թե ի՛նչ են մրջյունները տանում մրջնոց։ Յերեխաները նստում են և ուշադիր դիտում։ «Իսկ վաղը մենք կբերենք և կդնենք մրջնոցի մոտ շաքարի և մսի կտորներ։ Հետաքրքիր է, ի՛նչ կանեն նրանց հետ մրջյունները»,—ասում է դաստիարակը։ Այսպես նա հրահրում է յերեխաների ուշադրությունը մրջյունների կյանքը դիտելու ժամանակ և չի թողնում, վոր ավերեն մրջյունների բները։

Դաշտում, այգում, մարգագետնում դաստիարակը հրավիրում է յերեխաների ուշադրությունը բնության գեղեցկության վրա, սովորեցնում է նրանց տեսնել գեղեցիկը։ Ծաղկերի ընթացքում դաստիարակն առաջարկում է յերեխաներին ճանաչել ծանոթ ծաղիկները նրանց հոտով, հրավիրում է նրանց ուշադրությունը ծաղիկների տարբեր գույների վրա· յերեխաների հետ միասին լսելով ծանոթ թռչունների յերգը, սովորեցնում է ձայնով և տեսքով տարբերել թռչուններին—սարյակ, ճնճղուկ, կաչաղակ, սոխակ և այլն։ Այդ ամենն օգնում է յերեխաներին ճիշտ պատկերացում ունենալու բնության մասին, զարգացնում է նրանց տեսողությունը, լսողությունը, հոտառությունը, ճաշակելիքը, շոշափելիքը և այլն։

Դաստիարակը կազմակերպում է յերեխաներին՝ խնամելու կենդանիներին՝ հավերին, հավի ճուտերին, ձկնիկներին և ուրիշ կենդանիներին, բանջարանոցի և ծաղկանոցի բուսականությունը։ Նա հետևում է, վորպեսզի յերեխաները ժամանակին կերակրեն կենդանիներին, չմոռանան նրանց ջուր տալ, ջրեն ծաղիկները։

Յերեխաները սովորում են հոգատար վերաբերվել կենդանիներին, չխրտնեցնել, չվախեցնել նրանց, հոգատար վերաբերվել բուսականությանը, չպոկել տերևները, խակ պտուղները, չկոտրել ճյուղերը։

Դաստիարակը լինում է յերեխաների հետ դաշտում աշխատանքի ժամանակ, գոմում, ֆերմայում, հավանոցում և այլն։

Յերեխաները դիտում են, թե ինչպես կոլտնտեսուհիներն ուշադիր խնամում են կովերին, խոզերին և մյուս կենդանիներին ու հավերին, տեսնում են, թե ինչպես են աշխատում դաշտում մեքենաները, ինչպես է տրակտորիստը ղեկավարում տրակտորը, թե ինչպես են ցանում և մշակում ցորենի, բամբակի արտերը, ի՛նչպես են մշակում ու խնամում խաղողի այգին։

Դիտելով յերեխաների հետ բնության յերևույթները, կոլտնտեսային աշխատանքները, դաստիարակը յերեխաների մեջ զարգացնում է հետաքրքրություն դեպի բնությունը, տալիս է նրանց ճիշտ պատկերացում տեսածի մասին, դաստիարակում է յերեխաների մեջ հարգանքի զգացմունք դեպի աշխատանքը, հոգատար վերաբերմունք դեպի կենդանիները և բուսականությունը։ Միևնույն ժամանակ նա կոնկրետ օրինակների վրա մատնանշում է վորոշ սխալ պատկերացումները բնության յերևույթների մասին, խոսում է նախապաշարումների վնասակարության մասին, օգնում է ազատվելու դրանցից։ Օրինակ, գորտի դիտումը և խնամքը բնագիտական անկյունում օգնում է յերեխաներին ազատվելու անհիմն զզվանքից և վախից դեպի գոզոշները, գորտերը։ Յերեխաները կտեսնեն, վոր գորտից, գոզոշից գորտնուկ չի առաջանում, վոր գորտերն ուտում են վնասակար միջատներին՝ ճանճերին, մոծակներին, կողինջներին և այլն։ Նրանք կիմանան, վոր լորտուկը չի կծում, վոր նա լեզուն է հանում, և վոչ

թե խայթոցը: Դաստիարակը կարող է դիտել յերեխաների հետ, թե ինչպես է թրթուրը թիթեռնիկ դառնում, շերեփուկը—գորտ, ինչպես է շերամի վորդն անցնում իր զարգացման—կերպարանափոխման շրջանները:

Յերեխաների հետաքրքրությունը դեպի բնությունը զարգացնելու, նրանց ճիշտ պատկերացումներ տալու համար, դաստիարակն ոգտագործում է տարբեր միջոցներ և ուղիներ՝ խաղ, զբոսանք, նկարների դիտում, պատմում, զրույց և այլն: Խաղալով ավազի, քարերի, կոների և բնական այլ նյութերի հետ, յերեխաները տեսնում են, վոր ավազը փշրվում է, վոր քարն ամուր է և այլն: Վորոշ խաղերում յերեխաներն իրենց շարժումները և ձայները նմանեցնում են կենդանիների շարժումներին ու ձայներին: Զբոսանքի ժամանակ դաստիարակը յերեխաների դիտումներին ուղղություն է տալիս, որինակ, հրավիրում է նրանց ուշադրությունն այն բանի վրա, թե ի՛նչպես է ծիծեռնակը շինում իր բույնը, ի՛նչպես է նա կերակրում իր ձագերին: Կենդանիներին խնամելիս առաջարկում է նայել՝ ի՛նչպես են նրանք ուտում, ինչպես են թռչկոտում, վազում:

Նույնպես հարկավոր է, վոր դաստիարակը պատմի, գրքեր կարդա յերեխաներին, ցույց տա նկարներ, վոտանավորներ արտասանի, յերգեր յերգի, հանելուկներ ասի կենդանիների, բուսականության, բնության յերևույթների (ամպերի, անձրևի, ջրի) մասին, ծանոթացնի յերեխաներին այն կենդանիների, բույսերի հետ, ինչ վոր յերեխաները հնարավորություն չունեն տեսնելու, որինակ, արջի, փղի, կապիկի, բամբակի և այլն: Այս ամենը բարձրացնում է յերեխաների հետաքրքրությունը դեպի բնությունը:

Պետք է յերեխաներին հնարավորություն տալ նկարելու, ծեփելու և թղթից կտրտելու մկրատով այն, ինչ վոր նրանք տեսել, դիտել են բնության մեջ:

Սարքել տեղամասում փոքրիկ մանկական բանջարանոց, ծաղկանոց, բնագիտական անկյուն: Յերեխաների վոչ բարդ զբաղմունքների ժամանակ բանջարանոցում, ծաղկանոցում (ցանք, ջրում, բանջարեղենի հավաք և այլն) յերեխաները կտեսնեն՝ ինչպես սերմերից ծլում ու ծաղկում են բույսերը, ինչպես է աճում բանջարեղենը: Յերեխաները շատ գոհ կմնան, վոր «իրենք» աճեցրին բանջարեղենը, ծաղիկները: Նրանք կպահպանեն այն, ինչ վոր միասին են աճեցրել: Ընդհանուր հետաքրքրու-

թյունը, խաղերը և զբաղմունքը ծաղկանոցում, բանջարանոցում համախմբում են յերեխաներին, զարգացնում են նրանց մեջ ընկերականությունը:

Ամառը համարյա ամբողջ ժամանակ յերեխաներն անց են կացնում բաց ոդում: Շատ հետաքրքիր խաղեր և դիտումներ կարելի յե անցկացնել նրանց հետ հենց նույն տեղամասում: Յերեխաները շատ են սիրում խաղալ ավազի, ջրի և քամու հետ. նրանք չոր ավազը մաղում են, խոնավ ավազից քանդակում, կառուցում են, սարքում են անասնաբակ, ծաղկանոց և այլն:

Կարելի յե ցույց տալ յերեխաներին՝ ինչպես նկարել և գծագրել զանազան նկարներ ավազի վրա, ոգտագործելով կեղևներ, մամուռ և այլն: Որինակ, տունը կառուցել քարերից, կտուրը՝ մամուռից, կամ ծառի բունը սարքել կեղևից, իսկ տերևները՝ մամուռից:

Ջրի հետ խաղալու համար դաստիարակը բակ է դուրս բերում տաշտակներ, լագաններ: Յերեխաներին տրվում են լողացող խաղալիքներ: Նրանք բաց են թողնում նավակներ, տախտակներ, նետում են ջրի մեջ փոքրիկ քարեր: Այստեղ բադիկներ են լողում, այնտեղ մեծ շոգենավ և այլն: Յերեխաներն այդ խաղերի ժամանակ տեսնում են, թե ինչպես են վորոշ առարկաներ լողում, իսկ մյուսները՝ սուզվում:

Քամի որերը դաստիարակն առաջարկում է յերեխաներին խաղալ զանազան խաղալիքների հետ, վորոնք շարժվում և պտտվում են քամուց: Տալիս է յերեխաներին թելերից կապված փետուրներ, զանազան պտտվող խաղալիքներ—թռչուններ, ծաղիկներ, ջրաղացներ, դրոշակներ: Յերեխաները վազում են դրանց հետ կամ կանգնում են քամու դեմ: Նրանց դուր է գալիս, յերբ փռալով պտտվում են փետուրները, ինչպես արագ-արագ պտտվում են ֆռռիկները: «Քամի կա,—ասում են յերեխաները,—դրա համար էլ պտտվում է»:

Մեծահասակ յերեխաների հետ դաստիարակը պատրաստում է զանազան ձևերի խաղալիքներ,—ֆռռիկներ, նետեր, աղավնիներ, պարաշյուտներ, ջրաղացներ:

Հետաքրքիր է յերեխաների ուշադրությունը դրավել հողմի վրա, վորը լինում է ամպրոպից առաջ,—ինչպե՞ս է նա սյունաձև բարձրացնում փոշին, ինչպե՞ս է որորում ծառերը, կռացնում մինչև գետին թփերը:

Ամպրոպը մեծ ազդեցություն է թողնում յերեխաների վրա,

վոմանք վախենում են նրանից, լաց են լինում, թաքնվում են: Փակելով լուսամուտները, դաստիարակը հավաքում է բոլոր յերեխաներին իր շուրջը, կայծակի ամեն փայլատակումից հետո նա զգուշացնում է յերեխաներին, վոր հիմա կգոռան ամպերը (սովորաբար յերեխաները շատ են վախենում ամպի գոռոցից): Հանգիստ և անվրդով պահելով իրեն—նա դրանով իսկ հանգստացնում է յերեխաներին: Գրավում է նրանց ուշադրությունը անձրևի վրա, վորը ծեծում է կտուրը, ինչպես է վերածվում հեղեղի, ինչպես համարյա մթնում է օրը և վերջապես ինչպես հետզհետե դադարում է ամպրոպը:

Ամպրոպից հետո կարելի յե դուրս գալ պատշգամբ, նայել յերեխաների հետ, թե ինչպե՛ս թարմացել է խոտը, ինչպիսի՛ լճակներ են գոյացել շրջակայքում:

Մեծահասակներին կարելի յե ընթերցել Լ. Տոլստոյի պատմվածքը տղայի մասին, վորն ամպրոպի յեր հանդիպել անտառում: Կարելի յե ընթերցել վոտանավոր ամպրոպի մասին: Կարելի յե ցույց տալ գեղարվեստական նկար «Յերեխաները փախչում են ամպրոպից»:

Հետաքրքիր վոտանավորներ, պատմվածքներ կարելի յե ընթերցել, պատմել յերեխաներին բնության և այլ յերևույթների մասին․ անտառի, առվակի, դաշտի, ծաղիկների, թռչունների մասին:

Յերեխաների ուշադրությունը գրավում են զանազան միջատներ՝ թիթեռնիկներ, ճպուռներ, բզեզներ: Կարելի յե բռնել միքանի տարբեր թիթեռնիկներ, դնել բանկայի մեջ, բանկայի մեջ դնել բաժակով մի փունջ ծաղիկ (մեխակ, զանգակիկ), ափսե՝ շաքարաջրով: Յերեխաները կդիտեն թիթեռնիկները, կտեսնեն, թե ինչպես են նրանք նստում ծաղիկների վրա, ծծում ոշարակը, իսկ դրանից հետո դաստիարակը բաց է անում բանկան: Թիթեռնիկները թռչում են—յերեխաները հետաքրքրությամբ հետևում են նրանց թռիչքին:

Յերեխաների հետաքրքրությունը զարգացնելու և դեպի թռչունները հոգատար վերաբերմունք դաստիարակելու համար, դաստիարակն առաջարկում է յերեխաներին տեղամասի հարմար տեղում թափել հացի փշրանքներ և հատիկներ: Դիտում է յերեխաների հետ, թե նրանց վրա թռչող ճնճղուկները, աղավնիները ի՛նչպես են կտցում հատիկները, ի՛նչպես են ծվլում ճնճղուկները, ինչպե՛ս են ղուղունում աղավնիները: Վորտեղ հնարավոր է, դիտում են սարյակներին, ծիծեռնակներին, թե ինչպես են նրանք կերակրում ձուտերին, ինչպես է յերգում սարյակը, ինչպես են ծվլվում ծիծեռնակները: Մեծահասակ յերեխաներին կարելի յե ընթերցել պատմվածքներ թռչունների մասին:

Յերեխաների համար շատ հետաքրքրական է մանկական բանջարանոցը և ծաղկանոցը: Վորոշ աշխատանքներ բանջարանոցում և ծաղկանոցում մատչելի յեն յերեխաներին․ փոքրիկ մարգերի և ծաղկաթմբերի ջրումը, խոտի տեղափոխումը մանկական սայլակներով քաղհանից հետո և այլն:

Ծաղկաթմբերը կամ մարգերը սարքում են տարբեր ձևերի—կլոր, յեռանկյունաձև, հնգաթև աստղի ձևով:

Կարելի յե յերեխաների հետ ցանել ծաղիկների և բանջարների սերմեր, տնկել պոմիդորի, բադրիջանի, կաղամբի և այլ սածիլներ:

Բանջարանոցը հարկավոր է սարքել արևոտ տեղում և վորտեղ հողը լավ է, ջուրը մոտ:

Բանջարանոցը պետք է լինի վոչ մեծ, մոտավորապես 45—30 մ²: Մարգերի բարձրությունը—20—15 սմ., նրանց յերկարությունը—2—2½ մ., լայնությունը—65—70 սմ.: Տարածությունը մարգերի միջև մոտավորապես, 60 սմ.:

Ծանոթություն: Մարգերի բարձրությունը հարկավոր է փոփոխել, յելնելով տեղական պայմաններից․ շատ խոնավ և ճահճային տեղերում մարգերի բարձրությունը պետք է հասնի մինչև 25 սմ, չոր և արևոտ տեղերում մարգերը սարքում են գետնին հավասար:

Տնկելու համար պետք է այնպիսի բանջարեղեններ ընտրել, վորոնք արագ են հասնում և մեծ խնամքի պահանջ չեն զգում—սոխ, սխտոր, սալաթ, բողկ, կոտեմ, ռեհան, սամիթ: Յեթե հրապարակը բացվել է ապրիլին—մայիսին, կարելի յե ցանել գազար, բազուկ, բողկ, տնկել վարունգ, կաղամբ, դդում: Առաջին փորը կատարում են մեծերը, յերկրորդ փորին մասնակցում են մեծահասակ յերեխաները, դրա համար նրանց տրվում են փոքրիկ բահեր և փոցխեր:

Դաստիարակը կարող է յերեխաներին բաժանել յերկու խմբի: Մի խումբը խաղում է, մյուսը մարգեր է սարքում, ապա փոխվում են:

Յերբ մարգերը պատրաստված են, կարելի յե յերեխաների հետ սոխ և լոբի տնկել: Դաստիարակը նշում է փոսիկները սոխի կամ լոբու համար: Յերեխաները նստում են թմբի կողքե-

րին: Թմբի վրա դրվում են 2—3 ախոռներ՝ մեջները սերմ լցրած, յերեխաները դնում են սերմերը փոսիկների մեջ, դաստիարակը ցույց է տալիս, թե ինչպես նրանց ծածկել հողով:

Մեծահասակ յերեխաները կարող են մարգերը, թմբերը ջրել դաստիարակի հետ միասին: Յերբեմն կարելի յէ թույլ տալ փոքրահասակներին ջրել մարգերը և ծաղկաթմբերը․ այդ դեպքում դաստիարակը մեծահասակ յերեխաներին ներգրավում է աշխատանքի․ նրանք ջուր են լցնում ցնցուղների մեջ, իսկ փոքրիկները ջրում են:

Դաստիարակը հետևում է ծիլերին, մեծահասակներին մասնակից է դարձնում այդ դիտմանը, ծիլերը ցույց է տալիս փոքրահասակներին, յերբեմն և իրենք փոքրահասակները ճանաչում են սոխի, լոբու ծիլերը:

Դաստիարակը հետզհետե ամառվա ընթացքում ծանոթացնում է յերեխաներին բանջարանոցի բույսերի հետ․ «Ահա սա բազուկ է, տեսեք, ինչպիսի տերևներ ունի»:

Յերբ մարգերը և ծաղկաթմբերը քաղհանում են, յերեխաները հաճույքով մոլախոտը կրում են պատգարակներով, տանում են սայլակներով նախորոք պատրաստված տեղ: Իսկ ի՞նչպիսի հաճույքով են փոքրահասակների խմբի յերեխաները մասնակցում բանջարահավաքին: Ահա բողկը հանելու՝ ժամանակն է: Դաստիարակն առաջարկում է հողից հանել այն, ցույց է տալիս յուրաքանչյուրին, թե վոր բողկը կարելի յէ հանել:

Մարգերը դիտելու ժամանակ յուրաքանչյուր առավոտ յերեխաները նկատում են վոչ միայն բանջարանոցային բույսերի ծիլերը, այլև մոլախոտերը—ինչպիսիք են յեղինճը, դանդուրդանը, պատատուկը, նեպուկը և այլն:

Յերեխաները հաճույքով քաղհանում են խոտը, բայց պետք է հետևել, վոր յերեխաները չհոգնեն, վորի համար և քաղհանել թույլ պետք է տալ 5 րոպեյից վոչ ավելի:

Դաստիարակը ցույց է տալիս ինչպես բռնել բույսը, վորպեսզի այն արմատով հանել:

Մեծահասակների խմբի յերեխաները կարողանում են լավ տարբերել բանջարեղենն ըստ իրենց տերևների, պտուղների: Կարելի յէ հանելուկներ ասել յերեխաներին բանջարեղենի մասին, առաջարկել նրանց, վոր իրենք ել հանելուկներ հնարեն: Առաջարկել նրանց փակել աչքերը և հոտառությամբ ճանաչել սոխը, ռեհանը, պղպեղը, կոտեմը, պոմիդորը, սամիթը և այլն:

Փոքրահասակների հետ նույնպես կարելի յէ խաղալ բանջարները ճանաչելու խաղը, որինակ, դաստիարակը բերում է տոպրակով բանջարեղենը (կարտոֆիլ, գազար, բազուկ, սոխ, պոմիդոր, բադրիջան), առաջարկում է յերեխային ձեռքով բռնել տոպրակի ներսում վորևե բանջար և ձեռքը տոպրակից չհանելով ասել՝ ի՞նչ է բռնել ձեռքում:

Դաստիարակը կարող է հրավիրել նրանց ուշադրությունը բանջարեղենի գույնի վրա (բազուկի, գազարի, բողկի, վարունգի, դդումի և այլն):

Ծաղկանոցում դաստիարակը յերեխաների հետ դիտում է ծաղիկները, առաջարկում է գտնել զանազան գույնի ծաղիկներ:

Մեծահասակ յերեխաների հետ կարելի յէ հավին թուխս դնել, նրանք թուխսին կկերակրեն, ջուր կտան, կդիտեն հավի առաջին ճուտերին: Իսկ յերբ թուխսը առաջին անգամ ճուտերին դուրս է բերում տեղամաս, դաստիարակը կանչում է փոքրիկներին նայելու նրանց՝ ինչպես են նրանք թաքնվում հավի թևերի տակ, ինչպիսի քնքույշ փետուրներ ունեն նրանք իրենց վրա, դեղնավուն են:

Մեծահասակ յերեխաները խնամում են նրանց,—կերակրում են, ջուր են տալիս և այլն:

Ժամանակ-առժամանակ նրանք միասին մաքրում են հավերի բունը (տնակը): Դաստիարակը յերգում է յերեխաների հետ յերգեր, սովորեցնում է վոտանավորներ, առաջարկում է հանելուկներ․ որինակ՝ «Ջրում ժամերով մնաց, Ջրից յելավ չթրջված» (սագ․ բադ): «Ժամացույց չէ, բայց առավոտը զարթեցնում է» (աքլոր):

Յերբեմն յերեխաների հետ կարելի յէ կերակրել կատվին, շանը և այլ ընտանի կենդանիներին:

Դաստիարակը յերեխաների համար գրքեր է կարդում ընտանի և վայրի կենդանիների մասին, պատմում է նրանց մասին, առաջադրում է յերեխաներին, վոր նրանք ել պատմեն իրենց գիտցածը:

Զբոսանքներ

Դաստիարակը յերեխաների հետ անց է կացնում տարբեր տեսակի զբոսանքներ դեպի անտառ, դաշտ, մարգագետին, այգի:

Նախքան յերեխաներին մի վորևե տեղ զբոսանքի տանելը,

դաստիարակը ինքը պետք է գնա այնտեղ, ստուգի՝ արդյոք հեռու չէ՞ ճանապարհը, հարմա՞ր է արդյոք յերեխաների համար, արդյոք շատ զառիվայր չէ՞ սարը, խոնա՞վ է տեղը, թե վոչ և այլն: Տեղում տեսնել՝ ի՞նչ բուսականություն, ի՞նչ անասուններ կարող են այնտեղ հանդիպել յերեխաները: Հարկավոր է, վոր ինքը նախորոք տեսնի ծաղիկները, ծառերը, թռչունները, վորոնք այնտեղ կպատահեն, իմանա նրանց մասին գրքերից, ուսուցչից, վորպեսզի ճիշտ պատասխանի յերեխաների հարցերին:

Զբոսանքը մեծահասակ յերեխաների հետ պետք է անցկացնել մանկհրապարակից վոչ հեռու քան 1 կմ, փոքրահասակների հետ—վոչ հեռու քան ½ կմ: Զբոսանքի ժամանակ անհրաժեշտ է հնարավորություն տալ յերեխաներին մեկ-յերկու անգամ հանգստանալու: Ավելի լավ է զբոսնել, յերբ շոգն ընկնում է, կեսօրից հետո—ժամը 5-ին և, յեթե շոգ չէ, նախաճաշից հետո:

Դաստիարակը նախորոք պետք է պատրաստի այն ամենը, ինչ հարկավոր է զբոսանքի համար: Օրինակ, յերբ նախատեսվում է զբոսանքի ժամանակ հավաքել մամուռ, կեղև, կոն, կաղին,—ապա պետք է վերցնել տոպրակներ կամ զամբյուղներ: Յեթե գնում են գետը, պետք է վերցնել՝ դույլեր, ցնցուղներ, բահեր—ավազի հետ խաղալու համար և այլն[1]:

Զբոսանքի ժամանակ պետք է հետևել, վոր յերեխաները հեռու չգնան և մոտ գտնվեն դաստիարակին. տուն վերադառնալիս պետք է պարտադիր կերպով ստուգել բոլոր յերեխաների ներկայությունը: Այսպիսի եքսկուրսիաների ժամանակ պետք է դաստիարակի հետ լինեն նաև մեկ-յերկու հոգի:

Զբոսանքից հետո մանկհրապարակում յերեխաները պետք է հանգստանան, իսկ հետո նրանց հետ դասավորել զբոսանքում հավաքած նյութերը՝ ծաղիկները դնել ջրի մեջ, տերևները դասավորել չորանալու համար:

Յերեխաներն առանձնապես սիրում են գնալ մարգագետին՝ ծաղիկ քաղելու, անտառը և այգին՝ միրգ և հատապտուղ հավաքելու: Ծաղիկներից յերեխաներն իրենց ճաշակով ծաղկեփնջեր են կազմում, հյուսում են պսակներ:

Դաստիարակը խորհուրդ է տալիս, թե ինչպես գեղեցիկ

1 Դեպի գետը կամ լճակը դաստիարակը միայն այն ժամանակ է յերեխաներին եքսկուրսիա տանում, յերբ գետը կամ լճակը խոր չեն և ափերն էլ զառիվայր չեն, իսկ հատակն ավազոտ է:

փունջ կազմել, ինչպիսի ծաղիկներ ընտրել ծաղկեփնջերի համար: Այդպես դաստիարակը զարգացնում է յերեխաների ճաշակը, ոգնում է տեսնելու գեղեցիկը, տարբերել ծաղիկների հոտը, գույնը:

Յերբեմն լավ կլինի յերգեր յերգել, վոտանավորներ արտասանել: Կարելի յե զբոսանքի ժամանակ մանկհրապարակի ծաղկանոցը փոխադրելու համար ծաղիկներ հավաքել (արմատով հանել). օրինակ՝ վայրի մեխակ, յերիցուկ, զանգածաղիկ: Դաշտում զբոսնելիս լսել արտույտի յերգը, նշել, վոր բոլոր թռչունները յերգում են ճյուղի վրա նստած, իսկ արտույտը յերգելիս թռչում է բարձր ոդի մեջ: Մարգագետնում բացի ծաղիկներ հավաքելուց, կարելի յե դիտել ծղրիդներին, մեկին-յերկուսին վերցնել բնության անկյան համար:

Յերբ այգում հավաքում են մրգերը, յերեխաները համեմատում են ծիրանը դեղձի հետ, սալը կեռասի հետ և այլն:

Կարելի յե հողից հանել մորու, մալինայի միքանի թփեր և տեղափոխել տեղամաս տնկելու համար:

Անտառում կարելի յե միքանի փոքրիկ յեղևնիներ արմատով հանել, մամուռ հավաքել և տեղամասում անտառի անկյուն կազմակերպել: Անտառում կարելի յե մողեսներ, գորտեր դիտել, լսել ինչպես է կանչում կկուն, ինչպես է թխթխկացնում փայտփորը:

Դաստիարակը յերեխաների հետ անտառում կամ մարգագետնում կազմակերպում է խաղեր՝ տափկնոցի, ոգտագործելով թփերը և ծառերը՝ տափկենալու համար, շարժական խաղեր, հանելուկ խաղեր՝ ծաղիկները, ծառերը ճանաչելու, թռչունների, բզեզների և անտառի այլ բնակիչների ձայները գտնելու, վորոշելու վերաբերյալ և այլն:

Շատ կարևոր նշանակություն ունեն կրկնակի զբոսանք-եքսկուրսիաները դեպի միևնույն տեղը, բայց տարբեր ժամանակներում: Զբոսանքը դեպի դաշտը, օրինակ, անց է կացվում, յերբ կանաչում է ցորենը, յերբ նա հասնում է, և հունձի ժամանակ դեպի մարգագետինը—մինչև խոտհունձը, յերբ շատ են ծաղիկները, խոտհունձի ժամանակ և խոտհնձից հետո. խաղողի այգին—յերբ նա նոր է հողի տակից հանված, յերբ արդեն տերևներ է տվել ու ծաղկել, յերբ խաղողը դեռ չի հասել և խաղողի հասած ժամանակ:

Նույնը կարելի յե անել և բամբակի արտի, բոստանի նկատմամբ և այլն:

Կարելի յե եքսկուրսիա կազմակերպել դեպի գետը, լճակը, վորսալ լողաբզեզներ, ձկնիկներ, շերեփուկներ բնության անկյան համար:

Գետում հավաքել քարեր, խեցիներ, ավազ, խաղալ գետափում ավազի մեջ (լճակներ, շինություններ սարքել և այլն):

Լավ է այցելել անասնաբակը՝ կովերը կթելու ժամանակ, գնալ հանդը՝ անասունները ջրելիս և այլն:

Այդ բոլոր զբոսանքները հարուստ նյութ են տալիս յերեխաների խաղերի համար, խոսքի զարգացման, նկարչության և ծեփի համար:

Ահա մի օրինակ, թե ինչպես է անցկացրել դաստիարակը զբոսանքը դեպի անտառ մեծահասակ յերեխաների հետ: Զբոսանքից առաջ նա պայմանավորվել է յերեխաների հետ, վոր նրանք անտառում հեռու չեն վազվզելու, և հենց վոր նա նրանց կանչի, անմիջապես կհավաքվեն: Մտնելով անտառը, յերեխաները վազեցին դեսուդեն. յերեխաների մի մասը վազում եր կտրած ծառաբների վրայով, մի մասը սունկեր գտավ, վոմանք գտան հատապտուղներ: Տալով յերեխաներին ժամանակ ազատ վազվզելու անտառի յեզրում, դաստիարակը հավաքեց բոլորին և առաջարկեց ավելի հեռու գնալ—յեղևնիների մոտ, վորտեղ նա առաջուց տեսել եր սարդի շատ վոստայններ: (Նա նկատել եր, վոր մի քանի յերեխաներ վախենում են սարդերից, իսկ մյուսները դիտմամբ քանդում են սարդոստայնները): Սարդի վոստայնում վոչ վոք չկար: Դաստիարակն առաջարկեց վորոնել սարդին, ձեռք չտալով վոստայնին: Գտան նրան թաքնված վոստայնի մի անկյունում: Դաստիարակը բարակ ճողիկով զգուշորեն շոշափում է նրան: Սարդը արագ շարժվում է վոստայնով: «Կարծես թե թոկի վրայով է քայլում»,—ասում են յերեխաները: Դաստիարակը մեկ էլ է շոշափում նրան, սարդը անսպասելի, արագորեն ցած է իջնում: «Ընկավ, ընկավ»,—միաձայն խոսեցին յերեխաները: Դաստիարակը նորից է դիպչում և սարդը արագ բարձրանում է վեր: Յեվ միայն այդ ժամանակ յերեխաները նկատեցին, վոր սարդը կախված եր վոստայնի վրա: «Իսկ սարդը չի՞ կծում, ապա շոշափեք ձեռքով»,—ասում է Սերյոժան դաստիարակին: Դաստիարակը շոշափում է սարդին ձեռքով: «Դուք նրանից չե՞ք վախենում»,—հարցնում է Զինան, վորը շատ է վախենում սարդերից: Դաստիարակը ասում է, վոր նա սարդերից չի վախենում,

վոր այդպիսի սարդերը չեն կծում: Յերեխաների խնդրանքով նա սարդին հատապտուղ է մոտեցնում. սարդը չի ուտում: Հետո նա ցույց է տալիս յերեխաներին վոստայնն ընկած ճանճին. «Իսկ ահա ճանճ նա ուտում է: Յեկեք զգուշությամբ հեռանանք, վոր չքանդենք վոստայնը»: Դրանից հետո յերեխաները սունկեր և ծաղիկներ հավաքեցին: Վերադարձից առաջ դաստիարակը յերեխաներին առաջարկեց քիչ նստել-հանգստանալ: Նստելով յերեխաները սկսեցին ջոկել և դասավորել իրենց հավաքած սունկերն ու ծաղիկները: Ուրախ և զվարթ յերեխաները վերադարձան տուն:

Բնության անկյուն

Պարապմունքները և դիտումները բնության անկյունում կապվում են այն զբաղմունքների և դիտումների հետ, վորոնք տարվում են տեղամասում, զբոսանքում, եքսկուրսիաներում:

Այսպես, անկյուն են բերում ծաղիկներ մարգագետնից, դաշտից, անտառից, բերում են թփեր: Յերեխաները հիշում են ծաղիկների անունները, դասավորում են նրանց ըստ գույների. ջրում են բույսերը, ամեն օր փոխում են ջուրը ծաղկամաններում, փոխարինում են թառամած ծաղիկները թարմ ծաղիկներով, հետևում են, վոր անկյունը միշտ լինի մաքուր և գեղեցիկ:

Անկյունում հետաքրքիր է դիտել շերամի վորդերին, թե ինչպես են նրանք տերև ուտում, ինչպես հարսնյակ են դառնում (շրջապատելով իրենց մետաքսաթելի տնակով), և ինչպես բոժոժներից թիթեռներ են դուրս գալիս:

Այդ նույնը յերեխաները կարող են դիտել և առանձին վերցրած թրթուրի վրա, վորին կարող են պահել առանձին բանկայում (թրթուրների համար այս բանկաները պետք է լինեն ապակյա, վորտեղ տերևներ են գցում. տերևները պետք է փոխել ամեն օր. բանկաները մաքրվում են նույնպես ամեն օր):

Թրթուրներին տրվում են այն բույսերի տերևները, վորոնց վրա նրանց գտել են յերեխաները: Թրթուրները վերցվում են կաղամբի կամ պտղատու ծառերի վրայից, ինչպես և շերամի վորդերը—թրթուրները:

Ջուր լցրած ապակյա բանկայում կարելի յե տեղավորել լողվորդ բզեզին (հետը չպետք է ձկներ լինեն, վորովհետև նա ձկներին կվոչնչացնի), կերակրել անձրևորդով, մսի կտորներով. ջուրը պետք է փոխել, չկերած մթերքը դուրս թափել:

Կարելի է ունենալ նաև առանձին ապակյա բանկա, որտեղ ջրի մեջ կպահվեն տարբեր տեսակի ձկնիկներ, ջրախխունջներ և այլն:

Շերեփուկներ կարելի է որսալ ամառը մի քանի անգամ, պահելով նրանց ակվարիումում կամ ջրով լի բանկայում: Երեխաները դիտում և տեսնում են նրա զարգացման ընթացքը (ինչպես շերեփուկը գորտ է դառնում):

Կարելի է ոչ երկար ժամանակով պահել մողես, գորտ, գոդոշ, դիտել նրանց կյանքը: Վանդակում կարելի է պահել ոզնի, կերակրելով մսով, կաթով:

Մեծահասակ երեխաները խնամում և դիտում են այս կենդանիների կյանքի ընթացքը, փոքրերն ավելի հետաքրքրությամբ դիտում են և օգնում նրանց կերակրելիս:

Այսպիսով ամառվա ընթացքում երեխաները դաստիարակի ղեկավարությամբ ստանում են բավականաչափ վառ տպավորություններ, ծանոթանում են բազմատեսակ կենդանիների և բույսերի հետ, ստանում են մեծ բավականություն: Այս ամենը նպաստում է նրանց բազմակողմանի զարգացմանը:

Ինչպես օգտագործել աշխատանքում բնական նյութերը

Երեխաների հետ զբաղվելիս պետք է լայնորեն օգտագործել բնական նյութերը՝ կավը, ավազը, քարը, խեցիները, մամուռը, ծառի կեղևը, կաղիններ և այլն: Առանձնապես լավ կլինի այդ բնական նյութերն օգտագործել երեխաների խաղերի համար: Ավազի հետ խաղալու համար կարելի է տալ ծառի ճյուղեր, կաղիններ, տիկնիկներ և անասուններ պատկերացնող խաղալիքներ: Ջրի հետ խաղալու համար տալ կեղև, կաղիններ, քարեր և ավազ: Ճյուղերը, մամուռը, կավը և մյուս նյութերը երեխաներն օգտագործում են շինություններ, ջրանցքներ, ջրաղացներ և այլն կառուցելիս:

Բնական նյութերից կարելի է պատրաստել հետաքրքիր խաղալիքներ և տարբեր իրեր. օրինակ, ուռենու կեղևից և ճյուղերից հյուսել զամբյուղներ հատապտուղներ հավաքելու համար, ծառերի հաստ կեղևներից՝ նավակներ ջրի վրա խաղացնելու համար, կաղիններից և կոներից՝ տիկնիկներ պատրաստելու համար, ջրամամուռներից, տերևներից, կաղիններից՝ զարդաշղ-

թաներ սենյակը զարդարելու համար: Այս ամենը կարելի է անել երեխաների հետ միասին:

Քարերը, կաղինները, կոները կարելի է օգտագործել և հաշվելու—համրանքի համար: Կարելի է սրանք դասավորել տուփերում հնգյակներով, տասնյակներով, երեխաները դրանց կվերադասավորեն, կվերահաշվեն: Կարելի է չորացնել զանազան գույնի (կանաչ, դեղնավուն, կարմրավուն—տարվա տարբեր եղանակին հավաքած), զանազան մեծության և զանազան տեսակի տերևներ. հետո մեծահասակ երեխաների հետ այդ տերևները սոսնձով փակցնել կարտոնի կամ այլ հաստ—ամուր թղթի վրա և այլն:

Երեխաները հաճախ կդիտեն այդ հավաքածուները, կճանաչեն յե՛րբ և վո՛րտեղից են հավաքել, կզանազանեն նրանց գույները, ձևերը, կտարբերեն մեծը փոքրից:

Այս նյութերն օգտակար են ոչ միայն ամառվա համար, այլև կարելի է պահպանել ձմեռն օգտագործելու համար: Երեխաների հետ այս ամենը պետք է հավաքել, չորացնել, կանոնավոր և խնամքով դասավորել արկղներում:

ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՐՔԻ ՀԵՏ

Երեխաների խոսքի զարգացմանը նախադպրոցական հասակում պետք է մեծ ուշադրություն դարձնել: 3—4 տարեկան երեխայի լեզուն շատ թույլ է զարգացած: Երեխան հաճախ պարզ չի խոսում, նրա բառերի պաշարը քիչ է: Ճիշտ դաստիարակման ժամանակ երեխայի լեզուն հետզհետե զարգանում է, նա սկսում է պարզ խոսել, հասկանալի շարադրել իր մտքերը և ցանկությունները:

Դաստիարակի առաջ խնդիր է դրված՝ դարձնել երեխայի լեզուն հասկանալի շրջապատողների համար. զարգացնել ճիշտ, մաքուր արտասանություն: Երեխաները հաճախ որոշ հնչյուններ չեն կարողանում արտասանել (օրինակ՝ ասում են այի—փոխանակ արի ասելու,—ր հնչյունը փոխարինում են յ-ով: Արտասանում են տատու—կատու ասելու փոխարեն—կ հնչյունը փոխարինում են տ-ով: Արտասանում են Սուսիկ—Շուշիկ ասելու փոխարեն—շ հնչյունը փոխարինում են ս-ով և այլն), ինչպես և աղավաղում են ամբողջական բառեր, կուլ տալով նրանց վերջին վանկերը և այլն:

Այսպիսի լեզվական պակասություններ երեխաներն ունե-

նում են գլխավորապես այն պատճառով, վոր մեծերը դրանց վրա հատուկ ուշադրություն չեն դարձնում:

Յեթե մեծերի կողմից լինի ուշադիր վերաբերմունք դեպի յերեխայի լեզուն, ապա յերեխաները շուտով սկսում են ճիշտ արտասանել բոլոր հնչյունները:

Ինչպե՞ս ուղղել յերեխայի լեզուն:

Այդ գործում անհրաժեշտ է մեծ զգուշություն: Յեթե ամեն քայլափոխում յերեխային ուղղել, դա նրան կձանձրացնի և նա ուշադրություն չի դարձնի դրա վրա կամ կճնշվի խոսել: Մեկ անգամ կարելի յե ուղղել յերեխային, մյուս անգամ՝ յերեխայի ներկայությամբ պարզ արտասանել այն բառը, վորը յերեխան սխալ է արտասանում: Կարելի յե դժվար բառն արտասանել մի փոքրիկ վոտանավորում, վորը կհիշի յերեխան և, կրկնելով այն, ճիշտ կարտասանի այդ բառը:

Յերեխայի լեզուն պետք է հարստացնել նոր բառերով

Խաղերի, զբոսանքի, դիտումների ժամանակ դաստիարակը ծանոթացնում է յերեխաներին նոր բառերի հետ, բացատրում է նոր բառերի իմաստը:

Այսպես, որինակ, 3—4 տարեկան յերեխաները դիտում են վոզնին: Նա ափսեյից կաթ խմեց և թաց թաթիկներով քայլեց սեղանի վրա: «Սա ի՞նչ է սեղանի վրա»—հարցնում են յերեխաները: «Դրանք «հետքեր են»»,—ասում է դաստիարակը: Յերեխաներին դուր յեկավ «հետքեր» նոր բառը: «Թաթիկներով հետքեր դրեց սեղանի վրա»,—ծիծաղելով ասում են յերեխաները:

Դաստիարակը սովորեցնում է յերեխաներին ճիշտ կառուցել իրենց նախադասությունները: «Յես վաղը զբոսնել եմ»,—հայտարարում է 3 տարեկան Նինան: «Դու այսոր զբոսնել ես և վաղը կզբոսնես»,—ասում է դաստիարակը: Ասա այսպես՝ «Յես վաղը պետք է զբոսնեմ» (կամ կզբոսնեմ):

Դաստիարակը սովորեցնում է յերեխաներին կապակցված պատմել այն մասին, ինչ վոր նրանք տեսնում, լսում են, գործածել պատկերավոր դարձվածքներ:

Ահա զբոսանքում յերեխաները մարգագետին են տեսնում, վոր ծածկված է վոսկեգույն ծաղիկներով: «Վոսկու նման են նրանք»,—ասում է դաստիարակը: «Ինչպես արև, ինչպես արև» —ձայնակցում են յերեխաները:

Դաստիարակը սովորեցնում է յերեխաներին քաղաքավարի

վերաբերվել միմյանց և մեծերի հետ: Սովորեցնում է յերեխաներին խոսել առանց քաշվելու թե՛ մեծերի և թե՛ փոքրերի հետ:

Դաստիարակը հետաքրքրություն է զարգացնում յերեխայի մեջ դեպի գիրքը, նկարը, վոտանավորը:

Յերեխաների խոսքի զարգացման գործում մեծ նշանակություն ունի դաստիարակի որինակը և նրա խոսակցությունը յերեխաների հետ: Խաղերի և պարապմունքների ժամանակ յերեխաները շատ են խոսում իրար հետ. դաստիարակը պետք է հետևի յերեխաների խոսակցությանը և ղեկավարի այն: Ահա մի աղջիկ նկարում է. «Յես դաշտ եմ նկարել, ծաղիկներ, շատ աղջիկներ կուգան ծաղիկներ քաղելու»: «Շատ աղջիկներ են յեկել ծաղիկներ քաղելու»,—ուղղում է դաստիարակը:

Դաստիարակը միշտ հետևում է իր խոսակցությանը: Նա խոսում է հանգիստ տոնով, վոչ արագ, ամեն բառ արտասանում է պարզ, աշխատում է խոսել արտահայտիչ: Արագ խոսելը չափազանց վատ է անդրադառնում յերեխաների լեզվի վրա:

Որինակ, դաստիարակը շտապելով ասում է յերեխային. «Արա, վոնց կուզես»: Յերեխան իր մեջ արմատացնում է «վոնց» բառի գործածությունը և դժվարությամբ հետագայում նրանից ձեռք կքաշի: Յերեխաների խոսքի զարգացման գործում մեծ դեր է խաղում դաստիարակի որինակը, նրա խոսակցությունը յերեխաների հետ:

Դաստիարակի խոսքը պետք է ճիշտ լինի, գրագետ, կուլտուրական: Դաստիարակը պետք է աշխատի իր լեզվի վրա, բարելավի այն: Ամենալավ միջոցն է դրա համար—գեղարվեստական գրականության ընթերցումը և աշխատանքը՝ մայրենի լեզվի կանոնների ըմբռնման վրա:

Յերեխաները պետք է, վորչափ հնարավոր է, հաճախ լսեն իրենց դաստիարակների ու ծնողների լավ և ճիշտ խոսակցությունը:

Ամենորյա խաղերում, պարապմունքներում, նկարներ դիտելիս, դաստիարակը խոսում է յերեխաների հետ, ամբողջ խմբի հետ և յուրաքանչյուր յերեխայի հետ առանձին: Դա շատ է մոտեցնում դաստիարակին և յերեխաներին, ոգնում է դաստիարակին ավելի լավ ճանաչելու ամեն մեկին առանձին-առանձին:

Յերեխայի հետ խոսելու համար առիթներ շատ կան:

Ահա առավոտը յերեխաները յեկան հրապարակ: Մտերմագին, փաղաքշական խոսքերով դաստիարակը դիմավորում է յերեխային, յուրաքանչյուրին կոչում է իր անունով:

Դա լավ տրամադրություն է առաջացնում երեխաների մեջ, առաջացնում է ցանկություն խոսակցելու դաստիարակի հետ:

Յուրաքանչյուր երեխա ասելու բան ունի: Մեկը նոր մեքենա է տեսել, մյուսի հայրը վերադարձել է քաղաքից և շատ հետաքրքիր բաներ է պատմել, մեկի կատուն ճտեր է բերել, Սուրիկի համար գնել են նոր հագուստ, իսկ Արփիկի համար՝ խաղալիք:

Դաստիարակը խոսակցության է բռնվում երեխաների հետ, հարցնում է նրանց տան կյանքի մասին, եղբայրների, քույրերի մասին և այլն: Ե՛վ խաղերի, և՛ զբոսանքի, և՛ զբաղմունքի ժամանակ շատ բան կա, որի մասին կարելի է խոսել թե՛ բոլոր երեխաների և թե՛ յուրաքանչյուր երեխայի հետ առանձին:

Դաստիարակը խոսում է նրանց հետ տոնակատարությունների մասին, հետաքրքիր անցքերի մասին (մեր հերոս օդաչուների զարմանալի թռիչքների մասին, նոր դպրոցի բացման մասին, Կարմիր բանակի զորամասերի ճամբար գալու մասին և այլն):

Երեխաների խաղերը շատ են զարգացնում նրանց լեզուն, խոսելու ձևը:

Ահա երեխաները «կինո» են ներկայացնում: Դաստիարակը տալիս է երեխաներին մի քանի նկար՝ կպցրած իրար կողքի երկար թղթի վրա: Երեխաները ցույց են տալիս նկարները և նրանցով պատմում:

Տարբեր սեղանի խաղերը—լոտո, զույգ նկարներ, նկարային դոմինո հարստացնում են երեխայի բառերի պաշարը նոր իրերի անուններով, կենդանիների անուններով (օրինակ, «լոտո մանուկներին», «կենդանաբանական լոտո» և այլն):

«Գունավոր գնդեր», «Գունավոր ամանեղեն» լոտոն ծանոթացնում է երեխաներին գույների անունների հետ:

Լավ են «Հանելուկներ» խաղերը: Դաստիարակը երեխաներին տալիս է պատրաստի հանելուկներ կամ երեխաներն իրենք են հնարում դրանք: Օրինակ, «քաղցր է, սպիտակ է—երեխաները սիրում են այն» (շաքար): Այս հանելուկը հնարել են իրենք երեխաները:

Կամ երեխան վերցնում է խաղալիքը և, ցույց չտալով այն, նրա մասին պատմում է երեխաներին. «Սա փոքրիկ է, մոխրագույն և սիրում է կաղամբ», «Իսկ իմ մոտ եղածը՝ կարմիր

բանտով է, փափկամազիկ է և կանչում է «մյաու—մյաու»»: Երեխաները գտնում են: Որոշ խաղեր օժանդակում են երեխաների ճիշտ արտասանությանը:

Ահա, օրինակ, ինչպես է դաստիարակն անցկացնում գնացք խաղալը: «Վագոնները կանգնեցին իրար հետևից, քշում ենք. քշի, քշի, չու, չու, չու, չու: Հասանք, հասանք, հասանք... շշը...շշը...»—գնացքը դուրս է տալիս գոլորշին, մոտենում է կայարանին: Այս խաղում երեխաներն ըմբռնում են շշացող հնչյունները, որոնք հաճախ դժվարանում են արտասանել փոքրիկ երեխաները: Կամ ահա երեխաները խաղում են սիրած խաղը—«Երեք արջ» հեքիաթը. «Ո՞վ է կերել իմ ճաշիկը»—մռնչում է Միխայիլ Իվանովիչը: «Ո՞վ է կերել իմ ճաշիկը»—կանչում է Միշուտկան: Այսպես խաղի ընթացքում երեխաներն ըմբռնում են խոսակցության տարբեր եղանակները, սովորում են արտահայտիչ ձևով խոսել:

Նկարներ

Երեխայի խոսքի զարգացման աշխատանքում մեծ օգնություն է ցույց տալիս նկարը: Երեխաները սիրում են նկարներ:

Նկարն օգնում է հասկանալ պատմվածքը, նկարով երեխան ինքն էլ կարող է պատմվածք հնարել: Երեխան սովորում է ուշադիր դիտել նկարը: Ահա փոքրերը նայում են նկարին, որի վրա նկարված են սագեր: Դաստիարակը գրավում է նրանց ուշադրությունն այն բանի վրա, թե ինչքան երկար է սագի վիզը, ինչպիսի փետուրներ ունի, երեխաները երգում են «Տատիկի և սագիկի» մասին երգը:

Կամ ահա դաստիարակը ցույց է տալիս «Սասունցի Դավթի» կամ բնության որևէ երևույթի նկար: Բոլոր երեխաները դիտում են:

Ի՜նչպիսի հետաքրքիր խոսակցություններ են բացվում այդ նկարի շուրջը, ո՜րքան հրաշալի պատմվածքներ կմտաբերեն իրենք երեխաները, մանավանդ եթե դաստիարակը կարողացել է լավ դիտել նրանց հետ նկարը, հետաքրքիր պատմել նրա մասին:

Նկարը երեխաներին այնպես պետք է ցույց տալ, որ բոլորը տեսնեն, որպեսզի լավ դիտելով նրանք կարողանան զրուցել նրա մասին: Լավ է նկարը տալ երեխաների ձեռքը: Եթե

յերեխաներին նոր նկար է ցույց տրվում, ապա հարկավոր չէ մանրամասն բացատրություններ տալ, վորովհետև յերկար բացատրությունները հոգնեցնում են նրանց:

Փոքրահասակներին ավելի լավ է ցույց տալ գունավոր նկարներ. վերջիններիս վրա չպետք է լինեն շատ պատկերներ և բարդ գործողություններ: 3—5 տարեկան յերեխաների համար հանձնարարվում են Վատագինի նկարները—«Տնային կենդանիներ» գրքում, Պոկրովսկու նկարները—Ալեքսանդրովայի «Մեր մուրը» գրքում, Գոլովի նկարները—Ալեքսանդրովայի «Վայրի գազաններ և գազանիկներ» գրքում և այլն:

Լավ կլինի հավաքել մի քանի նկարներ և ալբոմ սարքել՝ Ստալինի մասին, օդաչուների, կարմիր-բանակայինների, Մոսկվայի, զանազան խաղալիքների մասին և այլն:

Նկարները (սև կամ գունավոր, կամ ֆոտո նկարներ) պետք է լավորակ և ցայտուն լինեն:

Բացի դրանից, մեծահասակ յերեխաներին կարելի յե նկարներ տալ բացիկների վրա, «Ռաբոտնիցա», «Կրեստյանկա», «Հայաստանի աշխատավորուհի» և այլ ամսագրերի նկարազարդ յերեսները, առանձին իլյուստրացիաներ «Ոգոնյոկ», «Ոբշչեստվեննիցա», «ՍՍՍՌ նա ստրոյկե» ժուռնալներից, «Մուրզիլկա», «Չիժ», «Հոկտեմբերիկ» ժուռնալներից և այլն:

Մանկական գրքեր

Մանկական գրքերը մեծ նշանակություն ունեն յերեխայի զարգացման համար:

Գիրքը ուրախացնում է յերեխաներին: Գրքից յերեխաները շատ նոր բաներ են իմանում: Գիրքը զարգացնում է յերեխաների գեղարվեստական ճաշակը:

Գիրքն օգնում է դաստիարակել յերեխաների մեջ սեր դեպի մեր առաջնորդները, դեպի Կարմիր բանակը, հարգանքի, սիրո և մտերմության զգացմունք է զարգացնում դեպի աշխատավորները և դեպի ուրիշ ազգերի յերեխաները: Առաջնորդների և հերոսների մասին գրվածքները յերեխաների մեջ առաջացնում են նրանց նմանվելու ցանկություն:

Փոքրահասակներին կարդալու կամ պատմելու համար պետք է ընտրել կարճ պատմվածքներ կամ հեքիաթներ յերեխաների, խաղալիքների, կենդանիների մասին:

Փոքրահասակների համար հանձնարարվում են հետևյալ

գրքերը. Վատագին—«Տնային անասուններ» (շիրմա), Սակոնսկայա—«Կարդանք միասին չորս գույնի մասին», Ալեքսանդրովա—«Մեր մուրը», Բարդո—«Խաղալիքներ» և այլն:

Հանձնարարվում են նաև հետևյալ գրքերը. «Արջն ու աղջիկը»—ժողովրդական հեքիաթ, «Վոզնին և նապաստակը», «Պապն ու շաղգամը», «Կլորիկ-բոքոնիկ», «Գյուլնազ տատի հեքիաթը»—Ղ. Աղայան, «Չարի վերջը»—Հ. Թումանյան, «Վոսկե ձվիկը»—ժող. հեքիաթ, «Ծտի գուլպաները»—Խերանյան, «Խաղողի այգում»—Ս. Զորյան, «Յերեք արջ»—ժող. հեքիաթ (Թարգմ. Հ. Թումանյանի) և այլն:

Իհարկե, այս բոլոր գրքերն էլ պարտադիր չէ կարդալ կամ պատմել յերեխաներին: Ցուցակը տրվում է նրա համար, վոր կարելի լինի ընտրել նրանցից այն, ինչ վոր ավելի հարմար կհամարվի տվյալ խմբի յերեխաների համար:

6—7 տարեկան յերեխաների համար հանձնարարվում են հետևյալ պատմվածքները. Ուլյանովա—«Իլյիչի մանկական և դպրոցական տարիները», Սմիրնովա—«Ընկեր Ստալինի կենսագրությունից», Տոլստոյ Լ. Ն.—«Պատմվածքներ կենդանիների մասին», Պուշկին—«Վոսկե ձկնիկը», Նեկրասով—«Մազայ պապը և նապաստակները» (Թարգմ. Հ. Հայրապետյանի), Չուկովսկի—«Լվացարանը ջրացիր», Կվիտկո—«Նամակ Վորոշիլովին», Մարշակ—«Հրդեհ», «Փոստ», Բարդո—«Լալկան աղջիկը», «Մրոտ աղջիկը» (Թարգմ. Հ. Հայրապետյանի): Հեքիաթներ ժողովածուից Բուլատովի խմբագրությամբ—«Կատուն, աքլորը և աղվեսը», «Աղվեսը և գայլը», «Աղվեսը և կճուճը», Գրիմմ Յեղբայրների հեքիաթներից «Յերեք խոզուկներ», Դիլակտորսկայա—«Այն մասին, թե ինչ պատահեց մեկ անգամ Կրեմլում» (Թարգմ. Հ. Հայրապետյանի), «Իմ դասը—մեկից մինչև տասը» (Թարգմ. Խնկոյանի), Սակոնսկայա—«Կարդանք միասին չորս գույնի մասին» (Թարգմ. Հ. Հայրապետյանի), Շաբադ—«Սանդուխքը» և այլն:

Դաստիարակն անպայման ինքը պետք է լավ իմանա այն գրքի բովանդակությունը, վոր կարդալու յե յերեխաների համար: Նա պետք է ինքը նախորոք կարդա պատմվածքը կամ վոտանավորը, մտածի, թե վոր տեղը ինչպես կարդա, գրքում ի՛նչ ցույց տա յերեխաներին:

Ահա, օրինակ, Մարշակի պատմվածքը «Հիմար մկնիկի մասին»: Այստեղ պետք է ցույց տալ յերեխային, թե ինչպես յու-

րաքանչյուր կենդանի իր ձևով է քնեցնում մկնիկին և թե ինչպես կատուն խաբեց մկանը:

Կվիտկոյի վոտանավորը—«Նամակ Վորոշիլովին»—պետք է այնպես կարդալ, վոր յերեխան զգա, թե ինչպես խորն է սիրում մեր չքնաղ հայրենիքը նամակ գրող տղան: Առանձնապես պետք է չեշտուն կարդալ վերջին չորս տողը: Դաստիարակը պետք է կարդա առանց շտապելու, պարզ և արտահայտիչ:

Հարկավոր չէ մեկ անգամից շատ պատմվածքներ կարդալ: Ավելի լավ է կարդալ մեկ լավ պատմվածք:

Յերեխաները սիրում են կրկին լսել նույն պատմվածքը: Որինակ, «Յերեք խոզուկներ», «Շունն ու կատուն» Հ. Թումանյանի, բոլորի համար սիրված պատմվածքը յերեխաները կարող են լսել միքանի որ իրար հետևից: Պատմվածքներն ու հեքիաթները կարելի յե յերեխաների խնդրանքով կրկնել միքանի անգամ:

Յերեխաներին պետք է սովորեցնել հոգատար վերաբերվել գրքույկի հետ: Պետք է հետաքրքրություն և սեր դաստիարակել նրանց մեջ դեպի գիրքը:

Պետք է սովորեցնել յերեխաներին, վոր նրանք գիրքը վերցնեն միայն մաքուր ձեռքերով, չտրորեն, չծալծլեն և խնամքով նայելուց հետո դնեն իր տեղը: Լավ կլինի սարքել կանոնավոր դարակ և նրա վրա դնել միքանի մանկական գրքույկ, փոխելով նրանք, յերբ յերեխաները դադարում են նրանցով հետաքրքրվել: Յերկար գործածելուց հետո մաշված, թերթերը կամ կազմը պոկված գրքույկները յերեխաների հետ կարելի յե կպցնել, կարել:

Վոտանավորներ սովորելը

Յերեխաները վոտանավորներ շատ են սիրում: Նրանց դուր են գալիս հանգավոր խոսքերը, նրանք համեմատաբար հեշտությամբ են հիշողության մեջ պահում վոտանավորները:

Դաստիարակը նախորոք պետք է լավ ծանոթանա այն վոտանավորին, վոր պետք է սովորեցնի յերեխաներին: Անհրաժեշտ է, վոր դաստիարակը կարողանա վոտանավորը բերանացի հիշել: Վորպեսզի յերեխաների հիշողության մեջ վոտանավորը լավ արմատանա, հարկավոր է այն կարդալ 2—3 անգամ իրար հետևից: Հետևյալ որը դաստիարակը նորից է կրկնում վոտա–

նավորը, ապա առաջարկում է արտասանել յերեխաներին առանձին–առանձին:

Չպետք է վոտանավորը սովորեցնել խմբական ձևով: Այդպիսի ձևով սովորելիս, յերեխաները վոտանավորն արտահայտիչ ձևով չեն կարողանում արտասանել:

Հարկավոր չէ չափից դուրս տարվել վոտանավորներ սովորեցնելով և չպետք է իրար հետևից շատ նոր վոտանավորներ սովորեցնել:

ՎՈՏԱՆԱՎՈՐՆԵՐ, ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ ՅԵՎ ՀԵՔԻԱԹՆԵՐ ՓՈՔՐԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԽՄԲԻ ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԿԱՐԴԱԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Մկնիկի բարեկամը յեվ թշնամին

Մկնիկը դուրս յեկավ զբոսնելու: Զբոսնեց բակում և նորից յեկավ մոր մոտ: «Բա չե՞ս ասի, մայրիկ, յես յերկու գազան եմ տեսել: Մեկը—սարսափելի, իսկ մյուսը—բարի»: Մայրը հարցրեց. «Ասա մի տեսնեմ, այդ ի՞նչ գազաններ եյին»: Մկնիկը պատասխանեց. «Մեկը սարսափելի յեր, քայլում եր բակում ահա եսպես. Նրա վոտները սև եյին, կատարը՝ կարմիր, աչքերը՝ դուրս պրծած, քիթը՝ կեռ: Յերբ յես կողքով անցա, նա բացեց իր ահռելի բերանը և այնպես սկսեց գոռալ, վոր յես սարսափից չգիտեյի ուր փախչել»: «Դա աքլորն է յեղել»,—ասաց ծեր մուկը. «Նա վոչ վոքի վատություն չի անում, նրանից մի վախենա: Իսկ մյո՞ւս գազանը վորն եր»: «Մյուսը պառկած եր արևի տակ և տաքանում եր: Նրա վիզը սպիտակ եր, վոտքերը մոխրագույն, կոկիկ, ինքը լիզում եր իր սպիտակ կուրծքը և պոչը թեթև շարժելով ինձ եր նայում»: Ծեր մուկն ասաց. «Հիմա՛ր, դու, հիմա՛ր: Չե՞ վոր դա հենց ինքը, կատուն է»:

Լ. ՏՈԼՍՏՈՅ

ՇԱԲԱԴ

2. ՓՈՔՐԻԿ ՍԱՆԴՈՒԽՔԸ

Բակի պատին հենվում եր մի փոքրիկ սանդուխք: Սանդուխքը հինգ աստիճան ուներ: Վերևի աստիճանի վրա թռավ աքլորը, թևերը թափահարեց ու բարձր ձայնով յերգեց:

Նա ինչպե՞ս յերգեց, յերեխաներ:

Յերկրորդ աստիճանի վրա ցատկեց փիսիկը: Նստել, լիզում եր դունչն ու մռռում:

Ինչպե՞ս էր նա մռռում։

Իսկ շունը թռավ յերրորդ աստիճանի վրա. պոչով թխթխկացրեց աստիճանին և փիսիկի վրա մռնչաց։

Նա ինչպե՞ս է մռնչում, յերեխաներ։

Չորրորդ աստիճանի վրա բարձրացավ Պետիկը։ Նստել ներքև էր նայում ու վոտները խաղացնում։

Ինչպե՞ս էր նա վոտները խաղացնում։

Իսկ Մանիկը ներքևի աստիճանի վրա նստեց ու սկսեց յերգել՝ «Մենք նստել ենք սանդուխքին ու յերգում ենք միասին»։

Ինչպե՞ս էր նա յերգում։

Հանկարծ սկսեց աղմկել քամին։

Քամին ինչպե՞ս աղմկեց։

Արագ արագ թխթխկացրեց անձրևը։

Ինչպե՞ս թխթխկացրեց անձրևը։

Ցած թռավ աքլորը, թևերը թափահարեց ու մտավ ծածկի տակ թաքնվեց։ Գամփռն էլ նույն տեղը պատսպարվեց։

Փիսիկը ճարպիկորեն բաց պատուհանից ներս ցատկեց։

Ինչպե՞ս ցատկեց։

Իսկ Պետիկն ու Մանիկը նստել էյին ու չէյին ուզում իջնել սանդուխքից և լաց էյին լինում։

Ինչպե՞ս էյին լաց լինում։

Դուրս յեկավ Նինան, յերեխաներին իջեցրեց սանդուխքից ու տարավ։ Նրանք վազեցին պատշգամբը։

Ինչպե՞ս վազեցին պատշգամբը։

Յերեխաները տուն գնացին, և սանդուխքը մնաց դատարկ։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

3. ՊԱՊՆ ՈՒ ՇԱՂԳԱՄԸ

Մի անգամ պապը դրան առաջ մի շաղգամ ցանեց։ Շաղգամը աճեց, մեծացավ։ Պապը քաշեց շաղգամից, շաղգամը հողից չկարողացավ հանել։

Պապը կանչեց տատիկին։ Տատը բռնեց պապիկից, պապը բռնեց շաղգամից, հա քաշեցին, քաշքշեցին, շաղգամը հողից չհանեցին։

Տատը կանչեց թոռնիկին։ Թոռը բռնեց տատիկից, տատը բռնեց պապիկից, պապը բռնեց շաղգամից, հա քաշեցին, քաշքշեցին, շաղգամը հողից չհանեցին։

Թոռը կանչեց շնիկին։ Շունը բռնեց թոռնիկից, թոռը բռնեց տատիկից, տատը բռնեց պապիկից, պապը բռնեց շաղգամից, հա քաշեցին, քաշքշեցին, շաղգամը հողից չհանեցին։

Շունը կանչեց կատվիկին։ Կատուն բռնեց շնիկից, շունը բռնեց թոռնիկից, թոռը բռնեց տատիկից, տատը բռնեց պապիկից, պապը բռնեց շաղգամից, հա քաշեցին, քաշքշեցին, շաղգամը հողից չհանեցին։

Կատուն կանչեց մկնիկին։ Մուկը բռնեց կատվիկից, կատուն բռնեց շնիկից, շունը բռնեց թոռնիկից, թոռը բռնեց տատիկից, տատը բռնեց պապիկից, պապը բռնեց շաղգամից, հա քաշեցին, քաշքշեցին, շաղգամը հողից հանեցին։

Լ. Ն. ՏՈԼՍՏՈՅ

4. ՃՆՃՂՈՒԿՆ ՈՒ ԾԻԾԵՌՆԱԿՆԵՐԸ

Մի անգամ բակում կանգնած նայում էյի ծիծեռնակների բնին, վորը գտնվում էր տանիքի տակ։ Յերկու ծիծեռնակներն էլ իմ ներկայությամբ թռան, և բունը մնաց դատարկ։

Նրանց բացակայության միջոցին տանիքից ցած թռավ մի ճնճղուկ, կանգնեց բնի մոտ, չորս կողմը նայեց, թևերը թափահարեց ու անհետացավ բնի մեջ։ Ապա դուրս հանեց գլուխն ու սկսեց ծլվլալ։

Շուտով վերադարձավ ծիծեռնակներից մեկը, ուզեց մտնել իր բունը, բայց հենց վոր տեսավ հյուրին, ճըվճվաց, թևերը թափահարեց ու հետ թռավ։

Ճնճղուկը նստած ծլվլում էր։

Հանկարծ թռավ յեկավ ծիծեռնակների մի յերամ։ Ծիծեռնակներից յուրաքանչյուրը մոտենում էր բնին, կարծես ճնճղուկին նայելու համար, ու կրկին թռչում գնում։

Ճնճղուկը չէր վախենում, գլուխն այս ու այն կողմն էր հրջում ու ծլվլում։

Ծիծեռնակները կրկին մոտենում էյին բնին, ինչ-վոր բան անում ու նորից հեռանում։

Ծիծեռնակները զուր չէյին մոտենում բնին. նրանցից ամեն մեկը կտցով ցեխ էր բերում և ցեխում բնի անցքը։

Քանի ծիծեռնակները վերադառնում էյին, այնքան ավելի էյին ցեխում ու այնքան ավելի յեր փոքրանում անցքը։

Սկզբում յերևում էր ճնճղուկի վիզը, ապա միայն գլուխը, հետո միայն կտուցը, իսկ վերջում այլևս վոչինչ չէր յերևում։

Ծիծեռնակները նրան բոլորովին փակեցին բնում, թռան ու սուլոցով սկսեցին պտույտ գալ տան շուրջը:

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ ՅԵՎ ՀԵՔԻԱԹՆԵՐ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԽՄԲԻ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ինչպես եյին յերեխաները հոգ տանում թռչունների մասին

Մի գյուղի դպրոցականներ վորոշեցին պաշտպանել թռչուններին: Դպրոցում նրանք սովորել եյին, թե թռչուններն ինչպիսի լավ պահապաններ են դաշտում, այգում և բանջարանոցում: Յեթե չլինեյին թռչունները, ապա վորդերը, բզեզները և խխունջները կուտեյին ամբողջ կանաչեղենը, ծառերի տերևները: Յեվ յերեխաները պայմանավորվեցին խնամել թռչուններին, միմյանց խոսք տվին—յերբեք չվնասել թռչուններին: Իսկ վորպեսզի տված խոստումը չմոռացվի, յուրաքանչյուրն իր դռան վրա կապած ուներ մի տախտակե կտոր «Պահպանի՛ր թռչուններին» մակագրությամբ: Այդպիսի տախտակներ սարքեց ինքը, ուսուցիչը: Վորոշեցին այսպես. բները չքանդել, ճուտերին և ձվիկներին ձեռք չտալ, թռչուններ չվորսալ: Իսկ ձմեռը դպրոցի մոտ թռչունների համար սեղան պատրաստեցին: Նախաճաշից հետո յերեխաները հավաքում եյին հացի փշրանքները և այդ սեղանի վրա լցնում: Վոմանք տնից բերում եյին ձավար կամ վարսակ: Յեվ թռչունները անվախ մոտենում եյին սեղանին: Յերեխաները պարծանքով ասում եյին. «Թռչունները գիտեն, վոր մենք նրանց բարեկամներն ենք, չենք թողնի, վոր նրանք նեղանան»: Յերեխաները վորոշեցին ուրիշներին նույնպես հիշեցնել թռչունների մասին: Նրանք մի կոճղ տաշեցին, տնկեցին ճանապարհների հատման տեղերում և խոշոր տառերով գրեցին վրան, վոր յուրաքանչյուրը կարդա. «Պահպանեցե՛ք թռչուններին»: Լավ են այդ գյուղում այգիները, բանջարանոցները և արտերը:

Ռ. ՌՈՒԼՅԱՆՈՎԱ

2. ԴՊՐՈՑԻ ՇԵՄՔԻՆ

Հինգ տարեկան եր Վալոդյան, յերբ մորից կարդալ սովորեց, Ոլյայի հետ սկսեցին կարդալ հոր գրքերն ու ժուռնալները, Անգիր եյին անում վոտանավորները: Յերբ յոթ տարեկան եր, Վալոդյան մեծ հաճույքով ու վոգևորված արտասանում եր.

Հի—մ—ար հարուստը
Գանձ ունի, չի քնում,
Մերկ ու խեղճ աղքատը
Յեր-գում է, զվարճանում:

Յերբ ձանձրանում եյին կարդալուց, սկսում եյին յերգել: Մայրն ել նստած դաշնամուրի առաջ, նվագում եր.

«Կար չկար յերբեմն
Մի աղքատ պառվիկ,
Ուներ այդ պառվիկը
Կաթնատու այծիկ,
Ձալիկ-մալիկ,
Կաթնատու այծիկ»:

Վալոդյայի փոքր յեղբայրը, Միտյան, չեր կարողանում առանց լացի յերգել այն տեղը, յերբ գայլերը կերան այծիկին: Հենց վոր հասնում եյին այնտեղ, չարաճճի Վալոդյան այնպիսի ուժեղ ձայնով եր սկսում յերգել ու նայել յեղբոր աչքերին, վոր Միտյայի սիրտը չեր դիմանում ու սկսում եր լաց լինել:

Վալոդյան չարաճճի յեր, բայց շատ ընդունակ. բոլորից շուտ եր վերջացնում դասերն ու սկսում եր դես-դեն ընկնել, խանգարել:

Այդպիսի դեպքերում հայրը կանչում եր.

— Ինչո՞ւ դասերդ չես սովորում:

— Յես դասերս գիտեմ:

Հայրն սկսում եր հարցնել: Վալոդյան հրաշալի կերպով պատասխանում եր:

Հին դասերն եր հարցնում, վոր միթե՞ յերկար պահի, հին դասն ել եր լավ հիշում ու պատմում:

Գիմնազիայի տեսուչը նրա մասին գրել եր. «Շատ ընդունակ, աշխատասեր ու ճշտապահ տղա յե, միշտ ել առաջին աշակերտն է համարվել»:

Փոխադրեց ռուսերենից՝ Ս. ՍԱՄՎԵԼՅԱՆ

3. Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

Ընկեր Ստալինին փոքրիկ ժամանակ կոչում եյին Սոսո: Նա կոշկակարի տղա յե: Նրանց ընտանիքն ապրում եր Վրաստանի Գորի քաղաքում: Չնայած վոր նրանք աղքատ եյին ապրում, սակայն մայրն ամեն կերպ աշխատում եր լավ պահել փոքրիկ Սոսոյին, վոր նա ուրիշ յերեխաներից հետ չմնա: Սոսոն միշտ մա-

քուր ու կոկիկ էր, հագնում էր կապույտ վերարկու և ճտկավոր կոշիկ:

Թաղիքե գլխարկի տակից ուրախ փայլում էին նրա սև, աշխույժ աչքերը: Ձեռքերին նա ուներ գործած մոխրագույն ձեռնոցներ, իսկ վզին կապում էր կարմիր շարֆ: Այդ կարմիր շարֆով հեռվից ընկերները նրան ճանաչում էին: «Ահա, գալիս է մեր Սոսոն», ուրախ կանչում էին նրանք և վազում նրա մոտ, վորովհետև բոլորն էլ շատ էին սիրում նրան: Սոսոն կենսուրախ էր և աշխույժ, այնպես ճարպիկ գնդակ էր խաղում, վոր նրա խմբակը միշտ խաղը տանում էր: Նա առաջավոր էր վոչ միայն խաղերում, այլև սովորելու մեջ: Յերբ ուսուցիչը հարց էր տալիս, «ո՞վ գիտի», և վոչ վոք չէր պատասխանում, ընկերները նայում էին Սոսոյին, համոզված լինելով, վոր նա անպայման կպատասխանի: Թեև Սոսոն սովորում էր գերազանց, բայց յերբեք չէր պարծենում և միշտ ոգնում էր թույլ ընկերներին:

Մի անգամ նրանց դպրոցն ընդունվեց մի մինգրել տղա, վորը շատ վատ էր խոսում վրացերեն: Աշակերտները ծաղրում էին նրան:

Սոսոն մոտեցավ նրան և ընկերաբար ասաց. «Յես ուզում եմ սովորել մինգրելերեն. արի, դու ինձ սովորեցրու մինգրելերեն, իսկ յես քեզ վրացերեն»: Նա տասնհինգ տարեկան էր, յերբ ավարտեց դպրոցը, բոլոր առարկաներից նա ստացավ գերազանց գնահատական: Դրա համար նրան գովասանագիր տվին: Դա շատ զարմանալի յերևույթ էր, վորովհետև այն ժամանակ գովասանագիր տալիս էին միայն հարուստների և տերտերների յերեխաներին, իսկ Սոսոն կոշկակարի տղա յեր:

Մեծացավ փոքրիկ Սոսոն, դարձավ Խորհրդային յերկրի առաջնորդ, ամբողջ աշխարհի բանվորների, աշխատավորների ու նրանց յերեխաների ամենասիրելի բարեկամը:

Թարգմ. Ռ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

4. ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ ՄԱՄԼԱՔՅԱԹԸ

Յերբեք չի պատահել, վոր այդքան փոքրիկ աղջիկ այդքան մեծ նվեր ստանա:

Տասներկու տարեկան Մամլաքյաթ Նախանգովան կոլտնտեսությունում կատարած լավագույն աշխատանքի համար Խորհրդային կառավարության կողմից պարգևատրվել է Լենինի շքանշանով:

Մամլաքյաթը Տաջիկստանի սոցիալիստական դաշտերի լավագույն հարվածայինների հետ յեկել էր Մոսկվա խորհրդակցության:

Նրա ուրախությանը չափ չկար, նա առաջին անգամն էր լինում Մոսկվայում: Նա պետք է տեսներ մեծ Ստալինին:

Առավոտյան Մամլաքյաթն արթնացավ շատ վաղ, նայեց իր չորս կողմը, «մի՞թե յես Մոսկվայումն եմ»,—մտածեց նա: Այսրա արագ վեր կացավ, հագնվեց, սանրվեց և պատրաստվեց գնալ:

Նրա դեմքը ժպտում էր:

Յերբ Մամլաքյաթը մտավ Կրեմլի գեղեցիկ, սպիտակ սյունազարդ դահլիճը, բոլոր պատգամավորների ուշադրությունը գրավեց. նա պատգամավորների մեջ ամենափոքրիկն էր:

Հանկարծ դահլիճը լցվեց բուռն ծափերի վորոտով: Մամլաքյաթի սիրտն արագ բաբախեց: Նա բեմի վրա տեսավ ընկեր Ստալինի ուրախ, ժպտացող դեմքը: Մի՞թե սա յերազ չէ, մի՞թե սա ճիշտ է,—մտածում էր Մամլաքյաթը:

Կամաց-կամաց ծափերը դադարեցին: Մամլաքյաթն իր աչքերը չէր հեռացնում ընկեր Ստալինից:

Յեվ ի՞նչ, Մամլաքյաթն ինքն էլ չէր հիշում, թե ինչպես մի վայրկյանում հայտնվեց բեմում, փաթաթվեց ընկեր Ստալինի վզովը: Ծափահարությունները նորից ուժգին թնդացին:

Մամլաքյաթը պատմեց իր կատարած աշխատանքի մասին: Նրա ձայնը գնգում էր դահլիճում համարձակ և հպարտ: «Յես որական հավաքում եյի 102 կիլո բամբակ: Յես դպրոցում էլ հարվածային եմ»: Իսկ ամենից գլխավորը՝ նա արդեն 10 պիոների մեծն է:

Մամլաքյաթը դեռ խոսքը չէր վերջացրել, յերբ ընկեր Ստալինը մոտեցավ նրան, շոյեց և նրա ձեռքին մի գեղեցիկ ժամացույց կապեց:

Դահլիճում նորից ծափերի ուժգին վորոտ բարձրացավ:

Մամլաքյաթն իրեն յերբեք այդպես բախտավոր չէր զգացել. նա մեկ նայում էր ժամացույցին, մեկ ծափահարողներին:

Մամլաքյաթը յերբեք չէր հանում ժամացույցն իր թևից, անգամ քնելիս:

Յերբ նա գնաց բաղանիք, այնտեղ էլ նա համառորեն հրաժարվեց թևից արձակել ժամացույցը:

Յեվ ի՞նչ, ջուրն անցավ ժամացույցի մեջ, ժամացույցը կանգնեց:

Մամլաքյաթն իսկույն դուրս յեկավ ավազանից, սրբվեց, բայց նրա աչքերի արցունքը չցամաքեց: «Վա՜յ, ի՞նչ արի, ի՞նչ արի, փչացրի ընկեր Ստալինի նվիրած ժամացույցը», գոչում եր նա:

Ժամացույցը տարան ժամագործի մոտ: Նա ժամացույցը մաքրեց: Ժամացույցը սկսեց աշխատել:

Մամլաքյաթը նորից ժպտաց ու ծիծաղեց:

Կազմեց Ռ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

5. ԶԱԲԵԼ ԲՈՒԴԱՂՅԱՆ

Զաբել Բուդաղյանը Վաղարշապատի շրջանի «Արշալույս» կոլտնտեսության բրիգադավարն ե: Նա պարգևատրվել ե Լենինի շքանշանով:

Զաբելը չափազանց աշխույժ և ուրախ կոլտնտեսուհի յե:

Ամեն անգամ դաշտային աշխատանքի գնալիս, առավոտյան արթնանում ե շատ վաղ, կարգի յե բերում իր տունն ու բակը և բարձր տրամադրությամբ հավաքում ե բրիգադի անդամներին ու գնում դեպի դաշտ:

Նախքան աշխատանքն սկսելը նա վոգևորում ե իր բրիգադի անդամներին այսպես. «Դե՛, ձեզ մատաղ, սկսեցեք աշխատել, դե՛, ղոչաղ կացեք, մենք այս անգամ ել պետք ե բոլոր բրիգադներից առաջ անցնենք, մենք պետք ե հաղթենք»: Յեվ սկսվում ե աշխատանքը: Զաբելը բարձր ձայնով յերգում ե ու նորից վոգեվորում ընկերներին:

Հանգստի ժամին Զաբելը հավաքում ե բրիգադին և սկսում ե իր զրույցը.

«Յերբ յես կարդում եմ թերթերում մեր յերկրի հերոսների մասին, կարդում եմ նրանց գործերի մասին, յերբ ոդաչուները թռչում են ամենից բարձր, յերբ կարմիր սահմանապահները հերոսական վարմունք են ցույց տալիս հանդեպ մեր մեծ հայրենիքը, նրանց սիրով վողջունում ե մեր թանգագին հայր, մեր սիրելի առաջնորդ Ստալինը:

Ընկեր Ստալինի հանդեպ ունեցած իմ անսահման սերը, նրան տեսնելու ցանկությունն ինձ վոգևորում ե, ուժ ու յեռանդ ե տալիս ինձ:

Պարզ ասեմ, ուզում եմ հերոսանալ, ուզում եմ տեսնել մեծ Ստալինին, ուզում եմ, վոր իմ բրիգադի անդամները նույնպես հերոսներ դառնան: Այս ե իմ ցանկությունը»:

Զաբելի բրիգադը վոգևորված նորից սկսում ե աշխատել:

Այսպես աշխատում եր Զաբելը թե՛ խաղողի այգում և թե՛ ցորենի և բամբակի դաշտում:

Զաբելի ցանկությունը կատարվեց:

Մի որ կոլտնտեսության ժողովում հայտնեցին, վոր Զաբելի բրիգադի հարվածային և հերոսական աշխատանքի շնորհիվ Զաբելին ուղարկում են Մոսկվա ընկեր Ստալինի մոտ:

Զաբելի աչքերն ուրախությունից փայլեցին: Բրիգադի անդամներն անսահման գոհ եյին, բոլորը ծափահարում եյին:

Մյուս որն ամբողջ գյուղը և շրջանը գիտեյին այդ մասին:

Բոլորը խոսում եյին Զաբելի մասին:

«Այ, ղոչաղ, այ այդպես: Դե՛, որինակ վերցրեք Զաբելից»:

Կանայք ասում եյին. «Իսկի լսե՞լ եյիք, վոր հին ժամանակ գյուղացու կինը գնա Մոսկվա: Կեցցե՛ Խորհրդային իշխանությունը, կեցցե՛ս Զաբել: Յերնեկ քո աչքերին, վոր պիտի տեսնես մեծ Ստալինին»:

Զաբելին ճանապարհ գցելու որը կոլտնտեսությունում տոն եր:

Գյուղը զարդարված եր: «Արշալույս» կոլտնտեսությունը ցնծության մեջ եր: Բոլորը հպարտանում եյին, վոր իրենց կոլտնտեսությունն ել հերոսուհի ունի: Նրանք պատվիրեցին Զաբելին հայտնել ընկեր Ստալինին, վոր սրանից հետո ավելի լավ են աշխատելու և յերկրին տալու յեն ավելի շատ ու մեծ հերոսներ:

Թարգմ. Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

6. ՍԱՌՈՒՅՑԻ ՄԵՋ

1.

Սառնամանիք եր. փչում եր սառը քամին, բուքը վոռնում եր: Չորս կողմը ձյուն եր ու սառույց:

Չորս ոդանավ թռչում եյին Հյուսիսային բևեռի վրայով:

Ահա ոդանավերը պտույտներ կատարեցին և իջան մի մեծ, չարժվող սառցի վրա:

2.

Ոդանավերը վերադարձան, թողնելով չարժվող սառցի վրա չորս խիզախ գիտնականների՝ Պապանինին, Կրենկելին, Շիրշովին և Ֆեոդորովին:

Նրանք մնացին այնտեղ պարզելու, թե ինչ խորություն ունի

ովկիանոսը, ինչ կենդանիներ և բույսեր են ապրում այդ ջրերի մեջ, և ուսումնասիրեն յեղանակը:

Իսկ սառույցը շարունակ դեպի արևմուտք եր շարժվում:

Փչում եր սառը քամին, գիշեր ու ցերեկ բուքն եր վոռնում:

Վրա հասան խավար որերը: Բայց հերոս գիտնականները շարունակում եյին իրենց աշխատանքը:

Ինն ամիս նրանք մնացին այդ սառցի վրա:

Իրենց իջած տեղից յերկու հազար հինգ հարյուր կիլոմետր հեռացել եյին:

3.

Բայց ահա ավելի սաստիկ սկսեցին փչել քամիները, բուքն ավելի ուժգին վոռնաց, սառույցներն իրար դիպան, սկսեցին ջարդվել:

Այն սառույցը, վորի վրա գտնվում եյին գիտնականները, նույնպես կտոր-կտոր յեղավ:

Մնացին մի փոքրիկ սառցի կտորի վրա:

Յեվ ահա մի որ քաջ ռադիստ Կրենկելը խոսեց.

«Մեր սառույցը կտոր-կտոր յեղավ: Մնացել ենք մի փոքրիկ սառցի վրա: Բայց ուտելու պաշար ունենք, ելի կարող ենք մնալ»:

Նրա ձայնը լսեց մեր կուսակցությունը, մեր կառավարությունը, մեր սիրելի հայր Ստալինը:

— Վերցրեք չորս հերոսներին սառցի վրայից,—կարգադրեց առաջնորդը:

4.

Յեվ գնացին վերցնելու:

Մի կողմից սառցահատ «Մուրմանը», «Թայմիրը», մյուս կողմից սառցահատ «Յերմակը», անվեհեր ոդաչուները:

Փչում եր սառը քամին, բուքն եր վոռնում խավարի մեջ, բայց գնացին:

Յեվ մի որ սառցահատները մոտեցան սառցին:

Քաջերը հանդիպեցին քաջերին:

Չորս գիտնականները՝ Պապանինը, Կրենկելը, Շիրշովը և Ֆեոդորովը նավ նստեցին և Մոսկվա վերադարձան:

Մ. ՇՄՈՒՇԿԵՎԻՉ
Թարգմ. Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

7. ՍՈՎՈՐԻՐ ՃԱՆԱՉԵԼ ԹՇՆԱՄՈՒՆ

«ՄՈՒՐԱՑԿԱՆԸ»

Յերեկոյան Ֆեդյան ու Գավրյուշան գնացին գետի ափը:

Հանկարծ Ֆեդյան իր ընկերոջ թևը քաշեց:

— Նայի՛ր, բանջարանոցում մի մարդ կա:

— Վորտե՞ղ ե:

Ֆեդյան ցույց տվեց պոմիդորի թուփը:

— Ա՛յ, այն թփի հետևը:

— Գուցե մեր կոլտնտեսականներից ե:

— Մեր կոլտնտեսականը չի թաքնվի:

Յերեխաները շունչները պահած, մտան բանջարանոց:

— Գլխավորն այն ե, վոր մեզ չնկատի,—շշնջաց Գավրյուշան Ֆեդյային:

— Դու այստեղ մնա, իսկ յես կվազեմ ուղեկալը:

Բայց թփի հետևը թաքնված մարդը նրանց նկատեց և սկսեց արագ-արագ պոմիդոր պոկել:

Յերեխաները մոտեցան նրան:

Մարդը մի պոմիդոր գցեց բերանը և խեղդվելով սկսեց ծամել:

Յերեխաներն ուշադրությամբ նայեցին նրան: Անծանոթը ցնցոտիներ եր հագել:

— Դուք այստեղ ի՞նչ եք անում,—հարցրեց Գավրյուշան:

— Յես մուրացկան եմ... ջոկում եմ... սոված եմ, մեկը կերա:

— Թո՛ւ,—թքեց Գավրյուշան:—Չե՞ վոր դա խակ ե:

Գավրյուշան գնաց: Ֆեդյան մնաց:

— Դուք ո՞վ եք,—հարցրեց Ֆեդյան անծանոթին:

— Չե՞ վոր ասացի. հարևան եմ, մոտիկ գյուղից: Իսկ այն յերեխան ո՞ւր գնաց:

— Ո՞ւր պիտի գնա վոր: Հայտնի բան ե՝ տուն,—պատասխանեց Ֆեդյան:

Բայց ինչո՞ւ քեզ հետ չգնաց:

— Մենք միասին չենք յեկել:

— Ուշ ե: Տուն գնալիս չե՞ս վախենա:

— Վո՛չ:

— Կեցցե՛ս։ Ուղղակի հերոս ես,—գովեց Ֆեդյային «մուրացկանը» և կրկին նայեց դեպի այն կողմը, վորտեղ գնաց Գավրյուշան։

— Նստե՞նք։

— Նստեցեք, իսկ յես կկանգնեմ։

«Մուրացկանը» նստեց։

— Մախորկա չունե՞ս,—հարցրեց անծանոթը։

— Չեմ ծխում,—պատասխանեց Ֆեդյան։

Մոտիկ թփերը շարժվեցին։

«Մուրացկանը» ցնցոտիների տակից ատրճանակը հանեց և ուղղեց դեպի Ֆեդյան։

— Ծպտուն հանես՝ կսպանեմ։

Նա անհետացավ թփերի մեջ։ Ֆեդյան անշարժ կանգնեց և շշուկին ականջ դրեց։

— Անհետացա՞վ,—հանկարծ լսեց Ֆեդյան ուղեկալի պետի ծանոթ ձայնը։

— Այո՛,—զայրույթով պատասխանեց Ֆեդյան, մատն ուղղելով դեպի մթությունը։

Ուղեկալի պետը և սահմանապահները շրջապատեցին թփերը և՝ «մուրացկանին» բռնեցին։

Մի որից հետո ուղեկալի պետը հայտնեց Գավրյուշա Միխայլովսկուն և Ֆեդյա Դունայևսկուն, վոր նրանք ոգնել են ձերբակալելու մի խոշոր լրտես, վոր սահմանապահ զորամասը շնորհակալություն ե հայտնում նրանց և պարգևատրում ե լավ նվերներով։

Թարգմ. Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

8. ԳՈՐՇԻԿԸ

(Սահմանապահի պատմածը)

Ամեն բանով լավ եր իմ Աչխեմը, վայելչակազմ, վոտները բարակ, ընթացքը սահուն, միայն թե շատ շուտ եր հոգնում։

Մի անգամ նստած մտածում եմ. վո՞ր ձին վերցնեմ Աչխեմի փոխարեն։ Չե՞ վոր այդ ձին սահմանապահական ծառայության համար անպետք ե։

Հանկարծ ինձ մոտ յեկավ ջրկիր կարմիր-բանակայինը։ Նրա դեմքը կարմիր եր, բարկացած, կարծես մեկը վիրավորել եր նրան։

— Ընկեր հրամանատար,—ասում ե,—չեմ կարող յես Գորշիկի հետ ծառայել, ուրիշ ձի տվեք ինձ։

— Իսկ Գորշիկը ինչո՞վ ե վատ,—հարցնում եմ։

— Ծառայության մասին վոչ մի գաղափար չունի,—պատասխանում ե կարմիր-բանակայինը։—Մեր ջրկիրական գործը պատասխանատու գործ ե։ Յեթե ժամանակին ջուր չհասցնենք, ճաշը կուշանա, մարտիկները սոված կմնան պահակության։

Իսկ Գորշիկը դրա հետ գործ չունի։

Ա՛յ, այսոր ամբողջ ժամվա ընթացքում հազիվ հասա գետը։ Հենց վոր տակառը ջուր լցրի, այծի նման յերկու վոտի վրա կանգնեց, վողջ ջուրը թափեց։ Իսկ վերադառնալ չի ուզում. դատարկ տակառին լծված կանգնել ե, վոչ առաջ ե գնում, վոչ ել հետ։

Գնացի ձին տեսնելու։

Տեսնեմ՝ հասակավոր ձի յե, կուրծքը լայն, վոտներն ամուր, տոկուն ձի յե, լավ ձի յե։

— Լավ, ընկեր կարմիր-բանակային,—ասում եմ,—յես ձեզ Գորշիկից կազատեմ, յե՛ս կվերցնեմ նրան, իսկ ջուրը կբերի Աչխեմը։

Հենց նույն որը վողջ ուղեկալը հավաքվեց տեսնելու, թե ինչպես պետք ե գնամ Գորշիկի վրա նստած։

Բոլոր սահմանապահները նրա համառ բնավորությունը գիտեյին։

Գորշիկին բերեցին շտաբի առաջ գտնվող մարզադետինը։ Յես մոտեցա նրան, գլտեցի և թռա թամբի վրա։

Սանձերը շարժում եմ, Գորշիկն առաջ չի գնում, կարծես կպել ե գետնին։

«Լավ,—մտածում եմ,—յեթե այդպես ե, յես ել բավականին համառ եմ»։

Սանձերը բաց թողի, ավելի հարմար նստեցի թամբի վրա և սկսեցի ծխել։

— Ընկեր հրամանատար,—ծիծաղում են կարմիր-բանակայինները,—գուցե կհրամայեք հրել Ձեզ։

— Վոչի՛նչ,—ասում եմ,—յես չեմ շտապում։ Կանգնում ե, թող կանգնի։

Յերկար ժամանակ կանգնած եր Գորշիկը։

Կարմիր-բանակայիններն սպասելուց ձանձրացան և ցրվեցին։ Վերջապես տեսա, վոր Գորշիկն անհանգստանում ե, արդեն

մի վոտից մյուս վոտի վրա յե կանգնում, մի աչքով խեթ-խեթ ինձ ե նայում, կարծես հարցնում ե. «Յերկա՞ր պիտի նստես իմ մեջքի վրա»:

Իսկ յես նստած եմ ու նստած:

Գորչիկն սկսեց սմբակով գետինը փորել:

Յես նստած եմ:

Հանկարծ Գորչիկն առաջ սլացավ և միանգամից լրիվ վազքով առաջ վազեց:

Մի ամսից հետո ձին ինձ սիրեց: Յերբ տանում եյին ջրելու, կանգնում եր պատուհանիս առաջ և քուռակի նման բարակ ձայնով խրխնջում:

«Դուրս յեկ, իմ տեր, կարոտել եմ քեզ»:

Իսկ մարտական տագնապների ժամանակ Գորչիկին գոմից հանել էլ պետք չեր: Հենց վոր թմբկում եյին, ինքը սլանում եր դեպի շտաբը և հեռվից խրխնջալով կանչում եր ինձ:

Մի սառնամանիք պարզ գիշեր եր: Յես դիտում եյի սահմանի պահակատեղերը: Սահմանագծում ամեն ինչ խաղաղ եր: Միայն ձյունն եր ճռճռում Գորչիկի սմբակների տակ, և հարևան անտառում սառնամանիքից ճաթճթում եյին չորացած բարդիները:

Հանկարծ Գորչիկը կանգ առավ, ականջները ցցեց և հուզմունքով խրխնջաց:

Յես նայեցի չորս կողմը. մոտիկում վոչ վոք չկար:

«Յերևի վորևե տեղ գայլ ե թափառում», վորոշեցի յես և սանձը շարժեցի:

Բայց Գորչիկը ճանապարհով չգնաց, շրջվեց դեպի աջ, ուղիղ դեպի դաշտը: Վորսորդական շան նման վիզը ձգեց և գլուխ առաջ գնաց:

Հանկարծ Գորչիկը տեղում մարեց: Այդ րոպեյին ձիու առաջ մի մարդ յերևաց սպիտակ խալաթով, վորը դահուկները վոտներին առաջ վազեց:

«Լրտես ե,—մտածեցի յես,—ուզում ե սահմանն անցնել:— Յեվ ատրճանակս հանեցի:

— Կանգնի՛ր, կկրակեմ:

Դահուկավորը չկանգնեց: Փայտերով արագ աշխատելով, նա ուղիղ դեպի անտառն եր թռչում:

Դեռ սանձը չբռնած, Գորչիկն ինքը սլացավ դահուկավորի հետևից:

Դահուկավորը շրջվեց դեպի ձախ, Գորչիկն էլ շրջվեց դեպի

ձախ: Դահուկավորը վազեց դեպի անտառը, Գորչիկն էլ նրա հետևից:

Անտառում դահուկավորը կամաց եր վազում, վորովհետև ձյունը փափուկ եր և ձյունակույտեր կային:

Գորչիկը հասավ նրան:

— Կանգնի՛ր,—նորից գոչեցի յես և արդեն պատրաստվեցի գետին թռչելու:

Բայց այդ ժամանակ Գորչիկը ծռվեց դեպի դահուկավորը, և յես թամբից ցած ընկա:

«Վերջացավ—մտածեցի յես,—լրտեսին բաց թողինք»:

Բայց յերբ վոտքի կանգնեցի ու չորս կողմս նայեցի, տեսա, վոր իմ Գորչիկը կանգնած ե մի քանի քայլ ինձանից հեռու: Նրա մոտ, ձյունի մեջ ընկած դահուկավորը թավալվում եր: Հենց վոր ուզում եր վեր կենալ, Գորչիկը ճակատով հրում եր նրան և դահուկավորը կրկին ընկնում եր խորը ձյունի մեջ:

Դահուկավորին ուղեկալը բերեցի: Նա իսկապես լրտես դուրս յեկավ:

Ահա թե ինչպիսի ձի ունեյի յես: Կրկեսում պարող ձիերն ի՞նչ են վոր: Այս ձին ինքը լրտես գտավ, ինքն էլ բռնեց:

Այդ ժամանակից յես ու Գորչիկը յերբեք չենք բաժանվում: Միասին պահպանում ենք խորհրդային սահմանները:

Յերբ անցյալ ամառ ինձ ուրիշ ուղեկալ փոխադրեցին, հրամանում գրված եր:

«Բանվորագյուղացիական բանակի ավագ լեյտենանտ Վասիլյևին իր Գորչիկ շտաբային ձիու հետ 3-րդ ուղեկալից փոխադրվում ե 4-րդ ուղեկալը»:

Լ. ՎՈՐՈՆԿՈՎԱ
Փոխադրեց Հ. ՄԻՆԱՍՅԱՆ

9. ՊԱՏՄՎԱԾՔ ՎԱՍԻԼԻ ԲԱՐԱՆՈՎԻ ՄԱՍԻՆ

Այդ կատարվեց Հեռավոր Արևելքի սահմանի վրա:

Ձմեռային գիշեր եր:

Սահմանի վրա կախված եր այնպիսի թանձր մառախուղ, վոր յերկու քայլի վրա չեր կարելի մարդ նկատել:

Յեվ ահա այդ խուլ, մառախլապատ գիշերը թշնամիներն անցան մեր սահմանը: Նրանք շատ եյին, իսկ մեր սահմանապահների ջոկատում միայն մի քանի հոգի:

Ամեն մի բանակայինին ընկնում եր 10 յապոնացի և ման-

ջուր: Բայց մեր մարտիկները չփախան: Վոչ, նրանք արագությամբ ուսերից իջեցրին հրացանները և մարտի բռնվեցին:

Նրանք թշնամուն ծակում էին սվիններով, խփում էին ձեռնամարտում և վոչ մի դեպքում չէին նահանջում:

Այդ ջոկատում էր և Վասիլիյ Բարանովը:

Նա կռվում էր կատաղությամբ, հարվածելով հրացանի կոթով, վորին՝ սվինով:

Ահա նրա վրա հարձակվեց մի ամբողջ վոհմակ, բայց նա յերիտասարդ էր, ճարպիկ, հարվածին արագ պատասխանում էր հարվածով ու հիշում էր միայն մի բան—սահմանապահը չպետք է թույլ տա թշնամուն անցնելու իր հողը:

Առաջին վերքը տաքության մեջ Բարանովը չզգաց:

Յերկրորդ և յերրորդ վերքերից նրա աչքերի առաջ սկսեց մթնել:

Նա կռվում էր թափելով վերքից տաք արյունը, բայց հրացանը չէր զգում:

Իսկ հետո ուժերը սպառվեցին, աչքերի առաջը մթնեց, վոտները թուլացան... Ու նա ընկավ:

Յապոնացիները և մանջուրները շրջապատեցին նրան ու սահմանի վրայով տարան իրենց՝ մանջուրական հողը:

Շուրջը կանգնած էր խուլ և մառախլապատ գիշերը... Յեվ մեր մարտիկները չկարողացան տեսնել, թե ինչպես տարան իրենց ընկերոջը...

Վասիլի Բարանովին բերին ոտար քաղաք:

Յեկավ բժիշկը, ուզում էր կապել նրա վերքերը:

Թշնամիներին հարկավոր էր պահպանել Բարանովի կյանքը, նրանք ուզում էին Բարանովից դուրս քաշել մեր ռազմական գաղտնիքները:

Բայց Բարանովը չընդունեց բժշկին.—Հեռացեք ինձանից,—ասաց նա,—ինձ հարկավոր չէ ձեր ոգնությունը:

Յեվ չնայած իրեն տանջող ցավին, ինքը լվաց և կապեց իր վերքերը: Այդպես նա պառկած էր ոտար քաղաքում, ոտար մահճակալի վրա, մենակ՝ ոտար և թշնամի մարդկանց մեջ:

Ամեն որ գալիս էին Բարանովի մոտ յապոնացի և մանջուրացի ոֆիցերներն ու հարցաքննում նրան:

— Վասիլի Բարանով, ասա, վորտեղ է Խորհրդային Միությունը կառուցում իր ամրոցները:

Ասել, յեթե նա ասի, չէ վոր թշնամիներն այդ ամրոցներին կմոտեցնեն մեծ թվով ռազմական ուժեր, ամենամեծ հեռահար հրանոթները, և մեզ դժվար կլինի պաշտպանել այդ ամրոցները:

Բարանովը լռում էր:

— Բարանով, ասա, վորտեղ են գտնվում ձեր տանկերը:

Ասել, յեթե նա ասի, կնշանակի, այնտեղ կգնան յապոնական հակատանկային ջոկերը, ով գիտի մեր տանկերից քանիսը կվնասվեն և ճանապարհի մեջտեղը կանգ կառնեն:

Բարանովը լռում էր:

— Ի՞նչ ես լռել, մենք քեզ շատ փող կտանք, դու մեզ մոտ կապրես՝ ինչպես պարոն:

— Ասա, վո՞րտեղ է ձեր հեծելազորը, վո՞րտեղ են ձեր ինքնաթիռները:

Ասել, յեթե նա ասի, կնշանակի, թշնամիները կիմանան, վորտեղ և յերբ հանդիպել մեր հեծելազորին, վորտեղ դնել զենիթային հրանոթները, վորպեսզի հարվածեն մեր սավառնակներին:

— Յես ձեզ վոչինչ չեմ ասի,—գոչեց վերջապես Բարանովը և յերեսը շուռ տվեց, վորպեսզի նրան այլևս չհարցաքննեն: Բարանովը սննդադուլ հայտարարեց:

Նա վոչ ուտում էր և վոչ էլ խմում:

Նա պահանջում էր, վորպեսզի իրեն ուղարկեն հայրենիք:

Թշնամիները հասկացան, վոր Բարանովից վոչինչ չի կարելի իմանալ վոչ համոզելով և վոչ էլ կաշառելով:

Այն ժամանակ նրանք սկսեցին նրան տանջանքների յենթարկել:

Սկսեցին ծեծել, չարչարել:

Բարանովը լուռ տանում էր բոլոր տանջանքները:

Նա վոչ մի բառ չէր արտասանում, իսկ յերբ ցավերը սաստկանում էին, նա ատամները սեղմած միայն հառաչում էր:

— Ասա, վո՞րտեղ են կանգնած խորհրդային զորքերը:

— Դե, յեթե այդ չգիտես, ասա, վո՞րտեղ է կանգնած քո զորամասը, ինչպիսի՞ զենքեր ունեն ձեր մարտիկները:

— Դե ի՞նչ ես լռել, միևնույն է, դու յերբեք քո հայրենիքը չես վերադառնա, գոնե մի վորևէ բան ասա:

Բարանովը լռում էր: Վոչ, նա վոչինչ չի ասի:

Ավելի լավ է՝ մեռնի:

Նույնիսկ մանջուր ժամապահները, վորոնք հսկում էին Բարանովին, զարմացել էին,—այդքան յերիտասարդ, այդպես հիվանդ ու թույլ, բայց անձնատուր չի լինում:

Բարանովը պառկած՝ լսում եր:

Ահա մոտ ե հայրենիքը, բայց հեռու, ահա և մոտ են իր ընկեր-սահմանապահները, բայց նրանց չի տեսնում, չի կարող կանչել նրանց, վորպեսզի գան և դժբախտությունից ազատեն իրեն:

Թե ինչպես ծանր եր խեղճ յերիտասարդի համար, թե ինչպես նա իր կյանքի վերջին րոպեներին հայրենիքի կարոտ եր քաշում,—այդ վոչ վոք չգիտեր:

Մի քանի որից հետո նա մեռավ:

Մեռավ, բայց չմատնեց:

Թշնամուն վոչինչ չհաջողվեց իմանալ խորհրդային կարմիր-բանակայինից:

ԻՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ՀԵՏ

Նստել եյի յես առաջին կարգում, լսում եյի, թե ինչ են ասում անասնապահ-կոլտնտեսականները, իսկ ինքս աչքս չեյի հեռացնում ընկեր Ստալինից: Իմ կողքին նստել եր պիոներ Վանյա Զուլկովը «Անաստված» կոլտնտեսությունից: Վերջին նիստն եր: Ուզում եյի ամբողջ կյանքումս հիշել Ստալինին, նկատել նրա ամեն մի շարժումը, ամեն մի ժպիտը: Չե՞ վոր յերբ գյուղ վերադառնամ, առաջին բանը, վոր պետք ե հարցնեն ինձ, հետևյալն ե.

— Իսկ ընկեր Ստալինին տեսե՞լ ես:

Հանկարծ տեսնում եմ՝ Իոսիֆ Վիսսարիոնովիչը ժպտում ե և ձեռքով կանչում ե մեզ իր մոտ՝ Նախագահություն: Մենք վեր թռանք տեղներիցս և սլացանք դեպի ընկեր Ստալինը:

— Ի՞նչպես ե ձեր անուն-ազգանունը:

Նա ինձ «դուք» ասաց:

Յես պատասխանեցի.

— Միշա Կուլեշով:

— Սովորում ե՞ք դպրոցում:

— Այո՛, հինգերորդ դասարանումն եմ:

— Կեցցե՛ս—ասաց Իոսիֆ Վիսսարիոնովիչը և ամուր գրկեց ինձ:

Յես ուրախությունից չգիտեյի թե ինչ անեմ:

— Դե՛հ, պատրաստվիր, յելույթ ես ունենալու,—ասաց ինձ ընկեր Ստալինը:

Լսում եմ՝ ծափահարում են: Յերբ կոլտնտեսականի յելույթը վերջացավ, հայտարարեցին.

— Իսկ այժմ խոսք ունի պիոներ Միշա Կուլեշովը, Մոսկվայի մարզի Բելևսկու շրջանի «Կրասնի լուչ» կոլտնտեսության հորթերի շեֆը:

Իմ վոտների տակ աթոռ դրին, և յես սկսեցի պատմել, թե ինչպես ենք մենք սկսել շեֆություն անել և ինչքան հորթեր ենք աճեցրել: Յերբ ասացի, թե աճեցրել ենք տասնութ հորթ, տաս քուռակ և մի զույգ ձի՝ Կարմիր Բանակի համար, բոլորն սկսեցին ծափահարել: Յես պատմեցի նաև այն մասին, թե ինչպես եմ սովորում, քանի գերազանց գնահատական ունեմ, և այն մասին, թե ինչ ենք անում մենք պիոներական ջոկատում: Հետո դարձա դեպի Նախագահություն և ասացի.

— Յես մի բան պիտի խնդրեմ ընկեր Ստալինից: Մեր կոլտնտեսության մեջ պիոներական տուն չկա: Յես խնդրում եմ, վոր ընկեր Ստալինն ոգնի մեզ այդ գործում:

Յերբ յես վերջացրի, նորից գնացի նախագահության մեջ: Ընկեր Վորոշիլովն իմ ձեռքը սեղմեց և ժպտալով ասաց.

— Կեցցե՛ս, քո ձիերը կվերցնենք:

Իսկ ընկեր Ստալինը գրկեց ինձ, վերցրեց ձեռների վրա և դրեց աթոռին: Նա պինդ սեղմեց իմ ձեռքը և ասաց.

— Կոգնենք, կոգնենք:

Դեռևս յերբե՛ք յես այնքան յերջանիկ չեմ յեղել, վորքան այդ յերեկո:

1936 թ.

ՄԻՇԱ ԿՈՒԼԵՇՈՎ

(Պարգևատրված ե «Պատվո նշան» շքանշանով)

ՎՈՏԱՆԱՎՈՐՆԵՐ

Կ. ՌՈԴԻՉԵՎԱ
Փոխադրեց Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

1. ԻՄ ՆՎԵՐԸ

Հայր Ստալինը
Ծխամորճ ունի,
Գուցե քսակ
Նա չունի:
Յես կկարեմ
Նրա համար
Փոքրիկ քսակ,
Լավ, հարմար:

Մեր պարտեզի
Ծառի տակ
Կնստեմ յես
Տան հետևին
Ու կկարեմ
Յես քսակը
Իմ ասեղով
Շատ բարակ:

12—Ոգնություն գյուղ. նախ. աշխատողին

Կապույտ, կարմիր
Նուրբ թելերով
Կգործեմ յես
Շատ ծաղիկ,
Իսկ մեջտեղին
Վոսկե թելով
Փոքրիկ աստղիկ
Սիրունիկ:
Տե՛ս, թխվածքի
Փոքրիկ տուփի
Մեջ եմ դրել
Մի ծրար,
Ծրարի մեջ
Կարմիր քսակ
Մեր թանգագին հոր համար:

Հայր Ստալին,
Յես նամակ եմ
Գրում քեզ.
Միայն մի բան,
Միայն մի բան
Շատ եմ, շատ եմ
Խնդրում յես.
Փոստատարը
Յերբ կտա քեզ
Իմ նամակը
Սիրալիր,
Դու նկարվիր,
Յեվ նկարդ
Մեր կոլխոզին
Ուղարկիր:
Բայց նկարվիր
Դու անպատճառ
Ծխամորճի
Հետ սիրուն,
Իմ նվերն էլ՝
Ալ քսակը
Ձեռքիդ լինես
Դու բռնած:
Ցտեսություն:
Միշտ վողջ յեղիր
Յեվ ծխելիս
Ինձ հիշիր:

Անյուտա Իվանովայից՝
«Կարմիր մայիս» կոլտնտեսու-
թյունից:

Հ. Հայրապետյան

2. ԳԱՐՈՒՆ

Զուքվել են կրկին
Անտառ ու այգի,
Վշշում է ուժգին
Ջուրը գետակի:
Հավքերը սիրուն
Համերգ են կազմել,
Հանդում ու դաշտում
Յերգ ու հորովել:
Թիթեռներն ուրախ
Թռչում են դես, դեն...
Ջա՛ն, տեսքիդ մատաղ.
Գարուն է արդեն:

փոխադրություն Հ. Հայրապետյանի

3. ՇՈՖԵՐ

Ձեռնոցը ձեռքիս,
Ակնոցն աչքիս
Շոֆեր եմ յես
Սրատես:
Ղեկը ձեռքիս շարունակ
Սլանում եմ համարձակ:
Փոշին թռչում,
Քամին ճչում,
Փողը հնչո՛ւմ,
Փնչում,
Թնչում,
Մեքենան
Կտրում ճամփան
Անսահման:
Ահա անտառ,
Հովիտ ու սար,
Ձորեր ու դաշտ
Մի ակնթարթ
Յերևում են
Ու կորչում:
Իսկ յերբ դեմից
Սայլ է գալիս՝
— Տու-տո՛ւ, տու-տո՛ւ,
Ինձ ճամփա տուր,
Ձիլ ու ուժգին
Փողն է հնչում,
Ու մեքենան
Թռչում կրկին,
Սայլին թողնում
Ճամփի կողքին:

Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

4. ԻՆՉ ՍԻՐՈՒՆ Է

Ի՛նչ սիրուն է անուշ գարնան
Խենթ ու խելառ են քամին,
Վոր սուլում է կտրի վրա,
Թխթխկացնում ապակին:
Ի՛նչ անուշ է սիրուն գարնան
Են անձրևը խելագար,
Կտկտում է կտրի վրա
Մերթ կամացուկ, մերթ վարար:

Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

5. ԱՐՏՈՒՏԻԿ

Ա՛յ արտուտիկ,
Փոքրիկ թռչնիկ,
Պուտպուտուրիկ
Սիրունիկ,
Արշալույսին
Հովիվներին
Բարի լույս ես
Ավետում,
Սիրուն հանդում,
Կանաչ դաշտում
Սոխակի տեղ
Յերգ ասում:

Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

6. ԾԻՏԻԿԻՆ

Ե՛յ դու, ծիտիկ,
Իմ սիրունիկ,
Քուն մի՛ մտիր,
Զգույշ յեղիր,
Ուրուրը, տե՛ս,
Դիտում է քեզ:

Յեթե իջնի
Ու քեզ տանի,
Ո՞վ ինձ համար
Էլ անդադար
Յերգեր անուշ
Կասի քնքուշ:

Գ. ՄՈՃՈՌՅԱՆ

7. ՀԱՎՆ ՈՒ ՓԻՍՈՆ

Ջմռան մի որ,
Ինչպես յեղավ,
Հավիկ մայրիկն
Հիվանդացավ:
Յերբ այդ բանը
Փիսոն տեսավ,
Բռնեց յերեք
Մկան ձագեր:
Համով, հոտով
Յեփեց, տապկեց
Ու մեր հիվանդ
Հավին բերեց:
—Մուկ եմ բերել,
Հավիկ մայրիկ,
Ասավ փիսոն,
Նստավ մոտիկ.

Ապա մի յել,
Անուշ արա,
Ով վոր ուտի,
Կլավանա:
—Յես չեմ ուտում
Միս ու մկներ,
Խաթուն փիսո,
Իմ լավ ընկեր:
Գոհ եմ քեզնից,
Վոր դու այդպես
Հիվանդ որվա
Յեկար ինձ տես:
Բայց գիտե՞ս ինչ,
Դու լավ կանես,
Յեթե վոր ինձ
Կորեկ բերես:

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

8. ՈՒՐԱԳ ՈՒ ՍՂՈՑ

Մի լինի ուրագի պես,   Այլ յեղի՛ր սղոցի պես,
Միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ. Մին դեպի քեզ, մին դեպի մեզ:

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

9. ԼՈՒՍԱԲԱՑԻՆ

— Ծուղրուղո՜ւ.   Զարթնեց մթնում ծիտը ծառին:
Աքլորը զիլ կանչեց թառին: — Ծուղրուղո՜ւ.
— Ճի՛կ-ճի՛կ, ճի՛կ-ճի՛կ, Խոսեց ծեղին յերկրորդ բերան.
— Հո՛-հո՛, հո՛-հո՛,   Լույսը բացվեց յերրորդ կանչին:
Նախիրն արդեն հանդը տարան: Վո՛ւյ-վո՛ւյ, վո՛ւյ-վո՛ւյ,
— Ծուղրուղո՜ւ.   Նստեց նանը տեղի միջին:

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

10. ԿԱՆԱՉ ԱԽՊԵՐ

Ե՛յ, կանաչ ախպեր,
Ե՛յ, ճանաչ ախպեր,
Արի՛, քեզ հետ բեր
Արևի շողեր.
Բե՛ր անուշահոտ
Ծիլ, ծաղիկ ու խոտ,
Կարկաչուն վըտակ,

Յերկինք կապուտակ,
Խատուտիկ հավքեր,
Զըրնգան յերգեր,
Գառների մայուն,
Խաղ, ուրախություն.
Ե՛յ, կանաչ ախպեր,
Ե՛յ, ճանաչ ախպեր:

ԽՆԿՈ ԱՊԵՐ

11. ԱՅԳԻ

Կանաչիր, կանաչիր,
Իմ սիրուն այգի,
Կանաչ ու կարմիր
Նոր շորեր հագի:
Գարուն ու հավքեր
Յեկան քեզ համար,

Կանաչիր, այգի,
Անշուք մի մնար:
Կանաչ ու կարմիր
Նշան են կյանքի,
Գարունդ է յեկել,
Կանաչիր, այգի:

Ն. ԶԱՐՅԱՆ

12. ԱՆՎԱԽ ՄԱՐԶԻԿԸ

Յես կդառնամ անվախ մարզիկ Շարքերի մեջ կերթամ առաջ:
Մկաններով ամուր ու ձիգ: Տրիբունի մոտ—ձայնով արի
Փողոց կելնեմ դրոշակն առած, Բարև կասեմ ղեկավարին:

ԿՎԻՏԿՈ
(Ուկրաինական մանկական գրող)

13. ՆԱՎԱՍՏԻՆԵՐԻ ՅԵՐԳԸ

Նավաստիներ ենք
Խորհրդի յերկրի,
Վարում ենք նավը
Համարձակ, արի:

Փոթորկից, քամուց
Մենք չենք վախենում,
Նավաստիները
Միշտ քաջ են, կայուն:

ՀՌԻՓՍԻՄԵ ՊՈՂՈՍՅԱՆ

14. ՍԱՀՄԱՆԱՊԱՀԸ

Ես գանգրահեր յեղբայր ունեմ,
Նա զինվոր է բանակում,
Գիշերները միշտ արթուն է,
Նա սահմանին է հսկում:
Յերբ ծաղկի այս գարունքին
Սալորենին ղիմացի,
Գիտեմ, մեր տուն կգա կրկին
Իմ թուխ յեղբայրը այցի:
Թռչկոտելով նրա առաջ
Ես իմ մասին կպատմեմ,
Նա մի զինվոր, արի ու քաջ,
Իսկ յես փոքրիկ աշակերտ:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1. Յերկու սիրուն աչիկ ունի,
Մկրատաձև պոչիկ ունի,
Կուրծքն սպիտակ կաթի նման,
Թևերը սև սաթի նման:
(Ծիծեռնակ):

2. Մի թռչուն կա փչակում,
Առավոտից իրիկուն
Ահա այսպես է յերգում
—Կո՛ւ-կո՛ւ, կո՛ւ-կո՛ւ:
(Կկու):

3. Ամպից պոկվում է հանկարծ
Ու քարի պես նետվում ցած,
Հանկարծակի, այնքան շուտ
Թռցնում է հավ ու ճուտ:
(Բազե):

4. Արտերում մի մարիկ,
Սիրուն ու բոլորիկ,
Յերգում է վազվզում,
Ճուտերով կլորիկ:
(Լոր):

5. Մի թռչուն կա վիթխարի,
Բնակիչն է ամպերի,
Բուն է շինում ժայռերում,
Հորթ ու գառներ գողանում:
(Արծիվ):

6. Սևուկ շունը կծկված,
Դռան վրա յե նստած,
Վոչ հաչում է, վոչ կծում,
Վոչ եվ մարդ է ներս թողնում:
(Կողպեք):

7. Կենդանի յե վայրենի,
Փափուկ, փափուկ մորթ ունի,
Ինքն աղահ, խորամանկ,
Բունն ունի հազար ծակ:
(Աղվես):

8. Սիրելի յե ամեն տան,
Մանուկների բարեկամ,
Մուշտակը տաք ու քնքուշ,
Մկների աչքի փուշ:
(Կատու):

9. Նման ենք իրար, վորպես
յեղբայրներ,
Քայլում ենք միշտ միասին,
Ճաշին սեղանի տակ ենք,
Գիշերը մահճակալի տակ:
(Կոշիկներ):

10. Յերբ կենդանի յե՝
Խոտ է ուտում,
Յերբ սատկում է՝
Գինի յե խմում:
(Տիկ):

11. Պահապան չէ նա յերբեք,
Զայն է տալիս, թե՝ յեկեք:
(Գործարանի սուլիչ):

12. Ձմեռը հանվում է,
Իսկ ամառը հագնվում:
(Ծառ):

13. Վոտքերը հողումն է,
Գլուխը դրսումն է,
Հազար շոր ունի,
Ելի մրսում է:
(Կաղամբ):

14. Անձրևը գա, դուրս կհանի,
Մի գլխանի, մի վոտանի:
(Սունկ):

15. Գլխարկը՝ կապույտ,
Շապիկը՝ կանաչ,
Մի սիրուն ծաղիկ,
Ամենիս ճանաչ:
(Մանուշակ):

16. Հինգ թև ունի սրածայր,
Կարմրագույն ու պայծառ:
(Աստղ):

17. Փայտե փոքրիկ կտոր եմ,
Մութ անկյունում լույս
տվող եմ,
Ամենից եժան բանն եմ,
Բոլորից պետքական եմ:
(Լուցկի):

18. Տատիկը նստած շատ շորեր
հագած,
Ով շորը հանի, նա լաց
կլինի:
(Սոխ):

19. Վոտք չունի, ձեռք չունի,
Ամբողջ որը աշխատում է:
(Ժամացույց):

20. Գարնանը ուրախացնում,
Ամառը զովացնում,
Աշնանը կերակրում,
Ձմեռը տաքացնում:
(Ծառը):

21. Վո՞ր թռչունն է իր
անունը ասում:
(Կկուն):

22. Ձյունն է հալչում,
Խոտը կանաչում,
Ծառերը ծաղկում,
Որը յերկարում.
Այս յե՞րբ է լինում:
(Գարնանը):

23. Կլորիկ, դեղին,
Աշխարհի սիրելին:
(Արև):

ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Յերեխաները զանազան գրաղմունքների և խաղերի ժամանակ հաճախ հաշվում են շրջապատի առարկաները, նկարների վրա պատկերած առարկաները և այլն: Դրանից կարելի յե օգտվել, վորպեսզի յերեխաներին սովորեցնել հաշվել:

Հաշիվը միշտ հարկավոր է կապել կոնկրետ առարկաների հետ։

Ցերեխաներից շատերը շատ լավ հաշվում են վերացականորեն (առանց առարկաների) նույնիսկ մինչև 100, բայց պարզվում է, որ այդ նույն երեխաները չեն կարողանում ճիշտ հաշվել 10—15 գդալ կամ ափսե․ դա նշանակում է, որ նրանք դեռևս չեն սովորել թիվը կապել առարկաների քանակի հետ։ Դրա համար հարկավոր չէ շտապել վերացական հաշվումների մեջ․ հարկավոր է երեխաներին տալ հնարավորություն հաշվելու մեջ վարժվել մատիտներ, վրձիններ և այլ առարկաներ բաժանելիս, խաղալիքները հավաքելիս, նկարները դիտելիս, հավաքած բնական նյութերը ուսումնասիրելիս (տերևներ, քարեր, կաղիններ, կոներ և այլն)։

Փոքրերի խմբի երեխաները կարող են սովորել հաշվել առարկաները մինչև հինգը։ Բացի դրանից նրանք տարբերում են՝ շատը—քիչը, մեծը—փոքրը, երկարը—կարճը, հաստը—բարակը, յերեկ—այսօր, վաղը։

Մեծ երեխաներին կարելի յե սովորեցնել հաշվել առարկաները 10-ի սահմաններում։

Փոքրերի խմբի երեխաների խաղերի և զբաղմունքների ընթացքում հաշվելու և համրելու համար կարելի յե օգտագործել խորանարդներ, գնդիկներ, նկարներ, ինչպես և պատրաստել տուփեր տարբեր քանակի առարկաներով․ առաջին տուփի մեջ մեկ կաղին, յերկրորդի մեջ՝ յերկու կաղին, յերրորդի՝ յերեք և այլն, մինչև հինգը։

Նույնը կարելի յե անել փայտիկներով, քարերով, լոբիներով։

Բարձր խմբերի երեխաների համար հարկավոր է օգտագործել, բացի փոքրերի համար նշածից, ծալովի (քանդովի) տախտակներ, բուրգեր, բաժակներ մինչև 10 հատ, 10-ական իրերով տուփեր, լոտո, զույգ նկարներով խաղեր, խաղալիքների հավաքածու և այլն։

Աշխատանքը ծնողների հետ

Ամառը կոլտնտեսական ծնողները բոլորն զբաղված են դաշտային աշխատանքներով, դրա համար էլ հարկավոր է նրանց հետ զրուցելու համար օգտագործել այն հանդիպումները, յերբ ծնողները յերեխաներին բերում են կամ տանում հրապարակից։

Ցերբ ծնողներն առաջին անգամ յերեխային բերում են

հրապարակ, դաստիարակը կամ վարիչը պետք է նրանց հետ զրուցի յերեխայի մասին, հարցուփորձ անի յերեխայի մասին․ բացի դրանից, ցույց տա և պատմի համառոտակի, թե ինչպես է կազմակերպվելու յերեխաների կյանքը հրապարակում։

Ամառվա ընթացքում դաստիարակը պետք է գնա բոլոր յերեխաների տները։ Հաճախման ժամանակ նա պետք է ծնողներին պատմի, թե ինչպես են ապրում յերեխաները հրապարակում, ինչպես սիրով միասին խաղում են, յերգում ուրախ յերգեր, նկարում և այլն․ ինչպես է իրեն զգում յերեխան հրապարակում, ինչպես է նա զարգանում։

Դաստիարակը տալիս է խորհուրդներ ծնողներին յերեխաների դաստիարակության մասին տանը․ ինչպես նրան սովորեցնեն լվանալ ձեռքերը և յերեսը․ բացատրել, թե ինչպիսի խոշոր նշանակություն ունի առանձին սրբիչը, խորհուրդ է տալիս յերեխային առանձին քնեցնել և այլն։

Բացի ծնողների հետ ունեցած առանձին զրույցներից, հարկավոր է կազմակերպել նաև ծնողական ժողովներ։ Նկատի ունենալով, որ ամառվա ընթացքում կոլտնտեսականները խիստ զբաղված են, այդպիսի ժողովներ հարկավոր է անցկացնել քիչ, ամառվա ընթացքում 3 անգամ։

Առաջին ծնողական ընդհանուր ժողովը հարկավոր է կազմակերպել դեռ հրապարակը բանալուց առաջ, քննել հրապարակի խնդիրները և ընտրել ծնողական կոմիտե։

Վարիչը պետք է պատմի ծնողներին, որ հրապարակը կոլտնտեսությունում կազմակերպվում է ոչ միայն նրա համար, որ ամառվա աշխատանքների ընթացքում յերեխաներն ապահովված լինեն կանոնավոր խնամքով, այլ և նրա համար, որպեսզի կազմակերպվի յերեխաների ճիշտ դաստիարակությունը։ Պատմել, թե ինչպես և ինչով պետք է զբաղվեն յերեխաները հրապարակում (խաղեր, յերգ, նկարչություն և այլն)։

Այդ նույն ժողովում կարելի յե ասել ծնողներին, թե նրանք ինչով կարող են օգնել հրապարակին (կարել սպիտակեղեն, փորել մարգերը, ծաղկանոցը և այլն)։

Ծնողներին բացատրել ծնողական կոմիտեյի իրավունքների և պարտականությունների մասին։ Կատարել կոմիտեյի ընտրությունները։ Ժողովից հետո կոմիտեյի անդամները մնում են, կատարում են աշխատանքի բաժանում անդամների միջև և վարիչի օժանդակությամբ կազմում են իրենց աշխատանքների պլանը։

Հաշիվը միշտ հարկավոր է կապել կոնկրետ առարկաների հետ:

Յերեխաներից վոմանք շատ լավ հաշվում են վերացականորեն (առանց առարկաների) նույնիսկ մինչև 100, բայց պարզվում է, վոր այդ նույն յերեխաները չեն կարողանում ճիշտ հաշվել 10—15 գդալ կամ ափսե. դա նշանակում է, վոր նրանք դեռևս չեն սովորել թիվը կապել առարկաների քանակի հետ: Դրա համար հարկավոր չէ շտապել վերացական հաշվումների մեջ. հարկավոր է յերեխաներին տալ հնարավորություն հաշվելու մեջ վարժվել մատիտներ, վրձիններ և այլ առարկաներ բաժանելիս, խաղալիքները հավաքելիս, նկարները դիտելիս, հավաքած բնական նյութերը ուսումնասիրելիս (տերևներ, քարեր, կաղիններ, կոներ և այլն):

Փոքրերի խմբի յերեխաները կարող են սովորել հաշվել առարկաները մինչև հինգը: Բացի դրանից նրանք տարբերում են՝ շատը—քիչը, մեծը—փոքրը, յերկարը—կարճը, հաստը—բարակը, յերեկ—այսոր, վաղը:

Մեծ յերեխաներին կարելի յե սովորեցնել հաշվել առարկաները 10-ի սահմաններում:

Փոքրերի խմբի յերեխաների խաղերի և զբաղմունքների ընթացքում հաշվելու և համրելու համար կարելի յե ոգտագործել խորանարդներ, գնդիկներ, նկարներ, ինչպես և պատրաստել տուփեր տարբեր քանակի առարկաներով. առաջին տուփի մեջ մեկ կաղին, յերկրորդի մեջ՝ յերկու կաղին, յերրորդի՝ յերեք և այլն, մինչև հինգը:

Նույնը կարելի յե անել փայտիկներով, քարերով, լոբիներով:

Բարձր խմբերի յերեխաների համար հարկավոր է ոգտագործել, բացի փոքրերի համար նշածից, ծալովի (քանդովի) տիկնիկներ, բուրգեր, բաժակներ մինչև 10 հատ, 10-ական իրերով տուփեր, լոտո, զույգ նկարներով խաղեր, խաղալիքների հավաքածու և այլն:

Աշխատանքը ծնողների հետ

Ամառը կոլտնտեսական ծնողները բոլորն զբաղված են դաշտային աշխատանքներով, դրա համար էլ հարկավոր է նրանց հետ զրուցելու համար ոգտագործել այն հանդիպումները, յերբ ծնողները յերեխաներին բերում են կամ տանում հրապարակից:

Յերբ ծնողներն առաջին անգամ յերեխային բերում են

հրապարակ, դաստիարակը կամ վարիչը պետք է նրանց հետ զրուցի յերեխայի մասին, հարցուփորձ անի յերեխայի մասին. բացի դրանից, ցույց տա և պատմի համառոտակի, թե ի՛նչպես է կազմակերպվելու յերեխաների կյանքը հրապարակում:

Ամառվա ընթացքում դաստիարակը պետք է գնա բոլոր յերեխաների տները: Հանդիպման ժամանակ նա պետք է ծնողներին պատմի, թե ի՛նչպես են ապրում յերեխաները հրապարակում, ի՛նչպես սիրով միասին խաղում են, յերգում ուրախ յերգեր, նկարում և այլն. ի՛նչպես է իրեն զգում յերեխան հրապարակում, ի՛նչպես է նա զարգանում:

Դաստիարակը տալիս է խորհուրդներ ծնողներին յերեխաների դաստիարակության մասին տանը. ինչպես նրան սովորեցնեն լվանալ ձեռքերը և յերեսը. բացատրել, թե ի՛նչպիսի խոշոր նշանակություն ունի առանձին սրբիչը, խորհուրդ է տալիս յերեխային առանձին քնեցնել և այլն:

Բացի ծնողների հետ ունեցած առանձին զրույցներից, հարկավոր է կազմակերպել նաև ծնողական ժողովներ: Նկատի ունենալով, վոր ամառվա ընթացքում կոլտնտեսականները խիստ զբաղված են, այդպիսի ժողովներ հարկավոր է անցկացնել քիչ, ամառվա ընթացքում 3 անգամ:

Առաջին ծնողական ընդհանուր ժողովը հարկավոր է կազմակերպել դեռ հրապարակը բանալուց առաջ, քննել հրապարակի խնդիրները և ընտրել ծնողական կոմիտե:

Վարիչը պետք է պատմի ծնողներին, վոր հրապարակը կոլտնտեսությունում կազմակերպվում է վոչ միայն նրա համար, վոր ամառվա աշխատանքների ընթացքում յերեխաներն ապահովված լինեն կանոնավոր խնամքով, այլ և նրա համար, վորպեսզի կազմակերպվի յերեխաների ճիշտ դաստիարակությունը: Պատմել, թե ինչպես և ինչով պետք է զբաղվեն յերեխաները հրապարակում (խաղեր, յերգ, նկարչություն և այլն):

Այդ նույն ժողովում կարելի յե ասել ծնողներին, թե նրանք ինչով կարող են ոգնել հրապարակին (կարել սպիտակեղեն, փորել մարգերը, ծաղկանոցը և այլն):

Ծնողներին բացատրել ծնողական կոմիտեյի իրավունքների և պարտականությունների մասին: Կատարել կոմիտեյի ընտրությունները: Ժողովից հետո կոմիտեյի անդամները մնում են, կատարում են աշխատանքի բաժանում անդամների միջև և վարիչի ոժանդակությամբ կազմում են իրենց աշխատանքների պլանը:

5. Հատակ լվանալու և կեղտաջրի դույլեր . 2
6. Տաշտ 1
7. Կրակխառնիչ 1
8. Կացին 1
9. Ածխի ունելիք 1
10. Գոգաթիակ ածխի 1
11. Արդուկ 1
12. Խոհանոցի դանակներ 2
13. Ալյումինե կաթսաներ 4
14. Կողպեքներ 4
15. Լամպ նավթի 2
16. Սեղանի մոմլաթ 1
17. Մաղ 1
18. Խախալ (մաղ) 1
19. Տախտակ խմորի համար 1
20. Մեծ փայտյա դդալներ 2
21. Տախտակ հաց կտրելու համար 2
22. Գրտնակներ 3
23. Աղաման մեծ 1
24. Հատակի խոզանակ 2
25. Խոզանակներ պատերն ու առաստաղը մաքրելու համար 1
26. Բահ յերկաթե 1
27. Թիակ 1
28. Զամբյուղ մթերքի համար 1
29. Զամբյուղ լվացքի 1
30. Մատուցարան 1
31. Փոքրիկ գորգեր վոտքի տակի 2
32. Ցանց վոտք մաքրելու համար 2
33. Պարաններ 2
34. Տոպրակներ 3
35. Կեղտոտ շորերի արկղ 1
36. Ժամացույց 1
37. Կափարիչով արկղ աղբի համար . . . 1
38. Կափարիչով և ծորակով տակառ ջրի համար 1
39. Մթերքների արկղ 1
40. Կշեռք 1

Փափուկ գույք

1. Յերեխայի խալաթ
2. Յերեսսրբիչներ
3. Սավաններ և վերմակի սավաններ
4. Բարձի յերես վերին
5. Բարձի յերես ներքին
6. Տրուսիկներ

} 2 հատ ամեն մի յերեխային

7. Ներքնակներ (լցված)—յերեխային 1 հատ
8. Վերմակներ—յերեխային 1 հատ
9. Ամանսրբիչ—5 հատ մեկ խմբին
10. Խալաթներ աշխատակիցների համար—2 հատ մարդուն
11. Թաշկինակներ—2 հատ մեկ յերեխային:

Հավելված № 2

Մթերքների ծախսման նորմաներ

Յերեխաներին օրական 4 անգամ կերակրելու համար՝ նախադպրոցական հիմնարկում լրիվ օրվա սպասարկման դեպքում (քաշը չմաքրած վիճակում)

№№ ըստ կարգի	Մթերքների անունները	Քանակը գրամներով օրվա համար մեկ յերեխային	Կալորիաներ
1	Հաց	250	492,70
2	Ալյուր ցորենի	20	69,02
3	Ալյուր կարտոֆիլի	8	27,11
4	Բրինձ, մակարոն	40	137,78
5	Կարտոֆիլ	200	167,28
6	Այլ բանջարեղեն (կաղամբ, գազար, բադրիջան, պոմիդոր, լոբի, դդում և այլն):	175	62,48
7	Թարմ մրգեր	400	91,02
8	Չոր մրգեր	15	32,89
9	Շաքար	60	232,49
10	Քաղցրեղեն կամ թխվածք	30	103,71
11	Սուրճ	3	—
	Ընդամենը բուսական ծագում ունեցող մթերքներ		1416,93

№№ ըստ	Մթերքների անունները	Քանակը գրամներով օրվա համար մեկ յերեխայի	ներ
12	Ձուկ	50	50,62
13	Միս	80	105,39
14	Կաթ	500	327,50
15	Չոռ	40	27,18
16	Կարագ	50	393,70
17	Հում սեր, մածուն	40	102,43
18	Ձու	3/4 հատ	47,73
19	Պանիր	10 գր.	39,07
	Ընդամենը կենդանական ծագում ունեցող նյութեր		1093,62
	Ընդամենը		2510,55

Հավելված № 3

Հնգօրյակի օրինակելի կերակրացանկ

1-ին օր

ՆԱԽԱՃԱՇ

Հում գազար (մաքուր լվացած), փլավ:
Կաթով թեյ: Բուլկի յուղով:

ՃԱՇ

Կարտոֆիլով սուպ առանց մսի կամ սպաս:
Բիտկի մսով՝ մակարոնի հետ: Կիսել:

ՀԵՏՃԱՇԻԿ

Կաթ բուլկիի հետ:

ԸՆԹՐԻՔ

Գաթա: Քաղցր թեյ:

2-րդ օր

ՆԱԽԱՃԱՇ

Հում կաղամբ: Տապակած լոբի ձվով:

ՃԱՇ

Սուպ մսով կամ չչի: Տոլմա մսով կամ ռագու բանջարեղենից: Կաթի կիսել:

ՀԵՏՃԱՇԻԿ

Կանֆետով թեյ, բուլկի:

ԸՆԹՐԻՔ

Տապակած կարտոֆիլ կամ կարտոֆիլե կոտլետ: Սուրճ, բուլկի մուրաբայով:

3-րդ օր

ՆԱԽԱՃԱՇ

Կաթով ճաշ (ձավարից) յուղով: Քաղցր թեյ: Յուղով բուլկի:

ՃԱՇ

Բանջարեղենով սուպ կամ առանց մսի բորշչ: Բոզբաշ: Կիսել կամ կոմպոտ:

ՀԵՏՃԱՇԻԿ

Թեյ, բուլկի պանրով կամ չոռով՝ սերի հետ:

ԸՆԹՐԻՔ

Տապակած կարտոֆիլ: Կաթ կամ մածուն:

4-րդ օր

ՆԱԽԱՃԱՇ

Թխվածք վերմիշելից ձվով, կամ ձու: Սուրճ, բուլկի կարագով:

ՃԱՇ

Բոզբաշ թարմ մսով: Կոտլետ, կարտոֆիլե պյուրե, վարունգ: Խնձոր, ծիրան:

ԸՆԹՐԻՔ

Տապակած լոբի: Սուրճ, բուլկի:

5-րդ օր

ՆԱԽԱՃԱՇ

Գազար: Փլավ: Սուրճ, բուլկի կարագով կամ բլիթ:

ՃԱՇ

Սպաս: Տոլմա: Կոմպոտ կամ թարմ մրգեր:

ՀԵՏՃԱՇԻԿ

Բաղցր թեյ: Բուլկի: Մրգեր:

ԸՆԹՐԻՔ

Խաշած բազուկ և կարտոֆիլ: Բուլկի, մածուն կամ կաթ:

Հավելված № 4

Ինչպես պատրաստել կերակուր[1])

Առաջին տեսակներ

1. ՇՉԻ ԹԱՐՄ ՄՍՈՎ

Միսը լվանում են սառը ջրում, դնում կաթսայում, վրան լցնում սառը ջուր և տաքացնում մինչև յեռ գալը: Փախը քաշում են: Հետո լվանում են և կտրտում գազարը, մաղադենոսը (պետրուշկա), սոխը, պոմիդորը, գցում են յեռացող սուպի մեջ և յեփում մինչև կիսապատրաստ դրությունը:

Հետո կտրտում են կաղամբը, լցնում կաթսայի մեջ և յերբ նորից սուպը յեռա՝ ավելացնում են մաքրած, կտրած կարտոֆիլը: Մինչև վերջնական յեփվելը կես ժամ առաջ գցում են աղը: Ճաշի ժամանակ ափսեների մեջ գցում են թթվասեր (սմետան):

Շչիի մեջ յեփած միսը կամ կտրատում են և սուպի հետ ուտում, կամ պատրաստում են յերկրորդ տեսակի կերակուր:

2. ՄՍՈՎ ՍՈՒՊ

Պերլովի կրուպան մաքրում են, լվանում և սառը ջրի մեջ թողնում գիշերը: Կրուպայի այդ նույն ջրի մեջ յեփում են սուպը:

Միսը լվացվում է սառը ջրում և դրվում կաթսայում, վորտեղ լցված է կրուպա և սառը ջուր: Յերբ սուպը յեռում է, կաթսան դնում են վառարանի յեզրին, վորպեսզի դանդաղ յեռա: Գազարը, մաղադենոսը, սոխը, կարտոֆիլը և պոմիդորը լվանում են սառը ջրում, մաքրում են, մանր կտրատում և գցում դանդաղ յեռացող սուպի մեջ: Սուպը յեփում է 3—4 ժամ:

[1]) Ռեցեպտները վերցված են «Վաղ հասակի յերեխաների սնունդը» գրքից—հրատարակություն Առժողկոմատի՝ Մոր և մանկան պաշտպանման կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի:

3. ՍՈՒՊ—ԿԱԹՈՎ ՌՇՏԱ

Աղը գցած ջրի մեջ յեփում են ռշտան մինչև պատրաստ լինելը: Հետո ավելացնում են կաթ և յեռացնում: Սուպը կրակից վերցնելիս ավելացնում են յուղ:

4. ԲՈՐՇՉ ԱՌԱՆՑ ՄՍԻ

Գազարը, ճակնդեղը, պոմիդորը և մաղադենոսը մաքրում են, լվանում սառը ջրում, մանր կտրատում են, լցնում սառը ջրով ամանի մեջ, դնում են կրակին և յեփում մինչև կիսապատրաստ դրությունը: Հետո ավելացնում են մանր կտրատած կաղամբը և, յերբ բորշչը համարյա պատրաստ է, գցում են մանր կտրատած կարտոֆիլ և յեփում են մինչև պատրաստ լինելը:

Սոխը առանձին տապակվում է յուղի մեջ. հետո լցնում են սուպի մեջ: Թթվասերը տրվում է առանձին ափսեյով, յերբ բորշչը պատրաստ է ուտելու համար:

Յերկրորդ տեսակներ

5. ԿՈՏԼԵՏ ՄՍԻՑ

Միսը լվանում են սառը ջրում, ջոկում են վոսկորներից, կտրում են ջլերը և անց են կացնում մսաղացով: Սոխը քերում են քերիչի վրա: Պաքսիմատը (սուխարի) ջրում թացացնում են 30 րոպե: Մսաղացով անցած միսը, պաքսիմատը և քերած սոխը իրար են խառնում (կարելի յե նորից անցկացնել մսաղացով) և աղ են անում: Կոտլետները պատրաստում են պաքսիմատով և տապակում յեռացող յուղի մեջ: Չի կարելի դրանք չորացնել. կոտլետները պետք է լինեն լավ տապակած, բայց հյութալի:

6. ԿՈՏԼԵՏՆԵՐ ԿԱՐՏՈՖԻԼԻՑ

Կոտլետի համար կարտոֆիլը խաշվում է ջրում մինչև պատրաստ լինելը, հետո մաքրում են և անցկացնում մսաղացից: Հետո ավելացնում են ձու, աղ և կաթ, լավ խառնում են և ալյուրի մեջ պատրաստում կոտլետներ: Կոտլետները տապակում են յուղի մեջ: Կոտլետները կարելի յե տալ կամ թթվասերով, կամ չամիչի սոուսով:

7. ՏԱՊԱԿԱԾ ԴԴՈՒՄ

Դդմիկները լվանում են սառը ջրում, մաքրում են կեղևից և միջուկից, յեփում են քիչ աղի ջրի մեջ մինչև կիսապատրաստ

վիճակը։ Հետո հանում են, ջրաքամ անում, թողնում սառչի և մեկուկես մատ հաստությամբ ողակաձև կտրտում։

Թաթախում են ալյուրի կամ պաքսիմատի փոշու մեջ, տապակում են յուղի մեջ և թավայով դնում ջեռոցում մինչև յեփվելը։ Սեղանի վրա յեն դնում ուտելու՝ թթվասերի կամ պոմիդորի հետ։

8. ԴԴՄԻ ՇԻԼԱ

Դդումը լվանալ, մաքրել կեղևից և միջուկից, կտրատել և յեփել մինչև փափկանալը—քիչ քանակությամբ ջրով։

Դդումը պետք է շուտ-շուտ խառնել, վորպեսզի չայրվի (տակը չկպչի)։ Հետո քամել մաղով։

Կերակրի ուրիշ ամանի մեջ յեփում են ջրով մաննի կրուպայի շիլա, մինչև պատրաստ լինելը։ Յերբ մաննի կրուպան փափկում է, նրա մեջը լցնում են դդում, կաթ, շաքար, աղ և հետո նորից յեռացնում։ Ուտելու ժամանակ վրան յուղ են ածում։

9. ՊԱՆՐԱԿԱՐԿԱՆԴԱԿՆԵՐ ԹԹՎԱՍԵՐՈՎ (СЫРНИКИ)

Լավ քամած շոռը տրորում են մաղի մեջ, ավելացնում են շաքար, ձու և ցորենի ալյուր։ Այս բոլորը լավ իրար են խառնում։ Ապա դրանից պատրաստում են բլիթներ—թաթախելով ալյուրի մեջ։ Ուտելուց առաջ բլիթները յեռացող յուղի մեջ տապակում են յերկու յերեսից էլ։ Ուտում են թթվասերի և շաքարի հետ։

Յերրորդ տեսակներ

10. ԿԱԹԻՑ ԿԻՍԵԼ

Կաթը յեռացնում են, մեջը գցելով շաքար։ Յեռալու ժամանակ մեջն են ածում կարտոֆիլի ալյուր, նախորոք բանալով այն սառը ջրի մեջ և արագ ու ուժեղ խառնում, վոր գնդիկներ չառաջանան։ Ուտել սառեցրած։

11. ԿՈՄՊՈՏ

Չոր կամ թարմ միրգը մաքրում են, լվանում միքանի անգամ սառը ջրով, սառը ջրի մեջ ածելով դնում են կրակին և բերանը ամուր փակած դանդաղ յեփում։

Յերբ կոմպոտը յեռաց, կաթսան դնում են վառարանի յեզրին։ Կոմպոտը թողնում են գիշերը կաթսայի մեջ, բերանը

ամուր փակելով։ Մյուս առավոտը կոմպոտի ջրից վերցնում են միքիչ և նրա մեջ լուծում հարկավոր քանակությամբ շաքար, ստացված ոշարակը յեռացնում են և ածում մնացած կոմպոտի վրա։ Կարելի յե ավելացնել նաև փոքր քանակությամբ կարտոֆիլի ալյուր։

Ինչպես յեփել կաթը

Հում կաթը թույլատրվում է յերեխաներին տալ միայն այն դեպքում, յերբ անասնաբույժը գտնում է, վոր այն կովերը, վորոնց կաթը տրվում է յերեխաներին, միանգամայն առողջ են։ Սակայն այդ դեպքում հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել ախոռների, կովերի, կովկիթների մաքրության վրա։

Նախքան կով կթելը, հարկավոր է ձեռները սապոնով մաքուր լվանալ և հագնել մաքուր խալաթ։ Կաթը հարկավոր է պահել սառը տեղ (այնտեղ չպետք է լինի վոչ մի կողմնակի մթերք՝ միս, կաղամբ, ուրիշ բանջարեղեն), մաքուր արծնապակյա կամ ապակյա անոթներում—ծածկված մաքուր շորով։

Յեթե կաթը ստացվում է ուրիշ տեղից, ապա հարկավոր է այն անպայման յեփել և հետո տալ յերեխաներին։ Կաթը շատ յեռացնել չի թույլատրվում։ Դրանից նա կորցնում է իր ոգտակար հատկությունների մի մասը (վիտամինները)։

Կաթը տաքացնելու համար հարկավոր է ունենալ առանձին աման, վորի մեջ ուրիշ բան չպետք է յեփել։ Կաթն այնքան են տաքացնում, մինչև վոր նա յեռա (բարձրանա), դրանից հետո կրակից հանում են, փակում բերանը և արագ տանում ցուրտ տեղ։

12. ՍԱԼԱԹ ԹԱՐՄ ԿԱՂԱՄԲԻՑ

Գլուխ կաղամբը մաքրում են վերին տերևներից, միջից կիսում են և կտրատում են վորքան կարելի յե բարակ։ Հետո վրան ցանում են աղաջուր, ավելացնում են շատ մանրացրած սոխ, շաքար և բուսական յուղ։ Այդ բոլորը լավ խառնում են։ Տասը րոպեյից հետո նորից խառնում են ու տալիս ուտելու։ Այս սալաթը կարելի յե պատրաստել նաև թթու դրած կաղամբից։

Բացի դրանից բանջարեղենից կարելի յե պատրաստել.

1. վինեգրետ—հաշվելով մեկ յերեխայի համար—100 գր. խաշած կարտոֆիլ, 60 գր. ճակնդեղ, 15 գր. կաղամբ, ¼ վա-

բունդ, 3 գր. սոխ, 25 գր. թթվասեր, 8 գր. քացախ, 10 գր. թարմ տոմատ, 10 գր. թարմ սալաթ:

2. Կարտոֆիլի պյուրե—200 գր. կարտոֆիլ, 50 գր. կաթ, 20 գր. յուղ, 3 գր. աղ:

3. ԿԱՐՏՈՖԻԼԻ ԿՈՏԼԵՏ՝ ԿԻՍԵԼՈՎ

Առաջին տեսակը կարելի յե պատրաստել մսով և բանջարեղենով՝

1. *Մսով և ձավարով սուպ:*
2. *Մսով և կարտոֆիլով սուպ:*
3. *Սուպ—պյուրե լոբուց, սիսեռից:*
4. *Շչի—թարմ կաղամբով, մսով:*
5. *Շչի—թարմ կանաչեղենից (սպանախ):*
6. *Կաթով ուշտա:*
7. *Առանց մսի կարտոֆիլով սուպ:*
8. *Կաթով և կարագով սուպ, բրնձով, ձավարով:*
9. *Առանց մսի բորշչ:*
10. *Առանց մսի թարմ շչի, թթվասերով և կարագով:*
11. *Տոլմա մսով ու բրնձով, պոմիդորով, խնձորով և բադրիջանով:*
12. *Բադրիջանի միջուկ* (икра):

Հավելված № 5

ԻՆՉՊԵՍ ՑՈՒՅՑ ՏԱԼ ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԻՎԱՆԴ ՅԵՐԵԽԱՅԻՆ

Հրապարակի յուրաքանչյուր դաստիարակ պարտավոր է իմանալ՝ ինչպես ցույց տալ առաջին ոգնություն հիվանդացած յերեխային:

Ոգնություն վնասվածքների դեպքում

Վնասվածքների դեպքում անհրաժեշտ է անել հետևյալը. յեթե վնասված տեղում մաշկը չի քերծված, ապա վնասված տեղի վրա պետք է դնել սառը ջրով թրջած շոր և թողնել այդպես կես ժամ: Յեթե վնասվածքը մեծ է, ապա ամեն 1—2 ժամից դնել տաքացնող (согревающий) *կոմպրես: Վնասված տեղի վրա դնել թացացրած մաքուր շոր կամ մառլա, վրայից ծածկել մոմլաթով կամ մոմաթղթով, վրան դնել մի կտոր բամբակ և ամուր կապել: Կոմպրեսը փոխել ամեն 6 ժամից հետո:*

Ոգնություն վիրավորվելու դեպքում

Յերբ վերքից աննշան քանակությամբ արյուն է հոսում, ապա բավական է միքանի րոպե մաքուր բամբակով սեղմել վերքի վրա, յոդ քսել և կապել (վոչ մի դեպքում թույլ չի տրվում վերքը լվանալ և ձեռքով դիպչել):

Յեթե արյունը վերքից հոսում է անընդհատ և նրա գույնը մուգ կարմիր է (յերակի վնասվածք), ապա հարկավոր է յերեխային պառկեցնել հանգիստ, զգեստից ազատել վերքը և վերջինիս տալ բարձրացած դրություն մարմնի մյուս մասերի նկատմամբ: Վերքի վրա դնել թույլ սեղմող փաթաթան:

Յեթե արյունն ունի վառ կարմիր գույն և դուրս է գցում զարկերով, ապա պետք է մատներով սեղմել վերքից բարձր գտնվող մասը, յեթե այն գտնվում է ձեռքերի կամ վոտքերի վրա, և սեղմել վերքից ցած գտնվող մասը, յեթե վերքը գտնվում է գլխի վրա: Այդ վիճակում պահել 25—30 րոպե, մինչև արյունահոսությունը դադարի:

Ինչպես կանգնեցնել քթի արյունահոսությունը

Յերեխային նստեցնել, զգեստը թուլացնել, գլուխը հետ գցել, ձեռքերը բարձրացնել գլխից վեր, քթի վերևի մասում դնել սառը ջրում թրջված շոր: Քթի՝ արյուն հոսող անցքի մեջ դնել մի կտոր պինդ սեղմած բամբակ:

Ինչպես հանել փուշը

Յեթե մաշկի մեջ փուշը խորն է մտել, ապա այն կարելի յե հանել միայն այն դեպքում, յեթե նրա ծայրը յերևում է: Հանելուց հետո հարկավոր է յոդ քսել և կապել:

Ոգնություն հոդախախտումների դեպքում

Հոդախախտումների դեպքում վոսկրները դուրս են ընկնում հոդերից: Խախտումներն անձամբ ուղղել չի կարելի: Պետք է ուղարկել բժշկի մոտ, անպայման հոդախախտում ունեցող ձեռքը կապելով մարմնին, իսկ յեթե վոտքն է խախտվել տեղից, ապա պետք է այն զգուշությամբ կապել առողջ վոտքից և պատգարակի կամ շտապ ոգնության մեքենայի միջոցով հասցնել բժշկին:

Օգնություն վոսկրի կոտրվածքի դեպքում

Վոսկրի կոտրվածք նախադպրոցականների մոտ շատ հազվադյուտ ե պատահում: Այն դեպքում, յերբ կոտրվածքն առկա յե, մնացած տեղն արագորեն ուռչում ե, ուժեղ ցավում ե, կորցնում ե իր սկզբնական ձևը: Արգելվում ե շոշափել մաշկը կոտրվածքի տեղում: Անհրաժեշտ ե բժշկի մոտ տանել յերեխային, կապելով կոտրված վոտքը կամ ձեռքը չծռվող ամուր առարկայի (տախտակ և այլն): Յերեխային հարկավոր ե տանել ձեռքերի, պատգարակի կամ լայն տախտակի վրա:

Օգնություն ուշագնացության դեպքում

Նախ և առաջ հարկավոր ե բանալ պատուհանը, արձակել գոտին և մյուս կապերը և այնպես պառկեցնել յերեխային, վոր գլուխը վոտքերից ցած լինի: Յերեսը և կուրծքը ջրցանել սառը ջրով, քթին մոտեցնել անուշադրի սպիրտով թրջած չոր:

Օգնություն շմոլքի (ուզարի) դեպքում

Պատուհանները լրիվ բանալ: Անմիջապես յերեխային հանել մաքուր օդ, արձակել օձիքը, մարմինը շփել ողիով, վրան միքանի տեղից դնել տաք շշեր; քթին մոտեցնել միքանի կաթիլ անուշադրի սպիրտով թրջած բամբակի կտոր, կատարել արհեստական շնչառություն: Արհեստական շնչառությունը կատարվում ե հետևյալ կերպ. յերեխային պառկեցնել գետնին, յերեսը դեպի վեր, գոտկատեղի տակը դնել վորևե փափուկ բան: Ապա չոքել յերեխայի մոտ, բռնել նրա արմունկներից և «մեկ» հաշվին յերեխայի ձեռքերը հետ գցել նրա գլխի վերևը: Մեկ-յերկու վայրկյան յերեխայի ձեռքերը պահել այդ վիճակում, ապա «յերկու» հաշվին ձեռքերն իջեցնել այնպես, վոր դաստակները թեթևակի ճընշեն յերեխայի կրծքի վանդակի ներքևի մասը:

Օգնություն շնչառությունը դադարելու դեպքում

Յերբ յերեխան ընկել ե լիճը կամ գետը, հարկավոր ե նրան այնտեղից հանելուց հետո կատարել արհեստական շնչառություն:

Յերեխային պետք ե պառկեցնել գետնի վրա, յերեսով ցած, չոքել նրա մոտ—յերեսով դեպի յերեխայի մեջքը, այնպես, վոր յերեխայի վոտքերը սեղմված լինեն օգնություն հասցնողի ծընկ-

ների արանքում: Թեքելով իր իրանը, օգնություն հասցնողը ձեռքերով ճնշում ե յերեխայի կրծքի վանդակի ներքևի մասը: Յերբ յերեխայի ստամոքսից և թոքերից թափվում ե այնտեղ կուտակված զանգվածը, յերեխային շրջում են մեջքի վրա—յերեսով դեպի վեր և կատարում արհեստական շնչառություն (վերևում նըշված ձևով):

Օգնություն մեղվի խայթելու դեպքում

Հարկավոր ե խայթած տեղի վրա դնել սառը թրջոցներ և քսել անուշադրի սպիրտ:

Օգնություն կենդանիների կծելու դեպքում

Վերքը լվանալ յեռացրած սառը ջրով և անմիջապես ուղարկել հիվանդանոց:

Օգնություն այրվածքների դեպքում

Յեթե յերեխայի հագուստն ե բռնկվել, հարկավոր ե նրան փաթաթել վերարկուի կամ վերմակի մեջ, կամ գլորել գետնի վրա—մինչև կրակի հանգչելը: Դրանից հետո կտրատել հագուստը, այրվածքների վրա քսել անալի յուղ, վրայից շաղ տալ սոդա: Կարելի յե օգտագործել նաև մանգանի լուծույթում թաթախած մաքուր շոր:

Տաք ձեթով խաշվածքի վրա ցանել սառը ջուր:

Ալկալով այրվելու դեպքում, ցանել քացախով կամ կվասով խառնած ջուր:

Թթուներով այրվելու դեպքում—ցանել սապնաջուր և վրան շաղ տալ սոդա կամ ատամի փոշի:

Չայրված կրով այրվելու դեպքում, վրան ցանել մեծ քանակությամբ ջուր:

Աչքի այրվածքի դեպքում—քսել անալի յուղ, ծածկել մառլայով և կապել:

Արևը խփելու դեպքում—յերեխային դնել ստվերոտ տեղ, գլուխը բարձր պահել, մերկացնել և վրան ցանել սառը ջուր, մարմինը շփել թաց սրբիչով: Յեթե չի շնչում—կատարել արհեստական շնչառություն:

Օգնություն թունավորման դեպքում

Տալ փսխեցնող կամ լուծողական: Լավ ե տալ ջրի մեջ լուծած սպիտակուց (մեկ բաժակ ջրին յերկու ձվի սպիտակուց)

կամ ամեն 3—5 րոպեից տալ վարսակի լորձային յեփվածք: Անմիջապես կանչել բժշկին:

Ոգնություն ջղաձգությամբ նվաղման ուշաթափման դեպքում

Ջղաձգությամբ նվաղման դեպքում (ընկնավորություն) հեռացնել մոտակա առարկաները, գլխատակը դնել փափուկ չոր: Ատամների արանքը դնել բամբակով փաթաթած փայտե ձողիկ: Հագուստի բոլոր կապերն արձակել: Ջղաձգությունն անցնելուց հետո յերեխային չարթնացնել:

Ոգնություն կոկորդում մնացած վորեվե առարկայից խեղդվելու դեպքում

Յերեխային նստեցնել մեծի ծնկների վրա, գլուխը ձեռքերով բռնել, բերանը բանալ աջ ձեռքի մատներով, միջին մատով և ցուցամատով սեղմել լեզվի արմատը: Յեթե այն առարկան, վորով խեղդվել է յերեխան, յերևում է, ապա բռնել և քաշել. իսկ յեթե չի յերևում, ապա յերեխային փորի վրա պառկեցնել մեծի ծալած ձախ վոտի վրա այնպես, վոր գլուխը և կուրծքը կախ ընկնեն. դրանից հետո կարուկ և յեռանդուն հարվածներ հասցնել աջ ձեռքի ափով յերեխայի թիակների մեջտեղը: Յեթե առարկան, վորով խեղդվել է յերեխան, դուրս չգա՝ շտապ կերպով ուղարկել բժշկի մոտ կամ հիվանդանոց:

Ոգնություն աչքի, ականջի, քթի մեջ վորևե բան ընկնելու դեպքում

Յեթե աչքի մեջ ընկնում է փոշի, փառ, ապա հարկավոր է յերեխային չոքեցնել, գլուխը հետ գցել, ձախ ձեռքի բութ մատով ներքին, իսկ ցուցամատով՝ վերին կոպերը հետքաշել (կոպերն իրարից հեռացնել), ապա ստիպել յերեխային, վոր նայի վերև, ներքև, աջ, ձախ: Յեթե մարմինը յերևում է, յռացրած ջրում թրջած մաքուր թաշկինակի ծայրով զգուշությամբ հեռացնել աչքի մեջ ընկած ոտար մարմինը: Յեթե աչքի մեջ ընկել է ապակու կամ յերկաթի կտոր, ապա հարկավոր է աչքը կապել մաքուր շորով և տանել բժշկի մոտ: Թույլ չտալ աչքը տրորել: Յեթե վորևե ոտար մարմին ընկել է քիթը կամ ականջը, չփորձել այն հանել, այլ անմիջապես ուղարկել բժշկի մոտ:

Առաջին ոգնության դեղարկղ[1])

1) Յոդ: 2) Անուշադրի սպիրտ: 3) Արճճաջուր (վնասվածքների դեպքում): 4) Խմելու սոդա: 5) Յեթերա-վալերյանի կաթիլներ: 6) Վազելին: 7) Սոմլաթ կամ մոմաթուղթ (կոմպրեսի համար): 8) Բորաթթու (մեկ բաժակ տաք ջրին՝ մեկ դգալ): 9) Մանգան (ջրի մեջ գցել մի քիչ մանգան, վորպեսզի ստացվի մուգ կարմիր գույն): 10) Լուծողական (կաստորկա): 11) Սպիրտ (դենատուրատ): 12) Բամբակ: 13) Բինտեր: 14) Մկրատ: 15) Բուլավկա և գնդասեղ: 16) Ջերմաչափ: 17) Փուչիկ (տաք ջրի համար): 18) Փուչիկ (սառույցի համար): 19) Բալոն (կլիզմայի համար):

Հավելված № 6

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԸ ՀՐԴԵՀԻՑ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ամառվա պայմաններում յուրաքանչյուր հրապարակ պետք է հատուկ ուշադրություն դարձնի կրակի հետ բացառիկ զգուշությամբ վարվելու վրա:

Պետք է հիշել, վոր ամառը հրդեհի վտանգը չափազանց մեծ է, դրա համար էլ հրապարակում պետք է ձեռք առնել բոլոր նախազգուշական միջոցները:

1. Ամեն մի հրապարակ պետք է կապ հաստատի մոտակա հրդեհաշեջ հիմնարկի հետ:

2. Հրապարակում պետք է ունենալ կրակմարիչներ, իսկ աշխատակիցները պետք է իմանան նրանց հետ վարվելու յեղանակը: Այդ մասին պետք է սովորել տեղական հրդեհաշեջ խմբերից:

3. Հրապարակում անպայման պետք է ունենալ 1—2 պահեստի տակառներ ջրով լցրած: Դույլերը պետք է պահել աչքի ընկնող տեղում:

4. Յեթե հրապարակի շենքը յերկհարկանի յե, անհրաժեշտ է սարքավորել նաև դրսի պահեստի սանդուղքներ:

5. Դեպի տանիքը տանող մուտքը պետք է միշտ ազատ լինի, հեշտ բացվող: Տանիքի վրա և մուտքի մոտ արգելվում է իրեր պահել:

---

[1]) *Դեղարկղը պահվում է յերեխաների համար անմատչելի տեղում:*

6. Հրապարակում անհրաժեշտ է մանրակրկիտ կերպով ստուգել վառարանների վիճակը և հսկել ծխնելույզների ժամանակին մաքրման վրա։

7. Կերակուր պատրաստելու կամ տաքացնելու համար արգելվում է գործածել պրիմուս։ Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում օգտագործել կերոսինկա և շատ զգույշ վարվել նրա հետ։

8. Նավթը միշտ պետք է պահել փակված վիճակում և կրակից պաշտպանված վայրում։

9. Հրապարակի տեղամասում, շինություններից մոտիկ և այնտեղ, որտեղ պատրաստվում է ճաշը—չպետք է լինի ոչ մի հեշտ բռնկվող առարկա (ծղոտ, տաշեղ, թուղթ և այլն)։ Պետք է խիստ կերպով հսկել, որպեսզի մանկհրապարակի շինությունների մոտերքում չթափվի տաք մոխիր։

10. Վառարանները վառելիս ոչ մի դեպքում յերեխաներին չպետք է թույլատրել մոտենալու խոհանոց։

11. Լուցկին պահել յերեխաների համար անմատչելի տեղում։

12. Այն դեպքում, յերբ յերեխաները գիշերում են հրապարակում, ննջարանում անպայման պետք է վառել փոքրիկ ճրագ։ Ոչ մի դեպքում ճրագի փոխարեն չի կարելի գործածել լուցկի։ Ճրագը պետք է պահել թիթեղյա կամ եմալած ամանի մեջ։

13. Գիշերային հերթապահը չպետք է քնի։ Մուտքի դռան բանալիները միշտ պետք է պահվեն հայտնի և յերևացող տեղ։

14. Հրապարակի աշխատակիցները պետք է նախօրոք պայմանավորված լինեն, թե հանկարծակի հրդեհ ծագելու դեպքում, ինչպես պետք է կազմակերպել յերեխաներին, ու՛ր պետք է տանել նրանց, և ով ինչի համար պետք է պատասխանատու լինի։

15. Հրապարակի վարիչը պետք է խստությամբ հսկի, որպեսզի հրապարակի աշխատակիցները լավ իմանան հակահրդեհային պաշտպանության կանոնները և այն ճշտությամբ կիրառեն։

Հավելված № 7

ԱՄԱՌԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐՈՒՄ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՎՐԱ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԵՂԱՑՆԵԼՈՒ ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ

1. Յերեխաներին թույլատրվում է լողացնել ոչ խոր գետակներում և միայն ստուգված վայրերում։

25—30 հոգուց բաղկացած խմբին լողացնելիս, պետք է ներ-

կա լինեն 2-ից ոչ պակաս չափահասներ (որոնցից մեկն անպայման դաստիարակը)։

Մեկ անգամից կարելի յե լողացնել 3—5 յերեխա (մնացածները սպասում են ափում)։

Շոգ օրերին, մանավանդ կեսօրին, բոլոր յերեխաները պետք է ունենան սպիտակ պանամկա կամ սպիտակ կոսինկաներ։

2. Նավակ նստել յերեխաներին արգելվում է։

3. Պետք է խուսափել անցնել գետակով կամ խոր ջրանցքով, մանավանդ նեղ կամուրջներով կամ ճաղաշարք չունեցող կամուրջներով։

4. Ջրհորներն ու ջրամբարները պետք է խնամքով փակված լինեն։ Արտեզյան տիպի ջրհորների կափարիչները պետք է փակած լինեն կողպեքով։

5. Հրապարակի մոտակայքում յեղած բոլոր փոսերը պետք է լցված լինեն հողով։

6. Մանկհրապարակի տեղամասը պետք է ցանկապատած լինի։

Պետք է անընդհատ հսկել, որ յերեխաներն առանց հասակավորի ուղեկցության տուն չգնան կամ հրապարակի սահմաններից դուրս չգան, շարունակ յերեխաներին պետք է պահել տեսողության դաշտում։

Այն դեպքում, յերբ որևէ յերեխա անհետացել է հրապարակից, անմիջապես պետք է գնալ նրան փնտրելու, և յեթե 20—30 րոպեյից նա չգտնվի, անմիջապես հայտնել միլիցիայի մոտակա բաժանմունքին և ծնողներին ու ամենայն հոգատարությամբ պահպանել յերեխային փնտրելու հետագա աշխատանքները։

7. Ծնողներից կամ այն անձնավորություններից, որոնք յերեխաներին բերում են մանկհրապարակ, պետք է պահանջել, որպեսզի նրանք յերեխային հանձնեն դաստիարակին կամ մանկհրապարակի այն աշխատակցին, որն այդ օրն ընդունում է յերեխաներին։

Մանկհրապարակի աշխատանքները վերջանալուց հետո դաստիարակը պարտավոր է յերեխաներին կազմակերպված ձևով հանձնել ծնողներին կամ այն անձերին, որոնք յեկել են յերեխաների հետևից։

8. Զբոսանքներ կատարելը դեպի անտառի խորքերը, որտեղ յերեխաները կարող են մոլորվել, չի թույլատրվում։ Կազմակերպելով զբոսանք, դաստիարակը պետք է ճիշտ որոշի յերեխաների թիվը և լավ իմանա, թե ովքեր են գալիս իր հետ զբոսան-

քի: Յեթե նրա խմբի յերեխաներից վոմանք զանազան պատճառներով մնում են հրապարակում և զբոսանքի չեն դուրս գալիս, ապա նա հրապարակի վարիչի համաձայնությամբ մնացած յերեխաներին թողնում է հրապարակի աշխատակիցներից վորևե մեկի հսկողության տակ:

Զբոսանքի ժամանակ դաստիարակը պետք է մի քանի անգամ ստուգի յերեխաների առկայությունը: Զբոսանքից տուն վերադառնալիս դաստիարակը կրկին անգամ պետք է ստուգի՝ բոլոր յերեխաները տեղն են, թե վոչ, պետք է ճանապարհին հսկի, վոր հետ մնացողներ չլինեն: Յեթե յերեխաներից մեկն ու մեկը ներկա չգտնվի, դաստիարակը ձեռք է առնում բոլոր միջոցները նրան գտնելու համար:

Հրապարակ վերադառնալուց հետո նորից պետք է ստուգել՝ արդյո՞ք բոլոր յերեխաներն են վերադարձել, և հրապարակում մնացածները լրիվ են, թե՞ վոչ:

Չի կարելի զբոսանքի ուղարկել այնպիսի դաստիարակի, վորը դեռ լավ չի տիրապետում ամբողջ խմբի յերեխաներին կամ դեռ լավ ծանոթ չէ յերեխաների հետ: Այդպիսի դեպքերում դաստիարակի հետ պետք է գնա կամ ինքը վարիչը, կամ այն հանձնարարի մի ավելի կարող աշխատակցի:

9. Յերկաթուղագծեր, ինչպես և շատ շարժում ունեցող փողոցներ անցնելիս, պետք է լինել առանձնապես զգույշ և ուշադիր ու խստորեն կիրառել յերթևեկության կանոնները:

Մինչև փողոցն անցնելը հարկավոր է յերեխաներին կանգնեցնել, նայել՝ չկա՞ արդյոք գնացք, ավտո, տրակտոր, ձի և այլն ու միայն այդ բոլորը ստուգելուց հետո արագ քայլերով անցնել փողոցը կամ յերկաթուղագիծը: Անհրաժեշտ է յերեխաներին նույնպես ծանոթացնել փողոցի շարժման տարրական կանոնների հետ:

10. Դեպի լճակը կամ ավազանը եքսկուրսիա կարելի յե կազմակերպել միայն մեծերի խմբի յերեխաների հետ (6—7 տարեկան)—դաստիարակի կողմից տեղը նախապես ուսումնասիրելուց, հարմար ափ ընտրելուց հետո միայն, և այն հաշվով, վոր յուրաքանչյուր չափահասին ընկնի 8—10 յերեխայից վոչ ավելի: Ցանցաթիի միջոցով ջրային կենդանիներ վորսալը թույլատրվում է միաժամանակ մեկ կամ յերկու յերեխաների, այն էլ անպայման դաստիարակի հսկողությամբ:

11. Բոլոր մանկհրապարակներում պետք է ստուգել հակահրդեհային միջոցառումները և ապահովել բոլոր հակահրդեհային անհրաժեշտ պարագաները:

Հակահրդեհային պաշտպանության կանոնները պետք է իմանա մանկական հրապարակի յուրաքանչյուր աշխատակից—նրանք պետք է գործածել իմանան նաև սովորական տիպի կրակմարիչները: Հակահրդեհային կանոնների հրահանգը պետք է կախված լինի աչքի ընկնող տեղում: Հրշեջ խմբի հասցեն և հեռախոսի համարը պետք է նույնպես կախված լինի աչքի ընկնող տեղում:

12. Շենքը, ծածկերը, վերանդաները և այլն՝ պետք է կարգի բերվեն, մանրակրկիտ կերպով զննվեն տեխնիկի կողմից (դերանների, հատակի տախտակների, պատերի ամրությունը և այլն): Առանձնապես ուշադրություն դարձնել բակում գտնվող զուգարաններին, չթույլատրել, վոր անցքերն ունենան 20—21 սանտիմետրից ավելի տրամագիծ, վորպեսզի դժբախտ դեպք չպատահի: Մեծերի զուգարանի դուռը պետք է փակված լինի կողպեքով:

13. Մանկհրապարակի շրջակայքում զանազան թունավոր սունկեր, խոտեր, հատապտուղներ հայտնաբերվելու դեպքում, անհրաժեշտ է այդ մասին զգուշացնել յերեխաներին և առհասարակ հետևել, վոր առանց դաստիարակի գիտության կամ թույլտվության յերեխաները չուտեն վոչ մի անծանոթ բանջար կամ հատապտուղ:

Հավելված № 8

Յերեխաների ցուցակը

№ № ըստ կարգի	Ազգանուն, անուն և հայրանուն	Ծննդյան թիվը

Հավելված № 9

Դրամարկղի գիրք

Մուտք *Ելք*

Ամիս և ամսաթիվ	*Փաստաթղթի № ըստ կարգի*	*Գումարը*	*Ամիս և ամսաթիվ*	*Փաստաթղթի № ըստ կարգի*	*Ինչի վրա յե ծախսված*	*Գում*

Հավելված № 10

Մթերային գիրք

Մուտք *Ելք*

Ամիս և ամսաթիվ	*Փաստաթղթի № ըստ կարգի*	*Քանակը*	*Գինը*	*Գումարը*	*Ամիս և ամսաթիվ*	*Քանակը*	*Մնացորդ*
	Օրինակելի լրացման նմուշ— Շաքար						
1/VII	1	5 կգ.	4 ռ.	20 ռ.			
20/VII	2	2 կգ.	4 ռ.	8 ռ.	31/VII	9 կգ.	1 կգ.
27/VII	3	3 կգ.	4 ռ.	12 ռ.			

Ծանոթություն: *Ամեն մի մթերք գրանցվում է առանձին էջում: Մուտքը գրանցվում է այն թվով, վորով ստացվում է մթերքը: Ելքը վերցվում է ամսականը, գրանցվում է ամսի վերջին թվով—մթերքների հաշվարկման հիման վրա: Կոլտնտեսությունից ստացված մթերքների գինը չի նշվում:*

Հավելված № 10–ա

Մթերային ամենօրյա տեղեկագիր

Ամիս և ամսաթիվ	*№ ըստ կարգի*	*Մթերքների անունները*	*Յերեխաների թիվը*	*Բաց թողած մթերքների քանակը*	*Խոհարարի ստորագրությունը*
		Օրինակելի լրացում			
	1	Հաց	25	3 կգ	
	2	Շաքար		1,5 կգ	
	3	Յուղ		1 կգ	
	4	Կաթ		25 բաժակ	
	5	Կարտոֆիլ		5 կգ	
	6	Կրուպա		1 կգ	
	7	Ձու		25 հատ	

Ծանոթություն: *Խոհարարուհուն մթերքները բաց են թողնվում միայն մեկ օրվա համար, առավոտը, ըստ հաճախած յերեխաների թվի: Հաշվարկման հեշտության համար մթերքների անունները ամեն անգամ գրվում են նույն կարգով:*

Ամսվա վերջին ամեն մի մթերք գումարվում է և ստացված գումարը մտցվում է մթերային գրքի յելքի մեջ: Խոհարարուհու ստորագրությունն անհրաժեշտ է:

Հավելված № 11

Ինվենտարի գիրք

Ամիս և ամսաթիվ	*№ ըստ կարգի*	*Առարկայի անունը*	*Գինը*	*Քանակը*	*Նշումներ դուրս գրելու մասին*		
					Ամիս և ամսաթիվ	*Քանակը*	*Ակտի կամ ստացականի №-ը*

Հավելված № 12

Ակտի նմուշ

. . . . Մանկական հրապարակի անունը

Ակտ № . . . . .

Տարի . . . . . . ամիս . . . . ամսաթիվ . . . .

Համաձայնագրով, կազմված հրապարակի վարիչ . . . .
. . . . ից և ծնողական կոմիտեի անդամներ . . . . . .
. . . . ից, հետազոտելով հրապարակի գույքը, գտնում է, որ փչացած լինելու համար հարկավոր է դուրս գրել ներքոհիշյալ իրերը.

Ամիս և ամսաթիվ	Առարկայի անունը	Քանակը	Դուրս գրելու պատճառը

Հավելված № 13

Ստացական—(հաշիվ)

Գնված է (այս-ինչից կամ այս-ինչ տեղում) . . . . (այսքան) կիլոգրամ շաքար, յուղ (և այլն) կիլոգրամը հաշված . . . . ռուբ. ընդամենը . . . . ռուբ. գումարով:

Դրամը լրիվ ստացա:

(Տարի, ամիս, ամսաթիվ)

Հասցե

Պասպորտի №-ը

Ծանոթություն: *Ստացականը կամ հաշիվը վերցվում է մթերքներ, կահույք և այլն գնելու դեպքում, կամ հրապարակի համար այս կամ այն աշխատանքի դիմաց վճարելու դեպքում:*

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԳԻՏԵՆԱ ԴԱՍՏԻԱՐԱԿԸ ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԻՑ

ԲԱՆՋԱՐԱՆՈՑԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

ԿԱՂԱՄԲԱՃԻՃՈՒ

Կաղամբաճիճվի թիթեռների հարսնյակները ձմեռում են ցանկապատերի, տների պատերի վրա: Թիթեռները դուրս են գալիս մայիսի կեսերին և կաղամբի թերթերի ստորին յերեսի վրա կիտրոնա-դեղին գույնի ձվեր դնում: Թրթուրներն առաջանում են 1—10 որվա ընթացքում (նայած յեղանակին), լինում են խմբերով և կրծում են տերևի փափուկ մասերը: Զարգացած թրթուրները սողում և ուտում են ամբողջ տերևը: Յերեք շաբաթից հետո թրթուրները հարսնեկանում են, իսկ հուլիսին դուրս են գալիս թիթեռներ, ձվեր դնում, վորոնցից առաջանում են թրթուրներ, որանք էլ հարսնեկանում են ու ձմեռում ցանկապատի վրա:

ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ամեն որ ստուգել կաղամբի մարգերը, հավաքել ու վոչնչացնել ձվերն ու թրթուրները:

ԿԱՂԱՄԲԱԹԻԹԵՌ

Ձմեռում է հողի մեջ հարսնյակի վիճակում: Դուրս է գալիս հունիսին և ձու ածում (սպիտակ և գորշ գույնի): Թրթուրները լինում են կանաչ, հետագայում մուգ շագանակագույն: Նրանք սկզբում ապրում են կաղամբի տերևների վրա, ապա մտնում են կաղամբի գլխի մեջ և ուտում տերևները: Թրթուրների արտաթորությունից կաղամբը նեխվում է ներսից և շուտով փչանում:

ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հավաքել ու վոչնչացնել ձվերն ու թրթուրները:

ԿԱՂԱՄԲԻ ՈՒՏԻՃ

Կաղամբը շատ հաճախ ծածկվում է փոքրիկ միջատներով՝ ուտիճներով, վորոնք սովորաբար խառոջիկ են կոչվում: Ուտիճները բազմանում են կաղամբի վրա, ծածկելով տերևների թե՛ վերին և թե՛ ստորին յերեսները:

ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Վոչնչացնել մոլախոտերն ու կաղամբացողունները, սրսկել նավթի, ծխախոտի և կանաչ ոճառի խառնուրդ:

ԲԱՆՋԱՐԱՆՈՑԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

ԿԱՐՄԻՐ ԿՈՎԻԿ

Սև բծերով կարմիր բզեզ (սովորաբար կոչվում է զատիկ)՝ ուտում է ուտիճներին:

ԱՆՁՐԵՎԱՃԻՃՈՒ

Սա ոգտակար է, վորովհետև փափկացնում է հողը:

Իր համար հողում անցքեր է փորում յերկու յեղանակով. յեթե հողը փափուկ է, փորում է մարմնի առաջին մասով, իսկ յեթե ամուր է, հողը բերանի մեջ է առնում, անցկացնում փորի միջով և հետևից դուրս թափում:

ԴՈԴՈՇ (ԺԱԲԱ)

Դոդոշն իր գորտնկիթը (իկրա) դնում է լճակների ջրերում գարնանը: Յերկար ու բարակ յերիզի ձևով գորտնկիթներից դուրս են գալիս շերեփուկներ: Մնացած ժամանակը դոդոշն անց է կացնում ցամաքի վրա, խոնավ տեղերում, ծառի կոճղերի տակ, իսկ աղջամուղջին ու գիշերը վորսում է կակղամորթներ ու վնասակար միջատներ:

Գ Ո Ր Տ

Ոգտակար է, ուտում է ճանճեր ու մոծակներ: Մայիսի սկզբներին լճակներում գորտնկիթ շատ կարելի յե գտնել: Յեթե վերցնենք փոքր քանակությամբ գորտնկիթ և ջրով ամանում դնենք լուսամուտի գոգը, վորոշ ժամանակից հետո դրանցից դուրս կգան շերեփուկներ. սրանց պետք է կերակրել ջրախոտերով: Յեթե շերեփուկները մեծանան, նրանց պետք է կերակրել ջրային մանր կենդանիներով: Շերեփուկների ամանի ջուրը պետք է փոխել հնգօրյակում յերկու անգամ: Վորոշ ժամանակից կաճեն շերեփուկի առաջին վոտները, ապա հետևինները ու կկարճանա պոչը: Հենց վոր սկսեն յերևալ հետևի վոտները, պետք է ջրի մեջ դնել տախտակի ու քարի կտորներ, վորպեսզի կարողանան ջրից դուրս գալ:

Յերբ շերեփուկը փոխարկվի գորտի, նրան պետք է դնել ապակե բանկայի մեջ, հատակին հող լցնել, մամուռ դնել, իսկ մի կողքին ջրով լի անոթ, մեջը քար: Բանկայի բերանը կապել շղարշով: Գորտին պետք է կերակրել մանր ճանճերով ու սևուտիճով (տարական):

ՄԻՋԱՏՆԵՐ

ՄԱՅԻՍՅԱՆ ԲԶԵԶ

Մայիսի յերկրորդ կեսերին հայտնվում են շատ մեծ քանակությամբ (նրանք հավաքվում են կեչու շուրջը և ուտում տերևները): Մայիսի վերջերին մայիսյան եգ բզեզը հողում փոս է փորում և միքանի սպիտակ ձու ածում: Միքանի շաբաթից հետո դուրս են գալիս թրթուրները, վորոնք սպիտակ են ու աչքերից զուրկ: Նրանք սնվում են բույսերի արմատներով: Յերրորդ ամառը թրթուրն իր համար բուն է շինում և փոխարկվում սպիտակ հարսնյակի: Միքանի շաբաթից հարսնյակի մաշկը պատռվում է և նրանից դուրս է գալիս բզեզը, վորը ձմեռում է հողի

տակ, իսկ չորրորդ տարվա գարնանը դուրս է գալիս գետնի յերեսը:

Սա ուտում է ծառերի, առավելապես կեչու տերևները:

Համոզվելու համար, վոր մայիսյան բզեզի թրթուրները վնասակար են, պետք է վերցնել յերկու ծաղկաման, հող լցնել և յերկուսի մեջ էլ մի-մի կտոր ճիմ տնկել: Ծաղկամաններից մեկի մեջ դնել մայիսյան բզեզի թրթուրներ: Յերկու ծաղկամաններն էլ հավասարապես ջրել: Վորոշ ժամանակից հետո կարելի յե նկատել, վոր ճիմերից մեկը, վորի ամանի մեջ թրթուրներ էյին, կդեղնի և կչորանա:

Ճ Ա Ն Ճ

Ճանճը վնասակար միջատ է, նա տարածում է վարակ: Նա իր սպիտակ ձվերն ածում է նեխող նյութերի վրա: 12 ժամից հետո դուրս են գալիս սպիտակ թրթուրներ, վորոնք կերակրվում են նեխող նյութերով ու մսով: Թրթուրներն իրենց մաշկը փոխում են յերեք անգամ, վերջին անգամը 14 որից: Հին մաշկն ամրանում է և ստանում տակառի ձև ու շագանակի գույն՝ դա ճանճի բոժոժն է: 7—14 որից հետո բոժոժից դուրս է գալիս ճանճը: Ճանճն ապրում է 10—11 որ: Եգ ճանճն այդ ժամանակամիջոցում 600 ձու յե ածում:

Հուլիս, ոգոստոս և սեպտեմբեր ամիսներին հանդես են գալիս այլ ճանճեր, վորոնք նման են սենյակի ճանճերին. սրանք ծակում են մարդկանց, կովերի ու ձիերի մաշկը և ծծում արյունը:

Ս Ա Ր Դ

Ոգտակար է: Սնվում է ճանճերով և զանազան թռչող միջատներով, վորոնք ընկնում են նրա վոստայնը: Աշնանն եգ սարդը վոստայնից բոժոժ է շինում և նրա մեջ միքանի հարյուր ձու ածում: Եգ սարդն այդ բոժոժն ամրացնում է վորևէ մեկուսի տեղ, ինչպես, որինակ, ծառի կեղևի ճեղքվածքում, շենքի անկյունում:

ԹՌՉՈՒՆՆԵՐ

ՓԱՅՏՓՈՐԻԿ

Անտառում հաճախ է հանդիպում փայտփորիկը: Նա շատ ոգտակար է, վոչնչացնում է վնասակար միջատներին՝ կեղևակերներին, վորոնք փչացնում են ծառերը: Փայտփորիկն իր յերկար և ամուր կտցով անցքեր է փորում ծառի կեղևի ու բնա-

փայտի մեջ և իր յերկար, բարակ և ճկուն լեզվով հանում միջատներին։ Մանր միջատները կպչում են նրա լեզվին, վորը պատած է չափազանց կպչուն թքով։ Խոշոր միջատներին փայտփորիկը ծակում ու դուրս է հանում իր լեզվի փշածածկի յեղջերածայրով։

Կ Կ Ո Ւ

Կկուն շատ ոգտակար է, նա ուտում է բրդոտ թրթուրները, վորոնց ուրիշ թռչուններ չեն ուտում։ Բրդոտ թրթուրները փչացնում են ծառերը։ Կո՛ւ-կո՛ւ կանչում է արուն։ Եգ կկուն ձու յե ածում մայիսից մինչև հուլիսի կեսերը։ Նրանք շատ մանր են և շուտով փչանում են (այդ պատճառով կկուն ինքն իր ձվերի վրա չի կարող թուխս նստել. Նա կտցով իր ձվերը փոխադրում է փոքր թռչունների բները)։

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍԽՀ-ССР А.
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Նախաբան 4
Ներածություն 5
Ի՞նչ է մանկական հրապարակը և ինչպես այն կազմակերպել 13
Մանկական հրապարակի շենքը, տեղամասը և սարքավորումը 16
Մանկական հրապարակի աշխատողները 27
Ինչպես կազմել պլան յերեխաների հետ տարվող աշխատանքների համար 32
Սանիտարական կանոններ գյուղական մանկական հրապարակների համար 37
Ֆիզիկական դաստիարակություն 41
Որը մանկական հրապարակում 58
Խաղ 66
Նկարչություն, ծեփ և զբաղմունքներ զանազան նյութերով 111
Յերաժշտություն և յերգեցողություն 128
Յերեխաների ծանոթացումը բնության հետ 138
Խոսքի զարգացումը և աշխատանքը գրքի հետ 151
Վոտանավորներ, պատմվածքներ և հեքիաթներ փոքրահասակների խմբի յերեխաներին կարդալու համար 159
Յերեխաների սկզբնական մաթեմատիկական պատկերացումները . . . 183
Աշխատանքը ծնողների հետ 184

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. **Տնտեսական սարքավորում** 187
2. Մթերքների ծախսման նորմաներ 189
3. Հնգորյակի որինակելի կերակրացանկ 190
4. Ինչպես պատրաստել կերակուր 192
5. Ինչպես ցույց տալ առաջին ոգնություն հիվանդ յերեխային . . . 196
6. Ցուցումներ մանկական հրապարակը հրդեհից պաշտպանելու մասին 201
7. Ամառային մանկական հրապարակներում յերեխաների վրա հսկողություն ուժեղացնելու հուշաթերթիկ 202
8. Յերեխաների ցուցակը 205
9. Դրամարկղի գիրք 206
10. Մթերային գիրք 206
11. Ինվենտարի գիրք 207
12. Ակտի նմուշ 208
13. Ստացական (հաշիվ) 208
14. Ի՞նչ պետք է գիտենա դաստիարակը բնագիտությունից 208

Խմբագրեց Ս. Սամվելյան
Թարգմանեց Ա. Ճուղուրյան
Տեխն. խմբ. Հ. Կարապետյան
Սրբագրիչ Հ. Գուլուխանյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Գլավլիտի լիազոր, Վ. 1214, հրատ. № 23
Պատվեր № 171, տիրաժ 2500
Հանձնվել է արտադրության 17/V 1940 թ.
Ստորագրվել է տպագրելու 25 1940 թ.
Գինը 6 ռ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան
Երևան, Ալլահվերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0223593

51. 027

ԳԻՆԸ 6 Ռ.

В ПОМОЩЬ СЕЛЬСКОМУ ДОШКОЛЬНОМУ РАБОТНИКУ

Просиздат — Ереван, 1940 г.